I окончательно сформировала бюрократическую система управления в церковных структурах. Это представляет и содержание делопроизводства Астраханской епархии за 1840 г.⁷⁹.

Таблица 3.

Время поступления	Следственных и уголовных	Просительных	Метрических справок	Итого
От 1839 г. осталось нерешенных дел	4	2	22	28
В 1840 г. поступило	5	20	61	86
Итого...	9	22	83	114
В 1840 г. решено: из нерешенных вновь поступивших	2 3	1 16	13 41	16 60
Итого...	5	17	54	76
В 1841 г. осталось нерешенных	4	5	29	38

Показатель решенных дел составил: следственных и уголовных - 44,4 %, просительных -22,7%, метрических справок -34,9,3%. Количество нерешенных дел делопроизводства составило 33,3%. Общий уровень эффективности деятельности Астраханской епархии формально был близок к уровню Нахичевано-Бессарабской епархии, но здесь объем рассмотренных дел был выше на 19,3%. Обращает также внимание высокий уровень требований метрических справок по Астраханской епархии, свидетельствующий о высокой мобильности армянского населения.

▪ Таким образом, активная восточная и порубежная политика Петра Великого содействовала установлению активных армяно-русских церковных отношений, русской ориентации освободительных чаяний армянского народа, отражая требования исторического развития. В истории армянского народа во главе с Эчмиадзином начался процесс перехода от ориентации на Запад для реализации идеи освобождения от иноверческого исповедания к ориентации на Россию. Определяющей чертой являлось конфессиональная и цивилизационная близость, возможности поступательного расширения Северной христианской державы.

▪ Сложилось содружество самодержавия и Эчмиадзинского престола. Самодержавие привлекло руководства армянской церкви к решению проблемы закрепления пустопорожних южных территорий армянским населением, к планам утверждения в Закавказье и прикаспийских территориях. Руководство Эчмиадзинского престола церковным строительством в Российской державе добилось закрепления собственных позиций для укрепления роли духовно-политического института армянского народа и выражения национальных чаяний.

▪ В армяно-русских отношения церковной сферы XVIII - первой трети XIX вв. можно выделить три период. Первый период охватывает время от Петра Великого до правления Екатерины II, когда происходит формирование церковного представительства на высшем уровне, создание отдельной Астраханской армянской епар-

⁷⁹ Там же, л. 1019.

хии, укрепление взаимосвязей и учреждение культовых храмов; второй период – развитие от правления Екатерины II до 1800 г., учреждение российской армянской епархии под юрисдикцией Эчмиадзинского престола, обсуждение проекта независимого армянского протектората, утверждение церковной системы управления российской армянской епархии, создание ауры союзных отношений с Эчмиадзинским престолом; третий период характеризуется использованием державных управленческих стандартов к деятельности Астраханской, Бессарабской и Тифлисской епархий в Российской державе, образованием Синода, приобретением самодержавием права назначения католиков всех армян и освобождением Восточной Армении от иноверческого исповедания во главе с Эчмиадзинским престолом, регламентацией механизма деятельности армянской церкви и упрочением главенства верховного католика над всеми зарубежными в рамках курса “нравственного влияния” на армян Азии.

Վալերի Թունյան – Հայ - ռուսական հարաբերությունների ձևավորումը եկեղեցական ոլորտում 18դ.-19-րդ դարի երրորդ տասնամյակում: – Հոդվածում բացահայտվում են հայ - ռուսական հարաբերությունները եկեղեցական ոլորտում, որոնք, ըստ հեղինակի ապրել են երկու փուլ: Առաջին Պետրոս Մեծից մինչև Եկատերինա 2-րդ, երկրորդ, 1936թ. «Положения»-ից հետո, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր առանձնահատուկ գծերը:

Valeriy Tunyan – *The formation of Armenian-Russian religious relation in the Third Decade of the 19th century.* – The article reveals the period of the formation of Armenian-Russian religious relations which according to the author had two phases It was from the times of the Peter I the Great till Catherine II, 1836 “Polojeniya”. Each of them had its own peculiarities and specific features.

«ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ» ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՆԱԹԵԼԼԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

1921թ. փետրվարի 18-ին՝ առավոտյան ժամը 8-ին, Երևանը արդեն ապրստամբների ձեռքում էր: «Անանկնկալորեն, հայ ժողովրդի վզին ծանրացած բոլշևիկեան դաժան իշխանությունը տապալուած է վերջապէս... Այս շարժումը, որը մեր ազատագրական պատմութեան մեջ կմնայ անմահ, գերազանցորէն ժողովրդական էր, վկա այն նմանը չտեսնուած խանդավառութիւնը, որով տոգորուած, անգամ կանայք և անչափահաս պատանիներ, հրացանները գրկած նետուել էին փողոց՝ բոլշևիկ կոչուածներին մեր երկրից դուրս շարտելու համար: Բայց այս շարժումը, ժողովրդական այս բուռն, տարերային պոռթկումը ուղղուած չէ Ռուսաստանին և ոչ էլ նրան ղեկաարող կուսակցութեան: Մենք եղել ենք բարեկամ և սիրող ռուս մեծ ժողովրդին, այսուհետև էլ կշարունակենք մնալ նույնը, պայմանաւ միայն որ հիւսիս մեր մեծ դրացին փոխադարձաբար յարգէ մեր ժողովուրդը և նրա արյունով վաստակած անկախութիւնը», - գրում է «Ազատ Հայաստան» օրաթերթը⁸⁰:

Փետրվարի 18-ի առավոտյան Հայաստանի խորհրդարանի շենքում խանդավառ ցույցերից ու ճառախոսություններից հետո տեղի ունեցավ Երևանի փրկության կոմիտեի ու նախկին կառավարության անդամների, խորհրդարանի նախագահության և անդամների, ինչպէս և անհատ ու ապստամբական շրջաններից հասած վարիչների մասնակցությամբ մի ժողով, ուր որոշվեց կյանքի կոչել Ս. Վրացյանի կառավարությունը՝ լրացնելով նոր անդամներով՝ «Հայրենիքի փրկության կոմիտե» անունով⁸¹:

Հայրենիքի փրկության կոմիտեն կազմեց կառավարություն՝ փետրվարի 22-ին առաջին նիստի ընթացքում, որի կազմի մեջ մտան Ս. Վրացյանը՝ արտաքին գործերի նախագահ ու գյուղատնտեսության գործերի վարիչ, Հ. Տերտերյանը՝ ելևմտական գործերի, Կ. Սասունին՝ ներքին գործերի, Ա. Հովհաննիսյանը՝ զինվորական, Հ. Տեր-Հակոբյանը՝ պարենավորման, Ս. Եղիազարյանը՝ ինամատարության, Հ. Սարգսյանը՝ պրոպագանդայի և աշխատանքի վարիչ: Կոմիտեում ՀՅԴ-ի ներկայացուցիչն էր Ե. Սարգսյանը:

Խորհրդային Հայաստանի ռազմական ժողովրդական կոմիսարիատը և բանակի շտաբը միացվում և անվանվում է գլխավոր շտաբ, որի պետ է նշանակվում գնդապետ Սարգիսյանը, իսկ բանակի հրամանատար է նշանակվում Կուռո թարխանյանը⁸², բազմառնեցի Մարտիրոս Աբրահամյանը՝ Ղամարլուի ճակատի հրամանատար, իսկ սպա Մերյոժա Քոթանջյանը՝ Երևանի պարետ: Երևան քաղաքագլուխ նշանակվեց Արշալույս Աստվածատուրյանը⁸³: Վերացվում են զինվո-

⁸⁰ «Ազատ Հայաստան», փետրվարի 19, 1921:

⁸¹ Ս. Վրացյան, Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի մեջ, Երևան, 1993, էջ 561:

⁸² Հայաստանի Ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 37, ց. 1, գ. 3, թ. 7:

⁸³ Նույն տեղում, թ. 11:

րական աստիճանները և մինչև բոլշևիկների դեմ պայքարի ավարտը զինվորական մասերին կից կազմվում են ռազմահեղափոխական դատարաններ⁸⁴:

ՀՀ ամբողջ միլիցիայի և վարչության պետ է նշանակվում Արմենակ Թադևոսյանը, որին հրահանգվում է անմիջապես կազմակերպել գավառների վարչությունները և միլիցիան⁸⁵: Մեկ ամիս անց ձևավորվեց Հայրենիքի փրկության կոմիտեի բյուրոն՝ որպես գործադիր իշխանության մարմին: Բյուրոյի նախագահն էր Ս. Վրացյանը, անդամները՝ Արշ. Հովհաննիսյան (զինվորական գործերի վարիչ), Կարո Սասունի (ներքին գործերի վարիչ) և Ավետիս Օհանջանյան (արտակարգ հանձնաժողովի նախագահ):

Հետաքրքիր է նշել, որ Սիմոն Վրացյանը գրում էր, թե ինքը չի հիշում, թե ո՞վ և ե՞րբ իրեն հայտարարեց «Հայրենիքի փրկության կոմիտեի» նախագահ և արդյոք ինքը կարող էր դուրս գալ սարսափելի բեռի տակից⁸⁶: «Տատանուելու ժամանակ չկար: Թշնամին դեռ քաղաքի մօտ էր: Ոչ ոք իրատուսք չունէր խուսափելու գործից: Ընդհանուր ցանկությունն էր նախկին կառավարությունը տեսնել վերականգնած: Եւ ես համակերպուեցի իմ դառն ճակատագրին: Սկսուեց կազմակերպական աշխատանքը եւ այն յուսահատ ու կատաղի պայքարը, որի մանրամասնությունները, դժբախտաբար քչերին են յատնի արտասահմանում...», - գրում է Ս. Վրացյանը⁸⁷:

Հայրենիքի փրկության կոմիտեի հրահանգով կազմվեց, այսպես կոչված, Վասպուրականի զինվորական մարմինը, որի անդամներն էին Վահե Արծրունին, Գրիգոր Խլղաթյանը, Կարապետ Բեյլարյանը, Գալուստ Էյնաթյանը, Հայկակ Կոտայանը, Փանոս Ժահնարյանը, Սամվել Մեսրոպյանը և Արմենակ Մաքսապետյանը: Վերջին երկուսը մտան նաև Հայրենիքի փրկության կոմիտեի կազմի մեջ: Փետրվարի 20-ին Երևանում կազմվեց Արտակարգ դատարան՝ ճարտարապետ Ավետիս Օհանջանյանի գլխավորությամբ:

Կազմակերպվելուց անմիջապես հետո «Հայրենիքի փրկության կոմիտեն» ժողովրդին ուղղեց թիվ 1 կոչը.

«Քաղաքացիներ,

Բոլշևիկյան իշխանությունը Հայաստանում վերացված է: Մինչ կառավարություն կազմելը ամբողջ իշխանությունը գտնվում է Հայրենիքի փրկության կոմիտեի ձեռքում: Ամեն քաղաքացի պետք է պաշտպանի կարգն ու օրենքը: Հայրենիքի փրկության կոմիտեի կողմից հրատարակված բոլոր կարգադրությունները խիստ կերպով պետք է կատարվեն քաղաքացիների կողմից⁸⁸:

Հայրենիք փրկության կոմիտեի նախագահ Ս. Վրացյան
1921թ. փետրվարի 18, Երևան»:

Ինչպես նշված էր «Փրկության կոմիտեի» առաջին հրամանում, նրան ենթարկվեցին շրջանային կոմիտեները, իսկ վերջիններիս՝ գյուղական փրկության կոմիտեները: Անմիջապես սկսեցին գործել Ապարանի, Աշտարակի, Էջմիածնի և Կոտայքի գավառակային փրկության կոմիտեները: Ապարանի փրկության կոմի-

⁸⁴ Ազատ Հայաստան, փետրվարի 24, 1921:

⁸⁵ Ազատ Հայաստան, փետրվարի 19, 1921:

⁸⁶ Ս. Վրացյան, Կեանքի ուղիներով, դեպքեր, դեմքեր, ապրումներ, հ. 9, Պեյրոյթ, 1967, էջ 36-37:

⁸⁷ Ս. Վրացյան, Էջեր մօտիկ անցեալից, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1923, ապրիլ, թիվ 6, էջ 49:

⁸⁸ Ս. Վրացյան, Հայաստանը բոլշևիկյան մուրձի և թուրքական սալի մեջ, էջ 561; Կ. Սասունի, Փետուրեան ապստամբությունը, էջ 84; «Ազատ Հայաստան», փետրվարի 19, 1921:

տեի նախագահ է նշանակվում Կարապետ Մուրադյանը, իսկ Աշտարակինը՝ բժիշկ Նահապետյանը⁸⁹:

Հայրենիքի փրկության կոմիտեի՝ 1921թ. փետրվարի 18-ի 4-րդ հրամանով բոլոր քաղաքացիներին հրահանգվում է ձեռքակալել և իշխանությանը հանձնել բոլշևիկներին⁹⁰:

Հայրենիքի փրկության կոմիտեն իրականացնում էր և՛ օրենդիր, և՛ գործադիր իշխանությունը: Սկզբում նա հույս ուներ, թե մեկ շաբաթում կարող է պառլամենտ (խորհրդարան) հրավիրել և հռչակել օրինական կառավարություն: Բայց այդպես չեղավ: Փրկության կոմիտեն մնաց որպես Հայաստանի կառավարություն և շարունակեց վարել երկրի ներքին և արտաքին քաղաքականությունը: Պառլամենտի նիստ չհրավիրվեց, որովհետև բոլոր պատգամավորները զբաղված էին ռազմաճակատում կամ երկրի ներսում պատասխանատու աշխատանքով⁹¹:

Փետրվարի 21-ին երկրում հայտարարվեց ռազմական դրություն⁹²: Երկաթուղին, փոստ-հեռագիրը, հեռախոսը, ռադիոն հայտարարվում է զինվորական դրության մեջ⁹³: Երևան քաղաքի պարետ Ս. Քոթանջանյանի հրամանով ժամը 19-ից հետո փողոցում ման գալը, ժողովները, միտինգները և ոգելից խմիչքների վաճառքը արգելվեց: Բոլոր սպաները, բժիշկները և զինվորական աստիճան ունեցողները պետք է ներկայանային գլխավոր շտաբ՝ ցուցակագրվելու⁹⁴: Քարոզչական աշխատանքների համակարգման և Հայրենիքի փրկության բանակի համար պարենի հայթայթման խնդիրները լուծելու նպատակով կոմիտեին կից՝ Բախշի Իշխանյանի նախագահությամբ, կազմվեց միջկուսակցական խորհուրդ, որին անդամակցեցին ՀՅԴ, Սոցիալիստ-հեղափոխական, Հայ ժողովրդական, Սոցիալ-դեմոկրատական, Ռամկավար և Հնչակյան կուսակցությունների ներկայացուցիչները:

«Փրկության կոմիտեն» իր առաջին քայլերով փորձեց ամրապնդել երկրի պաշտպանունակությունը, ապահովել ժողովրդի ֆիզիկական գոյությունը, վերակենդանացնել կազմալուծված սոցիալ-տնտեսական ու հասարակական կյանքը: Այդ նպատակով տրվեցին համապատասխան հրամաններ, հրահանգներ, ընդունվեցին օրենսդրական ակտեր, իշխանության ներկայացուցիչները հանդես եկան հավաքներում, ինչպես նաև հատուկ կոչերով դիմեցին ժողովրդին:

Նոր իշխանությունների քաղաքականության մասին ժողովրդին տեղյակ պահելու գործում մեծ դեր խաղաց «Ազատ Հայաստան» պաշտոնաթերթը, որը համարվում էր Հայաստանի Հանրապետության կառավարության օրգանը: «Ազատ Հայաստան» օրաթերթը լույս տեսավ փետրվարի 19-ից մինչև ապրիլի 2-ը: Լույս տեսավ շուրջ երեք տասնյակ համար՝ այդ թվում նաև թուրքերեն և ռուսերեն լեզուներով: «Հայրենիքի փրկության կոմիտեի» կողմից թերթի խմբագիրներ նշանակվեցին Ա. Զինգարյանը և Մ. Օգանյանը:

Բոլշևիկների կողմից ձեռքակալվածների կամ սպանվածների ընտանիքներին օգնելու համար կազմվեց մի հանձնախումբ՝ Հովհ. Քաջագունու գլխավոր

⁸⁹ ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 5, թ. 34:

⁹⁰ Նույն տեղում, գ. 3, թ. 7: «Ազատ Հայաստան», փետրարի 19, 1921:

⁹¹ Կ. Մասունի, Փրկութեան կոմիտեի գործունեությունը, «Հայրենիք», 1925, թիվ 2, էջ 103:

⁹² «Ազատ Հայաստան», փետրարի 23, 1921:

⁹³ ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 3, թ. 10:

⁹⁴ «Ազատ Հայաստան», փետրվարի 20, 1921:

րությանը: Հայաստանի խմանատարության գործերի վարիչ բժիշկ Ս. Եղիազարյանի կարգադրությամբ բոլշևիկների օրով փողոցում անապաստան մնացած որբերին հավաքում են որբանոցներում⁹⁵:

Վերակազմվեց Երևանի քաղաքապետարանը: Ս. Մուսիսյանի, Խ. Գրիգորյանի և Հ. Տեր-Խաչատրյանի գլխավորությամբ 1921թ. փետրվարի 21-ին մայրաքաղաքում ստեղծվեց հատուկ լիազորություններով օժտված մի մարմին՝ պարենավորման և գաղթականների խնամատարության գործի հաշվառման համար⁹⁶: Փետրվարի 23-ի հրամանով արգելվեց կոմունիստներին աշխատանքի ընդունել: Նոր իշխանությունների դեմ պայքարի փորձերը կասեցնելու և հանցագործներին պատժելու նպատակով փետրվարի 22-ին կոմտեխ նախագահ Ս. Վրացյանի և ներքին գործերի վարիչ Կ. Սասունու հրամանով Հ. Օհանջանյանի գլխավորությամբ ստեղծվեց ՀՀ Արտակարգ հանձնաժողով⁹⁷:

Հայրենիքի փրկության կոմիտեի հատուկ օրենքով պատժելի համարվեց թուրք քաղաքացիների նկատմամբ խտրականության յուրաքանչյուր դրսևորումը⁹⁸: Հայրենիքի փրկության կոմիտեն առանձնապես կոչ է անում թուրք ժողովրդին «որը հայ ժողովրդի պես շատ դառնություններ է տեսել անցյալում և դեռ տառապում է այսօր էլ, մոռացիր անցյալի դառնությունները, եղբայրօրեն ձեռք մեկնիր հայ աշխատավորութեանը և ամուր փարիք ազատ Հայաստանին... Ը.Փ.Կ.-ն հրավիրում է Ձեզ լայնորեն մասնակցելու Հայաստանի պետական և հասարակական կյանքին»⁹⁹: Ի պատասխան կոմիտեի կողմից իրականացվող ազգային քաղաքականությանը՝ Հայաստանի ազատագրված մասի թուրք ազգաբնակչությունը բազմամարդ հանրահավաքներում և ժողովներում իր աջակցությունը հայտնեց իշխանություններին: «Ազատ Հայաստան» պաշտոնաթերթը «Հայրենիքի փրկության կոմիտեի» կողմից վարվող ազգային քաղաքականության վերաբերյալ գրում էր. «Հայաստանը պատկանում է միայն նրա սահմաններում ապրող ու մարտնչող ժողովրդին՝ առանց ազգի, կրոնի և դասակարգային խտրականության...»¹⁰⁰: Եվ անհա փետրվարի 24-ին Կ. Սասունու հրամանով Երևան քաղաքի պարենավորման կոմիտեի անդամ է նշանակվում Մեր Բաղիր Միր Բաբանը¹⁰¹, իսկ փետրվարի 26-ին Հուսեին բեկ Կապիկը նշանակվում է Երևան քաղաքի քաղաքապետարանի երկրորդ անդամ¹⁰²: «Հայրենիքի փրկության կոմիտեի» անհողդողդ և անշեղ ձգտում է վերացնել հայ և թուրք ժողովուրդների միջև մինչ այդ եղած պատնեշը, ճանապարհ հարթել երկու ժողովուրդների մերձեցման համար: «Անցյալի դառը փորձից մեծապես խրատված՝ մենք ոչինչ չպիտի խնայենք, որ այժմ մեր թուրք հարևանները անկեղծորեն հաշտվեն ազատ Հայաստանի գոյության հետ, մասնակից դառնան մեր պետական շինարարությանը և ամեն մի քայլափոխի զգան, որ Հայաստանը պատկանում է ոչ միայն հայերին, այլև նրանում ապրող բոլոր ժողովուրդներին անխտիր... Թուրք հասարակական գործիչներին՝ պետական պատասխանատու պաշտոններում, այն իրական միջոցներից մեկն է,

⁹⁵ Նույն տեղում, փետրվարի 23, 1921:

⁹⁶ ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 3, թ. 23:

⁹⁷ «Ազատ Հայաստան», փետրվարի 19, 1921:

⁹⁸ Նույն տեղում, փետրվարի 24, 1921:

⁹⁹ Նույն տեղում:

¹⁰⁰ Նույն տեղում, ապրիլի 1, 1921:

¹⁰¹ Նույն տեղում, փետրվարի 26, 1921:

¹⁰² Նույն տեղում, փետրվարի 27, 1921:

որոնցով մեր թուրք հայրենակիցները պիտի սովորեն կատարյալ վստահությանը վերաբերել Ազատ Հայաստանին և նրա ներկա կառավարությանը», - գրում է «Ազատ Հայաստան» պաշտոնաթերթը¹⁰³:

Փետրվարի 21-ից սկսեցին կանոնավոր կերպով գործել պետական և քաղաքական բոլոր հիմնարկությունները: Նույն օրը երեկոյան ժամը հինգին ՀՅԴ տանը կայացավ դաշնակցական աշակերտների ընդհանուր ժողովը, որտեղ քննարկումից հետո որոշվեց նախ և առաջ բոլշևիկների օրոք անլեգալ գործունեության մատնված միությունը վերականգնել և անցնել լեգալ աշխատանքների, և երկրորդը՝ ցուցակագրել բոլոր դաշնակցական աշակերտներին գվարդիայի կազմի համար, իսկ գվարդիան ամբողջովին տրամադրել կուսակցությանը¹⁰⁴:

Հայրենիքի փրկության կոմիտեի՝ տնտեսության բնագավառում ձեռնարկած միջոցառումները աշխուժացրին Հայաստանի ազատագրված մասի սոցիալ-տնտեսական կյանքը: Փետրվարի 22-ից շրջանառության մեջ դրվեցին հայկական դրամանիշները, որոնք ստացվել էին մինչև ՀՀ խորհրդայնացումը¹⁰⁵: Փետրվարի 21-ից Գ. Պիճիկյանի նախագահությամբ իր գործունեությունը սկսեց Հայկոպը¹⁰⁶: Երևանի սպառողական կոոպերատիվների վարչության որոշմամբ պետք է վերաբացվեին Երևանում գործող կոոպերատիվ հինգ խանութները: Գրախանութները վերադարձվեցին տերերին, բոլշևիկների կողմից բռնագրավված իրերը ցուցակագրվեցին¹⁰⁷: Աշխատանքներ տարվեց Մարգարայի կամուրջը և Երևանը Ալեքսանդրապոլի միացնող ռադիոհեռագրերի գիծը վերանորոգելու ուղղությամբ: Կոմիտեն մշակեց գյուղատնտեսության հարկման նոր համակարգ: Հողագործ-այգեգործներին տրամադրվում է վնասատուների դեմ պայքարելու դեղամիջոցներ, իշխանությունները կազմակերպում են այգեգործների ու այգետերերի ընկերություններ, որոնց տրվում է ֆինանսական օգնություն: Կարևորվում է ծառայողների աշխատավարձերի բարձրացման հարցը և այդ նպատակով մշակվում է նոր ծրագիր¹⁰⁸: Իրենց աշխատանքները վերսկսեցին Հայաստանի արհեստակցական միությունները, տեղի ունեցավ ճյուղային կազմակերպությունների ժողովներ, վերաբացվեց արհեստակցական միության գրադարանը: Հայրենիքի փրկության կոմիտեն քայլեր ձեռնարկեց ակտիվացնելու երկրի մշակութային ու կրթական կյանքը: 1921թ. փետրվարի 21-ին Մեղրակ Ավետյանը նշանակվում է հանրային կրթության նախարարության գործերի ժամանակավոր վարիչ¹⁰⁹: Կոմիտեի՝ փետրվարի 24-ի որոշմամբ պարապմունքներ վերսկսեցին առաջին և երկրորդ աստիճանի դպրոցները: Մարտի 17-ին իր դռները բացեց համալսարանը:

«Հայրենիքի փրկության կոմիտեն» փորձեց ակտիվացնել նաև երկրի հասարակական կյանքը, մասնավորապես կոմիտեն նպատակադրեց Երևանում մարտի 25-ին հրավիրել համաժողովրդական համագումար, որի օրակարգն էր

¹⁰³ Նույն տեղում, մարտի 30, 1921:

¹⁰⁴ Նույն տեղում, փետրվարի 23, 1921:

¹⁰⁵ Նույն տեղում, փետրվարի 19, 1921: *Մ. Վրացյան*, Հայաստանը բոլշևիկյան մուրճի..., էջ 567:

¹⁰⁶ Նույն տեղում, փետրվարի 23, 1921:

¹⁰⁷ Նույն տեղում, մարտի 4, 1921:

¹⁰⁸ «Ազատ Հայաստան», մարտի 11, 1921:

¹⁰⁹ ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 3, թ. 23:

լինելու. «Հայրենիքի փրկության կոմիտեի գեկուցումը պահի մասին, Հայաստանի ինքնապաշտպանության հարցը, պարենավորման խնդիրը, հարցեր, որոնք կհարուցվեն համագումարում»¹¹⁰:

Սակայն համագումարը երկրի ռազմական վիճակի վատթարացման պատճառով հետաձգվեց, իսկ հետո ընդհանրապես չկայացավ:

Փրկության կոմիտեն իր ուշադրությունից դուրս չթողեց նաև երկրի պաշտպանության հարցերը: Վասպուրականի զինվորական մարմինը կոչ հրապարակեց, որով վասպուրականցիներին զենքի էր կոչում բոլշևիկների դեմ կռվելու: Մի քանի օրում կոչին արձագանքեց 20-60 տարեկան շուրջ երեք հազար մարդ, կազմվեց Վասպուրականի զորագունդը, որի հրամանատար նշանակվեց Ասլան Ստեփանյանը¹¹¹: Իրենց առանձին զորամասերը ստեղծեցին նաև սասունցիներն ու տարոնցիները՝ Մմբատի և ուրիշների գլխավորությամբ:

Մարտի 16-ին զորակոչվեցին հանրապետության 30-32 տարեկան տղամարդիկ, իսկ ուսանող դաշնակցականները լրիվ կազմով, դադարեցնելով իրենց ուսումը, մեկնեցին ռազմաճակատ: Սակայն կարճ ժամանակամիջոցում կանոնավոր բանակ ստեղծելու խնդիրը գրեթե անլուծելի էր, առավել ևս, եթե հաշվի առնենք, որ չկար համապատասխան բազա. «Ո՛չ կամավոր կազմակերպված զորք ու կարող զինվորական մասնագետներ, ո՛չ հրամանատարներ, ո՛չ պարեն, ո՛չ ռազմամթերք, ոչինչ՝ բառի բուն նշանակությամբ, ոչինչ», - այսպես է իրականությունը ներկայացնում Ս. Վրացյանը¹¹²:

Ստանձնելով իշխանությունը Հայաստանում և գլխակցելով Խորհրդային Ռուսաստանին միայնակ դիմակայելու անհնարինությունը, որը, անշուշտ, ձգտելու էր վերականգնել խորհրդային իշխանությունը Հայաստանում՝ «Հայրենիքի փրկության կոմիտեն» փորձեց համագործակցել արտաքին որևէ ուժի հետ: «Փետուարի 18-ի յեղաշրջման առաջին օրերից հենց մեր մեջ զգացուեց «օրինետացիայի» հարցը. դեպի հիւլիս, դեպի «ամբոխները խելագարուած», թէ դեպի Եվրոպա և Ամերիկա Թուրքիայի վրայով... Եթէ ապստամբել էինք ռուսի դեմ, պետք է հաշուի առնէինք բոլոր այն ուժերը, որոնցից կարող էին օգտուել մեր նպատակների իրականացման համար»¹¹³:

Հայաստանում տեղի ունեցած ապստամբության մասին կոմիտեն նույն օրը ռադիոհեռագրերի միջոցով տեղյակ պահեց Փարիզում գտնվող ՀՀ պատվիրակությանը, Ազգերի Լիգայի և մեծ տերությունների կառավարություններին՝ Փարիզ, Լոնդոն, Հռոմ, Մոսկվա¹¹⁴: Փետրվարի 18-ին «Հայրենիքի փրկության կոմիտեն» հեռագրեց նաև Վրաստանի կառավարության նախագահ Ժորդանիային՝ Հայաստանում տեղի ունեցած հեղաշրջման մասին՝ խնդրելով վերահստատել Տ. Բեկզադյանին Հայաստանի դեսպանի իր իրավունքների մեջ: «Հայրենիքի փրկության կոմիտեն» Երևանում տեղի ունեցած ապստամբության հաղթանակի մասին տեղեկացրեց բոլոր պետություններին, սակայն բոլոր դիմումները մնացին անպատասխան՝ «ձայն բարբառո անապատի»¹¹⁵: Կոմիտեին շնորհավորեցին

¹¹⁰ «Ազատ Հայաստան», մարտի 20, 1921:

¹¹¹ «Ասլան Ստեփանեանի յուշերը», Թեհրան, 1966, էջ 386:

¹¹² Ս. Վրացյան, Հայաստանը բոլշևիկյան մուրճի..., էջ 577:

¹¹³ Ս. Վրացյան, Գեանքի ուղիներով..., հ. 2, էջ 60:

¹¹⁴ Ս. Վրացյան, Հայաստանը բոլշևիկյան մուրճի..., էջ 563; Գ. Սասունի, նշվ. աշխ., էջ 133-134:

¹¹⁵ Նույն տեղում, էջ 563:

միայն Պարսկաստանի, Թուրքիայի, ԱՄՆ-ի ներկայացուցիչները և Վրաստանի կառավարությունը:

Հայաստանում ապստամբություն բարձրացրած ուժերն ակնկալում էին, որ իրենց օգնության կհասնի ԱՄՆ-ը: 1921թ. փետրվարի 22-ին ԱՄՆ-ի կառավարությանն ուղղված հեռագրում Ս. Վրացյանը հետևյալ կերպ է ներկայացրել Հայաստանում ծավալվող իրադարձությունները. «Հայաստանում խորհրդային իշխանությունը տապալված է: Բոլշևիկների երկու և կես ամիս տևած իշխանությունը ժողովրդին մղեց լրիվ հուսահատության, որն արտահայտվեց համընդհանուր զինված ելույթով... և մի քանի օրվա ընթացքում ընդգրկեց Հայաստանի ամբողջ բնակչությանը»: Հեռագրում նշվում էր, որ ապստամբությունը նախօրոք նախապատրաստված չի եղել, բայց ամբողջ բնակչությունը, բացի բոլշևիկներից, մասնակցել է ապստամբությանը. «Հայ ժողովուրդը, չնայած երկար տարիների փորձությունից հոգնած, չէր կարող երկար տանել բոլշևիկներին՝ այս խելագար մարդկանց, այս քաղաքական բախտախնդիրներին, այս անմիճելի ոճրագործների իշխանությունը... Խորհրդային իշխանության վերականգնումը Հայաստանում,- նշվում է հեռագրի վերջում,- հնարավոր է միան օտարերկրյա ռազմական զգալի ուժերի միջոցով»¹¹⁶:

Չստանալով իր առաջին հեռագրի պատասխանը՝ Ս. Վրացյանը մարտի 7-ին կրկին դիմել է ԱՄՆ-ի կառավարությանը, որտեղ մասնավորապես ասված էր. «Հայաստանի տարածքը մաքրված է բոլշևիկներից... Հայաստանը գտնվում էր ահավոր ճգնաժամի մեջ... Բնակչությանը սննդամթերք մատակարարելու միակ հույսը Ամերիկան էր»¹¹⁷:

Հայրենիքի փրկության կոմիտեն ակտիվ քայլեր արեց՝ սերտ կապերի մեջ մտնելու պարսիկական խաների հետ: Դրան կարող էին նպաստել այն լավ հարաբերությունները, որ 1918-1920թթ. ստեղծվել էին Հայաստանի և Հյուսիսային Պարսկաստանի, իսկ այժմ՝ Հյուսիսային Պարսկաստանի, Չանգեզուրի խաների և Գ. Նժդեհի միջև: Կոմիտեն հույս չունեւր անմիջական օգնություն ստանալ Պարսկաստանից, որովհետև Երևանի և Թավրիզի միջև ընկած տարածություններում կարմիր բանամի զորամասերն էին, իսկ Նախիջևանում նաև քեմալական զորամիավորումներ: Բայց ապստամբները մտածեցին գալիքի մասին, այն մասին, որ պարտության դեպքում իրենց միակ փրկությունը կլինի անցնել Պարսկաստան և հովանավորվել այնտեղի իշխանությունների կողմից:

«Հայրենիքի փրկության կոմիտեն» մեծ ուշադրություն էր դարձնում հայ-ռուսական հարաբերություններին: Դեպի Մոսկվա հղած առաջին հեռագրի պատասխանն այդպես էլ չստացվեց: Նույն բովանդակությամբ (Հայաստանի վիճակի մասին), սակայն ավելի մանրամասն հեռագիր ուղարկվեց Մոսկվա մարտի 10-ին: Այդ հեռագրում ՀՓԿ-ն ազդարարեց փետրվարի 18-ի հաղթանակը, այն գնահատեց իբրև հուսահատության դուռը հասած հայ ժողովրդի արդար հաղթանակի, հայկական ինքնուրույն պետականության վերականգնման ակտ, հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքի դրսևորում: Ս. Վրացյանը այս հեռագրում հատուկ ընդգծեց հայ-ռուսական հարաբերությունների խնդիրը՝ ասելով, որ Ռուսաստանը չէր կարող չճանաչել հայ ժողովրդի անկախ, առանց օտար սվինների խնամակալության ապրելու իրավունքը¹¹⁸:

¹¹⁶ Գ. Գալոյան, Հայաստանը և Մեծ տեղությունները 1917-1923թթ., Երևան, 1999, էջ 433:

¹¹⁷ Նույն տեղում:

¹¹⁸ Ս. Վրացյան, Հայաստանը բոլշևիկյան մուրճի..., էջ 563:

Մարտի 12-ին Մոսկվա ուղարկված նամակ-հեռագիրը առնչվում էր ռուս-թուրքական բանակցություններին. «Հայաստանի կառավարությունը սրանով հայտարարում է, որ նրա համար պարտադիր չեն ՀՀ անունից Ալ. Բեկզադյանի ձեռքով կնքած բոլոր պայմանագրերը, կամ նրա կողմից հանձն առած բոլոր պարտականությունները՝ ինչ իմաստով և ինչ չափով էլ լինեին սրանք¹¹⁹»:

Ռուսաստանի կառավարությունը ոչ միայն անպատասխան թողեց այդ հեռագրերը, այլև ի սկզբանե նպատակադրեց ճնշել ապստամբությունը: Դրա մասին է վկայում Գ. Օրջոնոկիձեի 1921թ. մարտի 20-ին Ս. Վրացյանին ուղղված հեռագիրը. «Ինձ դիմեցին մի խումբ հայ ընկերներ՝ խնդրելով վերցնել Ձեզ դիմելու նախաձեռնությունը և առաջարկել՝ դադարեցնել անիմաստ, անհեռանկար, ժողովրդի համար կործանարար պատերազմը: Վրաստանում կռիվները մենշևիկյան կառավարության և սովետական իշխանության միջև ավարտվեց բանվորագյուղացիական իշխանության լիակատար և վերջնական հաղթանակով: Ամենքի համար պարզ է, որ ամբողջ Անդրկովկասում հասել է բանվորագյուղացիական իշխանության ժամը»: Գ. Օրջոնոկիձեի առաջարկում էր անհապաղ դադարեցնել անհուսալի կռիվը, զենքը լիովին ցած դնել և ճանաչել հեղկոմի իշխանությունը: Մինևույն ժամանակ հավաստացիանում էր, որ ներում կշնորհվի «ավանտյուրայի» բոլոր մասնակիցներին¹²⁰:

Ս. Վրացյանը, սակայն հերքում է այդ հեռագրի ստացման փաստը¹²¹:

Արևմուտքից օգնություն այլևս չէր ակնկալվում, և «Փրկության կոմիտեն» անմիջապես կապի մեջ մտավ Վրաստանի մենշևիկյան իշխանությունների հետ: Ս. Վրացյանի հեռագրին փետրվարի 21-ին Վրաստանի արտաքին գործերի նախարարի օգնական Սաբախտաշվիլին պատասխան հեռագիր ուղարկեց, որտեղ ոչ միայն շնորհավորեց ապստամբության հաղթանակի կապակցությամբ, այլև առաջարկեց. «... անմիջապես դիմել համապատասխան միջոցների՝ խելքի բերելու համար բոլշևիկների կողմից մոլորված հայ գյուղերը¹²²: Սակայն Վրաստանի օրերը հաշվված էին. 1921թ. փետրվարի 25-ին Վրաստանը խորհրդայնացվեց: Խորհրդայնացնելով Վրաստանը՝ Կարմիր բանակի հրամանատարությունը և Հարավային Կովկասի ղեկավար գործիչները իրենց ուշադրությունն ամբողջովին կենտրոնացրին Հայաստանի վրա: Փաստորեն Վրաստանի խորհրդայնացումը կանխեց հայ-վրացական հակաբոլշևիկյան համագործակցությունը:

Ահա թե ինչ է գրում Կ. Սասունին հայ-վրացական հարաբերությունների մասին. «Վրաստանն ու Հայաստանը համաձայնվում են որպես զինակիցներ միասնական կռիվ մղել ռուսական արշավանքների դեմ: Մի կողմ թողեցին իրենց սահմանային վեճերը: Այդ օրերին Վրաստանը դիմադրում էր Թիֆլիսին մոտեցող Կարմիր բանակին և Հայաստանի կողմից կատարուած հեղափոխությունը ու նրա հաջող դիմադրողական քայլերը մեծապես նպաստում էին Վրաստանի ինքնապաշտպանությունը: Շնորհիվ Հայաստանի բոլշևիկների Վրաստանին հայտարարած պատերազմի վրացական կառուարությունը և ժողովուրդը չափազանց շատ էր գրգռուած հայերի դեմ, որոնք պիտի ենթակա լինեին աւերումի, հալա-

¹¹⁹ «Ազատ Հայաստան», մարտի 15, 1921:

¹²⁰ Ս. Վրացյան, Կեսանքի ուղիներով..., հ. 2, էջ 113-114: Ս. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 85-86:

¹²¹ Ս. Վրացյան, Հայաստանը բոլշևիկյան մուրճի..., էջ; Գ. Օրջոնոկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, Երևան, 1950, էջ 64:

¹²² «Ազատ Հայաստան», փետրվարի 23, 1921:

ծանքի, եթե շուտով չհասներ փետրուարեան հեղափոխութիւնը և այդպիսով չբարեկամանային վրացիները հայերի հետ»¹²³:

Հակախորհրդային պայքարում միայնակ չմնալու համար ՀՓԿ-ն փորձեց համագործակցության հաստատել Կովկասի ժողովուրդների հետ և Ռուսաստանի դեմ պայքարը դարձնել համակովկասյան: Սակայն ապարդյուն, որովհետև, ինչպես իրավացիորեն հայտարարում էր Գ. Օրջոնկիձէն. «Վրաստանում խորհրդային իշխանության հաստատումը միանգամից վերացրեց ապստամբության ճակատագիրը Երևանում»¹²⁴:

Այս ամենից հետո «Փրկության կոմիտեն» իր խնդիրը դարձրեց Թուրքիայի հետ հարաբերությունների բարելավումը և նրա աջակցությունը ստանալը: Թուրքիայի, ԱՄՆ-ի, եվրոպական երկրների ներկայացուցիչներին և Ազգային պատվիրակությանն ուղղված ընդարձակ նամակում կոմիտեն հիմնավորեց իր արտաքին քաղաքականության շրջադարձը դեպի Թուրքիա. «Մեր այսօրև և վաղուա իրական դրութիւնը պահանջում է հաշտ և բարեկամական կենակցութիւն մեր հարևան Թուրքիայի հետ: Ուրեմն մեր արտասահմանեան բարեկամները, եթե իրոք բարեկամ են մեզ, չպիտի դնեն Թուրքիային այնպիսի դրութեան մեջ, որ նա նկատի մեզ իբրև դրա դժբախտութեան պատճառը ու լցուի ասելութեան ու վրիժառութեան զգացմունքներով հանդէպ մեզ: Կոնֆերանսի որոշումները մեր վերաբերմամբ ընդունելի պիտի լինեն նաև Թուրքիայի համար: Ահա մեր պահանջը»¹²⁵:

Նույն բովանդակությամբ հեռագիր ուղարկվեց 1921թ. փետրվարի 26-ին Լոնդոնում բացված ռուս-թուրքական բանակցությունների մասնակիցներին: Այս դիմում-հեռագիրը տեղեկացնում էր, որ կոմիտեն ընդունում է Ալեքսանդրապոլի դեկտեմբերի 2-ի հայ-թուրքական պայմանագիրը: Պետք է նշել, որ դեռևս փետրվարի 24-ին ժամը 12-ին Բեհաեդդին Շաքիրն այցելում է Ս. Վրացյանին և զրույցի ժամանակ հայտնում, որ Թուրքիայի և Հայաստանի կառավարությունների միջև շուտով կստեղծվեն բարեկամական փոխհարաբերություններ¹²⁶:

«Հայ և թուրքական բարեկամության խնդիրը» վերնագրով խմբագրական հոդվածում «Ազատ Հայաստան» օրաթերթը գրում էր. «Իրերի պատմական բերումով Անդրկովկասի ժողովուրդների քաղաքական ազատության իրական պաշտպանը կարող է դառնալ միայն Տաճկաստանը: ... Իր ազատագրական պայքարի այս տաժանալի օրերին հայ ժողովուրդը քաղաքական իմաստություն պիտի ունենար թոթափելու իրենց անցյալի դառը հուշերն ու ավանդությունները և ոչինչ չինայելու և հայ և թուրք ժողովուրդների, Հայաստանի և Տաճկաստանի բարեկամությունը հաստատելու համար: Թուրք ժողովրդի, Տաճկաստանի գործուն բարեկամությամբ է միայն, որ հայ ժողովուրդը պիտի կարողանա վերջապես ձեռք բերել տևական խաղաղություն և տևական ապահովություն: Ուրիշ ճանապարհ չկա...»¹²⁷:

1921թ. մարտի 15-ին հատուկ նիստ հրավիրվեց՝ Հ. Օհանջանյանի, Հովհ. Քաջազնունու, Ա. Հովհաննիսյանի, Վ. Մինախորյանի, Ս. Մելիք-Յուլյանի և այլ

¹²³ Գ. Մասունի, Փրկության կոմիտեի գործունեությունը, «Հայրենիք», 1925, թիվ 2, էջ 103:

¹²⁴ Գ. Օրջոնկիձէ, նշվ. աշխ., էջ 59:

¹²⁵ Ս. Վրացյան, Կեանքի ուղիներով, հ. 2, էջ 47:

¹²⁶ «Ազատ Հայաստան», փետրվարի 25, 1921:

¹²⁷ Նույն տեղում, մարտի 15, 1921:

ականավոր գործիչների մասնակցությամբ: Օրակարգում հայ-թուրքական հարաբերությունների հարցն էր: Չնայած խորհրդակցության մասնակիցներից մի քանիսի (Հ. Օհանջանյան, Ա. Հովհաննիսյան) դեմ լինելուն, այնուամենայնիվ, որոշվեց սկսել Թուրքիայի հետ բարեկամական հարաբերություններ, այդ հարաբերությունների հիմքը ընդունել Ալեքսանդրապոլի պայմանագիրը¹²⁸:

Այսպիսով, ապստամբները պաշտպանում էին մի պայմանագիր, որով կասկածի տակ էր դրվում մեր ազգի բուն գոյությունը: Ձավեշտական է նաև այն, որ նույն դաշնակցականները, որոնք պնդում էին, թե պայմանագիրը կնքել են այլընտրանքի բացակայության պատճառով, այժմ կոչ էին անում այն ընդունել: Այստեղ ավելի քան ակնհայտ է, որ դաշնակցականներն ամեն կերպ փորձում էին պահել իշխանությունն իրենց ձեռքում:

«Հայրենիքի փրկության կոմիտեն» նույն օրը այդ որոշման մասին տեղեկացրեց Թուրքիայի կառավարությանը՝ հղելով հետևյալ հեռագիրը, որը նպատակահարմար ենք գտնում ներկայացնել ամբողջությամբ.

«Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովի կառավարութեան արտաքին գործոց կոմիսարութեան, Անգորա

Ազատուելով բոլշևիզմի անունով Հայաստան մտած օտար լծից Հայաստանի ժողովուրդը լիքն է խորունկ վճռականությամբ, ապրելու ազատ ու անկախ և ամենամօտիկ բարեկամական յարաբերութիւններ ստեղծելու իր հարևանների և, առաջին հերթին տաճիկ ժողովրդի հետ: Իմ կառավարութիւնը Տաճկաստանի և Հայաստանի միջև միջազգային նորմալ և բարեկամական յարաբերութիւններ ստեղծելու բազա է համարում այն պայմանները, որոնք ձևակերպուած են անցեալ տարուայ դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում կնքած հայ-տաճկական դաշնագրի մէջ: Տոգորուած լաւագոյն զգացմունքներով դէպի տաճիկ ժողովուրդը և նրա ազատութեան համար մարտնչող Ազգային Մեծ Ժողովի կառաւարութիւնը և ապաւինելով Ձեր կողմից շուտափոյթ կարգադրութեամբ, երկու երկրների միջև բարեկամական կապեր հաստատելու և քաղաքական ու տնտեսական-առևտրական յարաբերութիւնները սկսելու խնդրի մասին, իմ կառաւարութիւնը կարծում է, որ հարցի լուծումը արագացնելու ամենահարմար ձևը անձնական տեսակցութիւնն է:

Հայաստանի կառաւարութեան նախագահ և արտաքին գործոց նախարարութեան վարիչ Ս. Վրացյան»¹²⁹:

Այնուհետև մարտի 18-ին ՀՓԿ-ն օգնության խնդրանքով դիմեց Թուրքիային՝ նկատի առնելով, որ Ալեքսանդրապոլի պայմանագրի 5-րդ կետի համաձայն՝ Հայաստանի վրա հարձակման դեպքում Թուրքիան պաշտպանում է հայոց կառավարությանը և աջակցում Հայաստանին գործով:

Կոմիտեի խնդրանքը բաղկացած էր երեք կետից. «Վերադարձնել Երևանի ռազմաճակատում գտնուող հայ զինուորական ռազմագերիներին, տալ որոշ պայմաններով հայկական ռազմամթերք, առաջին հերթին երեք գծանի կամ տաճկական մաուզերի փամփուշտներ, կամ Ռուսի ու Լեբելի սիստեմի հրացաններ, հաղորդել մեզ, թե արդե՞ք Ազգային մեծ ժողովի կառաւարութիւնը, և եթէ կարող է, ինչ չափով ու եղանակով ու ինչ ժամանակամիջոցով»¹³⁰:

¹²⁸ Ս. Վրացյան, Կեանքի ուղիներով, հ. 2, էջ 66:

¹²⁹ Ս. Վրացյան, Կեանքի ուղիներով, հ. 2, էջ 67:

¹³⁰ «Կոմունիստ», մայիսի 25, 1921:

Ըստ Ս. Վրացյանի Թուրքիան անպատասխան չթողեց «Հայրենիքի փրկության կոմիտեի» ինդրանքը: Վկայակոչելով բժիշկ Ա. Բաբայանի հուշերը՝ նա գրում է, թե Թուրքիայում հայ ռազմագերիների հանդեպ վերաբերմունքը վերոհիշյալ դիմումից հետո փոխվեց և մի քանի մարդու՝ գնդապետ Վեֆիյանի գլխավորությամբ հնարավորություն տրվեց փախչել:

Այդ նուն օրերին թուրքական էմիսարներն իրենց հերթին «Հայրենիքի փրկության կոմիտեին» հավաստիացումներ էին անում, ելույթներ էին ունենում բնակչության առջև: Օրինակ՝ նույն Բեհանդդին Բեյը, Երևանի Գոյ-Մեչետում մահմեդական հավատացյալների առջև հանդես գալով, հայտարարեց, թե քանի ոչ բոլշևիկներից արդեն ազատագրվել է Հայաստանը, «մենք պետք է աշխատենք նրանց հետ»: Մի ուրիշ հավաքությամբ նա ասել էր. «Հայեր դուք մի վախեցեք, մենք ձեզ օգնություն կտանք, զենք և ամեն կարգի ռազմական պաշար»¹³¹:

Բայց ճշմարտությունն այն էր, որ Թուրքիայից ոչ մի օգնություն էլ չեղավ: Քեմալականները միամիտ չէին, որ Մոսկվայում իրենց օգտին վերջացած ռուս-թուրքական կոնֆերանսից հետո, երբ Հայաստանի մասնատումն իրավաբանական ձևակերպում էր ստացել, իրենք իրենց համար լրացուցիչ դժվարություններ ստեղծեին: Նրանց հաշիվների մեջ ՀՓԿ-ին օգնելու հարց չկար, որովհետև լավ գիտեին, որ ապստամբությունը անխուսափելի ճիգ է, ոչ մի հեռանկար չունի և կվերջանա պարտությամբ:

Այս պայմաններում ինչպես կարելի էր ակնկալել, որ թուրք-քեմալականները օգնության կհասնեն Հայաստանին և նրա համար առձակատման մեջ կմտնեին Խորհրդային Ռուսաստանի հետ:

Քեմալականները Ս. Վրացյանին, թեև խրախուսեցին հակախորհրդային պայքարի, խոստացան աջակցել, բայց իհարկե, դրանից այն կողմ չանցան:

Իսկ փետրվարյան ապստամբության մասնակից Կ. Մասունին, փորձելով արդարացնել իրենց գործելակերպը, հետևյալն է գրում. «... Որպես անմիջական դրացի Հայաստանի նոր կառուարութիւնը բարեկամական յարաբերութիւնների մեջ է մտնում Տաճկաստանի հետ և որի շնորհիւ տաճիկները մեզ նեղութիւն չպատճառեցին ո՛չ Ալեքսանդրապոլի, ո՛չ Սուրմալուի ուղղութեամբ: Մենք մեծապես գիտակցում էինք, որ թուրքական վտանգը և հնարավոր խոհեմութիւն գործադրում էինք զոնէ ժամանակաւորապէս Թուրքիային հանդարտ պահելու: Փրկութեան կոմիտեն ոչ միայն մտքով չի անցկացրել թուրքական գորքերին կանչել Հայաստան, բացի նրանից ռազմամթերք ուղեւոր»¹³²:

Պետք է նշել, որ դաշնակցականների՝ թուրքերին դիմելու լուրը մեծ հուզում առաջ բերեց արտասահմանում: Ինչպես վկայում է Արտակ Դարբինեանը, ամեն կողմից մեղադրանքներ է հնչում դաշնակցականների հասցեին¹³³:

Հայաստանի անկախությունը փրկելու նպատակով մարտի վերջերին «Փրկության կոմիտեն» գործադրեց ևս մեկ փորձ: Հայաստանի սոցիալիստական կուսակցությունները դիմեցին Եվրոպայի սոցիալիստներին, Լոնդոնի սոցիալիստական միջազգային երրորդ ինտերնացիոնալին, բոլոր սոցիալիստական կուսակցություններին:

¹³¹ **Ա. Եսայան**, Հայաստանի միջազգային իրավական դրությունը 1920-1922, Երևան, 1967, էջ 183-184:

¹³² **Կ. Մասունի**, Փրկութեան կոմիտեի գործունեութիւնը, «Հայրենիք» ամսագիր, 1925, թիվ 2, էջ 103:

¹³³ **Ա. Դարբինեան**, Հայ ազատագրական շարժման օրերեն, (յուշեր 1890 էն 1940), Երևան, 2003:

Ընդհանրացնելով այս ամենը՝ պետք է նշել, որ ճիշտ է նկատում Գ. Գալոյանը, գտնելով, որ ՀՓԿ-ի ստեղծումով առաջացավ մի տեսակ եռիշխանություն. ճիշտ է խորհրդային իշխանությունը դուրս էր եկել Երևանից, բայց շարունակում էր պայքարը խռովությունը ճնշելու համար, իսկ երրորդ կողմն էլ Ջանգեզուրն էր, որը դեռևս 1920թ. դեկտեմբերի 25-ին Տաթևում հրավիրված զանգեզուրցիների համագումարում հայտարարվել է ժամանակավորապես ինքնավար¹³⁴:

Միաժամանակ, ինչ վերաբերում է «Փրկության կոմիտեի» և նրա նախագահ Ս. Վրացյանի արտաքին քաղաքականությանը, ապա ապստամբության հաղթանակից ի վեր այն դրական արդյունքի չհանգեցրեց, քանզի աշխարհաքաղաքական նոր գործընթացներն ավարտվել էին և արտաքին ոչ մի շահագրգռություն անհնար էր գտնել հոգուտ հայոց:

Нателла Григорян – *Внутренняя и внешняя политика Комитета Спасения Родины.* – В статье представлена деятельность Комитета Спасения Родины с 18 февраля 1921 года до 2 апреля. Подробно претставлены важнейшие достижения Комитета Спасения, имеющиеся как во внутренней, так и во внешней политике, а также допущенные ошибки.

Natella Grigoryan – *Internal and External Policies of Saving Committee of Motherland.* – In the article it is presented the activity of Saving Committee of Motherland from 18th of February till 2nd of April in 1921. It is thoroughly presented the serious achievements of Saving Committee as in inner and foreign policies, as the committed mistakes.

¹³⁴ Գ. Գալոյան, նշվ. աշխ., էջ 440:

ՆԻԿՈՄԻԴԻԱ ՆԱՀԱՆԳԻ «ԲՅՈՒԹԱՆԻԱ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ (1910 - 1912 ԹԹ.)

ՄԱՐԻԱՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Նիկոմիդիան Օսմանյան կայսրության հայկական գաղթավայրերից մեկն էր: 1878 թ. դրությամբ Նիկոմիդիա գավառում հայերի թիվը հասնում էր 70.000¹³⁵: Թեև հայերն ապրում էին Նիկոմիդիայի տարբեր բնակավայրերում, բայց հիմնականում կենտրոնացած էին Նիկոմիդիայի գավառակենտրոն Իզմիտում, Պարտիզակում և Ատաբազար քաղաքներում և Օվաճրզ գյուղավանում: Նիկոմիդիա գավառում հայերը կարևոր տնտեսական լծակներ ունեին: Բավական է ասել, որ Իզմիտի կենտրոնական քարակերտ երկու շուկայի տերերը հայեր էին, իսկ Պարտիզակում պաշտոնավարում էին ոչ թե թուրք, այլ հայ պաշտոնյաներ, և այդ քաղաքը հիմնադրման օրվանից մնում էր զուտ հայկական բնակավայր¹³⁶: Իզմիտում 20-րդ դարի սկզբին գործում էին հայկական 8 դպրոց: Դրանցից մեկը՝ Ազգային մեծ վարժարանը, տալիս էր միջնակարգ կրթություն: Պարտիզակում կար հայկական 4 դպրոց, որոնցից մեկը՝ ամերիկյան միսիոներների հիմնած վարժարանը, ապահովում էր միջնակարգ կրթություն: Ատաբազարում կար հայկական 5 դպրոց: Դրանց թվում էր միջնակարգ ուսումնական հաստատություն համարվող Հայուհյաց դպրոցը՝ հիմնված ամերիկյան բողոքականների կողմից: Օվաճրզը հայտնի էր Վարդուհյան ազգային վարժարանով, իսկ Արմաշ գյուղը համարվում էր Նիկոմիդիայի մշակութային կարևոր կենտրոններից մեկը մասնավորապես իր Դպրեվանքով: Այն ուներ տպարան և դպրոց: Առնվազն մեկ դպրոց ունեին Նիկոմիդիայի գրեթե բոլոր հայաշատ գյուղերը:

«Բյուրանիա» շաբաթաթերթը լույս է տեսել 1910-1912 թթ. նախ՝ Կ.Պոլսում՝ (1910թ. թիվ 1), հետո՝ Իզմիտում (1910թ. թիվ 2 - 1911թ. թիվ 9), ապա՝ Ատաբազարում (1911թ. թիվ 10-ից մինչև վերջ): Այն սկզբում տասնօրյա պարբերականությամբ էր տպագրվում, իսկ 1911 թվականի թիվ 22-ից մինչև հրատարակության վերջին շրջանը լույս էր տեսնում շաբաթը երկու անգամ:

«Բյուրանիան» ազգային - գրական, քաղաքական-տնտեսական շաբաթաթերթ էր: Ծրագրային զեկույց-խմբագրականում նշվում էր պարբերականի ուղեգիծը: Այն ձգտում էր դառնալ անկողմնակալ մամուլի օրգան, որի շուրջ կհամախմբվեին Նիկոմիդիա գավառի երիտասարդ մտավորականները¹³⁷: Տեղական խնդիրներին զուգահեռ՝ պարբերականը պիտի անդրադառնար նաև պետական կյանքի կարևոր հիմնահարցերին: Խմբագրությունը հիմնականում կատարել է իր առջև դրված նպատակները՝ վերածվելով հայ ժողովրդին մտահոգող ժամանակի համար առաջնահերթ խնդիրների լուծմանը հետամուտ գավառաթերթի:

«Բյուրանիայի» պատասխանատու-տնօրենը Հակոբ Ղ. Սարգիսյանն էր, իսկ արտոնատերը՝ Սիմոն Ղ. Սարգիսյանը: Թերթի խմբագրությունը գտնվում էր

¹³⁵ *Մինաս Գասպարյան*, «Հայերը Նիկոմիդիո գավառին մեջ», Պարտիզակ, 1913, էջ 24

¹³⁶ «Հայ ժողովրդի պատմություն», Երևան, 1974, հ.5, էջ 535

¹³⁷ «Բյուրանիա», Կ.Պոլիս, 1910, թիվ 1, էջ 1

Իզմիտում, բայց այն կենտրոնատեղեր էր հաստատել Կ.Պոլսում, Իզմիրում, Կալկաթայում, Գատը-Գյուղում: Հիմնական աշխատակիցներն էին Աշոտ Պազպազյանը, Հակոբ Մելիտոսյանը, Հովհաննես Փիլիկյանը, Հակոբ Խաչերյանը, Միհրան Փափազյանը, Արշավիր Բեիսյանը, Թորոս Սոֆյանը, Անդրանիկ Զալգյանը, Կարապետ Զիլյանը, Մանասե Տոնիկյանը, Հարություն Մանթաշյանը, Կարապետ Մերեթյանը, Հակոբ Քյուֆեճյանը, Աղասի Մկրտայանը և այլք:

«Բյութանիան» չի եղել ՀՅԴ պաշտոնաթերթ, սակայն այն ՀՅԴ ուղղվածություն ունեցող պարբերական էր, որը յուրաքանչյուր պատեհ առիթով ներկայացնում էր այդ կուսակցության տեսակետները այս կամ այն հարցի շուրջ, նաև անդրադառնում էր ազգային կյանքի տարբեր ոլորտներում ՀՅԴ իրականացրած ծրագրերին: «Բյութանիան» բանավիճային հողվածներով հանդես էր գալիս մասնավորապես հնչակյան կուսակցության և նրա օրգան «Երկիր» թերթի դեմ՝ քննադատելով հնչակյանների գործելակերպը մասնավորապես Նիկոմիդիա գավառում: Հրատարակության վերջին ամիսներին «Բյութանիան» հիմնականում քաղաքական թեմաներ էր վերհանում իր էջերում՝ լուսաբանելով օսմանյան խորհրդարանական ընտրությունների ընթացքը և հայ ժողովրդի դիրքորոշումը իր քվեների տնօրինման կամ բաշխման խնդրում: Թերթի՝ մեր ձեռքի տակ եղած համարները թույլ են տալիս պնդել, որ հենց այս շրջանում (1912թ. վերջին համարներում) «Բյութանիան» դառնում է անկախ պարբերական: «Բյութանիան» քննադատում էր պետական այն քաղաքականությունը, որի հետևանքով հայերը իրենց ազգաբնակչության թվի համեմատ պատգամավորներ չէին կարողանում ունենալ խորհրդարանում: Բացի այդ՝ թերթը բարձրացնում էր մի քանի կարևոր հարց: Առաջինը վերաբերում էր Ազգային երեսփոխանական ժողովում գավառահայերի քվեներին. «Այսօր մենք ունինք Ազգ. Երեսփ. Ժողով մը՝ որ իր կազմութեան գրեթէ երեք չորրորդով կը ներկայացնէ Պոլսահայուն ձայնը, և հազիւ մէկ չորրորդի տեղ մը տուած է գաւառին»¹³⁸: Շաբաթաթերթը պահանջում էր վերաքննել ու բարեփոխել Ազգային սահմանադրությունը, որը պետք է սահմաններ հավասար ներկայացուցչություն. «Գաւառի Հայութիւնը կը կազմէ մեծամասնութիւնը, և հետեւաբար իսկական մեծամասնութիւնը կը ներկայացնեն միայն ա՛յն երեսփոխանները, որոնք գաւառահայի ցաւերուն, պէտքերուն ու փափաքներուն թարգմանը կը հանդիսանան»¹³⁹: «Բյութանիան» պահանջում էր, որ «Գաւառի Հայը Պօլիսի Հայուն հետ հաւասար ձայն ունենայ, որ համեմատական բաշխում կատարուի հայ ազգաբնակչութեան ձայնատուութեան համար»¹⁴⁰: «Բյութանիան» պահանջում էր, որ ժողովուրդն ուղղակի ընտրեր իր երեսփոխաններին, ընդ որում կղերական պատգամավորները նույնպես «ընտրուին ժողովուրդէն և ոչ թէ Պօլսոյ կղերէն»: Գավառաթերթը պահանջում էր, որ հայ կանայք ևս մասնակցեն «ազգային կրօնային-մշակութային բոլոր ձեռնարկներուն մէջ»: «Բյութանիայի» մյուս պահանջը վերաբերում էր Ազգային սահմանադրության աշխարհականացմանը: «Մենք չենք ուզեր մնալ այլեւս իբրեւ կրօնական համայնք մը՝ որպէս դարձուց և ճանչըցուց մեզ Համիտը, այլ իբր **Հայ Ազգութիւն**», - գրում էր գավառաթերթը: «Բյութանիան» առաջարկում էր Ազգային սահմանադրության մէջ կատարել այնպիսի փոփոխություն, որը հնարավորություն կտար «Հայ Բողոքական և Հայ Կաթոլիկ

¹³⁸ Նույն տեղում, Ատաբազար, 1911, թիվ 10, էջ 402

¹³⁹ Նույն տեղում

¹⁴⁰ Նույն տեղում, Ատաբազար, 1911, թիվ 15, էջ 443

հասարակություններէն ևս անհատներ կամ մարմիններ կարենան մասնակցիլ մեր կրթական կամ մշակութային գործերուն մէջ»¹⁴¹:

Խմբագրակազմը համոզված էր, որ մամուլը հանրային գործերի վրա մեծ ազդեցություն ունէր և կարող էր հզոր զենք լինել ժողովրդին հանուն ազատութեան առաջնորդելու կամ ազատ և ինքնավար կյանքով ապրելու համար¹⁴²: Թերթի անցած ուղին և որդեգրած քաղաքականությունը պարզորոշ երևում է 1911 թ. դեկտեմբերի 24-ին «Անցնող տարին» խմբագրականից¹⁴³: Թերթը փաստում էր, որ համիդյան բռնապետության շրջանում հայերը դժգոհում էին, թե «ազատութիւն չ'ունինք, ձեռքերնիս կապուած է. բան մը չենք կրնար ընել»: «Բյութանիան» հարց էր տալիս, թե 1908 թ. հեղաշրջումից հետո անցած 4 տարվա ընթացքում, երբ «ազատութիւն ունէինք, ի՞նչ ըրինք»¹⁴⁴: Առաջինը խանդավառութեան տարի էր: Կազմը վեցին ազգային միություններ, որոնք ավելի շատ խոսքով էին բարեկարգում ազգային դպրոցներն ու հաստատություններն, ուստի դրանց մեծ մասի անունն իսկ չ'ունաց դեռ տարին չ'բոլորած: Երկրորդ տարում ջանքեր են գործադրվում մշակութային հաստատությունների բարեկարգման համար, բայց միջկուսակցական պայքարը խանգարում է այդ գործընթացին: 1911 թվականը «Բյութանիան» համարում է անցման շրջան, երբ կոնկրետ Նիկոմիդիայի գավառում չենք հանդիպում որևէ «աչքառու երեւոյթի մը, որ ծառայէր լուսաւորութեան և զարգացման, իսկ միութիւնները... գացած են դէպի ետ, դէպի կազմալուծում»¹⁴⁵: Շաբաթաթերթի կարծիքով՝ միակ դրական երևույթը «Բյութանիայի» խմբագրության նախաձեռնությամբ Ստաբազարում կազմված Ուսուցչական միությունն էր, որի կանոնագիրը, սակայն, չէր վավերացվել ազգային վարչությունների կողմից: Պարբերականն ընթերցողներին առաջարկում էր նոր տարում աշխատել բուռն կերպով, որ լուծվեն տարբեր բնագավառներում կուտակված խնդիրները¹⁴⁶: Պարբերականը միևնույն ժամանակ թերահավատորեն է մոտեցել ազգային մարմիններին, քանի որ նրանք գործառույթները թերի էին կատարում և հեռու էին «մամուլին դէրը և քննադատութեան արժէքը ըմբռնելէ»¹⁴⁷: Իզմիտի թաղային խորհրդի և գավառային երեսփոխանական ժողովի անդամներին «Բյութանիան» համարում էր պաշտոնի մուրացկաններ ու կեղծ ազգայինճիներ, որոնց կոչ էր անում լինել բարեխիղճ. «Ձեր ներկայացուցած զանգուածը, որ ազգ կը կոչուի՝ այնպիսի կարիքներ ունի, որոնց արդիւնատր լուծումը այս ընթացքով չէ, որ վերջ պիտի գտնայ»¹⁴⁸: Ազգային մարմինների խոտոր գործելակերպը «Բյութանիան» պայմանավորում էր գավառահայության՝ իրենց իրավունքների չիմացությամբ և ազգային կրթության նկատմամբ նրանց կողմից դրսևորվող անտարբերությամբ:

1908 թ. հեղաշրջումից հետո արևմտահայության սոցիալ-տնտեսական վիճակը մնաց անփոփոխ: Գավառում և հայկական գաղթավայրերում դրությունը առավել սրված էր, քանի որ հիմնախնդիրներին ականջալուր եղող չկար օսմանյան կայսրության գավառակենտրոններում: Արևմտահայությանը մտահոգող և

¹⁴¹ Նույն տեղում

¹⁴² Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 2, էջ 2-3

¹⁴³ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 32, էջ 533-534

¹⁴⁴ Նույն տեղում, էջ 533

¹⁴⁵ Նույն տեղում

¹⁴⁶ Նույն տեղում

¹⁴⁷ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 3, էջ 1

¹⁴⁸ Նույն տեղում

լուծման սպասող հիմնահարցերն արծարծվում էին հիմնականում տեղական ազգային մարմինների ժողովների ժամանակ: Դրանք առանձնահատուկ ուշադրության էին արժանանում գավառական մամուլի օրգանների կողմից, որոնք պարբերաբար կոչերով դիմում էին թե՛ կառավարական շրջանակներին, թե՛ ազգային կառույցներին՝ խնդրելով կամ պահանջելով բարելավել ժողովրդի կենսապայմանները և տարբերակներ գտնել տնտեսական թնջուկի վերացման համար: Այս առումով հատկապես աչքի էր ընկնում «Բյութանիա» շաբաթաթերթը, որը տնտեսական բաժնին մեծ տեղ էր հատկացնում բոլոր համարներում: Այլ հարց է այն, որ գավառի թերթերի հրապարակումները մատնվում էին անուշադրության և մնում էին անտեսված: «Բյութանիան», սակայն, շարունակում էր հետևողականորեն անդրադառնալ ու ներկայացնել Թուրքիայի տնտեսական քաղաքականությունը, որը հատուկ մշակված ծրագիր ուներ հայության ձեռքից տնտեսական լծակները խլելու, հայ ժողովրդին ունեգուրկ և աղքատ դարձնելու, հացի խնդիրը լուծելու նպատակով հայությանն իր հայրենիքից արտագաղթեցնելու համար: Շաբաթաթերթը հանգամանորեն քննարկում էր հողային հարցը, ներկայացնում էր իրենց տները վերադարձող հայ գաղթականների հանդեպ Թուրքիայում իրականացվող հայահալած քաղաքականությունը, երբ պետական համապատասխան օղակներն ընդունում էին այնպիսի որոշումներ, որ հայրենադարձվող հայերը չկարողանային ետ ստանալ նախորդ կոտորածների ժամանակ իրենցից խլված հողերը, տները և կորցրած ունեցվածքի փոխհատուցումը: «Բյութանիան» փաստեր էր բերում նաև այն մասին, որ Թուրքիայում այլ երկրներից (Բոսնիայից, Ռումինիայից, Ռուսաստանից) վերաբնակվող և իսլամ դավանող գաղթականների համար բոլորովին այլ ծրագիր էր իրագործվում, որով նրանց համար ապահովվում էին լավագույն պայմաններ «Անատոլիայում» վերաբնակվելու և բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Պարբերականը հարցապնդմամբ էր հանդես գալիս. «Արդեօք միայն իսլամ գաղթականներն են որ օտար հորիզոններու տակ կը տուայտին, և այդ ճակատագիրը աւելի դժնդակ կերպով չիշխէ՞ր նաև հայ և ընդհանրապէս քրիստոնէայ ուրիշ գաղթականներու վրայ, որոնք առաւելութիւնը ունին մանաւանդ այս երկրի հարագատ գաւակները ըլլալու, և որոնք հայրենիքի հայրենի հողի սուրբ գաղափարովը տոգորուած՝ անկէ կը սպասեն կարկառուն ձեռքի մը՝ որ սակայն չի գար իրենց օգնութեան»¹⁴⁹: «Տնտեսական բարգավաճում և գաղթական հարց» հոդվածի հեղինակ Աշոտ Պազպազյանը հանգում էր այն եզրակացության, որ թուրքական կառավարությունը ձևականորեն ցուցադրում էր, թե իբր փորձում էր բավարարել հայրենիք վերադարձած հայ գաղթականների արդարացի պահանջները, այնինչ մինչև այդ կառավարական խոստումները կյանքի կկոչվեին, գաղթական հայը դատապարտված էր անտուն և կարիքի մեջ մնալու: Ինչպէս և կարելի էր հավատալ, թե Թուրքիայում հավասարություն և արդարություն էր տիրում¹⁵⁰:

Հողային հարցը Թուրքիայում «հայկական հարց նկատուեցաւ»¹⁵¹: Այդ կենսական խնդիրը լուծելու համար «քննիչ յանձնախումբեր եկան գացին, ծրագիրներ մշակուեցան, վճիռներ տրուեցան, բայց մնացին չգործադրուած»¹⁵²: «Ուր է

¹⁴⁹ Նույն տեղում, Բզմիտ, 1910, թիվ 26, էջ 277

¹⁵⁰ Նույն տեղում, էջ 278

¹⁵¹ Նույն տեղում, էջ 191, նույն տեղում, Բզմիտ, 1910, թիվ 15, էջ 442

¹⁵² Նույն տեղում

արդարությունը» խմբագրականում հողային հարցը «Բյութանիան» համարում էր տնտեսական խնդիրների հիմնաքարը և դրա անլուծելի մնալու հետ էր կապում երկրում ծայր առած դժվարությունների վերաճումը քաղաքական պայքարի, ինչը կարող էր հանգեցնել թուրքական պետության փլուզմանը¹⁵³: Հողային հարցին են նվիրված «Բյութանիայի» 1911 թ. հրապարակումների մեծ մասը: 1912թ. հունվարի 5-ի «Անցնող տարին» խմբագրականն ամբողջությամբ անցած տնտեսական տարվա վերլուծությունն է: Բերվող փաստերը վերցված են Նիկոմիդիա գավառի տնտեսական կյանքից: Թերթը հիմնականում աննպաստ էր համարում տնտեսական տարին, ինչը պայմանավորում էր Թուրքիայի սոցիալ-քաղաքական իրադրությամբ, պատերազմական կացությամբ, հայ ժողովրդի հանդեպ կիրառվող տնտեսական ճնշիչ քաղաքականությամբ և այլն¹⁵⁴: «Բյութանիան» համոզված էր, որ անգամ համիդյան բռնապետության շրջանում Նիկոմիդիայի հայ ազգաբնակչությունը կարողացել էր տնտեսական առաջընթաց ունենալ, բայց երիտթուրքական կառավարությունն այնպիսի իրավիճակի մեջ էր դրել նրանց, որ նրանք աստիճանաբար մնալով անգործ՝ վերածվում էին աղքատացող, տարիների ընթացքում կուտակված ունեցվածքի հաշվին գոյատևող զանգվածի: Թերթը որպես օրինակ էր բերում Իզմիտի շրջանը, որտեղ տարիներ շարունակ մարդիկ ապրում էին ծխախոտի մշակությամբ և վաճառքով: Սահմանադրական հռչակված Թուրքիան մենաշնորհ է հաստատում, և «Ծխախոտի ԲԵԺ» կոչվող ընկերությունը ոչ միայն խլում է աշխատանքը ժողովրդի ձեռքից, այլև շահագործում է մարդկանց՝ հաստատելով չնչին աշխատավարձ, ծխախոտի բարձր գներ ու անմշակ թողնելով հսկայական հողատարածքներ: «Բյութանիան» հակասություն է տեսնում ստեղծված իրավիճակում. «Յանուն ինչի՞ են այդ մենաշնորհները, յանուն Պետական Գանձի շահու՞ն: Պետական շահ կը նշանակե ժողովուրդի շահ. Այնտեղ ուր ժողովուրդը կը վնասե, անհնար է, անկարելի է մտածել, որ պետութիւնը կը շահի, որքան ալ լեցուին պետական գանձարանները»¹⁵⁵: «Բյութանիան» իր վերլուծությունը հավաստի դարձնելու նպատակով վկայակոչում է Կ. Պոլսի «ժողովրդային իրաւունքներու ակներեւ պաշտպան» ՀՅԴ «Ազատամարտ» օրաթերթում «Ծխախոտի ԲԵԺ» ընկերության մասին գրված հոդվածը: Այդտեղ «ԲԵԺ» համարվում էր հողագործի նյութական շահերի համար վնասակար ընկերություն: «Բյութանիայի» կարծիքով՝ «ԲԵԺ» գլխավոր նպատակն է «Մեծագույն շահ մը ձեռք ձգել իր բաժնետերերուն, հոգ չէ թէ իր գործելու պայմաններն ու եղանակը նպաստաւոր թէ աննպաստ ըլլան ծխախոտի մշակիին կենսական շահերուն»¹⁵⁶: «Բյութանիան» ժողովրդին առաջարկում էր համախմբված ձևով իրենց պատգամավորների միջոցով օսմանյան խորհրդարանում քննարկման առարկա դարձնել «Ծխախոտի ԲԵԺ» ընկերությանը մենաշնորհից զրկելու հարցը: Չէ՞ որ հակառակ դեպքում «ԲԵԺ» պիտի «առ նուազն քառորդ դար եւս երկրագործ տարին ԾՈՒԾԸ քամի»¹⁵⁷: Թուրքիայի շոգեկառքի ընկերությանը տրված մենաշնորհով էլ բարձրացվել էին Իզմիտի և շրջակա հայկական գյուղերի համար նախատեսված տոմսերի սակագները, և այդպիսով դժվարացել էր ապրանքափոխանակումը:

¹⁵³ Նույն տեղում, Ատաբազար, 1911, թիվ 17, էջ 457-458

¹⁵⁴ Նույն տեղում, Ատաբազար, 1912, թիվ 1, էջ 537

¹⁵⁵ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 11, էջ 123

¹⁵⁶ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 16, էջ 186

¹⁵⁷ Նույն տեղում

Նման քայլերը նպաստելու էին Իզմիտի տնտեսական մահվանը. սա էր «Բյութանիայի» եզրակացությունը¹⁵⁸: Իսկ «Ընկերային և տնտեսական կյանքը Իզմիտի մեջ» հոդվածում «Բյութանիան» Կ.Պոլսից ամեն տեսակետով մեկ տարով էտ մնացած էր համարում Իզմիտը, որը ժամանակին համարվում էր Թուրքիայի մայրաքաղաքի արվարձաններից մեկը¹⁵⁹:

«Բյութանիան» վկայակոչում էր Թուրքիայի տնտեսական քաղաքականության բացերից ևս մեկը, որի պատճառով հարյուրավոր հայ մարդիկ էին մահանում: Պետությունն անուշադրության էր մատնում այն հանգամանքը, որ մի շարք հայկական գյուղերի մոտակայքում առաջացել էին ճահիճներ: Դրանք չէին չորացվում: Բնական է, որ հեկտարներով բերրի հողեր էին վերածվում ճահիճների՝ մնալով անմշակ և այդ գյուղերի բնակիչների մոտ առաջացնելով զանազան մահաբեր հիվանդություններ: Օրինակ էր բերվում Մարմարաձրգ գյուղը, որտեղից ստացված թղթակցությունից պարզվում էր, որ 300 տուն ունեցող գյուղում 2 ամսվա ընթացքում 107 մարդ էր մահացել ճահճային տենդից¹⁶⁰:

Ընթերցողներին ոգևորելու նպատակով տնտեսական խորագրերի ու բաժինների նյութերը ներկայացնում էին նաև տնտեսության այս կամ այն ոլորտում հայերի ունեցած ձեռքբերումները: Մեծ հոդված կա Իզմիտի սանձագի շերամաբուծական հաջողությունների մասին¹⁶¹: Նշվում էր, որ էթե Ատաբազարում արհեստագործությունն էր զարգացած, իսկ Պարտիզակը, Օվաճրգը և դրանց շրջակա գյուղերը մշակում էին ծխախոտ, ապա Իզմիտի սանձագում զարկ էր տրված թթենիի մշակության գործին և շերամաբուծությանը¹⁶²:

Տնտեսական խնդիրները լուծելու համար «Բյութանիան» առաջարկում էր հիմնել հասարակական միություններ, որոնք պիտի գիտելիքներով, գործիքներով ապահովեին ժողովրդին: Բացի այդ՝ ժողովուրդն իր հերթին պիտի ակտիվ լիներ և պետությունից պահանջեր պաշտպանել օրենքով սահմանված իր իրավունքները: Միևնույն ժամանակ «Բյութանիան», իհարկե, հասկանում էր, որ հայ ժողովուրդը գործ ուներ թուրքական բռնապետության հետ, որտեղ սոցիալ-տնտեսական հիմնահարցերը սերտորեն կապված էին քաղաքական խնդիրների, մասնավորապես Հայկական հարցի լուծման հետ¹⁶³:

Հայաշատ Նիկոմիդիա գավառը լճացած կյանքով էր ապրում: «Տգիտութիւնը, անտարբերութիւնը, անհետաքրքրութիւնը իսպառ կասեցուցած են փտած անիւր մեր գաւառի յառաջադիմութեան: Որպէս զի բուժուի՝ տարիներու ճիգը պէտք է», - գրում էր «Բյութանիան»¹⁶⁴: Թերթի կարծիքով՝ գավառին այս վիճակից կարող էին հանել կրթօջախներն ու վարժարանները, որոնք սակայն, նույնպես դոփում էին տեղում և վերանորոգման կարիք ունեին¹⁶⁵: Չկա «Բյութանիայի» որևէ համար, որում 2-3 հրապարակում չլինի՝ նվիրված կրթական հիմնախնդիրներին: Ընդ որում, թերթը ոչ միայն վերլուծում էր ոլորտի առջև ծառայած խնդիրները, փորձելով գտնել դրանց առաջացման պատճառները և լուծման ուղիները,

¹⁵⁸ Նույն տեղում, էջ 122

¹⁵⁹ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 27, էջ 294

¹⁶⁰ Նույն տեղում, Ատաբազար, 1911, թիվ 11, էջ 409

¹⁶¹ Նույն տեղում, Ատաբազար, 1911, թիվ 13, էջ 429

¹⁶² Նույն տեղում

¹⁶³ Նույն տեղում, Ատաբազար, 1911, թիվ 15, էջ 442

¹⁶⁴ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 12, էջ 140

¹⁶⁵ Նույն տեղում

այլև իր թղթակիցների միջոցով ամբողջական պատկերացում էր տալիս Նիկոմիդիա գավառի քաղաքների ու գյուղերի դպրոցներում տիրող իրավիճակի մասին: Այդ թղթակցություններն ու վերլուծական հոդվածները գետեղված են «Մեր Գավառը», «Պոլիսեն դուրս», «Նիկոմիդիան գործեր», «Ակնոցի տակեն. Ատաբազարյան նոթեր» խորագրերի ներքո: «Բյութանիան» տպագրում էր կրթական հիմնահարցերի շուրջ հասարակության ունեցած տարբեր կարծիքներն ու տեսակետները: Դա հնարավորություն էր ստեղծում հասարակական քննարկումների համար: Այդ ճանապարհով էր, կարծես, թերթն ուզում կրթական որևէ հարցի համար այնպիսի լուծում գտնել, որը կգոհացներ հասարակության բոլոր շերտերին: Օրինակ բերենք Ատաբազարի Կենտոնական վարժարանի կրթական ծրագրի ու մեթոդների, ուսուցիչների որակավորման և վճարման կարգերի վերաբերյալ «Բյութանիայի» էջերում ծավալված քննարկումները, թերևս և դեմ, հաճախ իրարամերձ կարծիքների բախումը, երբ կողմերը փաստերով էին փորձում դիմացինի տեսակետի սխալ լինելն ապացուցել¹⁶⁶: Կրթական խնդիրների վերաբերյալ բանավիճակին հոդվածները հիմնականում տեղ էին գտնում «Ազատ բեմ» խորագրի ներքո: Այս նյութերը փաստում էին 3 բան: Ներկայացնենք դրանք:

- Նիկոմիդիա գավառում ազգային դպրոցներն ու վարժարանները մեծ մասամբ բարձիթողի վիճակում էին, իսկ դրանց աշխատակազմին մտահոգում էին ոչ թե համակարգային խնդիրներն ու դրանց լուծման ուղիների փնտրտույքը, այլ այն, թե ինչպես կարգավորելին իրենց աշխատավարձն ու նյութական խնդիրները, թեև այդ աշխատանքը լիարժեք չէին անում:

- Գավառի կրթօջախների խնդիրների լուծման հարցով զբաղվող ազգային մարմինները, թաղական խորհուրդները լրջորեն չէին պատկերացնում ու զբաղվում կրթական խնդիրներով, քանի որ ազգային կրթությունը չէին համարում ազգապահպանության կարևոր բաղադրիչ:

- Գավառի հայ ազգաբնակչությունը հիմնականում անտարբեր կեցվածք ուներ կրթական հիմնախնդիրների նկատմամբ, ինչը պայմանավորված էր բռնազավթված հայրենիքում նրանց իրավագուրկ ու վտանգված լինելու հանգամանքով:

Կրթական ոլորտի բարեփոխումներին նպաստելու նպատակով «Բյութանիան» հիմնականում թղթակցությունների միջոցով ներկայացնում էր որևէ քաղաքի կամ դպրոցի ձեռքբերումները կամ բացթողումները: Թերթը գոհացուցիչ էր համարում, ասենք՝ Պարտիզակի¹⁶⁷ կամ Մերտեկեոզի¹⁶⁸ վարժարանների վիճակը, բայց քննադատում էր Օվաճըզի դպրոցների անբարեկարգ ու անխնամ վիճակը¹⁶⁹: Թերթը դիմում էր օվաճըզցիներին, որոնց աղջիկներն ու կանայք չգիտեին հայերեն տառերը, որ նրանք ուշքի գալին և երեխաներին տալին հայեցի դաստիարակություն¹⁷⁰:

«Բյութանիան» արձանագրում էր այն փաստը, որ թեև Նիկոմիդիա գավառի հայաբնակ գյուղերից յուրաքանչյուրում կար դպրոց, բայց դրանցից շատերը գրեթե «անգործածելի և բոլորովին անյարմար» էին¹⁷¹: Այդ կրթօջախների ուսումնա-

¹⁶⁶ «Բյութանիա», Իզմիտ, 1910, թիվ 3, էջ 2-3, 1910, թիվ 4, էջ 39-40, 1910 թիվ 9, էջ 93, 1910, թիվ 5, էջ 55

¹⁶⁷ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 14, էջ 161

¹⁶⁸ Նույն տեղում, էջ 164

¹⁶⁹ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 15, էջ 171

¹⁷⁰ Նույն տեղում, էջ 172

¹⁷¹ Նույն տեղում, Ատաբազար, 1911, թիվ 24, էջ 503

կան ծրագրերը մեծամասամբ կախված էին ուսուցիչների քմահաճույքից կամ նախասիրություններից: Ընդ որում, ուսուցիչները հիմնականում ավարտել էին նախակրթարաններ և իրենց աշխատանքը կազմակերպում էին՝ անգամ իրենց ձեռքի տակ չունենալով Ուսումնական կրթական խորհրդի ծրագիրը: Դժվար էր գտնել պատրաստված ուսուցիչներ գյուղական դպրոցների համար, որովհետև չնչին էր նրանց աշխատավարձը (տարեկան 20-25 ոսկի): Թերթը մատնանշում էր 2 պատճառ, որոնք քայքայման էին հասցրել գյուղական դպրոցները.

1. դպրոցների աղքատիկ բյուջեն,
2. գործին քաջատեղյակ ուսուցչական կադրերի պակասը:

Իրավիճակը շտկելու նպատակով «Բյուրանիայի» խմբագրությունը Նիկոմիդիա գավառի Ուսումնական կենտրոնական խորհրդին առաջարկում էր նախ՝ մշակել գյուղական դպրոցների համար հատուկ ուսումնական ծրագիր, ապա՝ դպրոցներին ապահովել այդ ծրագրի համեմատ դասավանդել կարողացող ուսուցիչներով: Բացի այդ՝ գյուղերի ազգային մարմինները պիտի աշխատանք տանեին ազգաբնակչության շրջանում, որ նրանք ուսուցիչների աշխատավարձի համար տարեկան հատկացնեին առնվազն 36 ոսկի: Բավարար աշխատավարձի դեպքում միայն ուսուցիչները չէին լքի գյուղական դպրոցները¹⁷²: «Ուսուցիչները իրենց կեանքովն ու համոզումներովը պետք է ըլլան տիպար. շինելու համար աշակերտությունը: Թող չըսուի, թե չունինք պետք եղած ուժերը. ունինք և կը կարծենք՝ բաւականին չափ: Հարկ է փնտռել և օգտագործել: Երբ ձեռք կը բերուին, ճանչնալ ու գնահատել», - գրում էր թերթը¹⁷³:

1911թ. մայիսի 15-ին Ատաբազարի Արամյան վարժարանի սրահում տեղի է ունենում քաղաքի Ուսուցչական միության խորհրդակցական առաջին ժողովը, որն ընտրում է դիվան և հանձնախումբ: Վերջինը մշակում և ուսուցիչներին է ուղարկում միության կանոնագիրը և ընդհանուր ժողով գումարելու հրավերը¹⁷⁴: Ատաբազարի Ուսուցչական միությունը արագ տեմպերով վերածվում է գործող մարմնի: «Բյուրանիան» խմբագրականների միջոցով ներկայացնում էր Ուսուցչական միության կողմից բարձրացվող պահանջները: Ուսուցիչները պահանջում էին մշակել կրթական միօրինակ ծրագիր բոլոր նախակրթարանների համար¹⁷⁵: Պահանջում էին նաև միօրինակ դարձնել աշակերտների տարիքը յուրաքանչյուր կարգի համար: Ուսուցիչներն առաջարկում էին միացնել թաղային նախակրթարանների բյուջեն¹⁷⁶: Կրթական ծրագրերի բարեփոխումը «Բյուրանիայի» կարծիքով՝ պետք է իրականացվեր կրթական աշխարհականացման ճանապարհով՝ դրանք գերծ պահելով կղերական մթնոլորտից և ոգուց¹⁷⁷:

«Բյուրանիան» անդրադարձել է նաև իգական սեռի կրթության և դաստիարակության խնդիրներին: Խմբագրությունը շեշտում էր «իգական սեռին համար բարձրագույն կրթութեան մը» անհրաժեշտությունը¹⁷⁸: Այդ նպատակով առաջարկում էր գոնե Ատաբազարում հիմնել «Աղջկանց Երկրորդական կամ Կեդրոնական վարժարան մը»¹⁷⁹: Իգական սեռի դաստիարակության և կրթության ավագ

¹⁷² Նույն տեղում, էջ 504

¹⁷³ Նույն տեղում, Ատաբազար, 1911, թիվ 18-19, էջ 474

¹⁷⁴ Նույն տեղում, Ատաբազար, 1911, թիվ 13, էջ 429

¹⁷⁵ Նույն տեղում, Ատաբազար, 1911 թիվ 14, էջ 433

¹⁷⁶ Նույն տեղում, էջ 433-434

¹⁷⁷ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 18, էջ 206

¹⁷⁸ Նույն տեղում, Ատաբազար, 1911, թիվ 14, էջ 433

¹⁷⁹ Նույն տեղում

կարևորությունը պարբերականը հիմնավորում էր այն հանգամանքով, որ կա- նայք դաստիարակում են աճող սերնդին:

Շաբաթաթերթը անմասն չէր գրական-մշակութային անցուդարձից: Թեև պարբերականի «Գրական բաժինը» ոչ բոլոր համարներում է առկա, բայց «Բյու- թանիայի» էջերում գրեթե մեկ բանաստեղծություն մշտապես գտնում էր իր տեղը: Գրական-մշակութային կյանքը այնքան էլ չի հետաքրքրել շաբաթաթերթի խմբ- բագրակազմին: Այս գրական քաղաքականությունն առավել ցայտուն է դրսևոր- վել 1912թ. օամանյան խորհրդարանական ընտրությունների շրջանում, երբ պար- բերականը հիմնականում ուներ քաղաքական ուղղվածություն: Իսկ ընդհանրա- պես «Բյութանիան» միայն ընդհանուր պատկերացում է փորձել տալ Նիկոմի- դիայում տիրող մշակութային մթնոլորտի և այս ոլորտի անցուդարձի մասին: Ա- սենք՝ «Մատենադարան» և «Մտացված գրքեր» բաժիններում լուրեր էին տպա- գրվում նոր լույս տեսած պարբերականների մասին: Հաճախ այդ լրատվությունը գովազդային բնույթ ուներ. խմբագրությունը խորհուրդ էր տալիս գնել այս կամ գիրքը կամ պարբերականը՝ նշելով դրանց գները և ձեռքբերման հասցեները: Օ- րինակ՝ 1910 թ. 7-րդ համարում լուր կար այն մասին, որ լույս էր տեսել Դ. Վա- րուժանի «Յեղին սիրտը» ժողովածուն. «Ճոխ հատոր մը. Օ. Արզուման մաքուր տպագրութեամբ՝ փայլուն թուղթի վրայ: Հատորը բաժնուած է երեք մասերու, Բագինին վրայ Կրկեսին մէջ, Դիւցազնավէպեր, և կը պարունակէ 42 քերթուած- ներ ու բանաստեղծութիւններ: Գինն է 9 դրուշ: Կեղրոնատեղի «Արծիւ» գրախա- նութ, Սարբուճճըլար, 22»¹⁸⁰:

Գրական ստեղծագործությունների արժեք են ներկայացնում «Ակնոցիս տակեն» շարքում Սուրեն Սրենցի և «Մանրանկարներ» շարքում Կոռոլի երգիծա- կան դիմանկարային նովելները Նիկոմիդիայի «ազգային ջոզերի» մասին: Դրան- ցից մեկում Ս. Սրենցը ծաղրում էր Ատաբազարում հայտնի մեծահարուստ Դիոկ- դետիանոս աղային, ով «ամէն առտու և իրիկուն ֆալուխա կը քաշէ իր խիղճին, որպէս զի լուռ կենայ»¹⁸¹:

Նիկոմիդիայի մշակութային կյանքն այնքան էլ հագեցած չէր միջոցառում- ներով: Եղածները և կազմակերպվող միջոցառումները (դպրոցների, վարժարան- ների ու մանկապարտեզների տարեվերջյան հանդեսներ, կուսակցությունների կողմից անցկացվող բանախոսություններ, համերգներ) լուսաբանվում էին «Բյու- թանիայի» թղթակիցների կողմից: Թատերական աշխարհի անցուդարձին էր պարբերաբար անդրադառնում Հեթանոսը: Վերլուծական նյութերից կարելի է ա- ռանձնացնել Հ. Պուլուտյանի «Կորադոն ի պատիվ մամուլին» հոդվածը: Հեղի- նակն անդրադառնում էր Իզմիտում Հ. Աբելյանի «Զարիֆյան» թատերախմբի «Օ- թելլո» ներկայացմանը, որի ավարտին Աբելյանը հանդիսատեսին խոստանում է կրկին ներկայացումներ տալ այդտեղ՝ Պարտիզակում հյուրախաղերով հանդես գալուց հետո: Նա դա անելու էր ի պատիվ «Բյութանիա» շաբաթաթերթի՝ որպէս «քաջալերութեան առհաւատչեայ մը ըլլալու համար գավառական մամուլին»¹⁸²:

«Բյութանիան» մի քանի խմբագրական է նվիրել արվեստի զարգացման խնդիրներին: Դրանցից առանձնացնենք Նորայրի «Քննադատությունը» վերնագ- րով եռագրությունը: Հեղինակը կարևորում է առողջ քննադատության դերը մշա- կութի առաջընթացի մեջ: Մասնավորապես նա անդրադառնում էր գավառում

¹⁸⁰ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 7, էջ 74

¹⁸¹ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 6, էջ 65

¹⁸² Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 10, էջ 117

սկսված գրական-մշակութային շարժմանը. «Գաւառը պիտի արտադրէ այն բոլոր տարրերը՝ որ հարկաւոր են ստեղծելու համար ինքնուրույն հայ կեանք մը»՝ մամուլով, դպրոցով, գեղարվեստով, գրականությամբ¹⁸³: Գավառահայ մշակութային շարժման լավագույն դրսևորումը հեղինակը համարում է Ատաբազարի «Աղամյան» սիրողական թատերախմբի գործունեությունը: Այստեղ համախմբված էր գավառական բեմի վրա առաջին անգամ հանդես եկող երկսեռ դերասանական խումբ¹⁸⁴:

Գրաքննադատական հոդվածների շարքում ուշագրավ է Դ. Վարուժանի «Պատգամավորներ» ստեղծագործության առիթով Մելքոն Հովսեփյանի գրած հոդվածը: «Գեղեցկագետ բանաստեղծի իր հոյակապ քերթուածներէն կը բուրէ իր ցեղակիցներուն արիւնին հոտը. Ու հերոսութիւնն էրը տակաւին, որոնք գեղեցիկ ու լուսատու փարոսներ են, որո՞նց՝ բանաստեղծը յառի՛լ կը ստիպէ ներկայ թշուառացած իր եղբայրները, աներկբա մնալու համար բոլոր մրրիկներուն մէջ, որպէս զի հակառակ բոլոր չարաղետ դէպքերուն՝ ցեղին հոգիին մէջ չմեռնի ապրելու իղձը և նորանոր յոյսերու կառչած՝ վազէ դէպի նպատակը, դէպի Ազատութիւն»¹⁸⁵, - գրում էր հեղինակը: Այս կտրվածքով վերլուծելով Դ. Վարուժանի պոեզիան՝ Մելքոն Հովսեփյանը զուգահեռներ էր անցկացնում նրա և Ավետիս Ահարոնյանի միջև:

«Բյութանիան» անմասն չէր մնում գրական հիշարժան համաշխարհային իրադարձություններին և անդրադառնում էր նաև դրանց լուրի, թղթակցության, հոդվածի տեսքով: Հիշատակենք 1910 թ. հուլիսի 5-ը, երբ լրացավ անվանի հայագետ, խմբագիր, բանաստեղծ Գրիգոր Բալասանյանի գրական գործունեության 50-ամյակը: «Բյութանիան» լուսաբանում է այդ հոբելյանական իրադարձությունը՝ նախապես գրախոսականներ գրելով Գր. Բալասանյանի գրական վաստակի մասին: Այդ հոդվածների թվում յուրահատուկ ամփոփիչ ուսումնասիրություն է Վիեննայում տեղի ունենալիք հոբելյանական հանդիսությունների կազմակերպչական աշխատանքների մասին հանձնաժողովի նախագահ Ե. Դավթյանի հոդվածը¹⁸⁶: Գրական անդաստանում ողջունելի ծնունդ էր Բոստոնում Շ. Նաթալիի «Շանթ» հանդեսի հրատարակությունը, որին բաժանորդագրվելու պայմաններն էր իր ընթերցողներին ներկայացնում «Բյութանիա» շաբաթաթերթը¹⁸⁷: «Բյութանիան» ընթերցողներին տեղեկացնում է մեկ այլ հիշարժան երևույթի՝ հայ տպագրության 400-ամյա հոբելյանի կապակցությամբ լույս տեսած քառահատոր «Հիշատակարանի» առաջին հատորի մասին, որտեղ ամփոփված էին հայ 55 երևելի անձանց կենսագրականներ, լուսանկարներ, ձեռագրեր և այլն: Այն ստանալու համար «դիմել խմբագրութեանս և կամ հրատարակիչներուն. Կ. Պոլիս, Վ. Պ. Զարդարեան Գրատուն, Չագմագճըլար թիվ 24-25»¹⁸⁸:

«Բյութանիայի» համար կարևոր էին գրական իսկական արժեքները: Պատահական չէ, որ շաբաթաթերթը իր թերթոնում տպագրել է թուրք հանրաճանաչ բանաստեղծ Նամըզ Քեմալի «Երագ» վիպակը թուրքագետ Ս. Թապագյանի հայերեն թարգմանությամբ: «Նամըզ Քեմալ թուրք գրագետ-բանաստեղծներուն մէջ ամենէն մեծը, ամենէն մաքուրը, միեւնոյն ատեն ամենէն ժողովրդականը և գրա-

¹⁸³ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 15, էջ 166

¹⁸⁴ Նույն տեղում

¹⁸⁵ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 18, էջ 207

¹⁸⁶ Նույն տեղում, էջ 212

¹⁸⁷ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 26, էջ 280

¹⁸⁸ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 27, էջ 300

կան վերանորոգման պարագույններուն ամենէն կորովին եղած է», - գրում էր Ս. Թապագյանը առաջաբանում¹⁸⁹:

Գրականության և մշակույթի առաջընթացին նպաստելու նպատակով «Բյուտանիան» գործնական քայլ է անում՝ 1910 թ. մարտի 14-ին Իզմիտի կայարանին հանդիպակաց գտնվող սրճարանի պարտեզապատ սրահում բացելով «Բյուտանիա» անունով լսարան-ընթերցարան, որտեղ ընթերցասեր հանրությանն էին անվճար տրամադրվում Արևմտյան Հայաստանում և հայկական տարբեր գաղթօջախներում լույս տեսնող 40 անուն պարբերական ու հայալեզու և օտարալեզու գրականություն¹⁹⁰:

Ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել, որ մշակութային, տնտեսական կամ ընդհանուր առմամբ ազգային կյանքի առաջընթացը «Բյուտանիան» կապում էր Հայկական հարցի լուծման կամ Թուրքիայում ազգային հիմնահարցերը սահմանադրական ճանապարհով լուծելու հետ: Չէ՞ որ հայ ժողովուրդը բոլոր բնագավառներում ուներ տաղանդավոր, ազգասեր ու իրենց գործին նվիրյալ զավակներ, որոնք նպաստավոր պայմաններում ի գործ էին ստեղծել համամարդկային արժեքներ, ի գործ էին շենացնել ու հզորացնել սեփական հայրենիքն ու երկիրը:

Мариам Овсепян – Ежедневная газета “Бютания” /1910-1912 гг/ губернии Никомидия. – Ежедневная газета “Бютания” /1910-1912 гг/ имела акцентированную политическую направленность. Она понимала, что армянский народ имеет дело с турецким деспотизмом, где социально-экономические проблемы связаны с политическими проблемами, в частности с решением Армянского вопроса. С этой направленностью было обусловлено то обстоятельство, что “Бютанию” не интересовала культурно-литературная жизнь.

“Бютания” во все годы своего издания обращалась к фундаментальным проблемам образования в западноармянской школе. Газета считала их для потерявшего государственности армянского народа важнейшим средством в деле национального самосохранения. В этой связи “Бютания” предавала большое значение делу обучения лиц женского пола на армянском языке и предлагала умножить число школ предназначенных специально для женского пола. “Бютания” поднимала вопрос всеобщего налога как решение финансовых проблем армянских школ и их учителей.

Mariam Hovsepyan – Daily newspaper "Butania" (1910-1912) of Nikomidia district. – Daily newspaper "Butania" (1910-1912) had a strictly political direction. It knew, that the Armenian people had to do with Turkish despotism, where the social economic problems were connected with the political ones, and also with the problem of the "Armenian Question" solution. Therever "Butania" was not interested in cultural-literary life.

"Butania" has always dealt with the fundamental problems of education of the West Armenia school. The newspaper considered their problem one of the most important issues for the Armenian people in frames of national self-keeping. In this connection "Butania" paid very much attention to the education in the Armenian language of girls and offered to increase the number of schools for girls. "Butania" raised the question of general taxes as the solution of financial problems of Armenian schools and teachers.

¹⁸⁹ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 18, էջ 210

¹⁹⁰ Նույն տեղում, Իզմիտ, 1910, թիվ 8, էջ 96

ԱՐԴԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀՈՒՄԱՆԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ.
“ՀՈՒՄԱՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՆԻՖԵՍՏ - II”-Ը ԵՎ “ԱՇԽԱՐՀԻՎ
ՀՈՒՄԱՆԻԶՄԻ ԴԵՎԼԱՐԱՑԻԱՆ”

ԳՐԻԳՈՐ ԱՍԱՏՐՅԱՆ

Արդի համաշխարհային հումանիստական շարժման մեջ նոր փուլի սկիզբ հանդիսացավ 1973 թվականը, որը նշանավորվեց ուշագրավ ու կարևոր իրադարձությամբ. այդ թվականին՝ “Հումանիստական մանիֆեստ - I”-ի հրապարակ գալուց ուղիղ 40 տարի անց ընդունվեց նոր ծրագրային փաստաթուղթ՝ “Հումանիստական մանիֆեստ - II”-ը (Humanist Manifesto II)¹⁹¹: Այն ստորագրեցին հումանիստական շարժման մի քանի հարյուր առավել ակտիվ մասնակիցներ, նշանավոր հասարակական գործիչներ ու գիտնականներ, Նոբելյան մրցանակի դափնեկիրներ:

“Հումանիստական մանիֆեստ - II”-ն արտացոլում էր համաշխարհային պատմության մեջ տեղի ունեցած տեղաշարժերը և նոր իրողությունները, այդ թվում ֆաշիզմի տարածումը և նրա պարտությունը Երկրորդ համաշխարհային պատերազմում, աշխարհի բաժանումը երկու հակամարտող սիստեմների և սոցիալիստական ճամբարի ստեղծումը, “սառը պատերազմը” և սպառազինությունների մրցավազքը, ՄԱԿ-ի ստեղծումը, գիտատեխնիկական առաջադիմության արագացումը, ժողովրդավարության զարգացումն ու բնակչության նյութական բարեկեցության և կյանքի որակի բարելավման ֆոնի վրա մարդու իրավունքների համար պայքարի ուժեղացումը:

Նշելով այն հսկայական նվաճումները, որոնք ձեռք էր բերել մարդկությունը “Հումանիստական մանիֆեստ - I”-ի ընդունումից հետո, 2-րդ մանիֆեստի հեղինակները միաժամանակ մատնացույց էին անում այն բազմաթիվ չլուծված հիմնահարցերն ու վտանգները, որոնք սպառնում են մարդկության բարեկեցությանն ու բնականոն կյանքին և նույնիսկ Երկրագնդի վրա կյանքի գոյությանը: Այդ գործոնների թվում նշվում էին էկոլոգիական սպառնալիքը, գերբնակեցվածությունը, հակահումանիստական հաստատությունները, բռնությունն ու ռեպրեսիաները, միջուկային և կենսաքիմիական աղետի հնարավորությունը: Վտանգներով հղի էր համարվում նաև այլազան իռացիոնալ պաշտամունքների ու կրոնական ուսմունքների տարածումը, պասսիվության ու ինքնամեկուսացման քարոզը:

“Հումանիստական մանիֆեստ - II” փաստաթղթի տակ իրենց ստորագրությունները դրած գործիչները դիմում էին աշխարհի բոլոր մարդկանց՝ կոչ անելով ընդունել ընդհանուր սկզբունքների այնպիսի կոմպլեքս, որն առկա պոռբլեմների լուծմանը, բնական ու սոցիալական իրականության բարեփոխմանն ուղղված համատեղ գործողությունների հիմք դառնար:

¹⁹¹ “Հումանիստական մանիֆեստ - II”-ը առաջին անգամ հրապարակվել է “The humanist” հանդեսում. Buffalo (N.Y.), 1973. - Vol. 33, N 5:

Նրանք առաջարկեցին համաշխարհային մասշտաբով աշխարհիկ (սեկուլյար) հասարակության նախագիծ, որի նպատակը պետք է դառնար ոչ թե արտոնյալ փոքրամասնության, այլ յուրաքանչյուր անհատի, ամբողջ մարդկության պոտենցիալի իրացումը:

Մանիֆեստի 17 թեզիսներում, որոնք զետեղված էին չորս բաժիններում, այն է՝ “Կրոնը” (1-4 թեզիսներ), “Անհատը” (5-6 թեզիսներ), “Ժողովրդավարական հասարակությունը” (7-11 թեզիսներ) և “Համաշխարհային հանրությունը” (12-17 թեզիսներ) ամփոփ ձևով արտացոլված էին մարդկության առջև ծառայած և լուծում պահանջող հիմնական խնդիրները:

“Հումանիստական մանիֆեստ - II”-ի հրապարակումից հետո ԱՄՆ-ի և մի շարք այլ երկրների հասարակական կյանքում հումանիստական շարժման ազդեցության աճն առաջ բերեց լուրջ անհանգստություն այդ երկրների ինչպես ավանդական, այնպես էլ նեոֆունդամենտալիստորեն տրամադրված կրոնական շրջաններում: Նրանց մտահոգում էր հատկապես դպրոցներում հումանիստների պրակտիկ գործունեությունը՝ ուղղված աշխարհիկ աշխարհայացքի հիմունքների ուսուցմանը: 1970-1980-ականների սահմանագլխին միայն ԱՄՆ-ում լույս տեսան էրեք ծավալուն աշխատություններ¹⁹²՝ նվիրված աշխարհիկ հումանիզմի աշխարհայացքային հիմքերի վերլուծությանը՝ քրիստոնեության տեսանկյունից: Այդ աշխատությունների հեղինակները սուր քննադատության էին ենթարկում աշխարհիկ հումանիզմը, այն համարելով “ամենավտանգավոր կրոնը” ԱՄՆ-ում:

Ի պատասխան պահպանողական կրոնական շրջանակների կողմից աշխարհիկ հումանիզմի քննադատության՝ աշխարհիկ հումանիզմի կողմնակիցները 1980 թվականին հրապարակեցին մի կարևոր ծրագրային փաստաթուղթ՝ **“Աշխարհիկ հումանիզմի դեկլարացիան”** (**“A secular humanist declaration”**)¹⁹³, որն ստորագրեցին 58 առավել նշանավոր գիտնականներ, գրողներ, նկարիչներ և հասարակական գործիչներ:

Մի փոքր ավելի ուշ այդ քննադատության դեմ ավելի ընդարձակ պատասխանով հանդես եկավ հայտնի փիլիսոփա և հումանիզմի արևմտյան տեսաբան Պոլ Կուրտցը¹⁹⁴՝ հրատարակելով իր ծավալուն գիրքը՝ “Ի պաշտպանություն աշ-

¹⁹² *H. Duncan*, *Secular humanism: The most dangerous religion in America*, Lubbock (Tex), 1979, 81 p. *D. Ehrenfeld*, *The arrogance of humanism*, Oxford etc., 1981, 286 p. *N.L. Geisler*, *Is man the measure?: An evaluation of contemporary humanism*, Grand Rapids (Mich), 1983, 201 p.

¹⁹³ “Աշխարհիկ հումանիզմի դեկլարացիան” առաջին անգամ հրատարակվել է “Free inquiry” հանդեսում 1980 թվականին:

¹⁹⁴ Պոլ Կուրտցը տասնամյակներ շարունակ համարվում էր աշխարհիկ հումանիզմի առաջատար տեսաբաններից մեկը, եթե ոչ ամենաառաջատարը: Նա ընտրվել է Աշխարհիկ հումանիզմի խորհրդի նախագահ, Հումանիզմի միջազգային ակադեմիայի պրեզիդենտ: Եղել է Բուֆֆալոյում գործող՝ Նյու-Յորքի նահանգի համալսարանի պատվավոր պրոֆեսոր: Հանդիսացել է “Հումանիզմի մասին մարքսիստների և ոչ մարքսիստների միջև երկխոսությունների” և “Վատիկանի ու հումանիստների միջև երկխոսության” կազմակերպիչը, խղճի ազատության և ոչ հավատացյալների իրավունքների պաշտպանը: Հումանիզմի հարցերի վերաբերյալ նրա տեսական-փիլիսոփայական հետազոտությունները կազմում են ավելի քան 35 գիրք և հարյուրավոր հոդվածներ: Նրա առավել կարևոր աշխատությունների թվում են՝ “Վճռականությունը և մարդու վիճակը” (“Decision and the condition of man”, 1965), “Կյանքի լրիվությունը” (“The fullness of life”, 1974), “Ի պաշտպանություն աշխարհիկ հումանիզմի” (“In defense of secular humanism”, 1984), “Գայթակոությունը՝ այնկողմնայինով” (“Искушение потусторонним”, ռուսերեն թարգմանությունը՝ 1999), “Արգելված պտուղ. Հումանիզմի էթիկան” (“Запретный плод: Этика гуманизма”, ռուսերեն թարգմանությունը՝ 1993), “Փիլիսոփայական էսսեներ պրագմատիկ նատուրալիզմի մասին” (“Philosophical essays in pragmatic naturalism”, 1990), “Հումանիստական մանիֆեստ -

խարհիկ հումանիզմի” (“In defense of secular humanism”), որտեղ գետեղեց նաև Դեկլարացիայի տեքստը¹⁹⁵:

“Աշխարհիկ հումանիզմը,- նշվում է “Աշխարհիկ հումանիզմի դեկլարացիայի” հենց սկզբում,- իրական ուժ է արդի աշխարհում: Ներկայումս այն ենթարկվում է անհիմն ու անզուսպ քննադատության՝ ամենատարբեր կողմերից”:

Աշխարհիկ հումանիզմը հակադիր է հավատի բոլոր տարատեսակներին, որոնք գերբնական սանկցիաներ են փնտրում իրենց արժեքների համար կամ ենթարկվում են թելադրանքի ուժին:

Առանձնացնելով աշխարհիկ հումանիզմի տասը հիմնարար սկզբունքներ (ազատ հետազոտություն, եկեղեցու անջատումը պետությունից, ազատության իդեալը, էթիկան՝ հիմնված քննադատական մտածողության վրա, բարոյական կրթություն, կրոնական սկեպտիցիզմ, բանականություն, գիտություն և տեխնիկա, Էվոյուցիա, կրթություն)՝ աշխարհիկ հումանիստները կոչ էին անում բոլոր մարդկանց, այդ թվում և հավատացյալներին, ընդունել իրենց իդեալները և պաշտպանել դրանք: “Դեմոկրատական աշխարհիկ հումանիզմը,- ասվում էր Դեկլարացիայի եզրափակիչ մասում,- չափազանց էական է մարդկային քաղաքակրթության համար, որպեսզի այն հնարավոր լինի զանց առնել... Մեր խնդիրն է՝ տարածել բանականության, ազատության, անձնական ու հասարակական համաձայնության և դեմոկրատիայի իդեալներն ամբողջ համաշխարհային հանրության մեջ: Աշխարհիկ հումանիզմը հավատում է ավելի շուտ մարդկային բանականությանը, քան աստվածային հրահանգներին: Սկեպտիկորեն վերաբերելով քավության, նզովքի և ռեինկարնացիայի տեսություններին՝ աշխարհիկ հումանիստներն աշխատում են մարդկային կեցությունն իմաստավորել ռեալիստական կատեգորիաներով. մարդիկ իրենք են պատասխանատու իրենց ճակատագրի համար”:

Դեկլարացիան վերջնականապես սահմանազատեց աշխարհիկ հումանիզմը լիբերալ-կրոնականից: Նրանում ընդգծվում է աշխարհիկ հումանիզմի սկզբունքային տարբերությունը կրոնականից, որն արտացոլում էր հումանիստական կազմակերպությունների ճնշող մեծամասնության ձգտումը՝ բացահայտելու հումանիզմի ինքնուրույն փիլիսոփայական բարոյական և քաղաքացիական կարգավիճակը: Դեկլարացիայում անցկացվում էր նաև այն միտքը, որ աշխարհիկ հումանիզմը հանդիսանում է բարոյական ու գիտական արժեքների ամբողջություն, որոնք չեն կարող և չպետք է հավասարեցվեն կրոնական հավատին:

Աշխարհիկ հումանիզմի ժամանակակից կազմակերպություններն ունեն գարգացած ենթակառուցվածք, այդ թվում մամուլի օրգաններ, ռադիո- և հեռուս-

2000: Նոր պլանետար հումանիզմի կոչ” (“Humanist Manifesto 2000: A call for a new planetary humanism”, 2000) և այլն: Նա եղել է աշխարհում ամենախոշոր հումանիստական հրատարակչության՝ “Պրոմեթեոս բուկս”-ի, Աշխարհիկ (սեկուլյար) հումանիզմի խորհրդի և նրա օրգան “Ազատ հետազոտություն” հանդեսի, ինչպես նաև Պարանորմալ երևույթների մասին հայտարարությունների հետաքննության կոմիտեի հիմնադիրը: 1999-ի փետրվարի 8-ին Բոստոնում (Հնդկաստան) տեղի ունեցած Միջազգային հումանիստական և էթիկական միության 14-րդ միջազգային կոնգրեսում Կուրտցին շնորհիվ Միջազգային Հումանիստական մրցանակ: Այդ կազմակերպության պրեզիդենտ Լ.Ֆրագելը նշեց, որ Կուրտցը տասնամյակներ շարունակ համարվում է աշխարհիկ հումանիզմի իդեալների ու արժեքների համաշխարհային առաջատար պրոպագանդիստը, տոտալիտար և ֆունդամենտալիստական դոգմաների քննադատը և մարդկային իրավունքների ու ազատությունների հետևողական պաշտպանը:

¹⁹⁵ Տե՛ս **P. Kurtz**, In defense of secular humanism, Buffalo, (N.Y.), 1983, 281 p.:

տատեսային ծրագրեր: “Միջազգային հումանիստական նորություններ” հանդեսը պարբերաբար հրատարակում է տեղեկություններ հումանիստական բնույթի պարբերական հրատարակությունների մասին:

Համաշխարհային հումանիստական շարժման գործունեության մեջ նորագույն ուղղություններ են համարվում, մասնավորապես, աշխարհիկ քաղաքացիական սերվիսի ծրագրերի մշակումը, դպրոցներում և մյուս ուսումնական հաստատություններում հումանիստական ցիկլի առարկաների դասավանդումը՝ որպես ուսուցման կրոնական ծրագրերի հակակշիռ, ոչ հավատացյալ քաղաքացիների իրավունքների և խղճի ազատության պաշտպանությունը, կրոնի գիտական վերլուծությունը և պարանորմալ երևույթների մասին դիմումների անկախ փորձաքննությունը: Այդ ծրագրերի իրականացման նպատակով ստեղծվում են զանազան ազգային ու միջազգային հումանիստական կառույցներ:

1980-ին ստեղծվեց մի միջազգային կազմակերպություն՝ Դեմոկրատական և աշխարհիկ հումանիզմի խորհուրդ (Council for Democratic and Secular Humanism), որը 1996 թվականից սկսեց կոչվել Աշխարհիկ հումանիզմի խորհուրդ (Council for Secular Humanism):

Աշխարհիկ հումանիզմի խորհուրդը լույս է ընծայում հանդեսներ՝ “Ազատ հետազոտություն” (“Free inquiry”) և “Փիլո: Հումանիստական փիլիսոփաների ընկերության հանդես” (Philo: Journal of the society of humanist philosophers):

Դեմոկրատական ու աշխարհիկ հումանիզմի խորհուրդը 1983 թվականին ստեղծեց Հումանիզմի միջազգային ակադեմիա (International Academy of Humanism):

Ակադեմիայի անդամները, որոնց մշտական թիվը չպետք է գերազանցի 60-ը, մերժում են Տիեզերքի գերբնական կամ օկուլտային բացատրությունները, իրենց ջանքերը կենտրոնացնում են բանականության և գիտական հետազոտությունների զարգացման վրա, խրախուսում են անհատի բարոյական աճը և փորձի վրա հիմնված նրա էթիկական զարգացումը: Լրացուցիչ հումանիստական դասընկերներն ընտրվում են ակադեմիայի անդամների կողմից՝ կրթության, գիտական հետազոտությունների ոլորտում, գրականության ու արվեստի ասպարեզում ձեռք բերած ակնառու նվաճումների կամ այլ նշանակալի ձեռքբերումների համար:

Ակադեմիայի գործունեությունը ներառում է սեմինարների ու կոնգրեսների անցկացումը, հասարակական ուղեբժների տպագրությունը, հոդվածների, մենագրությունների և գրքերի հրատարակումը, որոնք նվիրված են աշխարհի նկատմամբ հումանիստական հայացքի հաստատմանը:

Հումանիզմի միջազգային ակադեմիայի ձևավորման ժամանակ (1983) նրա քարտուղարության անդամ ընտրվեցին Պոլ Կուրտցը (պրեզիդենտ), Վերն Բուլլո-հը, Էնտոնի Ֆյուն, Ջերալդ Լարյուն և Ժան-Կլոդ Պեկերը: 1999-ին Ակադեմիայի անդամ դարձան մի շարք նոր, անվանի մարդիկ, այդ թվում՝ փիլիսոփա Իսայյա Բեռլինը, գիտության փիլիսոփա Մարիո Բունզեն, կենսաբաններ Ֆրենսիս Կրիկը և Ռիչարդ Դոկինսը, սեմիոտիկ Ումբերտո Էկոն, փիլիսոփաներ Պոլ Էդվարդսը և Յուրգեն Հաբերմասը, ֆիզիկոս Մերգեյ Կապիցան, բանաստեղծ Օկտավիո Պասը, փիլիսոփա Ռիչարդ Ռորտին, Մենեգալի նախկին պրեզիդենտ Լեոպոլդ Սենգորը, փիլիսոփա Սվետոզար Ստոյանովիչը և ուրիշներ:

1976-ին ստեղծվեց ևս մեկ հայտնի միջազգային հումանիստական կազմակերպություն՝ Պարանորմալ երևույթների մասին հայտարարությունների հետա-

քննության կոմիտե (Committee for the Scientific Investigation of Cleims of the Paranormal): Կոմիտեն ունի իր տպագիր մարմինը՝ “Սկեպտիկ հետազոտող” (“Skeptical Inquirer”):

1995-ին Ամխեստում, Նյու-Յորքի նահանգի՝ Բուֆֆալոյում գտնվող համալսարանի շենքերի համալիրի անմիջական հարևանությամբ կառուցվեց ու բացվեց Աշխարհիկ հումանիզմի խորհրդի և Պարանորմալ երևույթների մասին հայտարարությունների հետաքննության կոմիտեի հատուկ հետազոտական կենտրոնը (Center for inquiry, CFI): Այդ Կենտրոնի ընդարձակ տարածքում վերը նշված երկու կազմակերպություններից բացի տեղավորվեցին “Ազատ հետազոտություն”, “Փիլո” և “Սկեպտիկ հետազոտող” հանդեսների խմբագրությունները: Հետազոտությունների կենտրոնն ունի հումանիզմի և ազատախոհության պրոբլեմների վերաբերյալ աշխարհում իր նմանը չունեցող բացառիկ հարուստ գրադարան՝ բաղկացած շուրջ 50 հազար հատորներից:

1988-ին Բուֆֆալոյում (ԱՄՆ) գումարված Համաշխարհային հումանիստական կոնգրեսում ընդունվեց աշխարհիկ հումանիզմի հերթական ծրագրային փաստաթուղթը՝ “Փոխադարձ կախվածության դեկլարացիան” (“A declaration of global interdependence”):

Դեկլարացիայի նպատակն էր ՄԱԿ-ի կողմից 1948-ին ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր դեկլարացիան մարդկային հարաբերությունների գլոբալացման լույսի ներքո լրացնել անհատի և հասարակության բարոյական, իրավական և քաղաքացիական փոխադարձ պարտավորությունների կողեքսով:

1991-ին հումանիստական աշխարհայացքի ներկայացման և ոչ հավատացյալների իրավունքների պաշտպանության նպատակով Եվրոպայի Խորհրդում և Եվրոպական Պառլամենտում ստեղծվեց Միջազգային հումանիստական և էթիկական միության մի ենթակառուցվածք՝ Եվրոպական հումանիստական ֆեդերացիան (European Humanist Federation, EHF):

1993-ին Եվրոպական հումանիստական ֆեդերացիան Բեռլինում անցկացրեց իր հիմնադիր կոնգրեսը, իսկ 1994-ին նրա շրջանակներում ստեղծվեց Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի քարտուղարությունը, որի նպատակը նախկին սոցիալիստական ճամբարի երկրներում ծնունդ առնող կամ վերածնվող աշխարհիկ հումանիստական շարժումների պաշտպանությունն էր:

1990-ականներին հումանիստների ուշադրությունը գրավեց աշխարհում լայն տարածում գտած այնպիսի մի գաղափարական շարժում, ինչպիսին **հետմոդեռնիզմն** էր:

Հետմոդեռնիզմը հանդես եկավ “մոդեռնի”, այսինքն՝ արդիականության տոտալ քննադատությամբ: Ընդ որում “մոդեռնի” անվան տակ հասկացվում էր ամենից առաջ այն ավանդույթը, որը կապվում է Նոր ժամանակների ռացիոնալիզմի և Լուսավորչականության հետ:

Հետմոդեռնիստները կասկածի տակ էին դնում այնպիսի մտածողների գործունեությունն ու վաստակը, ինչպիսիք են Ռենե Դեկարտն ու Ֆրենսիս Բեկոնը, Ջոն Լոկը և Վոլտերը, Դենի Դիդրոն, Ժան-ժակ Ռուսոն և Ժան Կոնդորսեն, Իմանուիլ Կանտը և Իոհան Գյոթեն, Կարլ Մարքսը և Ֆրոյդը:

Ֆրանսիական այնպիսի հետմոդեռնիստներ, ինչպիսիք են, օրինակ, Ժ.Դերրիդան, Ժ.Լականը, Ժ.-Ֆ.Լիոտարը, Ժ.Բոդրիյարը, Ժ.Դելեզը և ուրիշներ ընդհանուր առմամբ գրավում են հակահումանիստական դիրքորոշում:

Հենվելով ուշ Հայդեգերի հոռետեսական փիլիսոփայության վրա, նրանք ժխտում են գիտության դերը, օբյեկտիվ գիտելիքը դիտում որպես առասպելի տարատեսակ և քննադատության են ենթարկում տեխնոլոգիայի զարգացումը: Նրանց կարծիքով մարդիկ ընդունակ չեն ազատ ու ինքնուրույն ընտրության, չեն կարող առաջնորդվել ռացիոնալ սկզբունքներով և պատասխանատվություն կրել իրենց գործողությունների համար: Հետմոդեռնիստները կասկածի տակ են դնում ունիվերսալ բարոյական նորմերի մշակման հնարավորությունը, քննադատում են արդի հումանիզմի համար չափազանց կարևոր հանդիսացող ազատական ժողովրդավարության և մարդու իրավունքների գաղափարները:

Հետմոդեռնիզմի դեմ պայքարում ծնունդ առավ ու զարգացավ հումանիստական նոր շարժում՝ հետ-հետմոդեռնիզմը, որը հանդես է գալիս ընդդեմ նիհիլիզմի ու իռացիոնալիզմի, ի պաշտպանություն ռացիոնալիզմի, բանականության իրավունքների ու վուսավորչականության իդեալների, հասարակական առաջադիմության ու հումանիստական նոր ռենեսանսի գաղափարների:

Այդ գաղափարները, “հետ-հետմոդեռնիստական” աշխարհայացքն իր արտահայտությունը գտավ 1999-ին ընդունված մեկ այլ ծրագրային փաստաթղթում, որը կոչվեց “Հումանիստական մանիֆեստ - 2000”. Նոր պլանետար հումանիզմի կոչ” և որն արդի հումանիզմի զարգացման նոր, բարձր փուլի սկիզբը դրեց:

Григор Асатрян – Современное всемирное гуманистическое движение: “Гуманистический манифест - II” и “Декларация светского гуманизма”. – В статье рассматриваются основные вехи развития современного всемирного гуманистического движения в период между “Гуманистическим манифестом - II” (1973) и “Гуманистическим манифестом - 2000” (1999). Выявляются характерные особенности данного этапа эволюции гуманизма, раскрываются сущность и специфические черты противоборства между светским гуманизмом и гуманизмом религиозным.

Grigor Asatryan – World modern humanist movement: “Humanist manifesto - II” and “Secular humanism declaration”. – In the article, considered are the principal milestones in the development of the world modern humanist movement within the period between the “Humanist Manifesto - II” (1973), and the “Humanist Manifesto - 2000” (1999). The characteristic peculiarities of the mentioned phase of evolution of humanism are determined; the gist and the specific features of antagonism between secular humanism and religious humanism are revealed.

ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏԻ ԸՄԲՌՆՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՄԱՑԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՈԱԶՄԻԿ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Պատմական անցյալի ճանաչողությունը և նրանում հասարակությանը հուզող բազմաթիվ հարցերի պատասխանների որոնման գործընթացը քաղաքակրթության զարգացման բոլոր ժամանակաշրջաններին է բնորոշ եղել: Եվ որքան ժամանակը մեզ հեռացրել է պատմական փաստերից և իրադարձություններից, այնքան իրականության օբյեկտիվ նկարագիրը ներկայացնելը բազմաթիվ դժվարությունների է հանդիպել: Մեր աչքի առջև 21-րդ դարում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական տրանսֆորմացիոն զարգացման առաջնահերթությունների փոփոխությունները, ինչպես նաև հասարակության մեջ կուտակված բազմաթիվ հարցերի պատասխանները, կրկին հարկադրում են վերադառնալ պատմական սկզբնաղբյուրների՝ նպատակ ունենալով ավելի խորը բացահայտել, ճշգրտել և իմաստավորել պատմության մեջ տեղի ունեցածը:

Ժամանակակից հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունները հանգեցնում են անցյալի իրադարձությունների մեկնաբանման մի շարք շեշտադրումների փոփոխությանը, գոյություն ունեցածի մասին նոր պատկերացումների ձևավորմանը:

Արդի պատմագրությունը նախկինի պես ևս բազում խնդիրների և դրանց տրվող պատասխանների որոնումների մեջ է:

Թերևս դրա վկայությունն է 20-րդ դարի 90-ական թվականների մեր իրականության մեջ տեղի ունեցած սոցիալ-քաղաքական ու տնտեսական խորը ճգնաժամը, որը հասարակագետների կարծիքով ճգնաժամ առաջացրեց գրեթե բոլոր հումանիտար գիտությունների, այդ թվում նաև պատմագիտության մեջ: Նշված ոլորտում ճգնաժամի արտահայտման երևույթներից մեկը պատմական գործընթացների ընդհանուր պատկերի բոլոր կողմերի վերաձևավորումն էր, բոլոր կողմերի բազմաթիվ աղավաղված պատմական փաստերի և սկզբնաղբյուրների դեֆորմացված մեկնաբանություններից հրաժարվելն էր: Անժխտելի է, որ ճգնաժամը միաժամանակ հասարակագետների և հատկապես պատմաբանների համար ստեղծեց նոր պայմաններ՝ պատմագիտության հետագա զարգացման ու կատարելագործման համար: Պատմության մեջ նման շրջադարձային երևույթները տեղի են ունենում ոչ հաճախ, դրա համար էլ «պատմական գիտելիքները անխուսափելիորեն ձեռք բերեցին նոր կարգավիճակ, մշակելով սեփական իմացաբանությունը (տե՛ս Гуревич А.Л. Двоякая ответственность историка // Проблемы исторического познания. М. 1999, с. 11):

Բացի դա, այն իր արտահայտությունը գտավ պատմագիտության մեջ նաև տարբեր ժամանակաշրջաններում պատմական առանձին կարևորություն ունեցած մի շարք խնդիրների մեկնաբանություններում, որը մասնավորապես արտահայտվեց որոշակի կեղծ պատմական «իրականության» պատրանք կամ թե ինդաթյուրված պատմության մեկնաբանություն ստեղծելով: Գիտության մեջ նման ճգնաժամերը մի կողմից նպաստում են գիտության գիտականացմանը, մյուս

կողմից՝ որոշակի իմաստով կարող են խարխլել հասարակության պատմության մեջ նրա վստահության հիմքերը:

Ուստի, նման իրավիճակում պատմագիտության առջև նոր պատմական գիտակցություն ձևավորման խնդիր է դրվում (տե՛ս Kazys: Индивидуальное и уникальное в истории. М. 2000): Հասկանալի է, այն չի կարող սահմանափակվել միայն տվյալ գիտության շրջանակներում զանազան խնդիրների վերլուծությամբ, այլև դառնում է ժամանակակից փիլիսոփայական բանավեճի առարկա: Պատմաբանի կողմից անցյալի իրադարձությունների ու փաստերի մշտական վերագնահատման գործընթացը վկայում է պատմական ճանաչողության օբյեկտիվ հիմքերի գոյության և պատմական ճշմարտությունների մեջ հարաբերականի առկայության մասին:

Մենք ելնում ենք այն իրողությունից, որ պատմամշակութային ռեալության ձևավորման համար պատմական փաստի ճիշտ ընկալումը և մեկնաբանումը ընդհանրապես հումանիտար գիտելիքի և մասնավորապես պատմական ճանաչողության առանձնահատկությունն է: Պատմական ռեալության նկատմամբ մարդու վերաբերմունքի խնդիրը քիչ է ուսումնասիրված մեր փիլիսոփայական մեթոդաբանության մեջ, ուստի մենք կանգ կառնենք պատմական ռեալության, պատմական փաստի մեկնաբանման, ընկալման որոշ յուրահատկությունների վրա՝ հաշվի առնելով պատմագիտության առանձնահատկությունները:

Պատմության փիլիսոփայական հարցադրումների համակողմանի քննարկումը պատմական ճանաչողության մեջ առանցքային դերակատարում ունի: Պատմագիտության զարգացման մեջ ավելի հստակ երևում է, որ պատմության փիլիսոփայության կողմից հարցադրումների ճշգրտումը և մեկնաբանումը ոչ միայն պահանջում է բարեխիղճ, այլև ակտիվ արդյունավետ, ստեղծագործական աշխատանք, ոչ միայն պատմաբանի, այլ ճանաչողության տեսության բնագավառի մասնագետների կողմից:

Պատմական փաստի հետազոտության արդյունավետությունը ամբողջովին կախված է ճանաչողական միջոցառումների շրջանակների մաքսիմալ ընդլայնման, անհատի կողմից պատմական երևույթները ընդհանրացնելու ընդունակությունների, երևույթների ընդհանուր շղթայում օրինաչափությունները բացահայտելու և նրանց մեկ միասնական հետազոտական մեթոդաբանության մեջ համադրելու կարողությունից: Առավելապես նման գործոններն են հնարավոր ուսումնասիրվող փաստերի ամբողջական ընկալումը ապահովում: Ընդ որում խոսքը փաստերի «...ճիշտ համադրության մասին է, միակ բանը, որը ունակ է ուսումնասիրվող փաստի մասին տալ ինտեգրված գիտելիք» (Могильницкий Б.Г. Историческая теория как форма научного познания: Материалы научной конференции. М. 2001, с. 6).

Կասկածից վեր է, որ պատմագիտության իմաստային հիմքը պատմական փաստերն են, որոնց գոյաբանական և իմացաբանական հիմնախնդիրներին գիտական ճանաչողության տեսության և մեթոդաբանության մեջ առանձին ուշադրություն է դարձվել: Պատմական փաստի նկատմամբ հետաքրքրությունը կարեվորվում է ինչպես պատմական ճանաչողության օբյեկտների իմացաբանական, տեղեկատվական նշանակությունից ելնելով, այնպես էլ միայն պատմական յուրահատկությունների ու ճանաչողական գործընթացների դժվարություններից ելնելով: Այդ մակարդակում է, որ պատմական փաստը դադարում է միայն ու

միայն իմացաբանական երևույթ լինելուց, ստանալով արժեքային նշանակություն:

Պատմական փաստը անցյալի մասին ռեալություն է, որն իր վրա է կրում ժամանակի հետքը՝ իրականությունն արտացոլում է տվյալ ժամանակի սոցիալ-տնտեսական, իրավա-քաղաքական, բարոյական ու գեղագիտական պատկերացումների և այդ հուշարձանը ստեղծած մարդկանց կենսական շահերի պրիզմայի միջով:

Պատմական փաստին, որպես առանձնահատուկ իմացաբանական երևույթի, առանցքային տեղ է հատկացվել պոզիտիվիստական փիլիսոփայության մեջ: Օ. Կոնտը, Դ. Միլը և այլ պոզիտիվիստ փիլիսոփաներ պատմական փաստը դիտարկում են որպես գիտելիքի աղբյուր, օբյեկտիվ ռեալության տարր: Արևմտաեվրոպական պատմագիտության վրա 19-րդ դարի վերջերին պոզիտիվիզմն ուներ գերիշխող ազդեցություն:

19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբներին պատմական ճանաչողությանը նվիրված գիտնականների այն աշխատություններում, որոնք պոզիտիվիզմի կնիքն էին կրում, նկատվում էր պատմագիտությունը ճշգրիտ գիտության վերածելու ձգտումը: Սակայն, բնագիտության օրինակով պատմագիտության գիտականացումը պոզիտիվիստների կողմից ձախողվեց հանգելով պոզիտիվիստական իմացաբանական մեթոդի ճգնաժամի: Այդ ընթացքում պատմության բազմաթիվ խնդիրների իմացաբանական հարցալուծումների վրա մեծ ազդեցություն ունեցան նաև հակապոզիտիվիստական բնույթի զանազան հոսանքներ, որոնք հենվում էին նոր կոնտականության և կյանքի փիլիսոփայության գաղափարների վրա: Ընդ որում, պատմական ճանաչողության գլխավոր խնդիրներից մեկը հանդիսացավ անհատական, եզակի, անկրկնելի երևույթների ու փաստերի վրա ուշադրություն դարձնելը:

Պատմական փաստի նկատմամբ փոքր-ինչ այլ դրսևորում է ունեցել նեոպոզիտիվիստական դպրոցը: Լ. Վիտգենշտեյնը և Բ. Ռասելը փիլիսոփայական մտքի նորագույն պատմության մեջ առաջիններից են, որ փորձել են տալ պատմական բացատրության տրամաբանական սխեման: Պատմական փաստերը Լ. Վիտգենշտեյնը և Բ. Ռասելը դիտարկեցին ընդհանուր տրամաբանական օրենքների լույսի ներքո: Լ. Վիտգենշտեյնը մասամբ գիտելիքի հավաստիության հարցը դիտարկեց երկրնտրանքային կոնցեպտուալ համակարգերից կախվածության կոնտեքստում:

Իր հերթին հետպոզիտիվիստական փիլիսոփայության համար ի դեմս Կ. Պոպերի, Պ. Ֆոյերբանդի բնորոշ է հակումը դեպի «տեսականացումը» և «սուբյեկտիվիզմը», ինչը որոշակի իմաստով ուղեկցվում էր փաստերի մասին գոյություն ունեցող ավանդական պատկերացումների փոփոխություններով:

Պատմական փաստի մեկնաբանման արքեոլոգիական հարցադրումներին հանդիպում ենք հատկապես Վ. Վինդեյրանդի, Գ. Ռիկերտի և այլոց աշխատություններում, որոնք պատմությունը վերլուծում են առավելապես անհատական-արժեքային տեսակետից:

Որպես կանոն գիտության մեջ փաստերը իմաստավորվում են տեսությամբ և տրամաբանական հիմնավորումով, ուստի, պատահական չէ, որ պատմության փիլիսոփայության մեջ պատմականի և տրամաբանականի հարաբերակցությանը հատուկ ուշադրություն է դարձնում Ռ. Կոլինզվուդը: Իր “Պատ-

մության գաղափարը՝ մենագրության մեջ, նա ընդհանրացնելով պատմական հետազոտության մեթոդաբանության հիմնահարցերը անտիկ աշխարհից սկսած մինչև 20-րդ դարի սկիզբը, ներկայացրել է այն որպես հասարակական զարգացման միասնական գործընթաց: Պատմական իմացաբանության և պատմության փիլիսոփայության հարցադրումներում 20-րդ դարի երկրորդ կեսին կարևորվում է պատմական ստեղծագործության մեջ սուբյեկտի և օբյեկտի հարաբերակցության խնդիրը: Անգլիացի պատմաբան Ե. Կատայի «Ի՞նչ է պատմությունը» աշխատության մեջ, ինչպես նաև պատմական ճանաչողության մեթոդաբանության մեծագույն ներկայացուցիչներից մեկի՝ ֆրանսիացի փիլիսոփա Ռ. Արոնի ստեղծագործություններում նշվում է, որ փաստերը ինքնին վերցված գիտություն չեն այնքան ժամանակ, քանի դեռ նրանք չեն ենթարկվում ընտրության, դասակարգման, ընդհանրացման ու բացատրության: Ավելին, Արոնը պատմության փիլիսոփայության ուսումնասիրության հիմնական օբյեկտ համարում էր պատմության տրամաբանական-ստեղծագործական և իմացաբանական հարցերը: Եվ բոլորովին պատահական չէ, որ Արոնի հետազոտությունների առարկան դարձավ գոյաբանություն, և մասամբ կեցության ու պատմական գործընթացների իմաստային վերլուծության խնդիրները:

Անտարակույս, գիտական ճանաչողության խնդիրն է բացահայտել տվյալ փաստի առաջացման պատճառը, պարզել նրա էական հատկությունները և օրինաչափ կապ սահմանել փաստերի միջև: Հարցադրումներ, որոնք տեղ չեն գտնում պատմական փաստերի վերլուծությանը նվիրված հետազոտությունների ավելի ուշ շրջանում մեծ ճանաչում է գտած նոր պատմագիտության ներկայացուցիչների մոտ: Այդ ուղղության ակունքներում կանգնած են եղել հայտնի պատմաբաններ Մ. Բլոկը և Լ. Վեֆերը: Ըստ էության հենց նրանք ի հակակաշիռ պոզիտիվիզմի առաջ քաշեցին պատմաբանի գործունեության այլ կոնցեպցիա. նա պետք է լինի ոչ թե զուտ փաստեր հավաքող ու պատմության ստրուկ, այլև ստեղծագործող անհատ, որի գիտական հետաքրքրությունների շրջանակում գերակշիռ դեր պետք է կատարի իր կողմից առաջադրած գիտական հիմնադրություններին առնչվող նյութի ընտրությունը, որոշակի տեսակետից դրանց հետազոտությունն ու վերլուծությունը:

Ինչ վերաբերվում է մեր պատմագրությանը, ապա անվիճելի է, որ խորհրդրդային ժամանակաշրջանի գիտությունը զարգացել է բացառապես մարքսիզմի գաղափարական հենքի վրա, որի պատճառով պատմագիտությունը չէր կարող հավակնել սեփական գիտության բնույթի մասին համընդհանուր հիմնադրություններ ստեղծել, քանի որ գտնում էին, որ նման հիմնադրություններ արդեն մշակվել են մարքսիզմի դասականների կողմից: Սակայն 20-րդ դարի կեսերին խորհրդային փիլիսոփայության մեջ տեղի ունեցավ որակական փոփոխություն, որը փիլիսոփայության զարգացման նոր փուլի սկիզբ դրեց, այսինքն՝ փիլիսոփայությունը վերադարձավ իր սեփական հիմնախնդիրների ստեղծագործական զարգացմանն ու մշակմանը: Արդեն 20-րդ դարի վերջերին լույս տեսան պատմության մեթոդաբանական հիմնախնդիրների վերաբերյալ բազմաթիվ աշխատություններ, որոնց զգալի մասը շարունակում էին արմատական մարքսիստական երանգավորում ունենալ, մյուսները՝ մեթոդաբանական առումով և իրենց հարցալուծումներով նորություն էին:

Ինչևէ ժամանակակից պատմագրությունը, աստիճանաբար ձեռքբազանությունով ուղղորդող հրամայական ցուցումներից, ներկա ժամանակաշրջանում դեռևս

գտնվում է պատմության ելևէջների իմաստային մեկնաբանությունների իմացաբանական որոնումների մեջ: Մեր պատմագիտության մեջ հստակորեն երևում է երկու միտում. մի կողմից դրսևորվում է օբյեկտիվության մեթոդաբանական ավանդույթների պահպանման ձգտումը, մյուս կողմից՝ պատմաբանների նոր սերունդը ավելի ակտիվորեն է օգտագործում իմացաբանության սուբյեկտիվ մեթոդաբանական գաղափարներ:

Հաճախ, սուբյեկտիվիզմը այն աստիճան է մուտք գործում պատմական փաստերի մեկնաբանության ու վերաբառադրության մեջ, որ աննկատելիորեն փորձում է կեղծ գիտության երևույթը հասարակությանը մատուցել որպես գիտական: Ուստի “պատմության այսպիսի վերաշարադրանքները նախատեսված են զանգվածային քարոզչության, ինչպես նաև, քաղաքագետների, դիվանագետների համար: Կարելի է ասել, որ դրանց “ապացուցողական” ուժն ուղիղ համեմատական է դրանց վրա կատարվող ծախսերին...” (Գևորգյան Հ.Ա., ԱԶԳ, Ազգային պետություն, ազգային մշակույթ, Երևան, 1997, էջ 26):

Հետազոտությունների մեծ մասը պատմական փաստերի հետազոտությունների նկատմամբ ցուցաբերում է մարդաբանական կամ սոցիոլոգիական մոտեցում: Առաջին մոտեցման կողմնակիցների վրա ուժեղ է դասական մեթոդաբանական ժառանգությունը, ավելի շուտ նրանց մտահոգում է անցյալի և նրա զարգացման օրինաչափությունների մասին հավաստի և լրիվ տեղեկություն ստանալու ուղղությամբ տարվող մեթոդաբանական որոնումները:

Երկրորդ մոտեցման կողմնակիցներին հուզում է պատմության մեջ “մարդու կորուստը” և դրա համար պատմագիտության զարգացումը նրանք կապում են նրանում ոչ դասական մեթոդաբանության և արժեքների “պարադիգմաների” հետ:

Ելնելով այն համոզմունքից, որ փաստերը պայմանավորված են նաև մտածողության մի շարք յուրահատկություններով, հետպոզիտիվիստական պատմափիլիսոփայական միտքը կասկածի տակ է առնում պատմական փաստի որպես գիտելիքի չափանիշի և սկզբնաղբյուրի օբյեկտիվության կարգավիճակը: Հայտնի է, որ հետպոզիտիվիստական փիլիսոփայությունը աչքի է ընկնում դեպի “սուբյեկտիվիզմ ու “թեորետիզմ” դրսևորված հավատարմությամբ, որն ուղեկցվում էր փաստերի և ընդհանրապես ցանկացած օբյեկտիվ գիտելիքի մասին ունեցած ավանդական պատկերացումների արմատական փոխակերպումներով:

Անցյալի պատմափիլիսոփայական վերլուծություններում ավանդաբար ուշադրություն է դարձվել պատմական փաստի իմացաբանական էության վրա, փաստերին վերագրելով նաև ինվարիանտության, եզակիության ատրիբուտներ, դրանով իսկ որոշակիորեն տարանջատելով “իրականության փաստը” “գիտության փաստ”-ից: Եթե տվյալ խնդիրը դիտարկենք ոչ թե զուտ տեսականորեն՝ պատմության փիլիսոփայության մեթոդաբանության տեսանկյունից, ապա կարող ենք պնդել, որ շատ դեպքերում չարաշահվում է պատմական փաստերի իմացական կողմը, կարևորելով իմացական սուբյեկտիվիզմը, որը հաճախ տարբեր չափաբաժիններով արտահայտվում է զանազան գիտնականների, այդ թվում համաշխարհային համբավ ունեցող մեծությունների մոտ: Ասվածն ավելի առարկայական դարձնելու համար տեղին է անդրադառնալ 20-րդ դարի մեծագույն պատմաբաններից մեկի՝ Թոմսֆիլի դիտարկումներից մեկին. այսպես՝ հայերի ցեղասպանության խնդրին անդրադառնալով, պնդում է, և որպես “պատմական

փաստ” բերում է այն հանգամանքը թե ցեղասպանությունը հայերի կողմից ազգայնականության արևմտյան գաղափարի որդեգրման հետևանք էր: Մակայն, ինչպես նշում է Հ. Գևորգյանը «ժողովուրդների բռնազավթումը, կեղեքումը, բռնազաղթը, կոտորածները և հատկապես ուժացումը, ցեղասպանությունը, օսմանյան կայսրության մեջ թուրքական իշխանությունների սովորական, շարունակական քաղաքականությունն ու վարքագիծն էին հարյուրամյակներ շարունակ և ո՞ր պատմաբանը կարող է խղճի մտքը պնդել, թե ... դրանք հետևանք էին այդ ժողովուրդների անհնազանդության, ազգայնականության, անջատողականության: Մեծ Եղեռնը թուրքական իշխանությունների այդ քաղաքականության ու վարքագծի միանվագ դրսևորումն էր միայն, երբ ներկայացել էր պատեհ առիթը: Նման պատեհ առիթներ նրանք ձեռքից բաց չէին թողնում նաև սերբերի, բուլղարների, հույների, արաբների նկատմամբ: Թոյնբին կարող էր նրանց դասերը ևս ի ցույց դնել իբրև խրատ, բայց չի անում, որովհետև այս դեպքում իր հիմնական թեզիսը կհանգեր անհեթեթության” (Գևորգյան Հ.Ա. ԱԶԳ, Ազգային պետություն, ազգային մշակույթ, Երևան, 1997, էջ 12-13):

Իհարկե, փաստերը պատահական շատ բան կարող են պարունակել, սակայն գիտական վերլուծության հիմք է դառնում ոչ միայն եզակի փաստը, այլ առաջին հերթին հիմնական միտումն արտահայտող փաստերի ամբողջությունը: Ուստի տեսության գիտական արժեքը պայմանավորված է ոչ միայն փաստերի առատությամբ, այլև հիմնախնդրի բուն էությունը փաստերով ապացուցելու կարողությամբ: Անշուշտ, ասվածը չի նշանակում որ պատմական փաստերը տալիս են պատմության միայն վերջնական, միայն ավարտուն նկարագիրը: Գոյաբանական նման հարթությունում ևս գործում են իմացաբանական եզրակացություններն այն մասին, որ իմացության առարկան մշտապես շատ ավելի հարուստ է, քան առարկայի մասին իմացությունը և, որ ճշմարտությունը գործընթաց է, իսկ պատմության պարագայում այն բազմաթիվ առեղծվածներ է պարունակում՝ առեղծվածներ, որոնք առաջին հերթին կապված են փաստերի ինֆորմատիվ ամբողջականության խնդրի կամ բացակայության հետ:

Ուստի պատմական երևույթների, հասարակությունների և մարդու հետազոտության առնչությամբ ժամանակակից պատմա-փիլիսոփայական մտքում գերիշխում են այնպիսի մեթոդներ, որոնք ելնում են պատմության անավարտության, պատմության մեջ մարդու որոշակի դերակատարության սկզբունքից: Այդ մեթոդաբանության գերակշռող գործոնները իրենցով որոշում են պատմական փաստի նկատմամբ անհատի վերաբերմունքը, դիտելով այն ոչ թե զուտ իրային վկայի, որպես իմաստային ռեալության, այլ ներկայի և անցյալի միջև միջնորդված երկխոսության:

Պատմական փաստի իմացաբանական նշանակությունը: Պատմական ճանաչողության գործընթացում առաջ են քաշվում պատմական փաստի նշանակության յուրահատկությունների հետ կապված մի շարք հիմնահարցեր: Պատմական ճանաչողության մեջ փաստերի, հիմնախնդիրների քննարկումը հանգում է այն բանին, թե ինչ է ստանում պատմաբանը հետազոտության արդյունքում, արդյոք հետազոտությունն իրականության մասին նոր գիտելիք է պարունակում, թե միայն իրականության առանձին կողմերն է փորձում նկարագրել: Այսպիսով, պատմական հետազոտությունների արդյունքների վերիֆիկացիայի, նրանց ճշմարտացիության հաստատման, վերլուծության մեթոդների հիմնահարցերը կա-

մա թե ակամա առաջին պլանի վրա են մղվում: Հասկանալի է, որ այդ հարցադրումը պատմության մեջ միշտ գոյություն չի ունեցել, քանի որ պատմագիտությունն իր զարգացման սկզբնական շրջանում եղել է պատմական աղբյուրների և ընդհանրապես անցյալում տեղի ունեցածի գուտ վերաշարադրում:

Պատմական փաստերի նկատմամբ ոչ դասական փիլիսոփայության շրջանակներում տեղի է ունենում վերաբերմունքի փոփոխություն և կարծես թե աստիճանաբար կյանքի է կոչվում այն տեսակետը, ըստ որի յուրաքանչյուր պատմաբան ստեղծում է պատմությունն իր երևակայության մեջ: Այսինքն՝ ստացվում է, պատմական փաստը ոչ այնքան օբյեկտիվ ռեալություն է, որքան սուբյեկտիվ, սուբյեկտիվ այն պատճառով, որ պատմաբանի երևակայության ծնունդ է:

Հետմոդեռնիզմի քննադատները առաջին հերթին չեն ընդունում պատմական փաստից ու տեքստերից դուրս գոյություն ունեցող ռեալության հետմոդեռնիստական ժխտումը (տե՛ս Бугалин А.В. Постмодернизм устарел... //Вопросы философии, 2004, N2; Давыдов Ю.Н. Патологичность «состояния постмодерна» // Социологическая исследования, 2001, N3).

Իր հերթին պատմաբանը իր վրա է կրում որոշակի սոցիալ-քաղաքական հարաբերությունների ազդեցությունը: Դրանով իսկ պատմաբանի երևակայությունը ստեղծում է որոշակի կառուցվածք, որի շրջանակներում ներառվում են պատմաբանի կողմից հավաքած նյութերը: Այդ պատճառների շնորհիվ պատմաբանը պատմություն է ստեղծում իր երևակայության բնույթից կախված: Եվ հետևաբար, դրանով պայմանավորված իմացության ոչ մի բնագավառում չկա փաստերի այնպիսի կեղծում և իրականության սուբյեկտիվ մեկնաբանություն ինչպես հասարակական գիտությունների բնագավառում և մասնավորապես պատմագիտության մեջ:

Այլ կերպ ասած, սուբյեկտի պահանջումները, շահերը, ցանկություններն ու նպատակները հանդես են գալիս ճանաչողության և՛ որպես հիմք, և՛ որպես ճանաչողության չափանիշ: Այդ տեսակետից պատմական փաստերը որպես իմացաբանական երևույթ ոչ դասական փիլիսոփայության շրջանակներում ևս դառնում են մարդկանց համոզմունքներից կախված, անհատականացման առանձնահատուկ դրսևորում:

Իսկ համոզմունքները պատահական չեն առաջանում, դրանք, ինչպես նշում է Բ. Ռասելը ստեղծվում են համապատասխան փաստերի վրա՝ “...գիտակցությունները ճշմարտություն կամ մոլորություն չեն ստեղծում: Նրանք ստեղծում են համոզմունքներ, բայց հենց որ համոզմունքները ձևավորված են, գիտակցությունը չի կարող նրանց դարձնել ճշմարիտ կամ սխալ, բացառությամբ հատուկ դեպքերի, որոնցում համոզմունքները վերաբերում են ապագայի այնպիսի բաների, որոնք հավատացող անձի կարողությունների սահմանում են...: Այն, ինչ համոզմունքում ճշմարիտ է դարձնում, մի փաստ է, իսկ այս փաստը (բացի բացառիկ դեպքերից) որևէ կերպ կախված չէ համոզմունքը կրող մարդու գիտակցությունից” (Բ. Ռասել “Փիլիսոփայության պրոբլեմները”, Երևան, 2004, էջ 96):

Պատմական փաստի իմացաբանական դերի ուսումնասիրման ճանապարհին շրջադարձային եղավ նրա հերմենևտիկական մեկնաբանությունները: Մեր օրերում հերմենևտիկայի վերածնունդը զուգակցվելով գիտության նորագույն նվաճումների հետ պատմական աղբյուրագիտությունը գիտական ճշմարտությունների որոնումներում տալիս է նոր բացատրություններ:

Հերմենևտիկան պատմական փաստերի մեկնաբանությունների նկատմամբ կիրառելիս ի վիճակի է էսպես փոխել պատմական փաստի մեկնաբանության մասին տեսակետները, ընդլայնելով նրա տեղեկատվական շրջանակները: Ըստ հերմենևտիկայի պատմական անցյալը հասանելի է ըմբռնմանը այնպես, ինչպես ներկան, քանի որ փաստերը մեզ տրվում են առավելապես տեքստային ռեալության միջոցով: Հայտնի է, որ պատմական ըմբռնումը անհնար է կանխագծել ապրիորի, քանի որ այն միշտ շաղախված է պատմաբանների կողմից մեզ ներկայացրած պատմական իրականության պատկերի հետ:

Այս տեսակետից խոսվում է պատմական փաստի ընկալման երկու ապեկտների մասին. նախ՝ մի բան է հասկանալ պատմական փաստում տեղի ունեցած իրադարձությունների որոշ կողմերի էությունը, երկրորդ՝ այլ բան է պատմական փաստի, տեքստի ամբողջական ըմբռնումը: Առաջինը կարելի է անվանել իրադարձությունների մեկնաբանում պատմաբան հեղինակի կողմից, իսկ երկրորդը՝ կրկնակի մեկնաբանություն՝ և պատմաբան-հեղինակի գործունեության և տեքստում արտացոլված իրադարձությունների մեկնաբանում: Սակայն չպետք է մոռանալ, որ գիտական բանավեճում արտացոլվում են միայն գիտնականի սեփական պատկերացումները, մինչդեռ ինքը՝ պատմությունը մեզ թելադրում է ամբողջությամբ իր ռեալությունը: Հերմենևտիկայում պատմական փաստի ուսումնասիրությունը, տեքստերի էության ըմբռնման կախվածությունը կոնկրետ պատմական պայմանների մեկնաբանությունից, պարզ ցույց է տալիս, որ այն չի հանգում զուտ հոգեբանական և սուբյեկտիվ գործընթացի, թեև պատմական փաստերի մեկնաբանողի անձնական փորձը ոչ պակաս դերակատարություն է ստանում նրանց մոտ:

Տվյալ դեպքում խոսքն այն մասին է, որ պատմաբանը միշտ յուրատեսակ «երկխոսություն» է սկսում անցյալի հետ: Բանն այն է, որ մի կողմից պատմական իրադարձությունները շարունակում են մեր վրա ազդել նոր պատմական փաստերի բացահայտումներին գուգահեռ, մյուս կողմից նաև ժամանակակից խնդիրները կարող են լուսաբանել չբացահայտված կամ մինչև վերջ չլուսաբանված պատմության զանազան կողմերը:

Հայտնի է, որ փաստը, տեքստը՝ նախնական տվյալ է (ռեալություն) և բոլոր հումանիտար առարկաների համար ելակետային հիմք է: Խոսելով փաստի, տեքստի պատմական-իմացական կողմի մասին, մենք ելնում ենք նաև այն բանից, որ մեր հետազոտության առարկան գուցե նաև ոչ իրական, օբյեկտիվ պատմություն է, այնպիսի պատմություն, որը ինչ-որ մեկի պատկերացումներով և ըմբռնումներով է տրված տեքստին: Բոլոր դեպքերում փաստի ինֆորմատիվ գործությունը առաջին հերթին տրված է նրա մտային-բովանդակային կարողության մեջ: Ուստի, հասկանալ փաստը, նշանակում է յուրացնել նրա բովանդակությունը, վերապրել այն հոգեկան վիճակը, որը զգացել է տեքստի հեղինակը փաստը ստեղծելիս: Ուրեմն, ինչ-որ իմաստով պատմական փաստը նաև մարդկային հոգեբանական, սուբյեկտիվ փաստաթուղթ է: Այս համատեքստում գուցե չի դադարում ճշմարտություն համարվել այն ըմբռնումը, որ պատմության հետ ամեն մի հասարակություն վարվում է այնպես, ինչպես խոհանոցում մի կտոր մսի հետ են վարվում: Սակայն դա չի նշանակում, որ սոցիալական ճանաչողության ոլորտում մենք միշտ գտնվում ենք սուբյեկտիվի սահմաններում և չենք կարող մոտենալ օբյեկտիվին:

Իհարկէ, որպէս կանոն մարդը դժվարությամբ է արստրահում սեփական համոզմունքներից կամ կողմնակի ազդեցություններից, և «... քանի որ փաստերը սովորաբար կարելի է մեկնաբանել միայն ուղղակի հակադիր հիպոթեզները պաշտպանելու համար, և քանի որ աղբյուրները երբեք անցյալը չեն ներկայացնում լրիվ կամ ամբողջությամբ, ապա պատմական կոնտեքստի զգացողությունը, հենվելով պատմական փաստի վրա, կառուցվում է նաև երևակայության ուժով» (Том Д. Стремление к истине. Как обладать мастерством историка. М. 2000, с. 183):

Այսպիսով, պատմական փաստը մի կողմից օբյեկտիվ ռեալության այս կամ այն կողմի ապացուցումն է, մյուս կողմից փաստը պատմաբանի որոշակի գործունեության արդյունք է, որն էլ հանգեցնում է պատմական փաստերի սուբյեկտիվ արժևորում ստանալուն:

Ուստի պատմաբանի աշխատանքի մեջ կենտրոնական դեր ունի փաստի իմաստային մեկնաբանությունը, առանց որի պատմական աղբյուրները չեն խոսի և մենք երբեք չենք մոտենա պատմական ճշմարտությանը: Փաստի ըմբռնման իմաստը ռեալության ոչ միայն անհատական, այլև կոլեկտիվ ընկալման մեջ է: Նաև դա է պատճառը, որ յուրաքանչյուր սերունդ սրբագրում է պատմությունը (տե՛ս Историческое исследование в России. М., 1996, с. 432):

Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ այս կամ ըմբռնումը նախ և առաջ ձևավորվում է ոչ թե պարզապէս հետազոտողի սուբյեկտիվ դիրքորոշումով, այլ որոշվում է պատմական ու մշակութային ավանդությունների ավելի լայն համակարգով, որում նա գործել է: Հետևաբար միևնույն իրադարձությունները, որպէս պատմական ռեալություններ ներկայացնելը, որոնք մենք գտնում ենք տարբեր ժամանակաշրջանի պատմաբանների աշխատություններում, կախված է նաև պատմաբանի անձից:

Այսպիսով, փաստը պասիվ, անկենդան ամբողջ չէ, այլ կենսունակ, որոշակի գործառույթ կատարելու ունակությամբ օժտված միավոր է և, որ յուրաքանչյուր գիտական հասարակություն բարոյական պատասխանատվություն է կրում արժանահավատ փաստերի կիրառման և դրանց բարեխիղճ մեկնաբանման համար:

Պատմական փաստը կոնկրետ ամբողջ է՝ օժտված բազմազան մոդելային գեներով և միաժամանակ ներքին միասնությամբ: Պատմական փաստի բովանդակության մեջ համադրվում են օբյեկտիվ և սուբյեկտիվ տարրերը, տվյալ սկզբնաղբյուրը բացատրող սխեմաները, պատմաբանի սոցիալական որակները և ընդհանուր գիտական պատրաստվածությունը: Պատմական փաստը լինելով իմացության օբյեկտիվ հիմք, կարող է կատարել ճշմարտության չափանիշի գործառույթ՝ պատմագիտական եզրակացությունների ու դրույթների համակարգում, առավելապէս կոնվենցիոնալ հիմնավորումների շրջանակներում:

Այսպիսով, պատմական փաստը սուբյեկտների և առարկայական միջավայրի բարդ փոխազդեցությունների հարաբերությունների արդյունք է: Հետազոտողը ընդլայնում և փոխում է երևութաբանական հետազոտության դաշտը, պահպանելով իր գիտելիքի օբյեկտիվ հիմքը, միևնույն ժամանակ օգտագործելով պատմական փաստի սուբյեկտիվ մեկնաբանման հնարավորությունները: Եվ վերջապէս պատմաբանի երևակայությունը այնպիսի կառուցվածք է ստեղծում, որն ինտեգրում է հավաքված ողջ պատմական նյութը:

Размик Тигранян – Понимание исторического факта в современной философии. – Исторический факт представляет собой конкретное целое, обладающее многообразием модальных форм и, одновременно, внутренним единством. В содержании исторического факта синтезируются объективные и субъективные элементы, данные источников и объясняющие схемы, социальные штампы и общая научная компетентность историка. Имеющие объективную основу исторические факты могут выполнять функцию критерия истины только в рамках конвенционального обоснования положений и выводов исторической науки.

Razmik Tigranyan – *The Perception of a Historical Fact in Modern Philosophy.* – Historical fact is specific unit, which has variety forms of model and the same time internal unity. In the content of the historical fact are synthesized objective and subjective elements, which are given in the sources and explained schema, social stamps and general scientific competence of the historian. Having objective basis historical facts can perform function of truth only within the conventional justification of statements and conclusions of historical science.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀՈՒՄԱՆԻԶՄԻ ՏԱՐԱՏԵՍԱԿՆԵՐԸ, ԷԿԶԻՍՏԵՆՑԻԱԼ ՀՈՒՄԱՆԻԶՄ

ԳՐԻԳՈՐ ԱՍՍԱՐՅԱՆ

Հումանիզմի, մարդու հիմնախնդրի նկատմամբ ժամանակակից փիլիսոփայական հոսանքների արտակարգ հետաքրքրությունը որոշակի առումով այն վիճակի արձագանքն է, որի մեջ գտնվում է մարդը արդի աշխարհում:

Ժամանակակից սոցիալական իրականությունը, որտեղ գնալով ավելի ու ավելի է խորանում մարդու օտարումը, ուժեղանում անհատի դիմագրկումը, որտեղ անհատն իրեն զգում է որպես հասարակության կողմից լքված ու միայնակ էակ, ծնում է սևեռուն հետաքրքրություն մարդկային անհատի ու նրա ճակատագրի նկատմամբ, մարդկային կյանքի իմաստն ըմբռնելու անկասելի ձգտում, որը հումանիզմի արևմուտքի տեսաբաններին մղում է մարդու պրոբլեմի լուծման որոնումների:

Սակայն մարդու օտարման տնտեսական հիմքերի վերլուծությունից հրաժարումը, հասարակական իրական հարցադրումների անտեսումը, ինչպես նաև արդի արևմտյան հասարակությունում մարդու “առկա կեցության” բացարձակացումը անխուսափելիորեն հանգեցնում է խոր հոռետեսության և փակում ժամանակակից աշխարհում մարդու առջև ծառայած հասարակական բարդ պրոբլեմների լուծման ճանապարհը:

Մարդու անձնական ու հասարակական կյանքում հստակ հեռանկարի բացակայությունը ծնում է մարդկային գոյության անիմաստության և աննպատակության մասին տրամադրություններ: Նոր հազարամյակի մարտահրավերներն արևմուտքի գաղափարախոսների կողմից ընկալվում են որպես ընդհանրապես մարդկությանն ու քաղաքակրթությանը, մարդու բուն գոյությանն սպառնացող անկանխելի վտանգ: Նման տրամադրությունների արտահայտողներից մեկը, օրինակ, Էրիխ Ֆրոմը¹⁹⁶ գրում է. “19-րդ դարն ասել է՝ “Աստված մահացել է”, 20-րդ դարը կարող է ասել՝ “Մարդն է մահացել”¹⁹⁷:

Ժամանակակից արևմտյան աշխարհին հատուկ այդ մտայնությունը, մարդկային կյանքի աննպատակության ու մարդու դրության անելանելիության գիտակցությունը հատկապես ցցուն ձևով է արտահայտվում էկզիստենցիալիզ-

¹⁹⁶ Ֆրոմ (Fromm) Էրիխ (1900-1980) – գերմանաամերիկյան ճանաչված փիլիսոփա, հոգեբան և սոցիոլոգ, նեոֆրեյդիզմի գլխավոր ներկայացուցիչ: 1933-ին Գերմանիայից արտագաղթել է ԱՄՆ: Հիմնվելով հոգեվերլուծության, էկզիստենցիալիզմի և մարքսիզմի վրա, ձգտում էր լուծել մարդկային գոյության հիմնական հակասությունները, որոնք առկա են եսասիրության ու այլասիրության, տիրապետման ու կեցության, ինչ-որ “բանից նեգատիվ ազատության” և ինչ-որ “բանի համար պոզիտիվ ազատության” միջև: Ժամանակակից քաղաքակրթության ճգնաժամից ելքը Ֆրոմը տեսնում էր հումանիստական էթիկայի սկզբունքների ու արժեքների և դրանց շարքում ամենաբարձրի՝ սիրո վրա հիմնված “առողջ հասարակության” ստեղծման, ինդիվիդի ու բնության, անհատի ու հասարակության միջև ներդաշնակության վերականգնման մեջ: Ֆրոմի հիմնական աշխատություններն են՝ “Փախուստ ազատությունից” (1941), “Հոգեվերլուծությունը և կրոնը” (1950), “Հուստ հեղափոխություն” (1964):

¹⁹⁷ New knowledge in human values, N.Y., 1959, p. 164.

մի¹⁹⁸ փիլիսոփայության մեջ: Անսահմանորեն միայնակ, վերջնականապես լըքված, համակված իր վախով իրական կյանքի ոչնչության ու անիմաստության դեմ՝ այսպիսին է մարդը էկզիստենցիալիստների պատկերացման մեջ: Նա ապրում է մի աշխարհում, որտեղ հիմքից խախտված է ամեն մի կարգ, որտեղ չկա ոչ մի ճշմարիտ բան, իսկ մարդուն դեմ-հանդիման կանգնած հասարակական կույր ու անանուն ուժերը, նրան հարստահարող տեխնիկան ու իրական կյանքի անվերջանալի բախումները մարդուց խլում են վերջին բանը՝ նրա “ես”-ը, նրա ինքնությունը:

Մարդկային կեցության բանական կողմից զրկված, կյանքի անիմաստությունը գիտակցած, ճնշված ու ոտնահարված մարդկային “ես”-ը ներփակվում է իր մեջ, ընկղմվում իր ներքնաշխարհի խորքը և բավականություն ու հանգստություն որոնում բացառապես իր մեկուսացած ներքին ազատության մեջ: Հիմնական գծերով այս է այն փիլիսոփայական ու գաղափարական ատաղձը, որից ելնում է էկզիստենցիալիզմը մարդու պրոբլեմի լուծման իր որոնումների մեջ:

Մարդու էկզիստենցիալիստական ըմբռնումը, անկախ նրա աթեիստական կամ աստվածաբանական երանգից, ուղղակի հակադիր է մարդու էության ռացիոնալ ըմբռնմանը, մարդու հասարակական բնության գիտական մեկնաբանմանը:

Եթե մատերիալիստ տեսաբանի համար մարդու պրոբլեմը, ինչ տեսանկյունից էլ այն քննարկվելիս լինի՝ գոյաբանական (օնտոլոգիական), իմացաբանական, բարոյագիտական, գեղագիտական և այլն, առաջին հերթին հասարակական պրոբլեմ է, ապա էկզիստենցիալիստի համար այն հիմնականում հանդես է գալիս որպես վերհասարակական, արտահասարակական պրոբլեմ, մարդու ասոցիալականության պրոբլեմ: “Գոյության” փիլիսոփայության կողմնակիցները մարդուն քննում են նրա հասարակական-պատմական կապերից դուրս, իբրև մեկուսացած անհատ: Մարդը, ըստ նրանց, հանդես է գալիս իբրև լիարժեք անհատ միայն այն ժամանակ, երբ նա միայնակ է. “Մարդու իրականությունը, - գրում է Գաբրիելը, - երևան է գալիս իբրև նրա եզակիություն կամ անհատ”¹⁹⁹: Այդ պատճառով էլ, ըստ էկզիստենցիալիստների, մարդու մեջ իսկական “մարդկայինի” մասին կարելի է խոսել միայն այն ժամանակ, երբ նա այլևս չի դիտվում որպես հասարակական էակ, երբ նրա վարքագիծը այլևս չի տեղավորվում հասարակական գործունեության սովորական, թույլատրելի ձևերի մեջ: Այսպես, գերմանական էկզիստենցիալիզմի հիմնադիրներից և գլխավոր ներկայացուցիչներից մեկը՝ Մարտին Հայդեգերը²⁰⁰ որպես մարդկային կեցության հատկանիշներ հռչա-

¹⁹⁸ Ուշ լատիներեն՝ “existentia” – “գոյություն” բառից, այստեղից էլ՝ “գոյության փիլիսոփայությունը”: Սկզբնավորվելով 20-րդ դարի սկզբին Ռուսաստանում, Առաջին համաշխարհային պատերազմից հետո տարածվելով Գերմանիայում, Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ Ֆրանսիայում, իսկ ապա՝ նաև մյուս երկրներում, էկզիստենցիալիզմն այնուհետև դարձավ արևմտյան փիլիսոփայության առավել ազդեցիկ ուղղություններից մեկը: Այդ փիլիսոփայության առանցքն է կազմում մարդու, հումանիզմի մասին ուսմունքը:

¹⁹⁹ **L. Gabriel**, Existenzphilosophie von Kierkegaard bis Sartre, Wien, 1951, S. 186.

²⁰⁰ Հայդեգեր (Heidegger) Մարտին (1889-1976) – 20-րդ դարի գերմանական ճանաչված փիլիսոփա, գերմանական էկզիստենցիալիզմի հիմնադիրներից մեկը: Հայդեգերը զարգացրել է կեցության մասին մի ուսմունք (“Ֆունդամենտալ օնտոլոգիա”), որի հիմքում ընկած է կեցության (էկզիստենցիայի) և ամենօրեության, առօրեականության հակադրումը: Կեցության իմաստի ըմբռնումը, ըստ Հայդեգերի, կապված է մարդկային գոյության ունայնության գիտակցման հետ (“Կեցությունը և ժամանակը”,

կում է հոգսը, տագնապը, սարսափը և մարդկային մյուս “ապրումները”, որոնց ամբողջությունը, ըստ նրա, կազմում է մարդու սուբյեկտիվ կեցությունը: Որպեսզի մարդը, ըստ Հայդեգերի, հասու լինի իր ճշմարիտ կեցության իմաստին, ճանաչի կյանքի յուրաքանչյուր պահի նշանակությունն ու արժեքը, պետք է վերանա գործնական ամեն մի նպատակից, նպատակադրվածությունից առհասարակ, գիտակցի իր մահկանացու լինելը, եղծականությունը, իրեն մշտապես զգա մահվան դեմ-հանդիման, ազատվի “հասարակական կեցության կուռքերից”՝ նպատակներից, իդեալներից, գիտական վերացություններից:

Դժվար չէ նկատել նման հարցադրումների իրական հիմքերը: Հասարակական գործունեության այն օրինականացված ու թույլատրելի ձևերը, որոնք բնորոշ են ժամանակակից արևմտյան հասարակության համար, շատ նեղ ու սահմանափակ են դուրս գալիս մարդու այն ընդունակությունների ու ձիրքերի համեմատությամբ, որոնք ձեռք են բերվել նրա պատմական զարգացման ընթացքում: Մարդու ներքնաշխարհի հարստությունը դառնում է անհամատեղելի այն աղքատիկ, միապաղաղ, ամեն օր կրկնվող “առկա կեցության” հետ, որը մարդուն տրամադրում է արդի հասարակությունը: Այդ պայմաններում ստեղծվում է այն պարանքային պատկերացումը, որ միայն հասարակական ամեն տեսակ նորմերից ու չափանիշներից շեղվելու շնորհիվ մարդու արարքները կարող են ձեռք բերել ճշմարիտ արարքների իմաստ, դառնալ իսկական մարդկային արարքներ:

Զրկվելով իր հասարակական հարուստ կապերից՝ մարդը էկզիստենցիալիստների գրչի տակ ձեռք է բերում խորհրդավոր հատկանիշներ: Մարդը “սովորական գոյություն ունեցող չի գոյություն ունեցողների մեջ,- գրում է Գաբրիելը, կամայական իր չի աշխարհում գոյության ունեցող իրերի մեջ. նա տարբերվում է ամբողջ գոյավորից, նա էկզիստենցիա է”²⁰¹:

Մարդու էության իռացիոնալիստական մեկնաբանությամբ է հանդես գալիս Կարլ Յասպերսը²⁰²: “Մարդն ավելին է,- գրում է նա,- քան ինքը կարող է իմանալ իր մասին”²⁰³:

Յասպերսը քննադատության է ենթարկում ու մերժում մարդու մասին գիտական գիտելիքը: Մարդու գիտական իմացության հնարավորությունը նա մերժում է այն պատճառաբանությամբ, որ գիտությունը, վերանալով մարդկանց պատահական հատկանիշներից, նրանց վերագրում է միայն այն, ինչ հատուկ է բոլոր մարդկանց, մարդուն ընդհանրապես: Գիտական գիտելիքը, այսպիսով, գիտելիք է մարդու մասին որպես վերացական անհատի:

1927): Հայդեգերի ուշ շրջանի գիտական հետազոտությունների հիմնական թեմաներն են մտածողության “մետաֆիզիկական” եղանակի ծագումը, դեպի “կեցության ճշմարտություն” տանող ճանապարհի որոնումները:

²⁰¹ **L. Gabriel**, *Existenzphilosophie von Kierkegaard bis Sartre*, Wien, 1951, S. 22.

²⁰² Յասպերս (Jaspers) Կարլ (1883-1969) – գերմանական փիլիսոփա, էկզիստենցիալիզմի կրոնական թևի ներկայացուցիչ, հոգեբույժ: Յասպերսը փիլիսոփայության հիմնական խնդիրը համարում էր “կեցության ծածկագրերի”՝ տրանսցենդենցիայի (կեցության և մտածողության անըմբռնելի բացարձակ սահմանի) տարբեր դրսևորումների բացահայտումը: Տրանսցենդենցիայի հետ էկզիստենցիայի հարաբերությունը, ըստ Յասպերսի, մարդն ըմբռնում է այսպես կոչված սահմանային իրադրություններում (տառապանք, պայքար, մահ): Յասպերսի հիմնական աշխատություններն են՝ “Փիլիսոփայություն” (հատ. 1-3, 1932), “Պատմության ակունքները և նպատակը” (1949), “Մեծ փիլիսոփաները” (հատ. 1-2, 1957):

²⁰³ **K. Jaspers**, *Rechenschaft und Ausblick*, München, 1951, S. 267-268.

Քանի որ մարդու մասին գիտական գիտելիքն իր բնությամբ վերացական է, մտածում է փիլիսոփան, ուստի վերացական է դառնում նաև գիտելիքի առարկան՝ մարդը: Այդ պատճառով էլ գիտության մեջ, ըստ նրա, մարդը դասվում է “համընդհանրության” շարքը և հանդես գալիս որպես “վերացական մարդ”²⁰⁴: Այս ձևով Յասպերսի մոտ ծնունդ է առնում “վերացական անհատի” պրոբլեմը: Իր սուբյեկտիվ-իդեալիստական մեթոդաբանությանը հավատարիմ՝ նա մարդուն քննում է զուտ իմացաբանական առումով, նրա “վերացականության” պատճառը որոնում ոչ թե իրական տնտեսական հարաբերությունների մեջ, այլ գիտելիքի ոլորտում, գտնելով, որ վերացական անհատի առաջացման պատճառը թաքնված է բուն իմացության եղանակի մեջ, որի փոփոխման հետ միասին փոխվում է և մարդու գոյության եղանակը:

“Ապացուցելով”, որ գիտական գիտելիքի մեջ մարդը հանդես է գալիս որպես “վերացական անհատ”, Յասպերսն այնուհետև պնդում է, որ մարդու մասին այսպես կոչված “ճշմարիտ” կամ “էական” գիտելիքն անմատչելի է գիտության համար, որ այն միշտ մնում է գիտական իմացության սահմաններից դուրս, նրա այն կողմում: Այդ պատճառով էլ, ըստ նրա, մարդու մասին գիտական գիտելիքը ոչ-ճշմարիտ, իռացիոնալ գիտելիք է:

Մարդու մասին “ճշմարիտ” գիտելիքը, ըստ Յասպերսի, նրա ըմբռնումն է որպես անփոխարինելի ու անկրկնելի անհատականություն. “Մարդն իր մեջ գտնում է այն,- գրում է նա,- ինչ նա չի գտնում աշխարհում ոչ մի տեղ՝ ինչ-որ անձանաչելի, անապացուցելի, ոչ-առարկայական բան, այնպիսի բան, որը վրիպում է ամեն մի հետազոտող գիտության ուշադրությունից”²⁰⁵:

Մարդու իր այդ ըմբռնումը նա սինթեզում է “ինքնություն” հասկացության մեջ և գտնում, որ մարդը որպես “ինքնություն”, որպես “ինքնակեցություն” այնպիսին է, ինչպիսին նա կա՝ չլինելով գիտական գիտելիքի առարկա, չպատկանելով գիտության աշխարհին: Մարդը որպես իմացության “առարկա”, որպես “երեվոյթ” և մարդն “ինքնին” կամ “մարդն իր մեջ”՝ դրանք կեցության երկու, սկզբ-բունքորեն տարբեր և իրար հետ չկապակցված տեսակներ են: Այդ պատճառով էլ գիտական գիտելիքը, լինելով գիտելիք մարդու մասին իբրև “իմացության առարկայի”, եզրակացնում է փիլիսոփան, ոչ մի առնչություն չունի մարդու հետ “ինքնին վերցրած”:

Եթե գիտականը ոչ-ճշմարիտ է, մտածում է Յասպերսը, ապա ոչ-ճշմարիտ պետք է լինի և հասարակականը, քանի որ վերջինս նույնպես գործում է վերացական հասկացություններով և գործ ունի “համընդհանուրի” հետ: Մարդու հասարակական աշխարհը, ըստ Յասպերսի, անիրական աշխարհ է և այդ ամենից առաջ այն պատճառով, որ նա գործ ունի “ընդհանուրի”, “գանգվածայինի” հետ: Այդ պատճառով էլ մարդը կարող է հանդես գալ որպես իրոք “ճշմարիտ” էակ միայն սոցիալականից դուրս՝ որպես ասոցիալ էակ:

Մարդու գիտական իմացությանը Յասպերսը հակադրում է այսպես կոչված փիլիսոփայական իմացությունը, որը նա անվանում է նաև “փիլիսոփայական հավատ”, “էկզիստենցիայի պարզում”, “էկզիստենցիայի տրանսցենդենտացում”:

²⁰⁴ K. Jaspers, Philosophie. Bd. 1, Berlin, 1956, S. 28.

²⁰⁵ K. Jaspers, Einführung in die Philosophie, Zürich, 1950, S. 61.

Փիլիսոփայական իմացությունը, ըստ Յասպերսի, գիտական իմացության նկատմամբ ունի երկու վճռական առավելություն:

Նախ, մարդու մասին փիլիսոփայական գիտելիքը չի կրում “համընդհանուր անհրաժեշտ գիտելիքի” բնույթ, ազատ է գիտական գիտելիքին բնորոշ վերացականությունից: Այդ պատճառով էլ, ըստ Յասպերսի, փիլիսոփայության մեջ մարդը հանդես է գալիս ոչ թե որպես վերացական անհատ, այլ իր ամբողջ հարստության, իր ամբողջ անկրկնելիության ու անհատականության մեջ: Փիլիսոփայությունը տալիս է գիտելիք մարդու մասին որպես եզակի ու անկրկնելի անհատի:

Երկրորդ, ի տարբերություն գիտական գիտելիքի, որը ճշմարիտ գիտելիք չէ, փիլիսոփայական գիտելիքը խորապես ճշմարիտ, իրական գիտելիք է:

Եթե գիտության առարկան մարդու “երևույթն” է, ապա փիլիսոփայությունը գործ ունի մարդու հետ՝ ինչպիսին որ նա կա “ինքնին”։ փիլիսոփայությունը հասու է և ճանաչում է այն, “ինչ երբեք չի կարող դառնալ առարկա”²⁰⁶:

Մարդու մասին ճշմարիտ գիտելիքը, ըստ Յասպերսի, գիտելիքն է նրա մասին որպես եզակիության: Այդ պատճառով էլ մարդու ճշմարիտ գոյությունը նրա գոյությունն է որպես եզակի, ինքնաբավ անհատ:

Այսպիսով, մարդու էության իռացիոնալ վերլուծությունը Յասպերսի մոտ դառնում է անհատապաշտության հիմնավորման յուրահատուկ միջոց, այն բանի ապացուցման միջոց, որ անհատապաշտական սկզբունքը մարդու վարքագծի միակ ճշմարիտ սկզբունքն է:

Մարդու էության հարցում համանման տեսակետ է զարգացնում ամերիկյան նշանավոր էկզիստենցիալիստ Ֆրանց Վինկլերը:

Ժամանակակից մարդը, ըստ Վինկլերի, տառապում է գոյության ամլության մ, “ֆրագմենտարությամբ”, “անլիարժեքության կոմպլեքսով”: Մարդկային կյանքի անլիարժեքության գիտակցությունը, ասում է Վինկլերը, մարդու մեջ ծնում է այն հաղթահարելու, իրեն հզոր ամբողջի մի մասը զգալու ձգտում: “Մակայն դա,- նկատում է Վինկլերը,- ոչ միայն ցանկալի արդյունքի չի հասցնում, այլև իր մեջ պարունակում է այն հիմքերի ոչնչացման վտանգ, որոնցից միայն կարող է ծնվել սեփական անձի ճիշտ գնահատականը”²⁰⁷:

Մատնացույց անելով ժամանակակից աշխարհում տեխնիկայի հզորության աննախադեպ աճը և նրա կործանարար ազդեցությունը մարդու վրա, Վինկլերը ժամանակակից մարդու գլխին կախված մեծագույն վտանգներից մեկը համարում է “մարդկանց՝ մեքենայի վերածվելու վտանգը”²⁰⁸:

Ժամանակակից գիտությանը կշտամբելով այն բանի համար, որ նա “մարդկային հոգու զարգացման հարցի կողքով է անցել”²⁰⁹, Վինկլերը, Յասպերսի նման, միաժամանակ գտնում է, որ նա անընդունակ է թափանցելու մարդկային հոգու խորքը, լուծելու մարդկային ճշմարիտ կեցության հարցերը:

Զգտելով հաղթահարելու մարդու էության ըմբռնման հարցում մատերիալիզմի և իդեալիզմի “բևեռայնությունը” և “ներդաշնակելու” մարդու բարձր իդեալներն ու կենդանական բնագոյները, բանականությունն ու ինտուիցիան, մարդկա-

²⁰⁶ *K. Jaspers*, Philosophie. Bd. 1, Berlin, 1956, S. 23.

²⁰⁷ *Винклер Франц*, Человек – мост между двумя мирами, Нью-Йорк, 1964, стр. 27.

²⁰⁸ Նույն տեղում, էջ 181:

²⁰⁹ Նույն տեղում, էջ 145:

յին անհատի մեջ եղած ստեղծագործական ու աստվածային սկզբունքները, Վինկլերն այն կարծիքն է հայտնում, որ այդ “բնեռների” միջև ընկած է “չեզոք գոտի”, որտեղ անբաժան կերպով իշխում է մարդկային “ես”-ը և որտեղ նա կարող է ստեղծել իր սեփական աշխարհը²¹⁰:

Մարդու “ես”-ը, ըստ Վինկլերի, դժվար ըմբռնելի, իռացիոնալ էություն է, նրան դժվար է բնորոշում տալ, սակայն, այնուամենայնիվ, նա այնպիսի ռեալություն է, առանց որի “աներևակայելի է հոգեկան առողջ կյանքը”²¹¹:

Մարդկային “ես”-ը, որի մասին խոսում է Վինկլերը, հանդես է գալիս որպես բանական կողմից գուրկ, միատիկական սկզբունք, որի էության մասին մենք բանականության օգնությամբ չհինչ հավաստի իմանալ չենք կարող: Դա, նրա կարծիքով, այն բնագավառն է, որտեղ վերջանում են բանականության իրավունքները՝ իրենց տեղը զիջելով ինտուիցիային: Որտե՞ղ է գտնվում մեր “ես”-ը, հարցնում է փիլիսոփան, մեր մարմնի՞ մեջ, գիտակցության՞ մեջ, ո՞չ մեկի, ո՞չ էլ մյուսի մեջ, պատասխանում է նա, բանականությունը չի կարող լուծել այդ հարցը, դա ինտուիցիայի գործն է²¹²:

Էկզիստենցիալիզմի փիլիսոփայության աստվածաբանական ուղղության ականավոր ներկայացուցիչ, գերմանաամերիկյան բողոքական աստվածաբան Պաուլ Տիլլիխը²¹³, արձանագրելով ժամանակակից բուրժուական աշխարհի մարդու ճգնաժամը, մարդկային կեցության “ողբերգական դիալեկտիկան”, դրա պատճառները որոնում է աստծո նկատմամբ հավատի կորստյան, աստծուց՝ ժամանակակից մարդու երես դարձնելու մեջ:

Տիլլիխի կարծիքով, ժամանակակից մարդն ընկղմվել է իր կողմից ստեղծված առարկաների աշխարհը, կորցրել իր սուբյեկտիվությունը և դարձել իր ստեղծած արդյունքների գոհը²¹⁴: Սակայն մարդը, ըստ Տիլլիխի, խորապես գիտակցում է այդ ամբողջ կորուստը, իր անմարդկայնացումը և փորձում է գտնել ինքն իրեն, վերստին ձեռք բերել իր սուբյեկտիվությունը, իր կորսված “ես”-ը: Նա ընդվզում է իր այդ վիճակի դեմ և դրան պատասխանում այսպես կոչված “հուսահատության արհիության”²¹⁵: Ժամանակակից էկզիստենցիալիզմն էլ, ըստ Տիլլիխի, հենց այդ “հուսահատության արհիության” արտահայտությունն է:

²¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 106:

²¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 56:

²¹² Տե՛ս նույն տեղում:

²¹³ Տիլլիխ (Tillich) Պաուլ (1886-1965) – աստվածաբան և փիլիսոփա, այսպես կոչված դիալեկտիկական աստվածաբանության նշանավոր ներկայացուցիչ: Անցյալ դարի 20-ական թվականներին նա եղել է քրիստոնեական սոցիալիզմի շարժման առաջնորդը Գերմանիայում. 1933-ին տարագրվել է ԱՄՆ: Տիլլիխը ձգտում էր միավորել բողոքականության և ամբողջությամբ վերցրած քրիստոնեական աստվածաբանության հիմնական ուղղությունները և ղնել դրանց նոր “էկզիստենցիալ” սինթեզի հիմքերը: Նա առաջ էր քաշում ունիվերսալ “մշակույթի աստվածաբանության” ստեղծման հարցը, որն ընդունակ լիներ տարու ժամանակակից հասարակության կյանքի բոլոր կողմերի կրոնական լուսաբանումը: Նա ընդգծում էր մշակույթի կրոնական արժեքավորությունը և կրոնի մեջ մարդկային ավտոնոմ ակտիվության պահպանման անհրաժեշտությունը: Նա ձգտում էր ընդհանուր եզրեր գտնել բանականության ու հայտնության միջև և հաշտեցնել դրանք: Աստված, ըստ Տիլլիխի, այս աշխարհում գոյություն ունի որպես նրա բուն հիմք ու խորություն: Աստծուն չի կարելի “փնտրել” որպես ինչ-որ իրի, և նա գոյություն չունի որպես մասնավոր կեցություն: Այդ պատճառով, ըստ Տիլլիխի, միանգամայն հիմնավոր է աթեիստների ընդվզումն ընդդեմ Աստծո՝ որպես աշխարհից վեր ապրող կատարյալ երկնային էակի: Քրիստոսը, ըստ Տիլլիխի, “նոր կեցության” կերպար է, ով վերացնում է անձնական ու սոցիալական օտարման դիվական մեխանիզմները: Տիլլիխը նշանակալի ազդեցություն է թողել ինչպես 20-րդ դարի բողոքական, այնպես էլ կաթոլիկ փիլիսոփայության վրա:

²¹⁴ Տե՛ս **Tillich Paul**, *Der Mut zum Sein*, S. 102:

Քանի որ մարդը վախճանական էակ է, մահկանացու, մտածում է Տիլլիսը, ուստի մարդկային գոյությունը միշտ դիմագրաված է չգոյությունը: Մարդկային կյանքի վախճանականության և մարդու՝ մահկանացու լինելու գիտակցությունը, ըստ Տիլլիսի, նրա մեջ անխուսափելիորեն ծնում է սարսափ, որը Տիլլիսը բնորոշում է որպես “չգոյության էկզիստենցիալ դրսևորում”²¹⁵:

Ի տարբերություն վախի, որը ժամանակավոր վիճակ է, ունի իրական պատճառներ և ենթադրում է համապատասխան առարկայի գոյություն (վախենալ կարելի է ինչ-որ բանից կամ ինչ-որ մեկից), սարսափը, ըստ Տիլլիսի, մարդու համար մշտական, “էկզիստենցիալ” վիճակ է, որը կյանքի է կոչվում չգոյության կողմից, այն բանի կողմից, ինչը երբեք չի կարող ճանաչվել: Քանի որ չի կարելի վերացնել չգոյությունը, ուստի չի կարելի վերացնել և նրա “էկզիստենցիալ դրսևորումը”՝ սարսափը: Մարսափն, այսպիսով, հանդես է գալիս իբրև մարդու բուն գոյությունը բնորոշող մշտական, անանց վիճակ:

Ավելին, ինքը՝ մարդկության պատմությունը, ըստ Տիլլիսի ոչ այլ ինչ է, եթե ոչ սարսափի դարաշրջանների հաջորդափոխություն: Նա տարբերում է սարսափի՝ պատմականորեն իրար հաջորդափոխող երեք տեսակներ, այն է՝ սարսափը ճակատագրի ու մահվան հանդեպ, սարսափը մեղքի ու անեծքի հանդեպ և սարսափը ունայնության ու անիմաստության հանդեպ: Մարսափի այդ տեսակներից յուրաքանչյուրը, ըստ Տիլլիսի, գերակշռում է որոշակի դարաշրջաններում, որը նա անվանում է “սարսափի դարաշրջաններ”: Եթե, օրինակ, անտիկ աշխարհի կործանման դարաշրջանում տիրապետում էր ճակատագրի ու մահվան սարսափը, իսկ միջնադարում՝ մեղքի և անեծքի սարսափը, ապա ժամանակակից աշխարհում գերակշռում է սարսափը ունայնության ու անիմաստության հանդեպ:

Իբրև սարսափին հակակշիռ Տիլլիսն առաջ է քաշում “արիության” հասկացությունը, որը նրա մոտ հանդես է գալիս որպես “գոյության ինքնահաստատում”՝ ընդդեմ չգոյության”²¹⁶:

Մարդկային կեցության “էկզիստենցիալ վերլուծությունը” աստվածաբանփիլիսոփային բերում է այն համոզման, որ ժամանակակից աշխարհում մարդկային անհատի ճգնաժամի, նրա ողբերգական վիճակի հիմնական պատճառը աստծո նկատմամբ հավատի կորուստն է, մարդու հրաժարումն աստծուց:

Այսպիսով, սկսելով հասարակական կյանքի իրական պրոբլեմների վերլուծությունից, Տիլլիսը դա ծառայեցնում է այն բանին, որպեսզի “ապացուցի” հասարակական հարաբերությունների վերակառուցման միջոցով մարդկային կեցության հարցերը լուծելու անհնարինությունը. հասարակական կյանքի իրական պրոբլեմները մարում են՝ տեղի տալով աստվածաբանական կառուցումներին: Պատմական շարժման, հասարակական կյանքի հակասությունների ու մարդկային իրական հարաբերությունների միատիֆիկացված արտացոլումը փիլիսոփա-աստվածաբանին պետք է այն բանի համար, որպեսզի հիմնավորի հասարակական կոնֆլիկտները լուծելու, մարդուն ժամանակակից բուրժուական հասարակության բախումներից ազատագրելու իր ուղին, մարդու՝ դեպի աստված վերադառնալու ուղին: Մարդկային անհատի “էկզիստենցիալ վերլուծությունը” փիլիսոփայի ձեռքին դառնում է մի գործիք, որը կոչված է ապացուցելու, որ մարդն իր

²¹⁵ Տե՛ս նույն տեղում:

²¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 65:

գոյության “նորբերգական դիալեկտիկայից” ելքը պետք է որոնի ոչ թե հասարակական հարաբերությունների վերափոխման մեջ, այլ իր գիտակցության ներքին վերակառուցման, աստժո նկատմամբ հարաբերության հարցում կտրուկ շրջադարձ կատարելու մեջ:

Սակայն էկզիստենցիալ հումանիզմի ինչպես վերը նշված, այնպես էլ մի շարք այլ տարատեսակներ տարբեր գործոններով, այդ թվում իրենց կրոնական կամ աթեիստական բնույթով պայմանավորված տարբերություններով ու առանձնահատկություններով հանդերձ՝ ունեն նաև նմանություններ, ընդհանուր գծեր: Նրանց բոլորին միավորում է իռացիոնալիզմը, ռացիոնալ իմացության դերի թերագնահատումը կամ դրա իսպառ անտեսումը, իրականության ինտուիտիվ ընկալման գերակայության ճանաչումը: Նրանց հատուկ է նաև հոռետեսությունը, պատմական հուսալի հեռանկարի ժխտումը, ազատության սուբյեկտիվիստական մեկնաբանությունը:

Եվ չնայած դրան՝ էկզիստենցիալ հումանիզմն ամբողջությամբ վերցրած այսօր էլ հանդիսանում է արևմտյան հումանիզմի առավել տարածված ու ազդեցիկ ուղղություններից մեկը:

Григор Асартян – Разновидности современного гуманизма: Экзистенциальный гуманизм. – Статья посвящена рассмотрению одной из наиболее распространенных и влиятельных разновидностей современного гуманизма – экзистенциального гуманизма. В ней подвергаются критическому осмыслению учения некоторых видных представителей экзистенциального гуманизма – как атеистического, так и религиозного толка (Эрих Фромм, Мартин Хайдеггер, Карл Ясперс, Пауль Тиллих, Франц Винклер и др.), раскрываются сущность и специфические особенности этих учений, выявляются их общие черты.

Grigor Asartyan – Varieties of modern humanism: Existential humanism. – The paper is dedicated to the analysis of the most widespread and influential variety of modern humanism – existential humanism. Critically interpreted are the teachings of some distinguished representatives of the atheistic, as well as the religious wings (Erich Fromm, Martin Heidegger, Karl Jaspers, Paul Tillich, Franz Winkler, and others) of existential humanism; identified are their gist and typical characteristics, the common features are determined.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼԵԳԻՏԻՄԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ՀՈՎՍԵՓ ՄՈՎՍԵՍՅԱՆ

Ցանցային կառավարման կայացման պայմաններում քաղաքական լեգիտիմացումը ենթադրում է ազգային անվտանգության ընդարձակված օրակարգի իրականացման գործընթաց: Որպես պետությունների ինքնիշխանության և իրավունքների հարգման, վեճերի խաղաղ լուծման, ներքին գործերին չմիջամտելու, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման, պետությունների համագործակցության, միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունքների փոխկապակցվածության ապահովող՝ ազգային անվտանգության ընդարձակված օրակարգի իրականացումը առաջին հերթին ենթադրում է քաղաքական լեգիտիմացման բազմաչափ գործընթաց: Այս գործընթացի գիտավերլուծական կառավարման համար առաջին հերթին լեգիտիմ պետք է լինի ավանդական և արդիական արժեքների մասին գիտելիքը, որը նպաստում է երկրի միջազգային հեղինակության ամրապնդմանը, սահմանադրական կարգերի հաստատմանը, ինչպես նաև ժողովրդավարության որակի բարձրացմանը:

Ելակետային այս մոտեցման տիրույթներում գիտական գրականության մեջ համադրված է քաղաքական լեգիտիմացման՝ **պահպանողական** (ավտորիտար), **ազատական-ժողովրդավարական** (քաղաքացիական) և **դասակարգային** (մարքսիստական) հայեցակարգերը: Առաջինի հիմքում Թ. Հոբսի (1588-1679) այն դրույթն է, որ տիրակալին ենթարկվելու համաձայնության դեպքում եթե մարդիկ փոխանցում են նրան իրենց սեփական իշխանությունը (բնական իրավունք), ապա չի կարելի արդարացնել ոչ մի իշխանության յուրացման փորձ կամ իշխանության տապալում: Առաջին հայեցակարգի վրա հենվում են հիմնականում ավանդական հասարակությունները՝ հիմնված **ավանդույթի, կրոնի (հատկապես ծիսայնության), վախի, ժառանգական կամ վաստակած լեգիտիմություն ունեցող ուժեղ անձի հեղինակության վրա**²¹⁷: Նշված արժեքները համապարփակ բնույթ ունեն, քանի որ հիմնված են պետական իշխանության «հավատարիմ հպատակություն» հայեցակարգի վրա: Ըստ Հեգելի՝ պետությունը համընդհանուր կամքի և գաղափարի մարմնավորում է «...քանի որ նա օբյեկտիվ հոգի է, ինքը՝ անհատը, տիրապետում է օբյեկտիվությունը, ճշմարտությունը և բարոյականությունը այնքանով, որքանով որ նա պետության անդամ է: Պետությունը մեխանիկական ամբողջությունն չէ, այլ կենդանի ամբողջականություն, ուստի կենսականորեն պետք չէ ոչ մի բանով սահմանափակել պետության անհրաժեշտությունը՝ որպես անհատի և հասարակության պաշտպանի»²¹⁸: Ակնհայտ է, որ **«հավատարիմ**

²¹⁷ St' u *Роберт Нозик*, Анархия, государство и утопия. пер. с англ. Б. Пинскера под. ред. Ю. Кузнецова и А. Куряева. - М.: ИРИСЭН, 2008, 172-177 с.

²¹⁸ St' u *Г.В.Ф. Гегель*, Философия права. Пер. с нем.: Ред. и сост. Д.А. Керимов и В.С. Нерсесянц; Авт. вступ. ст. и примеч. В.С. Нерсесянц, М.: Мысль, 1990, с. 279-280:

հպատակություն» հայեցակարգում գերակա է լեգիտիմության «սուբյեկտ-օբյեկտ» հարաբերությունը, որում պետության շահերը ռացիոնալացվում են հասարակության և անհատի իռացիոնալ շահերին զուգահեռ: Հետևաբար իշխանության լեգիտիմացումը զուգամիտում է ռացիոնալը և իռացիոնալը: Ասվածը հիմնավորենք՝ հիշատակելով Մ. Թեոչերի պահպանողական բարեփոխումները, որոնք, հավասարության նշան դնելով **«քաղաքական ռացիոնալիզմ»** «քաղաքական պահպանողականություն» հասկացությունների միջև, լեգիտիմացման հիմնախնդիրը քննարկեցին իշխանության արդյունավետության տիրույթներում²¹⁹:

Ազատական-ժողովրդավարական (քաղաքացիական) լեգիտիմացման հայեցակարգի գործառնան հիմքում դրված է նաև Ջ. Լոկի (1632- 1704) այն մտտեցումը, որ մարդիկ հանուն իրենց անվտանգության պետական իշխանության իրականացմանը մասնակցելու իրենց իրավունքը վստահում են Տիրակալին՝ պահելով ցանկացած պահին ցանկացած ձևով այն հետ վերցնելու իրավունքը, եթե Տիրակալը շահագործում է վստահությունը: Փաստորեն, եթե Տիրակալը չի արդարացնում հպատակների ակնկալիքները, ապա հեղաշրջումները, ապստամբությունները և հեղափոխությունները միշտ արդարացվում են: Լեգիտիմացման ազատական (քաղաքացիական) հայեցակարգի հիմքում դրված են հետևյալ սկզբունքները. յուրաքանչյուր մարդ ծնված օրից ունի կյանքի և ազատության իրավունք, սոցիալական գործողությունների ինքնուրույն միավոր է՝ ազատ անհատը, ազատ անհատներից բաղկացած ժողովուրդը համաձայնության հիմքի վրա կառուցում է ռացիոնալ-բարոյական ինքնորոշված իշխանության լեգիտիմությունը: Ելակետային այս սկզբունքների հիման վրա լեգիտիմացման գործընթացում գերակա են համարվում **քաղաքացիությունը, անկախությունը, ինքնիշխանությունը, իրավունքի գերակայությունը, բազմակիությունը (այլուրալիզմ), ինստիտուտների կայացումը, սահմանադրականությունը**²²⁰: Վերոնշյալ հատկանիշների միջոցով հաստատվում է պետության և հասարակության անվտանգությունն ապահովող **լեգիտիմ արդյունավետության** համակարգ, որն արդիականանում է շարունակական բարեփոխումների միջոցով: Դիտարկելով արդյունավետության գործիքային բնույթը՝ Ս. Լիփսեթը «Քաղաքական մարդ. քաղաքականության սոցիալական հիմքերը (1960)» իր աշխատությունում հիմնավորեց այն դրույթը՝ որ անվտանգության ապահովումն ունի երկու չափում՝ **իշխանության լեգիտիմացում և տնտեսական արդյունավետություն**: Ս. Լիփսեթի համոզմամբ իշխանության լեգիտիմացումը ենթադրում է ժառանգորդության միջոցով նախկինում հաստատված նորների արդիականացում և արդյունավետության միջոցով համակարգը զարգացման սոցիալ-տնտեսական խնդիրների կանխատեսում և լուծում: Տվյալ մոտեցման հիման վրա Ս. Լիփսեթը քաղաքական համակարգը բաժանում է չորս խմբի՝

1. լեգիտիմ, բայց ոչ բավարար արդյունավետ,
2. արդյունավետ, բայց ոչ բավարար լեգիտիմ,
3. քաղաքական համակարգեր, որոնք ունեն և՛ լեգիտիմություն, և՛ արդյու-

²¹⁹ Տե՛ս *Маргарет Тэтчер*, Искусство управления государством. стратегии для меняющегося мира/ пер с англ. - М.: Альпина Паблишер, 2003, с. 463-465

²²⁰ Տե՛ս *Политическая наука: новые направления*. Под. Ред. *Р. Гудина* и *Х.-Д. Клигеманна*, перевод Гурвица М.М., Демчука А.Л., Якушевой Т.В., Рецензент Соловьев Э.Г. -М.: ВЕЧЕ. 1999. с.76-78, 82, 119, 612:

նավետություն,

4. համակարգեր, որտեղ սպառվել է լեզվատիրությունը և կասկածի տակ է դրված արդյունավետության ներուժը:

Այդ մտտեցման օգնությամբ Ս. Լիփսեթը լեզվատիրացման գործընթացը հիմնավորում է արդյունավետության և սոցիալական ինստիտուտների արժեքային զարգացման դինամիկային համահունչ: Թույլ լեզվատիրությունը կարող է հաղթահարվել նպակադրված կառավարման միջոցով, իսկ ոչ արդյունավետ կառավարումը խժռում է նույնիսկ իդեալական լեզվատիրությունը²²¹: Արդյունավետությունը լեզվատիրացնում է քաղաքական համակարգը, եթե նրա հիմնական պատասխանատուն՝ պետությունը, հետամուտ է լինում սահմանադրաիրավական կարգի պահպանմանը՝ հետամուտ քաղաքական ընտրանու, բիզնես ընտրանու և պրոֆմիտեենական բուսերի թափանցիկ գործունեության միջոցով սոցիալական արդարություն իրականացնելուն: Վերանայելով **արդարությունից դուրս լեզվատիրությունն չկա տեսությունը**՝ Ջոն Ռոուլսի «Արդարության տեսություն (1945)»²²² աշխատության մեջ ներկայացված սկզբունքը կարևորվեց հասարակության անդամների լեզվատիր մրցակցային շահերը և պահանջախնդրությունը: Ջ. Ռոուլսը համոզված էր, որ քաղաքացիները, որպես ռացիոնալ եսասերներ, կենտրոնացած են իրենց շահերի և նպատակների վրա: Ելնելով շահերի մրցակցությունից՝ անհրաժեշտ է կիրառել այնպիսի ընթացակարգ, որտեղ մարդիկ, ելնելով լեզվատիր պահանջախնդրությունից, կհամաձայնվեն արդար ինստիտուտների պայմանագրային գործառնանք՝ սահմանակարգելով արդարություն/անարդարություն տիրույթները: Որպես սոցիալական, քաղաքական և հասարակական ինստիտուտների ամբողջություն՝ Ջ. Ռոուլսը առանձնացնում է արդարության երկու սկզբունք՝ **ազատության և տարբերակման: Առաջինի պարագայում** մարդիկ ունեն հիմնական ազատություններից օգտվելու հավասար իրավունքներ, **երկրորդի պարագայում** տարբերակման, այսինքն՝ սոցիալական և տնտեսական անհավասարության կարգավորումը պետք է ա) առավելագույնս ուղղված լինի մրցունակների շահերի պաշտպանության բ) հասարակական ինստիտուտները պետք է բաց լինեն հավասար հնարավորություններ ունեցողների համար: Զարգացնելով Ջ. Ռոուլսի մտտեցումները՝ Օ. Հեֆֆեն քաղաքական լեզվատիրացման գործընթացը հարստացրեց **անհատների միասնություն, սերունդների համագործակցություն և սոցիալական ինստիտուտների հարկադրողական բնույթի համակարգով «պետաիրավական համակցություն»** հասկացություններով²²³: Համաձայն Օ.Հեֆֆենի՝ **«պետաիրավական համակցությունը»** բարձր է կանգնած բոլոր ինստիտուտներից, և, ի տարբերություն այլ ավանդական հանրայինների, որտեղ պարտականությունների կատարումը խրախուսվում է ավանդույթի և սովորությունների միջոցով, քաղաքական հասարակությունում իշխանության լեզվատիրությունն ունի վարքի կարգավորուման լիազորություններով օժտված հարկադրական ուժի իրավունք: Պետաիրավական համակցությունը զնահատվում է «լավ» կամ «լեզվատիր», եթե ապացուցվի, որ այն մեծ մասամբ ծառայում է **ընդհան-**

²²¹ Տե՛ս **S. Lipset**, Political man: the Social Bases of Politics. Johns Hopkins University Press, Michigan, 1981, p.77- 83:

²²² Տե՛ս <http://www.musa.narod.ru/rawls1.htm>, 26.09.2012, 14:30:

²²³ Տե՛ս **Օ. Хэффе**, Справедливость: Философское введение/ Пер. с нем. О.В. Кильдюшова, под. ред. Т.А. Дмитриева. М.: Пракис, 2007, с. 34-45:

րության բարօրության համար: Այս գործընթացում կարևորելով բաշխողական (distributive), և ոչ կոլեկտիվ շահը՝ Օ.Հեֆֆեն քաղաքական լեգիտիմացման գործնթացի գլխավոր բաղադրիչ է դիտարկում արդարության սկզբունքի առկայությունը: Բաշխողական շահի առկայությամբ առանձնացվում է լեգիտիմացման երկու մակարդակ՝ **առաջինը՝ սոցիալ-պրագմատիկ**, երբ պետաիրավական ընկերակցության ձևավորումը շահավետ է այդ գործընթացի մեջ ներառված խմբերին և **երկրորդը՝ բարոյական կամ արդարացի**, երբ շահը առնչվում է խմբի ամեն մի անդամի: Բաշխողական լեգիտիմությունն իր «օգուտ յուրաքանչյուրին» արդարության հեռանկարով հենվում է **համընդհանրություն, անաչառություն, համընդհանուր համաձայնություն, ազատություն ամբողջատիրական վերահսկողությունից**²²⁴ սկզբունքների վրա: Վերջիններիս օգնությամբ լեգիտիմացումը տեղի է ունենում իշխանական հարաբերությունների բոլոր մակարդակներում՝ ավանդականից հետարդիական, ներառելով ռացիոնալ և իռացիոնալ փոխհարաբերությունները: Վերջիններս քաղաքական լեգիտիմացման գործնթացի գլխավոր բաղադրիչ են դիտարկում ոչ միայն արդարության սկզբունքի առկայությունը, այլև իշխանության իրականացման մշակույթի արժեքային համակարգը: Այդ առումով խիստ արժեքավոր են Յ. Հաբերմասի²²⁵ մոտեցումները, մասնավորապես՝ **ցանկացած իշխանության լեգիտիմացում ենթադրում է բանավեճի ծավալում**, սկզբունքը: «Լեգիտիմության ճգնաժամ (1973)» աշխատությունում Յ. Հաբերմասը հիմնավորեց այն մոտեցումը, որ ժամանակակից պետության սոցիալական բնույթի աճը հակասության մեջ է մտնում կապիտալիստական արտադրության տրամաբանության հետ: Արդյունքում համակարգի լեգիտիմացման գործընթացը ավելի ու ավելի դանդաղում, և ի վերջո անտեսվում է կամ էլ միֆականացվում: Այս պարագայում ավելացված արտադրանքի բաշխումը, իշխող խավերի կողմից հիմնվելով հասարակական հարստության արտոնյալ յուրացման վրա, լեզալացվում է օրենքների կիրառման նորմատիվ համակարգով: Հաբերմասը գտնում է, որ լեգիտիմացումը, քաղաքական համակարգի բնույթով պայմանավորված, արժեքների այնպիսի համակարգ է, որն անվտանգություն է ապահովում հասարակական համակարգին: Արժեքները ստեղծվում են այնպես, որպեսզի առեղծվածային և միֆական բնույթ հաղորդեն քաղաքական համակարգին, որպեսզի անհասկանալի լինի, թե ինչ է կատարվում նրա ինստիտուտների ներսում: Հենց որ լեգիտիմության հանդեպ հավատը ինչ-որ պատճառով անկում է ապրում, համակարգի ինստիտուտներում կտրուկ գործողություն կատարելու պատրաստ թաքնահարույց ուժեր են հայտնվում՝ հեղափոխականացնելով սոցիալական տարաձայնությունների, հակասությունների, ճգնաժամի լուծման ուղիները: Արդի հասարակությունները, որպեսզի խուսափեն այդպիսի իրադարձությունների զարգացումից, ինստիտուտների գործառույթների հստակ իրականացման վրա հիմնված լեզալ կարգ են հաստատում՝ բանավեճի կամ բանակցությունների միջոցով: Յ. Հաբերմասի կարծիքով կոմպրոմիսը իշխանության լեգիտիմացման միակ հնարավոր ուղին է, իսկ նպատակադիր գործողությունների քաղաքական առանցքը՝ բազմաբնույթ տեղեկատվահաղորդակցական համակարգի բազմաբը-

²²⁴ St' u Politicheskaya nauka: novye napravleniya. Pod. Red. P. Gudina i X.-D. Klingemanна, перевод М.М. Гурвица, А.Л. Демчука, Т.В. Якушевой, Рецензент Э.Г. Соловьев -М.: ВЕЧЕ. 1999. с. 150, 207, 210, 335:

²²⁵ St' u Habermas Jurgen Legitimation Crisis, Great Britain 1973, pp. 8-9:

նույժ էությունը: Հաղորդակցման մասնակիցներն իրենք իրենց հնարավորություն են տալիս իրացնել անձնական նպատակները՝ ըստ ընդհանուր նպատակների: Այսինքն անհատական շահերը **անհասկանալի, անընդունելի և անհասանելի են, հետևաբար լեզվտիմ չեն** առանց փոխըմբռնելի հաղորդակցման: Ուստի անհրաժեշտ է հստակ տարբերություն դնել **նպատակառացիոնալ և հաղորդակցառացիոնալ գործողությունների միջև**²²⁶: Փաստորեն անհրաժեշտ է հաղորդակցական գործողությունների ռացիոնալացում, և հենց այստեղ է լեզվտիմացման ուժը, որի բացակայության պայմաններում տեղի է ունենում տեղեկատվահաղորդակցման համակարգի ձևախեղում: Ցանկանալով համակարգը ձեռքբերել նման ձևախեղումից՝ ֆրանսիացի Պ. Բուրդյեն (1930-2002) մշակեց պետական իշխանության լեզվտիմացման ռեսուրսային ապահովման համալիր մոդելը. «Պետությունը կապիտալի տարբեր տիպերի՝ ֆիզիկական հարկադրանքի կամ բռնության միջոցների (բանակ, ոստիկանություն), տնտեսական, մշակութային, ավելի կոնկրետ տեղեկատվական, սիմվոլիկ ամբողջացման (խտացման) գործընթացի ավարտն է. ամբողջացում, որն ինքնին պետությանը դարձնում է այլ տիպի կապիտալի և դրա սեփականատերերի վրա որոշակի իշխանություն ունեցող մետակապիտալի կրող: Կապիտալի տարբեր տիպերի ամբողջացումը (որն ընթանում է համապատասխան դաշտերի ձևավորմանը գուզընթաց) իրականում հանգեցնում է որոշակի յուրահատուկ կապիտալի ստեղծմանը՝ պետականի, որը հնարավորություն է տալիս պետությանը իշխել կապիտալի տարբեր դաշտերին և մասնավոր տիպերին, հիմնականում նրանց միջև գոյություն ունեցող փոխգործակցությանը (դրանով էլ՝ կապիտալի տերերի միջև առկա ուժային հարաբերություններին)»²²⁷: Վերոնշյալից էլ հետևում է, որ պետության արդիականացումն ընթանում է իշխանական հարաբերությունների լեզվտիմացմանը գուզահեռ, որը, իբրև խաղի տարածություն, հնարավորություն է տալիս կապիտալի տարբեր ձևերին (հիմնականում կրթության համակարգի միջոցով) պայքարել հենց պետական կապիտալի վրա իշխանություն ունենալու համար: Լեզվտիմացման գործընթացը ծավալվում է ցանկացած կապիտալի շուրջ, բայց այն կարող է հաջողությամբ ավարտվել, եթե պետության կառուցումն ուղեկցվում է բոլոր հպատակների հաբիտուսների առկայությամբ²²⁸: Կարևորելով մշակութային նույնականացումը. Պ. Բուրդյեն նկատի ունի ոչ այնքան ընդհանուր մշակույթը, որքան ապրելակերպային և աշխարհի հանդեպ մարդու վերաբերմունքի առանձնահատկությունների բացահայտումը, որի միջոցով մարդը որոշում է՝ ինքն իր և այլոց լեզվտիմ ու լեզվ տեղն աշխարհում: Հենց նույնականությունն է ապահովում լեզվտիմություն, իսկ եթե կա լեզվտիմություն, ապա իշխանությանը պետք չէ բռնությունների դիմել. սոցիալական կարգը գոյություն կունենա այնքան ժամանակ, քանի դեռ պե-

²²⁶ St' u Habermas Jurgen Legitimation Crisis, Great Britain 1973, pp. 8-9:

²²⁷ St' u **Пьер Бурдьё**. Дух государства: генезис и структура бюрократического поля. Поэтика и политика. Альманах Российско-французского центра социологии и философии Института социологии Российской Академии наук.-М.: Институт экспериментальной социологии, СПб.: Алетея, 1999, с. 5-6: http://www.politanaliz.ru/articles_341.html 12.09.2012:

²²⁸ **Հաբիտուս (habitus)**- նախադրամադրվածությունների խումբ, որը վերաբերմունքների ու գործողությունների միջոցով ձևավորվում է շարունակ վերարտադրվող և արդիականացող սոցիալական պայմանների ազդեցության ներքո: Միևնույն ժամանակ հաբիտուսը պայմանավորում է մարդու լեզվտիմ ապագան՝ «օբյեկտիվ հնարավորությունների սուբյեկտիվ գնահատականի», ցանկալի և հնարավորի հարաբերակցության հիման վրա: Բացարտություն համար տե՛ս **Պ. Բурдьё**, Социология политики: Пер. с фр./Сост., общ. ред. и предисл. Н. А. Шматко. М.: Socio-Logos, 1993, 336 с.:

տությունն ի վիճակի է ստեղծել պայմաններ հաբիտուսների վերարտադրման և արդիականացման համար: Ցանկացած ուժի օգտագործում պետք է ուղեկցվի այնպիսի երկխոսությամբ, որը լեգիտիմացնում է ուժերի հարբերակցությունը սոցիալական տարածությունում՝ սահմանակարգելով խորհրդանշանային կապիտալի ինստիտուցիոնալ հիմքերը: **Փաստորեն քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարմամբ պայմանավորված լեգիտիմացման գործընթացն իր դինամիկ բնույթով, որպես արդյունավետ քաղաքականության հետևանք, քաղաքական կուրսի իրականացման միջոցով բարձրացնում է բոլոր քաղաքացիների հավատը իշխանության նկատմամբ:** Եթե հավանություն ստացած քաղաքական կուրսի իրականացման ընթացքում արդյունքը չի նպաստում լեգիտիմության պահպանմանը կամ բարձրացմանը, ապա կառավարող ընտրանին պետք է ռացիոնալ փոփոխությունների գնա՝ ներկայացնելով այլընտրանքային ծրագիր: Այդ առումով առաջարկում ենք լեգիտիմացման գործընթացներն ուսումնասիրել **հումանիստական և էտատիստական ձևաչափերի օգնությամբ, որոնց** փոխհարաբերություններով էլ պայմանավորված՝ **հնարավոր է բացահայտել** և զարգացած և՛ զարգացող երկրների ժողովրդավարական լեգիտիմացման տարբերությունների մակարդակը: Եթե հումանիստականի դեպքում առաջնային է յուրաքանչյուր քաղաքացու շահերը, իրավունքները և ազատությունը, ապա էտատիստականի դեպքում առաջնային է պետության զարգացման շահերը: Վերոշարադրյալը հնարավորություն է տալիս եզրակացնել, որ լեգիտիմացումը ենթադրում է **մեծամասնության համաձայնության, հավատի և վստահության, արդարության, հեղինակության ապահովում, ինչպես նաև այնպիսի գիտելիքի արդիականացում, որը** համախմբում է հասարակությունը՝ համադրելով լեգիտիմության ռացիոնալ և իռացիոնալ արժեքաբանությունը²²⁹: Այս տիրույթներում լեգիտիմացումը, որպես իշխանությունը հումանիզացնող երևույթ, պետությանը բարոյական իրավունք է տալիս քաղաքացիներից պահանջել ենթարկվել գործող ինստիտուցիոնալացված լեզալ և լեգիտիմ կարգին: Ինչպես է ապահովվում ենթարկմունը՝ ահա հարց, որը կարևոր է լեգիտիմացման գործընթացի համար: Մեզ հուզող հարցի պատասխանի բնույթով է պայմանավորված՝ իշխանությունը լեգիտիմ է, եթե առկա է այդ իշխանությանը ենթարկելու որոշակի արդար և բարոյական կարգի արդիականացման միտումը: Կարևոր չէ՝ ինչպես է ապահովվում ենթարկվումը, այլ այն, որ մարդիկ հավատում են իշխանության լեգիտիմությանը: Այդ առումով Է. Հեյվուդը գրում է, որ իշխանությունը անհրաժեշտ է իրականացնելու լեգիտիմացման հետևյալ երեք պայմաններում. **առաջին, եթե** իրականացվում է պաշտոնապես ընդունված օրենքներին կամ գրված նորմատիվներին/կանոններին խիստ համապատասխան, **երկրորդ, եթե** ընդունված կանոնները պարտադիր են ղեկավարվողների և ղեկավարողների համար, **երրորդ, եթե** հասարակության կողմից վարչակարգին ուղղված դժգոհության ոչ մի նշան չկա²³⁰: Նշված հատկանիշներն ապահովվում են, քանի որ հասարակական կարգի լեգիտիմացման հիմքերը ներառում են այնպիսի արժեքներ, ինչպիսիք են՝ **ուժը, ավանդույթը, հավատը, հարս-**

²²⁹ Տե՛ս **Մ. Մաքարյան**. Քաղաքական լեգիտիմության հիմնասխնային քաղաքակրթական փոխակերպումների համատեքստում. Սոցիոլոգիայի ֆակուլտետի տարեգիրք, Երևան, ԵՊՀ, հրատ., 2009, էջ 13-14:

²³⁰ Տե՛ս **Է. Հեյվուդ**, Политология: Учебник для студентов вузов/ Пер. с англ. под ред. Г.Г. Водалазова, В.Ю. Бельского.- М.: ЮНИТИ-ДАНА, 2005, 268 с.:

տությունը, գիտելիքը, արդարությունը և հեղինակությունը²³¹: Լեգիտիմացումը, որպես բազմաչափ արժեքների հաստատման գործընթաց, ենթադրում է պայմանագրային այնպիսի հարաբերություններ, որոնք քաղաքական արդիականացման բոլոր դերակատարների միջև զարգացնում են և՛ ներքին, և՛ արտաքին երկխոսության կայացման մեխանիզմները՝ ապահովելով ժողովրդավարական համախմբում: Ոչ լեգիտիմ իշխանությունը մենախոսություն է, լեգիտիմը՝ երկխոսություն, որը հենվում է քաղաքակրթական կերպարի միջոցով՝ պայմանավորելով քաղաքական ռեժիմի էությունը: Արդյունքում հեղինակությամբ (authority) լեգիտիմացվող քաղաքական ռեժիմը ավտորիտար բնույթ ունի, իսկ դավանաբանականը՝ թեոկրատական, ավանդույթայինը՝ պահպանողական, հարստությունը (նյութական, ոգեղեն)՝ ազատական, ժողովրդավարականը՝ գիտելիքահենք: Լեգիտիմացման գործընթացը քաղաքակրթական փոխակերպումների համատեքստում տարբեր է պատմական տարբեր փուլերում, տարբեր հասարակություններում և պետություններում: Դրա հետ մեկտեղ լեգիտիմացումը սոցիալական կարգին նվիրվածության հատուկ բնութագիր է՝ հենված ոչ թե ֆիզիկական ուժի, այլ պատմությամբ, մշակույթով, ավանդույթով և արժեքների նորարացմամբ «Ես»-ի ինքնաարդիականացման կարողությունների վրա: Շնորհիվ բնականոն լեգիտիմացման՝ սոցիալական կարգը արդիականացնում է իր ինքնագնահատականը՝ քաղաքական և հասարակական համախմբման նկատառումներով: Այս տիրույթներում լեգիտիմացման գործընթացը օրենքի օրնականության, իրավունքի իրավասության հարցն է երաշխավորում²³²: Ակնհայտ է, որ քաղաքական լեգիտիմացումը ինչպես պետական իշխանության, այնպես էլ իշխանական հարաբերությունների ռեսուրսային բանկի բազմամակարդակ ռացիոնալացման ընթացակարգ է՝ հիմնված ազգային անվտանգության ընդարձակված օրակարգի վրա: **Որպես երևույթի ճանաչմանը ուղղված գործողությունների համակարգ՝ լեգիտիմությունը լեգիտիմացման գործընթացի աստիճանի գնահատականն է՝ յուրաքանչյուր քաղաքական ժամանակի մեջ: Քաղաքական ժամանակի մեջ կարող են լեգիտիմացվել ցանկացած իշխանական հարաբերություններ, այսինքն՝ պարբերաբար փոփոխվում է այս կամ այն գործընթացի, իրադարձության, ինստիտուտի ճանաչման, գնահատման, աջակցման արժեքաբանությունը:** Այս բազմամակարդակ իմացաբանական երևույթը ենթադրում է ինքնանույնացում՝ իշխանության սուբյեկտի և օբյեկտի միջև, առանց որի անհնար է որոշակի ճանաչողական գիտելիքներ իր և ուրիշների իշխանության խորհրդանիշների մասին: «Պարբերական լեգիտիմացմամբ, - նկատում է Կ. Ֆ. Չավերշինսկին, - իշխանությունը ձեռք է բերում որոշակի «ընտելացվածություն», խորհրդանշային ձևավորում, ինչը պոտենցիալ կերպով թույլ է տալիս նրան կատարել խորհրդանշային միջնորդի գործառույթ՝ չդիմելով հերթական բռնության և չկորցնելով արդյունավետությունը: Իշխանության խորհրդանիշը իշխանական փոխհարաբերություններում լայնորեն օգտագործվող իդեալական պաշարների վկայությունն է՝ հոգևոր, բարոյական, էթնոտիկական և այլն»²³³: Ելակետ ընդունելով վերոնշյալ մտեցումը, որ իշ-

²³¹ Տե՛ս **Մ. Մարգարյան**, Լեգիտիմության հիմնախնդիրը քաղաքական զարգացումներում. - 21-րդ դար («Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես), 2007, N 3 (17), էջ 134-135:

²³² Տե՛ս **Ա. Դիբիրով**, О природе политической власти. А.Н. Дибиров, Л.М. Пронский // Вестн. Моск. ун-та. Сер. 18, Социология и политология. 2002, N 2., с. 48-60:

²³³ Տե՛ս **Կ. Завершинский**, Легитимность: генезис, становление и развитие концепта, М.: ПОЛИС 2001, N 2, с. 116:

խանութայան գործունեության (կամ անգործության) ճանաչման արդյունքում է հասարակությունը լեգիտիմացնում կամ սպալեգիտիմացնում իշխանությունը, նպատակահարմար ենք համարում ցանցային կառավարան պայմաններում **«Իշխանություն-ենթարկում»** ձևաչափը արդիականացնել **սպասելիքների արդարացման և աջակցության միջոցով**: Այս պարագայում իշխանության սուբյեկտը արդիականանում է՝ պահպանելով հետևյալ սկզբունքները.

1. պատրաստ լինի վերանայելու գործող որոշման արդյունավետությունը, և օգուտ նոր որոշման ընդունման և իրականացման նպատակամետ գործունեություն ծավալել՝ լեգիտիմացնելով որոշման ընդունման մեխանիզմները,

2. համոզված լինի, որ իր կողմից տրված լեզալ հրամանը օբյեկտը ճիշտ է հասկացել և շահագրգռված է այն կատարելու,

3. հետամուտ լինի կատարել գործողություններ, որոնք կապված են օբյեկտի հետաքրքրությունների և նպատակների հետ,

4. բազմակողմանի դիտարկել՝ իր հրամանը կատարելու օբյեկտի (մտավոր և ֆիզիկական) հնարավորությունները և ցանկությունները:

Այս պայմանների կատարմամբ սուբյեկտը գիտակցաբար հասնում է օբյեկտի ենթարկմանը՝ ինչպես համոզմամբ, այնպես էլ որոշումը հարկադրաբար կատարելու ճանապարհով: Փաստորեն լեգիտիմության և լեգիտիմացման միջև տարբերությունը արդյունքի և գործընթացի տարբերությունն է, քանի որ իդեալական լեգիտիմություն գոյություն չունի: Լեգիտիմացումը, որպես քաղաքացիների վստահությանն արժանանալու անընդհատ և բազմաչափ գործընթաց, իր համակարգային բնույթով ենթադրում է իշխանության սուբյեկտի, օբյեկտի, ռեսուրսների, գործառույթների և դերակատարների արդիականացում «անցում-համախումբում» հարացույցի շրջանակներում: Այս ընդհանրացումը կատարում ենք՝ համաձայն Ն. Լումանի այն մոտեցման, որ արդի հասարակություններում տեղեկատվահաղորդակցական ցանցի միջոցով՝ կիրառության մեջ դնելով **հասարակական և քաղաքական** ռեսուրսները լեգիտիմացվում են իշխանության բոլոր կենտրոնները՝ օժտելով հասարակությանը արժեքանորմատիվային կարգի բնականոն արդիականացմամբ. **«Հասարակական ռեսուրսը** երկրի տնտեսական, ռազմական, մշակութային ներուժն է՝ պետության տարածքը, միջազգային հեղինակությունը, հասարակական հարաբերությունների տեսակը, կայունությունը և կարգուկանոնը, երկրի բնական հարստությունը, բնակչության թվաքանակը, նրա արժեքաբանությունը (մշակույթը, աշխատանքի հանդեպ հմտությունը, շարժունությունը, կարգապահությունը, արտադրական ուժերի զարգացումը և այլն): **Քաղաքական ռեսուրսը** հասարակության քաղաքական տարածությունն է, քաղաքական ժամանակաշրջանը, որի ընթացքում իշխանությունը լուծում է իր խնդիրները. և, վայելելով հասարակության վստահությունը, սպահովում է նրա մասնակցությունը անվտանգության քաղաքականությունում և բարձրացնում իշխանության հեղինակությունը: Նրանց ստեղծած տեղեկատվահաղորդակցական ցանցերի օգնությամբ նշված **ռեսուրսները միավորելով իրենց հեղինակությունը և ջանքերը՝** լեգիտիմացնում են իշխանության իրականացման անվտանգության քաղաքականությունը²³⁴»:

Այս պարագայում սոցիալական ինտեգրացիայի գերիշխող կենտրոնը, որ-

²³⁴ См. Н. Луман, Власть/ Пер. с нем. А.Ю. Антомова, М.: Праксис, 2001. с.149-150:

պես հասարակության անվտանգության «փրկագոտի», պետք է ապահովի հետևյալ պահանջները՝ **ունենա պետականության բոլոր հատկանիշները, լինի ինչպես ազգային-պետականության գաղափարակիր, այնպես էլ լեզիտիմ՝ այսինքն ընդունված լինի հասարակության մեծամասնության կողմից:** Պատմական փորձը վկայում է, որ սոցիալական ինտեգրացիայի դերը, բացի պետությունից, կարող է իր վրա վերցնել նաև այլ սոցիալ-քաղաքական այնպիսի ուժեր, ինչպիսիք են կուսակցությունները, ընդդիմությունը, կրոնը (քաղաքականացված հոգևորականությունը), արտաքին ուժը, կոնկրետ անձի գերիշխանությունը (Օր.՝ Օ.Կրոմվելը՝ Անգլիայում, Ֆրանկոն՝ Բալանիայում, Ստալինը՝ ԽՍՀՄ-ում)²³⁵: Լեզիտիմացումը, որպես գերիշխման կենտրոնի սոցիալական ինտեգրացման գործընթաց, ունի իր առանձնահատկությունը՝ պայմանավորված իշխանության սուբյեկտի և օբյեկտի, ռեսուրսների և դերակատարների հաղորդակցական փոխհարաբերությունների որակով և քաղաքական վարչակարգի էությամբ: Լեզիտիմացման բազմամակարդակ նկարագիրը ստանալու նպատակով առաջարկում ենք օգտագործել Կ. Դոյչի քաղաքական ինստիտուտների և հասարակության փոխհարաբերությունների հաղորդակցական մոդելը: «Մուտք»-ային մասից համակարգը արտաքին միջավայրից իմպուլսներ է ստանում, իսկ «ելք»-այինից փոխանցվում է համակարգի ռեակցիան՝ ստացած իմպուլսին՝ **ստացում-վերլուծություն-առաջարկ-արդիականացում-փոխանցում-ռեակցիա-ստացում հաղորդակցական պարույրի** համակարգային գոյակցության մեջ: Եթե այս սխեմայի ելքում քաղաքական իշխանությունը ապավինում և աջակցում է հասարակական գիտակցության մեջ տեղի ունեցող փոփոխություններին, ապա սոցիալական շերտերը, որոնց Պ. Բուրդյեն անվանում է **«պետության ոգիներ»**²³⁶, իշխանական տարածությունը լեզիտիմացվող միավորներ են: Այս նկատառումներով անհրաժեշտ է պետության կողմից այնպիսի գործողություններ, որոնք, լեզիտիմացման միավորների հետ համագործակցելով, նրանց կողմից ստանում են պետական իշխանությունը սատարելու երաշխիքներ: «Պետության ոգիները», որպես լեզիտիմացման միջոցներ, «ելքի» վրա ազդող գործոններ են: Սատարումը ահագանգ է, ընդունվող համակարգի «մտիցում»: Այսպիսով՝ լեզիտիմացման ապավինումների և սպասումների փոխազդեցությունից առաջանում է այս կամ այն լեզիտիմացման մոդելը՝ կախված «պետության ոգիների» որակից: «Պետության ոգին» կախված է հասարակական հարաբերությունների հասունությունից՝ սոցիալական երկխոսության և սերունդների համերաշխության զարգացման մակարդակից: «Պետության ոգի» հասկացությունը սերտորեն կապված է նաև անվտանգության քաղաքականության իրականացման մշակույթի խաղաղ ներդրման հետ: Այդ իմաստով քաղաքականության մեջ կարևորը ոչ թե պայքարն է, մասնակցությունը, և ոչ էլ մրցակցությունը իշխանության համար, այլ իշխանության բաշխման արժեքային միջավայրը՝ կապված ժողովրդավարության համախմբման հինգ ոլորտների փոխլրացնելիության հետ: ԻՄ. Լինցը անցում-համախմբում գործընթացի տիրույթներ

²³⁵ St' u *W.K. Deutsch, J.W. Foltz*, Nation building in comparative contexts. Transaction Publishers, New Brunswick, New Jersey, 2010, p. 14-15:

²³⁶ St' u *Пьер Бурдьё*. Дух государства: генезис и структура бюрократического поля. Поэтика и политика. Альманах Российско-французского центра социологии и философии Института социологии Российской Академии наук.-М.: Институт экспериментальной социологии, СПб.: Алетейя, 1999, с. 9-10: http://www.politalanaliz.ru/articles_341.html 12.09.2011

բում առանձնացնում է փոխկապակցված և միաժամանակ հարաբերական անկախության մեջ գտնվող հետևյալ ոլորտները.

1. **Քաղաքացիական հասարակություն.** հասարակարգի այն հարթությունն է, որտեղ պետությունից հարաբերականորեն անկախ ինքնակազմակերպվող խմբերը, շարժումներն ու անհատները փորձում են սահմանել արժեքներ, ստեղծել սոցիալիզմներ ու դաշինքներ՝ առաջ մղելով իրենց շահերը: Քաղաքացիական հասարակությունը ներառում է զանազան սոցիալական շարժումներ և քաղաքացիական միություններ՝ բոլոր սոցիալական խավերից: Մի շարք կազմակերպությունների, ինչպիսիք են արհմիությունները, կրոնական համայնքները, փաստաբանների միությունները, քաղաքացիական հասարակության բարդ ցանցը կազմող ուսանողների և դասախոսների միությունները, ծավալելով երկխոսություն, ընդարձակում են իրենց լեզվիսիմ գործունեության տարածությունը:

2. **Քաղաքական հասարակություն.** Ժողովրդավարացման միջավայրում «քաղաքական հասարակությունն» այն դաշտն է, որտեղ հասարակարգը հատուկ կազմակերպվում է վիճարկելու հասարակության ուժի և պետական ապարատի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լեզվիսիմ իրավունքը: Ժողովրդավարական հասարակարգի կազմավորումն ու կայացումը պետք է մղեն լուրջ ծրագրերի ու քայլերի՝ ձևավորելու դրական ընկալում ժողովրդավարական քաղաքական հասարակության այն հիմնական ինստիտուտների մասին, որոնց միջոցով հասարակությունը քաղաքականապես ինքնակազմակերպվում է՝ ժողովրդավարական կառավարություն ընտրելու և նրան վերահսկելու համար: Արդի ժողովրդավարության տեսության կայացման համար անհրաժեշտ է շեշտադրել ոչ միայն քաղաքացիական հասարակության և քաղաքական հասարակության տարբերակվածությունը, այլև դրանց փոխլրացնելիությունը (կոմպլեմենտարությունը):

3. **Օրենքի գերակայություն.** համախմբված ժողովրդավարության հասնելու համար քաղաքացիական և քաղաքական հասարակության՝ անհրաժեշտ չափով ինքնավարությունն ու անկախությունը դրվում են օրենքի գերակայության հիմքում: Սահմանադրականության ոգով օժտված օրենքի գորակայությունը պարտադիր պայման է, որն իր հետևից բերում է համեմատաբար ուժեղ փոխհամաձայնություն Սահմանադրության շուրջ և հատկապես հավատարմություն կառավարման «ինքնապարտադրող» ընթացակարգերին: Այն պահանջում է նաև անկախ դատական համակարգի կողմից մեկնաբանված և քաղաքացիական հասարակության ուժեղ իրավական մշակույթով պաշտպանված օրենքների հստակ աստիճանակարգ:

4. **Պետական կառավարման համակարգ.** Ժողովրդավարական համախմբումը արագ է կայանում, եթե առաջնորդների կողմից իրականացվող պետական կառավարման համակարգում քաղաքացիներն ունեն երաշխավորված և պաշտպանված իրավունքներ: Այդ պարագայում պետական կառավարումը պետք է ի վիճակի լինի արդյունավետ գործադրելու տվյալ տարածությունում ուժի լեզվիսիմ կիրառման մենաշնորհայն իր իրավունքը: Ունենալով հրամայելու, կարգադրելու և արդյունավետ գործելու կարողություն՝ պետական կառավարումը հնարավորություն է տալիս քաղաքացիներին բնականոն հրաժարվել ոչ ժողովրդավարական վարչակարգից (օրինակ՝ Չիլին): Նոր ժողովրդավարական պետական կառավարման համակարգում հեղափոխականացնող երևույթներ են

հանդես գալիս, երբ կուսակցությունը, կորցնելով իշխանությունը, գրկվում է նաև պետական իշխանությունը լեզհտիմ տնօրինելու հնարավորությունից:

5. **Ինստիտուցիոնալացված տնտեսական հասարակություն.** Չլինելով ոչ վարչաիրավայական, ոչ էլ **գուտ** շուկայական տնտեսության արդյունք՝ այն ենթադրում է պետության և շուկայի միջև միջնորդություն իրականացնող սոցիալ-քաղաքական առումով ընդունված նորմերի, ինստիտուտների և կանոնների շարք, այսինքն՝ տնտեսական հասարակություն, որն առաջին հերթին ենթադրում է սեփականության լեզհտիմացում: Այն, ներառելով «նոր հարուստների» ձեռք բերված սեփականության քաղաքակրթման քաղաքականություն, ենթադրում է սոցիալական երկխոսություն, սերունդների համերաշխություն, այսինքն՝ սահմանադրականություն²³⁷:

Վերոնշյալ ոլորտներից յուրաքանչյուրն, իր գործառույթների տիրույթներում մասնակցում է իշխանության լեզհտիմացման գործընթացին՝ նպաստելով սահմանադրականության հաստատմանը: Այս համատեքստում առավել քան հրատապ է հասարակական համաձայնության հիմքի վրա սոցիալական հանրության՝ իմաստավորված «Ես»-ի շարունակականության երաշխավորումը, քաղաքակրթական ձեռքբերումները՝ հանուն մարդու էկոլոգիայի պահպանության, որոնց գործառումն էլ ամբողջության մեջ ձևավորում է անվտանգության գոտի՝ լեզհտիմացման գործընթացի յուրաքանչյուր դերակատարի համար: Անվրտանգության քաղաքականության մշակումն սկսվում է այն ժամանակ, երբ նշված ոլորտների բնականոն արդիականացումը տեղի է ունենում երկակի լեզհտիմացման պայմաններում: Այսինքն՝ քաղաքական իշխանության լեզհտիմացմանը զուգահեռ բյուրեղանում է էլիտայի և լիդերության ինստիտուտներ ներգրավված անձանց սոցիալ-քաղաքական և քաղաքատնտեսական գործունեության լեզհտիմացման հիմնախնդիրը: Հիմնավորելով լեզհտիմացման բազմավեկտորությունը՝ փաստենք, որ այն, պայմանավորված վերոնշյալ ոլորտներում ժողովրդավարական համախմբման սկզբունքների առկայությամբ, ենթադրում է հավատ, արդարություն, հեղինակություն, վստահություն, աջակցություն, տնտեսական բարօրություն, որոնք ամբողջության մեջ ինչպես իշխանական հարաբերությունների լեզհտիմացման, այնպես էլ ազգային անվտանգության ապահովման երաշխավորներ են:

Овсеп Мовсесян – Политическая легитимизация как процесс обеспечения национальной безопасности. – В статье рассматриваются модели политической легитимизации: консервативные, либерально-демократические (гражданские) и классовые (марксистские).

Автор статьи, соглашаясь с Либсетом, придерживается мнения, согласно которому обеспечение государственной безопасности имеет два измерения: легитимизация власти и экономическая эффективность. Имея исходной точкой этот подход, автор статьи обосновывает процесс легитимизации эффективностью и созвучной развитию многомерностью ценностей социальных институтов (веры, справедливости, содействия, доверия).

²³⁷ Տե՛ս **Linz J. Juan, Stepan Alfred**, Problems of democratic transition and consolidation: Southern Europe, South America and Post-Communist Europe. Baltimore, Maryland, The John Hopkins University Press, 1996, 504 p.

В этом смысле автор считает очень ценным подходы Абермаса, в частности-принцип "легитимизация любой власти предполагает развертывание дискуссии".

В этом отношении предлагается изучать процессы легитимизации при помощи гуманистических и статистических форматов, взаимоотношениями которых обусловлено обеспечение государственной безопасности. В этих сферах государственная легитимизация, как явление гуманизации власти, дает моральное право государству потребовать от граждан подчинения действующему институциональному легальному и легитимному порядку.

Hovsep Movsisyan – *Political Legitimacy as a Providing Process of National Security*. – In the article it is highlighted the models of political legitimacy: **Conservative, Liberal-democratic and Class type (the Marxist)**. The author of the article, being agreed with S. Lipset, thinks that the provision of national security has two measurements: **Legitimacy of Authorities and Productivity of Economics**. Taking into consideration this approach the author substantiates the process of legitimacy with the harmony of numerous valuable measuring development of productivity and social institutes (belief, justice, support, trust). According to this viewpoint the author strongly evaluates the approach of Y. Habermas, particularly the principle "**The legitimacy of every authority supposes expansion of debates**". In this regard it is offered to study the processes of legitimacy by the aid of the humanistic and etatistic formats, which interrelation gives opportunity to make possible the provision of national security. In these ranges political legitimacy, as a phenomenon humanizing authority, gives the state moral right to demand from the citizens to obey the active institutionalized order which is considered as legal and legitimate.

ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ

Երվանդ Քոչարը ծնվել է XIX դարավերջին, 1899-ի հունիսի 27-ին Թիֆլիսում՝ քաղաք, որի հետ սերտորեն կապված են հայկական մշակույթի ականավոր գործիչներից շատերի կյանքն ու ստեղծագործական կենսագրությունը: Հոր կողմից Քոչարի նախնիները Ղարաբաղի հայերից էին, որոնք Վրաստանում իրենց երկրորդ հայրենիքը գտան: Արվեստի հետ որևէ առնչություն չունեին ո՛չ ապագա արվեստագետի հայրը՝ գինեվաճառ Սիմոն Քոչարյանը, ո՛չ նրա մայրը՝ Կախեթում ծնված Ֆելկա Մարտիրոսյանը, և նրանց մտքով իսկ չէր կարող անցնել, որ իրենց զավակին հետագայում մեծ արվեստագետի ճակատագիր ու համազգային հռչակ է սպասում:

Թեպետ XX դարասկզբին Թիֆլիսը ողջ Անդրկովկասի վարչական կենտրոնն էր, սակայն համառուսաստանյան չափանիշներով նա, այդուհանդերձ, ոչ այլ ինչ էր, քան մշակութային զավառներից մեկը, ուր գեղարվեստական նոր հոսանքների արձագանքները տեղ էին հասնում ուշացումով՝ ճանապարհին կորցնելով առաջին որոտների և պարպումների լիցքն ու եռանդը²³⁸:

Մոսկվայի, Պետերբուրգի, Եվրոպական այլ քաղաքների համեմատությամբ, ուր գեղարվեստական կյանքն այդ տարիներին չափազանց աշխույժ ու հագեցած էր, Թիֆլիսն ապրում էր անշտապ կյանքով: Այստեղ հազվադեպ էին բացվում ժամանակակից արվեստի համապատկերը գոնե մոտավոր ներկայացնող ցուցահանդեսներ, չկային մշտապես գործող պատկերասրահներ ու թանգարաններ, Սերգեյ Շչուկինի, Իվան Մորոզովի կամ Ամբրուազ Վոլարի նման խոշոր նկարահավաքներ և մեկենասներ: Բնութագրելով անցած դարասկզբին Թիֆլիսի բնակչության գեղարվեստական ճաշակն ու պահանջները՝ ականատեսներից մեկը նկատում է, որ տեղացի հանդիսականներն իրենց մեծամասնությամբ դաստիարակված են օլեոգրաֆիկ՝ յուղաներկ կտավների բազմագույն անճաշակ արտաստպության օրինակներով, թիֆլիսյան գինետների ու դուքանների պարզունակ ցուցանակների կամ, լավագույն դեպքում, Գևորգ Բաշինջաղյանի և Գիգո Գաբաշվիլու՝ ակադեմիական խիստ կանոններով վրձնած նկարներով, որոնք ժամանակ առ ժամանակ ի տես էին դրվում Գոլովինյան պողոտայի առևտրական շարքերի ու խանութների ցուցարկերում կամ ցուցափեղկերում²³⁹:

Քոչարի ստեղծագործական ուղին հաջող սկիզբ ուներ: Նրան ի վերուստ տրված գեղարվեստական ընդունակությունները դրսևորվեցին դեռ վաղ հասա-

²³⁸ Այսպես, օրինակ՝ վրաց սիմվոլիստների "Երկնագույն եղջուրներ" ("Толубые роги") տպագիր օրգանը լույս է տեսել միայն 1916-ին, այնինչ սիմվոլիզմը թե՛ ռուսական, թե՛ առավել ևս արևմտաեվրոպական արվեստում ու գրականության մեջ արդեն պատմություն էր դարձել՝ իր տեղը զիջելով գրական-գեղարվեստական նոր ուղղություններին ու միտումներին:

²³⁹ Տե՛ս *Ա. Петроковский*, Выставка картин художников-армян / Кавказское слово, Тифлис, 1917, 16 февраля.

կում, Ներսիսյան դպրոցի առաջին դասարաններում, որտեղ նա կրթվեց 1906–1918 թվականներին: Շուտով շնորհալի տղայի վրա ուշադրություն դարձրեցին մանկավարժները, առաջին հերթին՝ նրա գծանկարչության դասատուն, ավանդապաշտ նկարիչ Հարություն Շամշինյանը: Հենց վերջինիս խորհրդով էլ, շարունակելով ուսումը Ներսիսյան դպրոցում, տաղանդավոր պատանին ընդունվեց Գեղարվեստը խրախուսող կովկասյան ընկերության նկարչական դպրոցը, որի տնօրենն էր Թիֆլիսում հայտնի գեղանկարիչ և ծաղրանկարիչ Օսկար Շմեդլինգը և որտեղ դասավանդման մեթոդները թելադրված էին Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայի հաստատած ուսումնական ծրագրով: Ակարչական դպրոցում Քոչարն անցկացրեց մի քանի տարի (1914–1918 թթ.) և բավականին առաջադիմեց այստեղ կիրառվող մասնագիտական համակարգված հատուկ դասերի ու պարապմունքների շնորհիվ, որոնցից էին գիպսե կաղապարների և պատճենների արտանկարումն ու ընդօրինակումը, աշակերտներին հանձնարարվող ու պարտադրվող, եվրոպական դասական կերպարվեստի ավանդական սխեմաներով կառուցված թեմատիկ հորինվածքները, բնականից արված անատոմիական վարժանքները և այլն, որոնք ապագա նկարիչներին ու քանդակագործներին զինում էին պրոֆեսիոնալ անհրաժեշտ հմտություններով, հնարավորություն տալիս խորանալու գեղարվեստական նեղ ու մասնակի խնդիրների մեջ: Հետագայում դա Քոչարին լավ ծառայություն մատուցեց, թեպետ ընդհանուր առմամբ ակադեմիական դասավանդման քարացած, Կռաչչի եղբայրների ժամանակներից գրեթե անփոփոխ եղանակը կաշկանդում էր աշակերտների ստեղծագործական նախաձեռնությունը՝ նպատակ ունենալով պայքարել արվեստում “այլախոհության” և այսպես կոչված “բացասական ուղղությունների” դեմ, որոնց տակ ենթադրվում էին նորարարական անսովոր, խիզախ այն միտումները, որոնք փորձում էին ինքնահաստատվել, ուրույն տեղ գտնել ժամանակակից կերպարվեստում: Բարեբախտաբար, Քոչարը խուսափեց ակադեմիզմի արդեն մամռոտած, սակայն դեռ ամուր կապանքներից՝ յուրացնելով միայն դրա հիմքերում ընկած տարրական գրագիտությունը, արհեստավորական դարավոր փորձն ու հմտությունները: Հենց այստեղ էլ՝ նկարչական դպրոցի աշխատասենյակներում ու լսարաններում, նա ընդմիջտ օժտվեց դասական գծանկարի սուր և անվրեպ զգացողությամբ:

Շմեդլինգի մոտ սովորելու տարիներին Քոչարը, բնականաբար, չէր կարող չընկնել նրա ստեղծագործական բուն խառնվածքին երբեմն հակասող գեղարվեստական տարբեր հովերի ազդեցության տակ: Այդ շրջանում նրա ստեղծած աշխատանքները հիմնականում դիմանկարներ ու կենցաղային տեսարաններ են, որոնցում երիտասարդ նկարիչը բավարարվում է մարդկային բնորոշ կերպարների և սովորական իրավիճակների պարզ վերարտադրությամբ: Այդպիսի տպավորություն են թողնում, մասնավորաբար, Քոչարի մատիտանկարներից և ուրվանկարներից շատերը՝ “Քայլող կինը”, “Նախաճաշելիս”, “Երկուսը պատշգամբում”, “Անօթևանները”, “Հարբեցողը”, “Նարդի խաղացողները” (բոլորն էլ՝ 1915), “Մուկուչը Թիֆլիսից”, “Թիֆլիսցին”, “Ակարչի մայրը խոհանոցում” (բոլորն էլ՝ 1916) և այլն: Դրա հետ մեկտեղ նույն տարիների նրա գրաֆիկական մի շարք թերթերում ու երվնագիր որոշ կտավներում հայտնվում են այնպիսի թեմաներ և գործածվում ռճական այնպիսի հնարքներ, որոնք ոչ այնքան բնական շրջապատի հետ նկարչի ունեցած կենդանի շփումների ու անմիջական դիտումների, որքան ստեղծագործական երևակայության կամ գեղարվեստական տպավորություններ-

րի և ազդեցությունների հետևանքներ են: Այդ տեսակետից ցուցանշական աշխատանք է 1915-ին կատարված “Հեքիաթ” ջրանկարը: Մեր առջև օրինատախտակայան (արևելասեր) տարածված մոտիվ է՝ պալատական պարտեզի մեկուսի անկյունում կամ կանանոցի ննջարանում պատկերված մերկ գեղուհիների կերպարներով: Ինչպես ընտրված թեմայով, այնպես էլ վերնագրով Քոչարի այս ջրանրկարն ակամայից հիշեցնում է մոսկովյան սիմվոլիստ նկարիչներին համախմբող՝ “Երկնագույն վարդ” (“Голубая роза”) գեղարվեստական միավորման անդամների նմանատիպ ստեղծագործությունները, այդ թվում նաև Մարտիրոս Մարյանի “Հեքիաթներ և անուրջներ” ջրաներկ շարքի առանձին թերթերը: Նմանությունն աչքի է ընկնում նաև նրանով, որ Քոչարն այստեղ դիմել է արտահայտչական նույն միջոցներին ու հնարներին, որոնք հասկապես բնորոշիչ են վերոհիշյալ միավորումը ներկայացնող երիտասարդ վարպետների գործերի համար: Ամենից առաջ նկատի ունենք XIX–XX դարերի սահմանագլխին արևմտաեվրոպական և ռուսական կերպարվեստում իշխող “մոդեռն” ոճին խիստ բնահատուկ նրբին զծերի փխրունությունն ու սիլուետային հարթված ձևերի միտումնավոր՝ դեկորատիվ քմահաճ ոճավորումը:

Ստեղծագործական ավելի կայուն ու երկարատև համաշխարհային մասին են վկայում պատանի արվեստագետի այն նկարները, որոնք կարելի է բնութագրել որպես իմպրեսիոնիզմին հարող աշխատանքներ: Խոսքը Քոչարի փոքրադիր առանձին յուղանկարների, ջրանկարների և մատիտանկարների մասին է, որոնք կատարվել են 1918-ին, դեռ մինչև նրա Մոսկվա մեկնելը կամ այդ ուղևորության առաջին իսկ օրերին՝ Հյուսիսային Կովկասում: Դրանցից են “Պարտեզ Թիֆլիսում” և “Բնանկար” յուղաներկ էսյուդները, “Պարտեզում”, “Հանգիստ”, “Զրույց”, “Երեքը պարտեզում”, “Զբոսանք”, “Թերթ ընթերցելիս”, “Մտերմական խոսակցություն” ջրանկարները, ինչպես նաև “Բացօթյա սրճարանում”՝ իմպրեսիոնիստական տիպիկ տեսարան ներկայացնող մատիտանկարը: Իմպրեսիոնիզմով Քոչարի տարվելը հնարավոր է բացատրել նրա ուսուցիչներից մեկի՝ հայ ականավոր գեղանկարիչ Եղիշե Թադևոսյանի ազդեցությամբ: Բացօթյա նկարչության փայլուն վարպետի, գունագեղ կտավների և թարմաշունչ բազում էսյուդների հեղինակի հետ Քոչարի ամենօրյա հանդիպումներն ու շփումները չէին կարող անհետևանք մնալ²⁴⁰: Համենայն դեպս, նկարչի նշված աշխատանքներում մենք հանդիպում ենք իմպրեսիոնիզմի ինչպես թեմատիկ ցանկի, այնպես էլ ոճական սկզբունքների և տեխնիկական հնարքների հետ: Դրանք, կարծես, կյանքի հարահոս ընթացքից պատահաբար պոկված, նկարչի աչքում ակնթարթորեն տպավորված և նրա ձեռքով անմիջապես վերարտադրված տեսարաններ են. Քոչարի հերոսները զբոսնում են հանրային պարտեզներում ու պուրակներում, զրուցում են, հանգստանում ծառերի շուքում, լրագիր թերթում, սուրճ խմում, ծխում բացօթյա բարեհարմար սրճարաններում... Այստեղ տիրում է սոցիալական կամ հոգեբանական խմորումների ու բախումների նշույլից անգամ զուրկ խաղաղ, անվրդով, անհոգ մթնոլորտ: Քոչարի այս աշխատանքները դիտելիս անհնար է կռահել, որ

²⁴⁰ Քոչարը երախտագիտությամբ էր հիշում իր սիրելի ուսուցչին. “Դա իմ բախտն էր, որ Թադևոսյանը նկարչության դասեր էր տալիս Շմեռլինգի նկարչական դպրոցում”, – խոստովանում է նա հայկական նոր կերպարվեստի դասականի ծննդյան 100-ամյա տարեդարձին նվիրված հոբելյանական ցուցահանդեսի կատալոգի առաջաբանում (տե՛ս. Եղիշե Թադևոսյան – 100, Երևան, 1971, էջ 8): Հայտնի է նաև, որ Քոչարը մտադիր էր մենագրություն գրել Եղիշե Թադևոսյանի մասին:

դրանք ստեղծվել են Կովկասում հասարակական և քաղաքական աննախադեպ ցնցումների շեմին: Հանգստաբեր անխռով, համերաշխ տրամադրությամբ են համակված նկարչի աշխատանքները, հենց տվյալ պահին՝ այստեղ և հիմա վայելած անդորրն ու երանությունն են բնորոշում դրանց հուզական բովանդակությունը: Սա ոչ այլ ինչ է, քան վաղանցուկ տպավորությունների և միջադեպային պատկերների անընդմեջ հաջորդափոխում, պարապ ժամանցի պոետիկ հրապույր, արագասահ ժամանակի հաճելի վատնում: Իմպրեսիոնիզմի ֆրանսիական վարպետների պես Քոչարը ևս իր նկարները կառուցում է դիպվածաբար՝ ընտրելով անսպասելի դիտակետեր ու կոմպոզիցիոն կտրուկ հատումներ, որոնք է՛լ ավելի են շեշտում և ուժգնացնում պատահականության տպավորությունը, հեղինակային չնախատեսված «ներկայությունը»: Թեև նկարիչը հրաժարվում է պուանտիլիստական կետաբծավոր յուրակերպ ոճից, իմպրեսիոնիստական երերուն խաղեր, երփներանգ թրթիռ հարուցող մանր և անջատ վրձնախազերից ու սպեկտրի անխառն, մաքուր գույներից, Քոչարի աշխատանքները, այնուամենայնիվ, աչքի են ընկնում լուսաօդային թարմ «շնչառությամբ», տոնային սահուն փոխանցումներով:

Իմպրեսիոնիզմի ազդեցությունը նկարչի այդ վաղ, աշակերտական աշխատանքներում կանխորոշում ու նախանշում է դրանց կերպարային-թեմատիկ բովանդակությունը և ձևական լեզուն, սակայն առավել խորամուխ աչքը տեսնում է նաև միանգամայն այլ տարբերիչ գծեր: Մեղանչած չենք լինի ճշմարտության դեմ, եթե ասենք, որ Քոչարի մոտ այդ տարիներին իմպրեսիոնիզմը ներկլանված և տարրալուծված էր սեզանիզմի հարաճուն շիթով, որն էլ շուտով արտամղեց ու բոլորովին վերացրեց իմպրեսիոնիզմի մնացուկները, քանզի ավելի հարմարավոր էր նկարչի ստեղծագործական խառնվածքի և վերլուծական մտքի համար: Դա ի հայտ եկավ արդեն 1918-ին նկարչի վրձնած այնպիսի կտավներում, ինչպիսիք են «Գրքով աղջիկը», «Տներն ու ծուխը», «Թասով նատյուրմորտը», «Խաղաթղթով նատյուրմորտը», «Կշռաքարերով նատյուրմորտը», «Շշերով նատյուրմորտը» և այլն: Այսօր, երբ դեռ չի գրվել Քոչարի կյանքի և ստեղծագործության լիակատար տարեգրությունը, մինչև վերջ չեն ուսումնասիրվել նրա արխիվները, միայն մասամբ են հրատարակվել նրա նամակներն ու օրագրերը, դժվար է ասել՝ ինչու՞ նա շրջվեց դեպի Մեզանը՝ ղեկավարվելով ներքին մղումով ու համոզմունքով, թե՞ ուղղակի ազդվելով ռուսական սեզանիզմի խոշոր ներկայացուցիչ Պյոտր Կոնչալովսկուց, որին աշակերտել էր 1918–1919 թվականներին Մոսկվայում, Պետական ազատ գեղարվեստական արվեստանոցներում: Դատելով 1917-ին ավարտված «Սրվակով և խաղաքարտով նատյուրմորտի», Քոչարը տարվել էր Մեզանով դեռ մինչև Մոսկվա մեկնելը, սակայն սեզանիստական տեղեկեցը հենց այնտեղ էր ստացել անհրաժեշտ զարգացում և արմատավորվել նրա արվեստում: Հիմքեր չկան կարծելու, թե Քոչարը պատահաբար էր հայտնվել Կոնչալովսկու աշխատանոցում, երիտասարդ նկարչի կողմից դա, ամենայն հավանականությամբ, միանգամայն գիտակցված և նպատակամետ ընտրություն էր: Դրա հետ մեկտեղ, Քոչարը չգնաց ռուսուցիին ընդօրինակելու, վերջինիս նախասիրած մոտիվներն ու կերպարները նմանակելու կամ կրկնելու ճանապարհով: Ավելին՝ նա անտարբեր մնաց Կոնչալովսկու նկարչությանն առավել բնորոշ յուրահատկության՝ պատկերման վառ, դեկորատիվ-գունազեղ եղանակի նկատմամբ: Բայց ռուս վարպետից նա փոխառեց ուրիշ, շատ ավելի կարևոր մի բան. սովորեց ոչ

միայն տեսնել, այլև գեղարվեստական նշանակություն տալ մեզ շրջապատող իրերէն աշխարհի նույնիսկ ամենաչնչին, աննշան առարկաներին ու երևույթներին:

Իհարկէ, Քոչարը սեզանիզմի ափին չէր կարող հանգել, մինչ այդ չընկնելով դրա “կնքահոր” ազդեցության տակ՝ մանավանդ, որ խորհրդային իշխանության որոշումով պետականացված և Արևմտյան նոր նկարչության թանգարանում ի ցույց հանված՝ Ս.Ի. Շչուկինի և Ի.Ա. Մորոզովի մոսկովյան հայտնի հավաքածուներում Էքսի փառապանձ “լռակյացի”՝ Պոլ Սեզանի ստեղծագործություններն առավել քան լավ էին ներկայացված:

Սեզանիզմի հատկանիշներն առկա են Քոչարի ոչ միայն վերոհիշյալ աշխատանքներում, այլև 1919-ին ստեղծված առանձին կտավներում. “Կանացի դիմանկար”, “Արդուկով նատյուրմորտ”, “Մանդիկով նատյուրմորտ”, “Տղամարդու դիմանկար”, “Կինը նատյուրմորտի ֆոնին”, “Սրճամանով նատյուրմորտ” և այլն: Ակնհայտ է, որ դրանցում գույնը խաղում է ոչ թե դեկորատիվ-նկարագեղ, այլ ձևակերտական կառուցիկ դեր, որի առաջնահերթ նպատակը գեղարվեստական կերպարների տարածական-ծավալային, պլաստիկ կազմության, շոշափելի մարմնականության բացահայտումն ու հաստատումն է, այսինքն՝ ճիշտ այն, ինչի դեմ մարտնչում էին իմպրեսիոնիստները: Քոչարի գծանկարը նախապես մտածված, խիստ վերլուծական ու հաշվենկատ է, իսկ նրա ստեղծագործությունների կոմպոզիցիոն կառուցվածքն առանձնանում է կոռ միասնությամբ, գեղարվեստական բոլոր տարրերի և բաղադրիչների համաձայնությամբ ու փոխազդեցությամբ, թեև պատկերի ցանկացած հատված, յուրաքանչյուր խազ, գունաբիծ, երանգ ունեն ֆունկցիոնալ կոնկրետ, մասնակի նշանակություն: Քոչարի այդ վաղ աշխատանքներում արդեն իսկ դրսևորվում է գեղարվեստական կերպարներն ու գաղափարները նկարչական զուսպ, խիտ և հագեցած ձևերով արտահայտելու կարողությունը: Հանդես գալով իբրև Սեզանի հետևորդ, հայ երիտասարդ արվեստագետը բավականին վճռական ու համարձակ էր, սեփական ուժերի հանդեպ վստահությամբ լի: Զարմանալի չէ, որ Մոսկվայից դեռ նոր ժամանած նկարիչը, մասնակցելով Թիֆլիսի Գոլովինյան պողոտայում գտնվող “Փառքի տաճար” (“Երկնագույն սրահ”) ռազմապատմական թանգարանում 1919-ի աշնանը բացված՝ Կրացական գեղարվեստական միության երկրորդ ցուցահանդեսին, հանդիսատեսի դատին հանձնեց միանգամից 36 ստեղծագործություն:

Մինչև 1922 թվականը Քոչարը մնաց Թիֆլիսում: Նա շարունակում էր ստեղծագործական ակտիվ որոնումները, մի կողմից՝ հենվելով անտիկ արվեստի և Վերածննդի դասական ավանդույթների վրա, իսկ մյուս կողմից՝ հաշվի առնելով Սեզանի ու սեզանիստների, հատկապես կուբիստների նվաճումները²⁴¹: Դասական ու նորարարական այդ երկու միտումները հաշտեցնելու փորձ է արվել Քոչարի վաղ շրջանի առավել հաջող և սուպրորիչ գործերից մեկում՝ 1919-ին վրձնած “De profundis...” (“Ի խորոց...”)²⁴² կոչվող մեծադիր յուղանկարում: Թեև այն կատարված է բնականից, սակայն սա ոչ դիմանկար է, ոչ էլ անատոմիական ընթացիկ վարժանք, այլ գաղափարապես լիաբեռնված այլաբանական պատկեր:

²⁴¹ Կուբիստների աշխատանքներին Քոչարը նույնպես ծանոթացել էր Մոսկվայում՝ Արևմտյան նոր նկարչության թանգարանում: Դեռ մինչև Թիֆլիս վերադառնալը նա արդեն ստեղծել էր կուբիզմի հատկանիշներով օժտված մի շարք պատկերներ, այդ թվում նաև գրաֆիկական փորձաշափ “Ինքնանկարը” (1918):

Չոզեկյան անտանելի ծանրության, անգութ լծի տակ ճկված պատանու մերկ մարմինը, կարծես, անշարժացել է, իսկ նրա կիսախուփ կոպերով, փակ շրթունքներով և սուր այտուկներով նիհարուն դեմքը թվում է անշունչ, անկենդան, մեռյալ: Բայց որքան երկար և ուշադիր ենք նայում պատանու կիսադեմին, այնքան ավելի պարզ է դառնում, որ կարևորն այստեղ ոչ թե հիությունն ու ճակատագրի հանդեպ խոնարհությունն է, այլ արթնանալու, հոգևոր թմբիրը թոթափելու առայժմ աղոտ և անգիտակից ցանկությունը: Մակայն կերպարը ճիշտ ընկալելու և այն խորապես իմաստավորելու տեսանկյունից վճռական դեր են կատարում ոչ թե հերոսի կիսով չափ շրջված ու ստվերված դեմքը, այլ նրա մարմնի պլաստիկական շեշտադրումները և անչափավոր մեծ ու հանգուցավոր ձեռքերի դիրքը: Պատանին ասես շղթայված, գամված է քարե վիթխարի զանգվածին: Նրա կերպարն ակամայից զուգորդվում է Միգիփոսի և Պրոմեթևսի՝ այդ շրջանի կերպարվեստում և գրականության մեջ լայնորեն տարածված առասպելական կերպարների հետ: Քոչարի նկարը կարող է և այլ մեկնաբանություն ստանալ, սակայն դրա հիմնական իմաստը, այնուհանդերձ, շղթայված մարդու նիրհած ուժերի, ընկճված կամքի արթնացման գաղափարն է: Իր կտավում Քոչարը խորհում է մարդկային մարմնի և նրա հոգու, նյութականի և հոգեկանի միջև եղած երկպառակության ու ողբերգական գծտության մասին: Իզուր չէ, որ նա իր աշխատանքում դիմել է կոմպոզիցիոն սուր դիսոնանսի, տարագատության սկզբունքին. նկարը մի կողմից ստատիկ կառուցվածք ունի ու հիմնականում պարփակված է պատանու ձեռքերի, ուսերի և պարանոցի եզրագծերով սահմանանշված եռանկյունու կոշտ կաղապարի մեջ, իսկ մյուս կողմից՝ այդ ամենի տակ հսկայական լարվածություն, անհանգիստ շարժում ու կենտրոնախույս ջղաձիգ ուժ կա: Դիտորդին թվում է, թե պատանի հերոսի քնից արթնացող և ըմբոստացող հզոր մարմինն ուր որ է կողոպտի ու կշտկվի՝ ջնջելով բոլոր խոչընդոտները և կտրատելով պինդ կապանքները:

Քոչարի կտավում արտահայտչական գլխավոր միջոցներն են գծանկարն ու լուսաստվերը: Ինչպես կարավաջիստների կտավներում, այնպես էլ այստեղ նկարի վերին ձախ անկյունից թափանցող լույսն ականակույր թանձր խավարից դուրս է բերում և շնչավորում պատանուն, իսկ բեկոտված չոր գծանկարը շեշտում է նրա ոսկրապինդ մարմնի կազմվածքը: Ֆունկցիոնալ դեր է կատարում նաև գունաշարը: Մաստվեր մուգ ու մարմնագույն բաց կոլորիտը պատկերին խստաշունչ և նույնիսկ մռայլ երանգ է տալիս²⁴², ինչն արդեն իսկ “հայտարարված” է նկարի վերնագրում: “Ի խորոց կարդացի առ քեզ, Տէ՛ր: Տէ՛ր, լուր ձայնի իմում...”, – մահամերձ մարդու, հանդերձյալ աշխարհի մեկնողի վրա որպես հրաժեշտի թախձալուր աղոթք կարդացվող ապաշխարության սաղմոսի հենց այս սկզբնատողերն է Քոչարը վերցրել իբրև դիտորդին կողմնորոշող խոսուն բնաբան: Մակայն ո՞ր մեղքի համար էր խոստովանք անում և ու՞մ էր սգում սկսնակ նկարիչը: Նրա կենսագրության կոնկրետ փաստերը, որքան հայտնի է, նման տխրաբեր տոնայնության ու անմխիթար տրամադրության առիթ չեն տալիս, և պատանի արվեստագետի ստեղծագործության ապաշխարող ու խոստովանող “ձայնեղանակը”, ըստ ամենայնի, անձնահատուկ խոր, անիմանալի պատճառներ ունեն:

²⁴² Նկատենք, որ այս ստեղծագործության դրամատիկ գույա կոլորիտը մոտ է թիֆլիսցի մեկ այլ նկարիչ, Քոչարի ընկեր և հասակակից Գևորգ Գրիգորյանի (Ձոտտո)՝ նույն տարիներով թվագրված կտավների մուգ ու մռայլոտ գունեղանգներին:

Քոչարի վաղ, թիֆլիսյան շրջանի արվեստը բնութագրելիս հարկ է նշել, որ այդ ժամանակ նրա ստեղծած աշխատանքներում նկարչության դասական և նորագույն, արդի միտումներն առայժմ զարգանում էին իրարից անջատ, միայն եզակի, բացառիկ դեպքերում համադրվելով ու փոխադարձաբար ներգործելով: Դասական միտումը գերիշխում է Քոչարի այնպիսի կտավներում, ինչպիսիք են, օրինակ, “Ջութակը” կամ “Բնորդը” (երկուսն էլ՝ 1919): Ընդ որում, եթե “Բնորդում” զգացվում է բարոկկոյի ազդեցությունը՝ վերջինիս հասուն կոմպոզիցիոն անկայուն ռիթմով, ձևերի հարաշարժությամբ, լուսաստվերային տատանումներով և ընդհարումներով, ապա “Ջութակում”, ընդհակառակը, նկարիչն ապավինում է կլասիցիզմից ժառանգած ավանդույթներին, որոնք իրենց արտացոլումն են գտնում գծանկարի խստության, կոմպոզիցիոն պարզ ու զուգաչափ դասավորության մեջ, կանոնավոր ձևերում և համերաշխ գույներում: Դասական միտումն առավել ցայտուն է դրսևորվում Քոչարի գրաֆիկական առանձին թերթերում, որոնցից են “Տղայի գլուխը”, “Կանացի դիմանկարը”, “Արփենիկ Հովսեփյանի դիմանկարը”, “Մտորումը” (բոլորն էլ՝ 1920), բանաստեղծներ Հովհաննես Թումանյանի (1921), Եղիշե Չարենցի (1921), Ավետիք Բասիակյանի (1922), դերասան Իսահակ Ալիխանյանի (1922) պատկերները: Այդ տեսակետից հատկապես հետաքրքիր է նկարչի սիրուհի Արփենիկ Հովսեփյանի մանրակերտ դիմանկարը (“Մտորում”)՝ կերպար, որին Քոչարը բազմիցս է անդրադարձել թիֆլիսյան շրջանի իր աշխատանքներում: Գծերի հստակությունը, ներդաշնակ ձևերի մաքրությունը, պատկերված կնոջ իդեալացված, ոգեշունչ դեմքը հիշեցնում են XV դարի եվրոպական վարպետների գրաֆիկական դիմանկարները: Արևմտյան նորագույն, մասնավորաբար կուբիստական նկարչությունը որոշակի հետք է թողել 1919–1920 թվականներին Քոչարի ստեղծած երփնագիր մի շարք դիմանկարներում ու նատյուրմորտներում՝ “Կուբիստական կինը”, “Ընկանակով կինը”, “Մափորով և գավաթով նատյուրմորտ”, “Օխամորձով նատյուրմորտ”, “Գրքերով նատյուրմորտ”, “Չվաձև նատյուրմորտ” և այլն: Այստեղ արդեն առկա են կուբիզմի առաջին՝ անալիտիկ փուլի ձևական բոլոր նշանները. երկրաչափական հարթությունների ու պարզ ծավալների վերածված, տարածական տարբեր կետերից և ասպեկտներից դիտարկված առարկաներն ու ֆիգուրները, կարծես, թարսված և անդամատված են, իսկ կտավների գունային համակարգը խստաշունչ է ու միալար:

Դժվար է ասել, թե ինչպես կրնա՞նք Քոչարի հետագա ստեղծագործական կյանքը, եթե 1922-ի գարնանը նա արևմտյան ժամանակակից արվեստին ի մոտո ծանոթանալու և այն ինչպես հարկն է ուսումնասիրելու նպատակով չուղեվորվեր Եվրոպա: Փարիզ՝ բաղձալի նշանակետին, նա հասավ երկար ճամփորդությունից հետո, դադարներ տալով ու կանգ առնելով Կոստանդնուպոլսում, Վենետիկում, Պադուայում, Ֆլորենցիայում, Հռոմում... Դժբախտաբար, արվեստագետի կենսագրության շուրջ երկու տարի տևած այդ շրջանի մասին հավաստի ու ստույգ տեղեկություններ գրեթե չունենք: Քոչարին նվիրված կարճ խոհագրության մեջ ֆրանսիացի անվանի գեղագետ և արվեստի քննադատ Վալդեմար Ժորժը հաղորդում է, որ 1922-ին՝ գտնվելով Կոստանդնուպոլսում, Քոչարը վրձնել է “արևելյան մոտիվներով” ներշնչված յուղաներկ մի շարք կտավներ, որոնք “կը յիշեցնեն Մաթիսի մարոքեան շրջանի ստեղծագործությունները...”, արաբական ձե-

ռագիրները եւ պարսկական խեցեգործութիւնը²⁴³: Կոստանդնուպոլսում Քոչարը նույնիսկ անհատական մի ցուցահանդես է բացել, որտեղ ներկայացրել է իր նոր աշխատանքները²⁴⁴: Ավա դ, մեկ տարի հետո՝ դրանք Փարիզ տեղափոխելիս, այդ կտավներն անհետացել են²⁴⁵:

Մի քանի ամիս նկարիչը մնացել է Վենետիկում, Սուրբ Ղազար կղզու հայ միխիթարյան վանականների կաթոլիկ միաբանության հովանու տակ²⁴⁶: Այստեղ նա առաջին անգամ լրջորեն զբաղվել է քանդակագործությամբ, թէն մինչ այդ էլ կերպարվեստի տվյալ ոլորտում որոշ փորձ ուներ²⁴⁷: Ինչպես գրում է Հ. Փիլիպոսյանը, աբբահայր Իգնատիոս արքեպիսկոպոս Կյուրեղյանի, Վենետիկի պատրիարք՝ կարդինալ Պիետրո Լաֆոնտենի²⁴⁸, բանաստեղծ Ավետիք Իսահակյանի²⁴⁹ դիմաքանդակներում “համոզիչ կերպով բացահայտված է մարդկային բնավորությունը, իսկ պլաստիկական առումով դրանք լուսաստվերով հագեցած և լավ մշակված ծավալներ են: Իրենց դասական կշռելիությամբ այդ քանդակները, հավանաբար, կապված են հայ արվեստագետի իտալական տպավորությունների հետ”²⁵⁰: Ավելացնենք, որ դեռ Թիֆլիսում դասական արվեստի հանդեպ Քոչարի տաճած հետաքրքրությունը չէր կարող չխորանալ Աթենքում, որտեղ նա հասուն կիջնանել էր Կոստանդնուպոլսից դեպի Վենետիկ ուղևորվելիս:

Վենետիկում, վերը թվարկված քանդակների հետ մեկտեղ, Քոչարն ստեղծել է նաև մի քանի երփնագիր գործեր, որոնցից առավել ուշագրավ են “Իտալացի բանաստեղծը” և “Ղազարոսի հարությունը” (“Հարություն”, երկունս էլ՝ 1923)²⁵¹: Առաջինում պատկերված է սրճարանի սեղանիկի մոտ հանգիստ նստած, գինու գավաթով ու ծխամորճով մի երիտասարդ: Նրա աչքերի արտահայտության մեջ նկատվում է մտքի լարված ու կենտրոնացած աշխատանքը, իսկ ազնվական նուրբ դիմագծերը բանաստեղծի խոր ինտելեկտի կնիքն են կրում: Յրված, անտարբեր և բացակայող հայացքը մի կողմ՝ դեպի աջ ուղղած ու ամբողջությամբ մտածմամբ տարված պոետի դեմքը լուսավորված է ստեղծագործական ներշնչանքի ցուլանքներով: Բնատուր արտիստիզմի և նրբակիրթ հոգու նշանակներն իրենց ակնհայտ դրսևորումներն են գտել նրա նիհարուն, մի քիչ կորացած կազմը-

²⁴³ *Ճորձ Վալտենար*, Քոչար եւ նկարչութիւնը տարածութեան մէջ, Պեյրոս, 1972, էջ 35: Վ. Ճորձի զըրքույկը տպագրվել է Փարիզում 1966 ին (*George Waldemar. Kotchar et la peinture dans l'espace. Paris, Galerie Percier, 1966*): Վեց տարի անց այն լույս է տեսել Բեյրութում՝ Սարգիս Քեշիշյանի և Թորոս Թորանյանի արևմտահայերեն թարգմանությամբ, որն էլ այսուհետ մեջբերելու ենք:

²⁴⁴ Պահպանվել է ցուցահանդեսի հրավիրատոմսը՝ բացման ամսաթիվով. 14 հունիսի 1922 թ.:

²⁴⁵ Տե՛ս *Ա. Ա. Пилипосян*, Ерванд Кочар. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата искусствоведения. Баку, 1978, с. 11:

²⁴⁶ Վենետիկում Երվանդ Քոչարի անցկացրած օրերի մասին հետաքրքիր նոր մանրամասները տե՛ս *Կարինե Քոչար*, Վենետիկը և Երվանդ Քոչարը / Տեսի գերկիրն Իտալիոյ. հայ-իտալական բարեկամության օրեր, Երևան, 2005, էջ 157-159:

²⁴⁷ Դեռևս Թիֆլիսում Քոչարի ստեղծած սակավաթիվ քանդակներից առանձնանում է բանաստեղծ Վահան Տերյանի գիպսե կիսանդրին (1919):

²⁴⁸ Հայտնի է, որ այս ստեղծագործության համար կարդինալը Քոչարին արծաթե մեդալ է շնորհել:

²⁴⁹ Բանաստեղծի թողած, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բնասիրության դոկտոր, պրոֆեսոր Ավիկ Իսահակյանի հետ զրուցելիս տեղեկացանք, որ գիպսով արված ու երանգավորված, չափսերով խոշոր այս դիմաքանդակը ժամանակին դրված է եղել “Մուրատ-Ռափայելյան” վարժարանի նախասրահում:

²⁵⁰ *Ա. Ա. Пилипосян*, Ерванд Кочар..., с. 11.

²⁵¹ Վենետիկում, այդ կտավներից բացի, Քոչարը վրձնել է նաև միաբանության հայրերից մեկի՝ Չովսեփ Մարգարյանի դիմանկարն ու սեփական ինքնանկարը:

վածքի ու դյուրագգաց երկար մատների ուրվագծերում: Արտացոլման մոտիվը, որը երևակում և տեսանելի է դարձնում գավաթի փխրուն, թափանցիկ ապակին, առավել քան լավ է արտահայտում իրական աշխարհը բանաստեղծական երազկոտ աշխարհից անջատող անհաստատ, երերուն սահմանի գաղափարը: Նկարի գեղարվեստական ընդհանուր համատեքստին ու կերպարային բովանդակությանը տարօրինակ, նույնիսկ արտառոց երանգ է տալիս սիրո մանկահաս աստվածության՝ չարաճճի Ամուրի ներկայությունը, որն ասես սխալմամբ այստեղ է չվել վենետիկյան մեծ վարպետների կտավներից: Հավանաբար, Քոչարն այդպիսով ցանկացել է լուսաբանել այն հայտնի միտքը, որ մեր կուտակած դարավոր փորձն ու կենսունակ ավանդույթները շարունակական բնույթ են կրում և ակամայից կամ բնագոյաբար ի հայտ գալիս այսօրվա մարդկանց հոգևոր գիտակցության ու մշակութային հիշողության մեջ: Ստեղծագործության յուրատեսակ հատկանիշներից է նաև այն, որ այստեղ, իր աշխատանքներում առաջին անգամ, նկարիչը դիմել է իմիտատիվ՝ կեղծ, ընդօրինակող կոլաժի սկզբունքին՝ դիտորդների մոտ առաջացնելով կտավին, կարծես, սոսնձված լրագրային կտրածոների խաբուսիկ պատրանք: Հետագայում գեղարվեստական նույն հնարքը Քոչարը կիրառել է երփներանգ և գրաֆիկական մի քանի հորինվածքներում. «Բանաստեղծը: Վահան Թեքեյան» (1924), «Նատյուրմորտ լրագրերի ֆոնին» (1924), «Միստորճով տղամարդը», «Երեքով», «Փարիզի տանիքները», «Աղջկա դիմանկար» (բոլորն էլ՝ 1925): Դրանց շարքում է նաև վերոհիշյալ «Ղազարոսի հարությունը», որը երախտապարտ նկարիչն ստեղծել է՝ իր խոնարհ հարգանքը մատուցելով Վենետիկում նրան հյուրընկալած վանականներին, ովքեր ուժ ու ջանք չեն խնայել հայ ժողովրդի հոգևոր և մշակութային ժառանգությանը՝ «հարություն տալու»՝ ուսումնասիրելու ու սերունդներին ավանդելու համար: Ինչպես դագաղից ելավ աստվածաշնչյան Ղազարոսը, այնպես էլ Սուրբ Ղազար կղզում մոռացությունից, դարերի փոշուց հառնեցին հայկական հինավուրց ձեռագրերը՝ մեր պատմության անաչառ վկաներն ու իմաստության անսպառ աղբյուրները: Կտավի վրա աշխատելիս Քոչարը հիմնականում ղեկավարվել է ստեղծագործական ազատ երևակայությամբ, սակայն դրա հիմքում ընկած էր դեռևս Թիֆլիսում նրա վրձնած «Գևորգ Գրիգորյանի դիմանկարը» (1920), որն իր կատարման եղանակով մոտ է մեզ արդեն ծանոթ «De profundis...»-ին. թանգարանային թխագորշ նույն կոլորիտը, կարավաջիստական նույն՝ շեշտակի լուսաստվերը և բնորդի նույն՝ հանգուցավոր կոշտ, պինդ դաստակները: Բարձրահասակ տղամարդու ոլորուն, մի տեսակ անհանգիստ՝ ասես տատանվող, ճոճվող մարմինը և նրա բորբոքված դեմքի հուզավառ արտահայտությունը հիշեցնում են Էլ Գրեկոյի հերոսներին՝ նկարիչ, որի արվեստի հանդեպ այդ տարիներին Քոչարը բնավ անտարբեր չէր²⁵²: «Գևորգ Գրիգորյանի դիմանկարից» նա վերցրել ու գրեթե նույնությամբ «Ղազարոսի հարություն» մեջ է ներմուծել մարդու ֆիգուրը՝ միայն մեղմելով ու խունացնելով բնորդի տիպիկ, անձնահատուկ դիմագծերը: Քոչարի նկարում չափազանց ակ-

²⁵² Այսպես՝ Վալդեմար Ժորժի կարծիքով, Փարիզի մասնավոր հավաքողներից մեկի՝ տիկին Սուլում-յագիի սեփականությունը հանդիսացող, Քոչարի ձեռքով Թիֆլիսում կերտած յուղաներկ «Պարմանին» («Մանկամարդը», 1919) «իր հիանալի գեղեցկությամբ եւ թրթռուն գիծերով կը յիշեցնէ կրետեցի Էլ-Կրեթոն» (*Շորժ Վալտենար*, Քոչար եւ նկարչությունը տարածությունում մեջ..., էջ 33): Սակայն նկատենք, որ նույն աշխատանքը մոտ է նաև Պաբլո Պիկասոյի «Օերունի հրեան տղայի հետ» (1903) հանրահայտ կտավին, որը Քոչարը կարող էր տեսնել Մոսկվայում՝ Արևմտյան նոր նկարչության թանգարանում:

տիվ դեր է հատկացված դեղնակապտավուն խուլ, բայց էքսպրեսիվ գուներանգներին: Ղազարոսի՝ կարծես, ռենտգենի տակ ճառագայթված մերկ մարմինը ֆոսֆորաշող անբնական լույս է արձակում, ինչն էլ նրան չգոյություն խավարից ելած ու գերեզմանային սառնությանը շնչող դամբարանից ընդառաջ եկող ուրվականի տեսք է հաղորդում...

Երվանդ Քոչարի վերը դիտարկված աշխատանքները խոսում են այն մասին, որ երիտասարդ հայ արվեստագետը Փարիզ էր գնում ոչ թե ձեռնունայն, այլ ստեղծագործական ուրույն, թեպետև առայժմ համեստ պաշարով:

(շ ա ր ու ն ա կ է լ ի)

Արարտ Ագասյան – В пространстве Ерванда Кочара. – Состоящий из трех частей очерк посвящен жизни и деятельности одного из крупнейших армянских художников XX века – выдающегося скульптора, живописца и графика Ерванда Кочара (1899-1979). Последовательно рассматриваются основные этапы и характерные особенности творческой эволюции мастера, подробно анализируются его наиболее интересные и значительные произведения. Большое внимание уделяется парижскому периоду в искусстве Кочара, отмеченному поисками новых, нетрадиционных форм и методов художественного высказывания, – поисками, которые велись им в общем русле русского и западноевропейского авангардизма.

В данном сборнике вниманию читателей предлагается первая часть очерка, которая рассказывает о годах ученичества и раннем, тифлисском периоде творчества армянского мастера.

Ararat Aghasyan – In Yervand Kochar's space. – The three-part essay presents the life and activity of one of the greatest Armenian artists of the XX century – the outstanding sculptor, painter and graphic artist Yervand Kochar (1899-1979). The major phases and specific features of the master's creative evolution are sequentially considered, detailed analysis of his most interesting and remarkable works is conducted. Considerable attention is given to the Parisian period in Kochar's art, marked by quests of novel, non-traditional forms and methods of artistic utterance – quests, conducted in line with the general trends of Russian and west-European avant-garde.

In the given collection, to the readers' attention is brought the first part of the essay, which tells about the training years and the early, Tiflisian period in the career of the Armenian master.

**ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱՃՅԱՆԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
(նվիրվում է ծննդյան 175-ամյա հոբելյանին)**

ԱՆՆԱ ԱՍՍՏՐՅԱՆ

“Տիգրան Չուխաճյանն առհավետ կմնա պատմության մեջ ոչ միայն որպես հրաշալի երաժիշտ, հայ երաժշտական թատրոնի հիմնադիր, այլև՝ որպես իր ժողովրդի հայրենասեր ու քաջարի զավակ”:

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

1898 թվական, 10-ը մարտի: Չուխաճյանը, ծանր տառապանքներից հետո, դեմքի քաղցկեղից 61 տարեկանում կյանքից հեռանում է հայ երաժշտության դասական, հայ երաժշտական թատրոնի հիմնադիր, հանճարեղ կոմպոզիտոր, շնորհաշատ դաշնակահար, տաղանդավոր դիրիժոր, վաստակաշատ մանկավարժ, եռանդուն երաժշտական-հասարակական գործիչ **Տիգրան Չուխաճյանը** (1837-1898): Իսկ մինչ այդ... իսկ մինչ այդ մահվան մահճում կոմպոզիտորն իր սնարի մոտ հերթապահող Մմբատ Քեսեճյանից խնդրել էր Ջ.Վերդիի “Օթելլո” երաժշտական դրամայի պարտիտուրը, գրկել այն, սեղմել կրծքին ու հրաժեշտ տվել երկրային կյանքին...

Արձագանքելով Տ.Չուխաճյանի մահվան գույժին՝ “Բազմավեպը” 1899-ի փետրվարյան համարի “Նշանատր հանգուցեալք” բաժնում տպագրած “Հայ Վերտին” վերտառությամբ հողավածում նկատում է՝ “Մինչդեռ բնութեան քաղցրաբոյր եւ քաղցրանուագ նոր սերունդը կը պատրաստուէր՝ ձմրան տխուր վարագոյրը պատառելով՝ զալ զարդարել զարնան զուարթութիւնը, եւ երբ բնութեան նորածին ու երիտասարդ երաժիշտք լանջերնին ուռած դայլայլիկնին կը հնչեցնէին, Չուխաճեանի թշուառ հոգին կը յուզուէր, կը հիւծէր Չուխաճյանի մթնոլորտին տակ, տխուր մահճին մէջ. այն հոգին՝ որ կը յուսար իւր թրթռուն ձայնով ու մատուրնէրով՝ հետեւիլ բնութեան երաժշտաց սրբենի ճլուրլտուկներուն. այն հոգին, որ 55 տարիներէ ի վեր Պոլսոյ սալոններուն եւ թատերաբեմերու մէջ իբր Հայ Վերտի կը ծափահարուէր. այն հոգին՝ որուն վառվռուն երեւակայութեան գեղեցիկ արտադրութիւններն ի Փարիզ, յԵգիպտոս եւ յԱթէնս համակրելի ընդունելութիւն գտած էին: Չուխաճեան կը պատրաստուէր վերահաս ամրան հետ տեսնել նաեւ իր կործանուած առողջութեան ամառն ալ, բայց անաչառ քաղցկեղը կը ճնշէր նորա մարմինը, եւ նուագելի հոգին թեւ առնելով՝ կը սաւառնէր”²⁵³:

Չուխաճյանը “բոլոր անձամբ երգի արհեստին նուիրած էր իր անձը, որ բնական հանճարով մ'ալ օժտուած ըլլալով՝ նոր տեսակ երաժշտութեան հիմնադիրը, վարպետ մեկնիչը ու ղեկավարը հանդիսացավ: Ինքն արեւելեան ազգերու մեղեդիները ի մի ձուլելով՝ նոր դպրոցի մը ստեղծողը եղաւ, եւ Վոսփորի բանաստեղծական երկնքին տակ երագուած ամէն ներդաշնակութիւնները իր քնարէն լսուեցան”, - սա էլ իտալացի կոմս, քննադատ Ռիկարդո Թորենի գնահատականն

²⁵³ **Հ.Մ. Երեմ.**, Հայ Վերտին, “Բազմավեպ”, 1899, Հատոր ՕԵ, փետրուար, էջ 6:

է՝ տպագրված բոլոնյան թերթերից մեկում 1909-ին հրատարակած իր “Il Verdi Armeno” հոդվածում²⁵⁴:

Իր կյանքի օրոք **Չուխաճյանն արդեն համաարևելյան երևույթ էր**, հիմնադիրը մերձավորարևելյան երաժշտական թատրոնի: Նա առաջինն էր արևելյան երաժիշտներից, ով ստանալով մասնագիտական երաժշտական կրթություն և կատարելապես տիրապետելով եվրոպական կոմպոզիտորական տեխնիկայի գաղտնիքներին՝ գտավ Արևելքի և Արևմուտքի երաժշտական մշակույթների մերձեցման ուղիները, արևելյան երաժշտության մեջ արմատավորեց օպերային, սիմֆոնիկ ու կամերային երաժշտության ժանրերը: Նրա գործունեությունը մեծ նշանակություն ունեցավ թուրքական երաժշտության հետագա զարգացման համար. նա երաժշտական թատրոնի, մեներգային, խմբերգային ու նվագախմբային գրության եվրոպական սկզբունքների արմատավորողն է Օսմանյան կայսրության մեջ: **Տ.Չուխաճյանի դաշնամուրային գործերից երկուսը՝ “Fantaisies orientales sur des motifs turcs” (N 1, N 2) դարձան թուրքական պրոֆեսիոնալ գործիքային երաժշտության անդրանիկ նմուշները:**

Թեև Տ.Չուխաճյանի կյանքն ու ողջ գործունեությունը ծավալվեց հայրենիքից հեռու՝ Վոստանդնուպոլսում ու նրան բախտ չվիճակվեց երբևէ լինել հայրենիքում, սակայն բացառիկ դեր ունեցավ հայ երաժշտության զարգացման գործում:

Տ.Չուխաճյանը հայ դասական պրոֆեսիոնալ կոմպոզիտորական դպրոցի սկզբնավորողն է, ում երաժշտությունը նշանավորում է մի ամբողջ պատմական դարաշրջան և խոր հետք է թողել հայ դասական երաժշտության պատմության մեջ՝ զգալիորեն պայմանավորելով այդ արվեստի հետագա առաջընթացը:

Տ.Չուխաճյանն է հեղինակել հայկական ռոմանսի անդրանիկ նմուշները: Ճիշտ 150 տարի առաջ, Կ.Պոլսում “Քնար հայկականի” 1862-ի մայիսի 30-ի համարում տպագրվում է “Գարուն” ռոմանսը՝ հայ նոր քնարերգության հիմնադիր Մկրտիչ Պեշիկթաշյանի համանուն քերթվածի հիման վրա, որի առաջին կատարողն էր Վենետիկի երաժշտանոցի շրջանավարտ, բարձրագույն մասնագիտական կրթություն ստացած արևմտահայ առաջին երգիչ, տենոր Հովհաննես Աճեմյանը: “Իրիկուն մը, Պեշիկթաշյանի մահեն քանի մը տարի առաջ, ընթրիքի հրավեր կար բարեկամի մը տունն, ի Բանկալթի: Բանաստեղծը խոնջ ու տկար, կանուխեն հասած էր ու պատուհանին մոտ ընկողմանած՝ կը դիտեր վերջալույսը, որ կես մութի մեջ թողած էր սրահը: Ներս կը մտնե Աճեմյան ու չուզելով խռովել Պեշիկթաշյանի խոկանքը, կ’անցնի դաշնակին առջև ու կ’սկսի մեղմիվ նվագել ու երգել Գարունը: Չուխաճյան, ինքն ալ շատ երիտասարդ այն ատեն, ամռան իրիկուն մը, ի դարձին Վոսփորե, նավակին մեջ՝ դեռատի արվեստագետի մը ու սիրող սրտի մը բոլոր ներշնչումովը՝ հորինած էր եղանակն այդ երգին, երգ ու եղանակ՝ բանաստեղծին երգած առավոտյան հովին պես անուշ, աղու և սրտագին, անոր թռչնոց երգին պես ու վտակին մրմունջին պես ակնակիտ ու հանդարտիկ: Պեշիկթաշյան կը ցնցվի, կը դարձունե աչքերը բնության հեռապատկերեն դեպի սրահին խորը, դաշնակին ու երգչին կը հառե անշարժ, գրեթե ցնորական երևույթով մը, ճակատը ձեռքին մեջ առած, իր հիվանդ կուրծքին բոլոր հևքով ու խռով-

²⁵⁴ Տե՛ս **Ս. Սասարեան**, Էջեր հայ-իտալական երաժշտական առնչությունների պատմությունից, “Բագմավեպ”, 2005, թիւ 1-4, էջ 46:

յալ հոգվույն բոլոր վրդովումովը հետևելով այն գործիքին ու ձայնին, որ կենդանություն կուտային իր երգին:

Մութը իջած էր արդեն սրահին մեջ, երբ վերջին վանգյունը կը թռթռա երիտասարդ արվեստագետին մատներուն տակ ու վերջին շեշտը կը մարի իր շրթներուն վրա: Ու այդ մութին մեջ, ուր երկու բարեկամները դեռ չէին խոսած, կը լսվի բանաստեղծին զոս ձայնը.

- Չայնդ դալար...²⁵⁵:

Հայկական ռոմանսի անդրանիկ նմուշներից է նաև Վիկտոր Հյուգոյի խոսքերով (հայերեն թարգմանությունը՝ Օնիկ Երկանյանի) “Լոռա” ռոմանսը, որի երաժշտական նյութը Տ.Չուխաճյանն օգտագործել է “Զեմիրե” օպերայի երկրորդ գործողությունից N 10 Էբրուիայի, Զեմիրեի և Ռեբիայի տերցետից Զեմիրեի արիտոյում՝ տոնայնական փոփոխությամբ²⁵⁶: Ռոմանսը տպագրվել է Կ.Պոլսում, 1880-ին, “Նուագք Հայկականք”-ում, ապա՝ 2005-ին, Կահիրեում²⁵⁷: 1914-ին Փարիզում լույս է տեսել “Լոռայի” ֆրանսերեն տարբերակը՝ “Laura”, որը 1994-ի հուլիսի 6-ին Կահիրեում Հայ գեղարվեստասիրաց միության Թեքեյան սրահում ի շարս Չուխաճյանի՝ օտար լեզուներով հորինած մեներգերի կատարել է եգիպտացի երիտասարդ մեցցո-սոպրանո Հալա Էլ-Շապուրին՝ Հայկ Ավագյանի դաշնամուրային ընկերակցությամբ²⁵⁸:

Տ.Չուխաճյանի անվան հետ է կապվում հայկական դաշնամուրային երաժշտության սկզբնավորումը: Լինելով փայլուն դաշնակահար, նա առանձին գուրգուրանք է ունեցել գործիքի հանդեպ, որն ուղեկցեց նրան ողջ կյանքում. որպես դաշնակահար ծավալեց համերգային գործունեություն, զբաղվեց մանկավարժությամբ՝ կրթելով բազմաթիվ պատանիների, ովքեր հետագայում դարձան երաժիշտ-կատարողներ: Տ.Չուխաճյանը գրեց հայ իրականության մեջ դաշնամուրային առաջին օրս-ները: Նրա դաշնամուրային գործերից են ժանրային-կենցաղային բնույթի պարային պիեսները (մագուրկա, պուլկա, գավոտ, կադրիլ, տարանտելլա և այլն), վիրտուոզ երկերը (այդ թվում՝ La lyre orientale կապրիսը, Cascade de Couz էքսպրոմտը, Թուրքիո Հայոց Պատրիարք Ներսես Վարժապետյանի մահվան առիթով հորինված “Արսուր ի շիրիմ” մահանվագը՝ հայոց անդրանիկ դաշնամուրային Marche funèbre-ն, “Պատրանքներ” Մեծ ֆանտաստիկ վալսը և այլն), տրանսկրիպցիաները սեփական օպերաներից: Ի դեպ՝ “Պատրանքներ” Մեծ ֆանտաստիկ վալսը ոչ միայն կանխագուշակեց Արամ Խաչատրյանի հանճարեղ “Վալսը” “Դիմակահանդեսից”²⁵⁹, այլև ավետեց եվրոպական այդ պարի հայկականացումը: Վալսը հաստատուն տեղ գրավեց ինչպես դաշնամուրային, այնպես էլ սիմֆոնիկ երաժշտության մեջ՝ շարունակելով իր լիարյուն կյանքը նաև այսօր: Ապացույց՝ Արամ Սաթյանի “Դրվագ կյանքից” վալսը՝ նվիրված Ռավելի հիշատակին: Տ.Չուխաճյանի դաշնամուրային ֆուգաները նշանավորեցին հայկական պոլիֆոնիկ երաժշտության ծնունդը:

²⁵⁵ Մ. Պեշկոպաշյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1987, էջ 530:

²⁵⁶ Տե՛ս Ա. Ասատրյան, Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը, Երևան, 2011, էջ 417:

²⁵⁷ Տիգրան Չուխաճյան. Մեներգներ եւ խմբերգներ. դաշնակի նուագակցությամբ, Գահիրե, 2005, էջ 31-34:

²⁵⁸ Տե՛ս նույն տեղում, էջ XV:

²⁵⁹ Մրանցում ընդհանուր են ոչ միայն տոնայնությունները՝ a-moll, այլև Չուխաճյանի Վալսի նախաբանի ու Խաչատրյանի վալսի թեմայի մեղեդային կորիզը:

Յավոք, Չուխաճյանի կամերային ստեղծագործությունները չեն հնչում:

Այս տեսակետից անսխալադեպ էր 2012թ. դեկտեմբերի 12-ին ՀՀ ԳԱԱ Նիստերի դահլիճում ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի նախաձեռնությամբ տեղի ունեցած «Տիգրան Չուխաճյանի կամերային ստեղծագործությունը» համերգը²⁶⁰, որի ընթացքում Հայաստանում առաջին անգամ, գիտական աշխատանքով զբաղվող երիտասարդ երգիչների ու դաշնակահարների կատարմամբ ներկայացվեցին Էջեր Տ.Չուխաճյանի կամերային ստեղծագործությունից՝ մեներգեր ու դաշնամուրային գործեր: Արվեստագիտության թեկնածու, Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի մեներգիչ, ՀՀ նախագահի երիտասարդական մրցանակի դափնեկիր, միջազգային և հանրապետական մրցույթների դափնեկիր, բարիտոն Գուրգեն Բավեյանի կատարմամբ հնչեցին «Գարուն» ռումանսը, «Լոռան» և «Ave Maria»-ն: Նվագակցում էր պրոֆեսոր Մարգարիտ Մարգայանը: «Երգ ուրախության» և «Առ սեր իմ Հայաստան» երգերի կատարմամբ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի հայցորդ, հանրապետական մրցույթների դափնեկիր Սոնա Մակարյանը՝ Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ դասախոս Աննա Ադամյանի նվագակցությամբ: Արվեստագիտության թեկնածու, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոս, միջազգային և հանրապետական մրցույթների դափնեկիր, կոմպոզիտոր և երգեհոնահար Հովհաննես Մանուկյանի կատարմամբ հնչեցին «Քուզի ջրվեժը» էքսպրոմտը և «Եվս մեկ գավոտը»: Արվեստագիտության թեկնածու, միջազգային և հանրապետական մրցույթների դափնեկիր Լիլիթ Արտեմյանը ներկայացրեց «Պատրանքներ» Մեծ ֆանտաստիկ վալսը, «Մահանվազը» և «Միրուն» Մալոնի մազուրկան: Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոս, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի հայցորդ, հանրապետական մրցույթների դափնեկիր Լիլիթ Հակոբյանը կատարեց «Proti polka»-ն, իսկ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հայցորդ, միջազգային մրցույթների դափնեկիր Սոֆյա Ղազարյանը՝ «Զվարթություն» պոլկան: Համերգը վարեց Աննա Ադամյանը, ում թեկնածուական ատենախոսությունը նվիրված է հենց Տ.Չուխաճյանի դաշնամուրային ստեղծագործության ուսումնասիրությանը: Հավարտ համերգի՝ տողերիս հեղինակի կատարմամբ հնչեց 140 տարեկան «Արիֆի խորամանկությունը» օպերայից կոմպոզիտորի կատարած տրանսկրիպցիաներից մեկը՝ Առաջին գործողության N 7 ֆինալի Արիֆի և Մերիեմի գուգերգը, որտեղ տեղավորված է Արիֆի սիրո խոստովանությունը:

Համերգը հիշեցրեց Ֆելիքս Մենդելսոնին. 1829-ին Բեռլինում 20-ամյա Մենդելսոնի դեկավարությամբ, 100-ամյա մոռացությունից հետո կատարվեց Բախի «Չարչարանքներն ըստ Մատթեոսի», որից հետո վերակենդանացավ հետաքրքրությունը Բախի անձի ու ստեղծագործության հանդեպ: Հուսանք, որ ՀՀ ԳԱԱ-ում երիտասարդ արվեստաբանների կատարմամբ համերգով ևս հետաքրքրություն կառաջանա Տ.Չուխաճյանի մինչ օրս անհայտ դաշնամուրային ստեղծագործության հանդեպ, և դրանք կհնչեն Հայաստանի ու արտասահմանի հեղինակավոր բեմերում, տեղ կգտնեն Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ուսումնական ծրագրերում:

²⁶⁰ Համերգը կազմակերպվել էր ՀՀ Նախագահ Սերժ Մարգայանի հովանու ներքո իրականացվող երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի շրջանակներում և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի ֆինանսավորմամբ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գումարած Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական հերթական՝ յոթերորդ նստաշրջանի շրջանակներում:

2012-ի տարեմուտին ՀՀ առաջին տիկին Ռիտա Սարգսյանի բարձր հովանու ներքո, ՀՀ Մշակույթի նախարարության աջակցությամբ ՀՀ վաստակավոր արտիստ, միջազգային մրցույթների դափնեկիր, տաղանդավոր դաշնակահար Արմեն Բաբախանյանի կատարմամբ լույս տեսավ “Հայ դաշնամուրային երաժշտության անթոլոգիայի” առաջին հատորը, որի առաջին խտասայիկում տեղ են գտել Տ.Չուխաճյանի դաշնամուրային պիեսներից տասը: Իսկ 2012-ի դեկտեմբերի 21-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի ունեցած “Հայ դաշնամուրային երաժշտության անթոլոգիա” նախագծի համերգ-շնորհանդեսին Ա.Բաբախանյանի վիրտուոզ կատարմամբ հնչեց Չուխաճյանի “Քուզի ջրվեզ” եքսպրոմոը...

Ծանրակշիռ է Չուխաճյանի սիմֆոնիկ ժառանգությունը: Հայկական դաշնամուրային կոնցերտի նախատիպով՝ դաշնամուրի և նվագախմբի համար գրված “Perpetuum mobile”-ով, սիմֆոնիկ նվագախմբի համար գրված երկերով (այդ թվում՝ “Արևելյան ֆանտազիա”, “Արևելյան” պար, “Քայլերգ շնորհակալության”, “Մեծ պարսկական քայլերգ” (երկու տարբերակներ), Մեծ պոպուրի “Լեբլեբիջի Հոր-հոր աղա” օպերայի մոտիվներով, Պոպուրի “Էբուդիա և Ջեմիրե” օպերայի մոտիվներով, “Ջեմիրե” ֆանտազիա, “Հայկական եղանակ”, “Մեղեդի”, “Քայլերգ” և այլն), Չուխաճյանը դրեց հայկական սիմֆոնիկ երաժշտության հիմքերը: Տ.Չուխաճյանը սիմֆոնիկ նվագախմբի համար “Պարսկական քայլերգ” ստեղծած հայ առաջին կոմպոզիտորն է: Ի դեպ, այն հետագայում կենսունակ դարձավ հայ դասական երաժշտության մեջ: Բավական է հիշել Ալ.Սպենդիարյանի անկրկնելի “Պարսկական քայլերգն” “Ալմաստից” և Ա.Տիգրանյանի “Պարսկական քայլերգը” “Դավիթ Բեկից”:

Տ.Չուխաճյանի ժառանգության կարևոր էջն են փողային նվագախմբի համար գրված չորս քայլերգերը, որոնք կոմպոզիտորի ղեկավարությամբ բազմիցս հնչել են Կ.Պոլսի զբոսայգիներում²⁶¹:

Տ.Չուխաճյանը հայ երաժշտական թատրոնի հիմնադիրն է. նրա գործունեությամբ պայմանավորվեց հայ երաժշտական թատրոնի սկզբնավորումը ԺԹ դարի երկրորդ կեսին: Հրաշքով պահպանված ու մեզ հասած, դեռևս անտիպ ու Երևանի Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում գտնվող Տ.Չուխաճյանի դիվանում հանգրվանած ձեռագիր վեց օպերաներով Չուխաճյանը հայ դասական երաժշտության մեջ արմատավորեց օպերային մի քանի ժանրեր: Դրանք են պատմառոմանտիկական “Արշակ Բ”-ը, կոմիկական օպերաների տրիադան՝ “Արիֆի խորամանկությունը”, “Քյոսե Քեհյան” և “Լեբլեբիջի Հոր-հոր աղան”, հայրենասիրական “Ինդիանան” և “Ջեմիրե” հեքիաթ-օպերան: “Լեբլեբիջի” ազդեցության տակ Քր.Կարա-Մուրզան ձեռնամուխ եղավ “Շուշանի” ստեղծմանը. թեև անավարտ՝ օպերայի ժանրն իր վրա հրավիրեց հայ կոմպոզիտորների ուշադրությունը, ուղի հարթեց Կոմիտասի անավարտ “Անուշից” դեպի Ա.Տիգրանյանի “Անուշն” ու “Դավիթ Բեկը”, Ալ.Սպենդիարյանի “Ալմաստը”, Հ.Ստեփանյանի օպերաները... Չուխաճյանը նախանշեց հայկական բալետի զարգացումը. նրա օպերաների բալետային տեսարաններն էլ նախակարապետը դարձան Ա.Խաչատրյանի “Գայանեի” ու “Մպարտակի”... Չուխաճյանի գործունեության կարևոր բաղկացուցիչն էր թատերական պիեսների համար գրված ե-

²⁶¹ **Ն. Թահմիզեան**, Տիգրան Չուխաճեան. կեանքը եւ ստեղծագործությունը, Փասսատենա, 1999, էջ 35:

րաժշտությունը, ներկայացումների երաժշտական ձևավորումը, որը մեծապես նպաստել է բեմական ներկայացումների հաջողությանը, խթանել արևմտահայ թատրոնի առաջընթացը:

Հայոց անդրանիկ **“Արշակ Բ”** օպերան (1868) Տ.Չուխաճյանը գրել է թատերական գործիչ, դրամատուրգ, բանաստեղծ, թարգմանիչ, գեղագետ, ուսուցիչ ու գրական քննադատ Թովմաս Թերգյանի լիբրետոյի հիման վրա, որը որպես գրական երկ հրատարակվել է Կ.Պոլսում (1871): Օպերան բեմադրվել է 1869-ին, ունեցել ընդամենը երեք ներկայացում: Կոմպոզիտորի մահից հետո օպերան մոռացության է տրվում: Տասնամյակներ անց, Չուխաճյանի երաժշտական ժառանգության առաջին լուրջ գիտական ուսումնասիրությունը ստանձնած Գեորգի Տիգրանովը, ծանոթանալով նրա արխիվային նյութերին, 1942-ին հայտնաբերում է օպերայի պարտիտուրը²⁶²: Պարտիտուրը հանձնվում է Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնին, որը, չնայած պատերազմական ժամանակաշրջանի (1942-43) դժվարություններին, ձեռնամուխ է լինում բեմադրության աշխատանքներին: Թատրոնը հրաժարվում է Թ.Թերգյանի լիբրետոյի գաղափարական ու դրամատուրգիական կոնցեպցիայից, բեմադրության համար Արմեն Գուլակյանը գրում է նոր լիբրետո՝ ուժեղացնելով սյուժեի հայրենասիրական գիծը²⁶³: 1945-ին, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 25-ամյակի առթիվ, Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի բեմում Միքայել Թավրիզյանի ղեկավարությամբ առաջին անգամ հնչում է **“Արշակ Երկրորդը”**՝ արժանանալով ջերմ ընդունելության²⁶⁴: **“Արշակ Երկրորդի”** բեմադրությունը դարձավ ոչ միայն Հայաստանի, այլև ԽՍՀՄ մշակութային կյանքի առավել վառ ու նշանակալի իրադարձություններից մեկը՝ արժանանալով երկրի բարձրագույն պարգևի՝ Ստալինյան մրցանակի: Անդրանիկ բեմադրության օրվանից օպերան մշտական տեղ գտավ թատրոնի խաղացանկում: 1956-ի հունիսին հայ արվեստի տասնօրյակի շրջանակներում օպերան երկրորդ բեմադրությամբ ցուցադրվում է Մոսկվայի Մեծ թատրոնում²⁶⁵: Վերջին գործողության մեջ ավելացավ **“Արա Գեղեցիկ և Շամիրամ”** պարային Ինտերմեդիան: **“Արշակ Երկրորդի”** երրորդ բեմադրությունը տեղի ունեցավ 1971-ին և ձոնվեց հայոց օպերային արվեստի ծննդյան 100-ամյա հոբելյանին²⁶⁶: 1984-ին իրականացվում է **“Արշակ Երկրորդի”** նոր բեմադրությունը²⁶⁷: 2001-ին Սան-Ֆրանցիսկոյում տեղի է ունենում **“Արշակի”** պրեմիերան՝ Լորիս Ճգնավորյանի ղեկավարությամբ 6 ներկա-

²⁶² Ալ.Սպենդիարյանի անվան օպերային թատրոնում Գ.Տիգրանովը, ներկայությամբ Հայկանուշ Դանիելյանի, Միքայել Թավրիզյանի, Արմեն Գուլակյանի և Մուշեղ Աղայանի, դաշնամուրով նվագում է իր հայտնաբերած օպերան:

²⁶³ **“Արշակ Երկրորդ”** օպերայի համար Ա.Գուլակյանի գրած լիբրետոն տե՛ս **Ա. Ասատրյան**, **“Արշակ Բ”**. հայոց անդրանիկ օպերան, Երևան, 2006, Հավելված 2, էջ 194-266:

²⁶⁴ Ներկայացման մեջ ընդգրկվել էին հայ բեմի առաջատար ուժերը՝ Հայկանուշ Դանիելյանը (Օլիմպիա), Տաթևիկ Մազանդարյանը (Փառանձեմ), Շարա Տալյանը և Պավել Լիսիցյանը (Արշակ Երկրորդ), Ավագ Պետրոսյանը (Տիրիթ):

²⁶⁵ Ներկայացման դիրիժորն էր Սուրեն Չարեքյանը, ռեժիսորը՝ Վավիկ Վարդանյանը: Գլխավոր հերոսների դերերգերով հանդես եկան Գոհար Գասպարյանը (Օլիմպիա), Միհրան Երկաթը (Արշակ Երկրորդ), Նար Հովհաննիսյանը (Ներսես):

²⁶⁶ Դիրիժորն էր Օհան Դուրյանը, նկարիչը՝ Ռոբերտ Նալբանդյանը: Գլխավոր հերոսների դերերգերը կատարեցին Միհրան Երկաթը (Արշակ Երկրորդ), Գոհար Գասպարյանը (Օլիմպիա), Գոհար Գալաչյանը (Փառանձեմ), Նար Հովհաննիսյանը (Ներսես), Հենրիկ Ալավերդյանը (Վասակ):

²⁶⁷ Բեմադրության ռեժիսոր՝ Տիգրան Լևոնյան, դիրիժոր՝ Հ.Չեքիջյան, նկարիչ՝ Ե.Սաֆրոնով:

յացումները հայ (Հասմիկ Պապյան, Տիգրան և Հայկ Մարտիրոսյաններ) և օտար՝ ամերիկացի, ֆրանսիացի, վրացի, կանադացի, բուլղար, պարսիկ երգիչների մասնակցությամբ: Օպերան հնչում է հեղինակային մտահղացմամբ, հայերեն լեզվով²⁶⁸:

2012-ը հոբելյանական է “Արշակ Երկրորդի” բեմական կյանքում: Իր 5-ամյակը բոլորեց օպերայի ներկա բեմադրությունը՝ Գեղամ Գրիգորյանի գեղարվեստական ղեկավարությամբ (2007)²⁶⁹:

Տասնամյակներ շարունակ “Արշակ Երկրորդը” հնչում է առանց Նախերգանքի:

... 1865-ին Միլանից Պոլիս վերադառնալով, Չուխաճյանն իր հետ բերում է գրեթե ավարտված “Արշակ Բ” օպերան՝ բացառությամբ Նախերգանքի, որը հորինում է Կ.Պոլսում՝ բավական արտասովոր պայմաններում: Ամեն անգամ, երբ Չուխաճյանն այցելում էր Գևորգ Ապտուլլահին²⁷⁰, լուսանկարիչը պահանջում էր, որպեսզի նա գրի Նախերգանքը: Չուխաճյանը խոստանում էր ավարտել Նախերգանքը առաջիկայում, մի քանի օրից: Խոստանում էր և ... խոստումը հերթական անգամ դրժում: “Օր մը, Չուխաճեան դարձեալ գացած էր Ապտուլլահի լուսանկարչատունը, բայց այդ անգամ բան չըսուեցաւ իրեն Նախերգանքին մասին: Գեորգ Ապտուլլահ կը խնդրէ որ այդ գիշեր իրենց մնայ. Տիգրան կը համաձայնի: Գեորգ յօրինողին յատկացուած սենեակին մէջ, ուր դաշնակ մըն ալ կար, քանի մը տասնեակ երաժշտութեան թուղթեր, մատիտ, զմելի կը դնէ, որոնք նախապէս պատրաստած էր: Երբ Չուխաճեան քնանալու համար այդ սենեակը կ’առաջնորդուի՝ Ապտուլլահ կը յայտարարէ. Մինչեւ որ “Արշակ Բ”-ի Նախերգանքը չպատրաստես, բանտարկուած պիտի մնաս այս սենեակին մէջ: Ու դուռը վրայէն կողպելով, բանալին իր քով կը պահէ: Չուխաճեան ըսուածը կատակ կը կարծէ, ու հանգիստ մը կը քնանայ, սակայն առաւօտուն կը հասկնայ որ ըսուածը իրականութիւն է: Ճարահատ, կը սկսի իր բանտին մէջ պատրաստել Նախերգանքը: Ապտուլլահ իր ընտանիքին անդամներուն պատուիրած էր որ Չուխաճեանի նախաձաշը եւ կէս օրուան ձաշը կողովով մը վար իջեցնեն վերի յարկի պատուհանէն: Չուխաճեանի յատկացուած սենեակը տանը պարտէզին կողմն էր եւ ձաշը իրեն տրուած միջոցին, դրացի տուներէն օրիորդ մը կը տեսնէ բանտարկեալի մը այդ կերպով կերակրուիլը ու եղելութիւնը կ’երթայ կը պատմէ դրացի քանի մը օրիորդներու, որոնք հաւաքուելով՝ մինչեւ իրիկուն արգելք կ’ըլլան երգահանին, որ չի կրնար Նախերգանքը վերջացնել: Երեկոյեան, երբ Ապտուլլահ տուն կը վերադառնայ եւ տեսնելով որ Նախերգանքին կէտը միայն պատրաստ է, կը հրամայէ որ բանտարկութիւնը շարունակուի եւ երեկոյան ձաշն ալ նոյն կերպով կը տրուի: Չուխաճեան տեսնելով որ ազատում չկայ, մինչեւ որ գործը չաւարտի, այդ գիշեր մինչև արշալոյս աշխատելով կը վերջացնէ: Առաւօտուն Չուխաճեան կը

²⁶⁸ St ‘u **N. Tahmizian**, *The Life & Works of Dikran Tchouhadjian*, Pasadena, CA, 2001, էջ 195-198:

²⁶⁹ Բեմադրող ռեժիսորն էր Գ.Գրիգորյանը, դիրիժորը՝ Կարեն Դուրգարյանը, խմբավարը՝ Կարեն Սարգսյանը: Գլխավոր հերոսների դերերգերով հանդես եկան Գևորգ Հակոբյանը (Արշակ Երկրորդ), Անահիտ Մխիթարյանը (Օլիմպիա), Քրիստինե Սահակյանը (Փառանձեմ), Գեղամ Գրիգորյանը (Տիրիթ):

²⁷⁰ Ի դեպ, երբ Չուխաճյանը սովորում էր Միլանում, պոլսահայ լուսանկարիչ, կոմպոզիտորի բարեկամ Գևորգ Ապտուլլահը (Ապտուլլահյան) Չուխաճյանին է ուղարկում “Արշակ Բ”-ի՝ Թովմաս Թերգյանի հեղինակած լիբրետոն: Գ.Ապտուլլահը Թ.Թերգյանի դասընկերն էր. նրանք միասին սովորել էին Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում և Կ.Պոլիս վերադարձել 1858-ին:

պոռայ որ լրացուցած է Նախերգանքը: Ապտուլլահ դուրսէն կ'ուզէ դաշնակի վրայ լսել պատրաստուածը: Չուհաճեան ներսէն կ'աղաղակէ թէ պատրաստած է: Ապտուլլահ կը պնդէ որ պէտք է լսէ: Վերջապէս Չուհաճեան կը նուազէ Նախերգանքը: Ապտուլլահ դուռը կը բանայ ու կը շնորհաւորէ²⁷¹:

Չուխաճյանը Նախերգանքը ձոնում է Հակոբ Պալյանին. նրա ապարանքում էլ 1868-ի վերջերին առաջին անգամ հնչում է Նախերգանքը՝ իտալական քառյակի կատարմամբ, Չուխաճյանի ղեկավարությամբ. նվագահանդեսին ներկա էր բարձր դասին պատկանող ավելի քան 100 ընտանիք: Ցնցող տպավորություն թողնելով ունկնդիրների վրա, Նախերգանքը մեծ ժողովրդականություն է վայելում՝ բազմիցս հնչելով Կ.Պոլսում, Չմյունխայում և Եվրոպայում՝ Վենետիկում, Նեապոլում, Վիեննայում և Փարիզում:

Մասետրոյի մահից հետո Չուխաճյանի սան, արևմտահայ ջութակահար, դիրիժոր, կոմպոզիտոր Հարություն Մինանյանը 1900-ին Նախերգանքը վերածում է կլավիրի և իր սեփական միջոցներով տպագրում 700 օրինակ: Վաճառքից ստացված հասույթով 1907-ին Իզմիրի գերեզմանատանը Չուխաճյանի շիրմին կանգնեցվում է մեծ վարպետի մահարձանը. մարմարի վրա փորագրվում է Ալեքսանդր Փանոսյանի (Ալփապլան) հետևյալ քառատողը.

“Մեծ երգահան, պարծանք ազգին որ տարագիր՝

Իզմիրի մէջ կնքեցիր կեանքդ անշքօրէն,

Ցուրտ ու լըռին դամբանիդ տակ խաղաղ հանգի՛ր,

Որ երկնից մէջ անուշ երգերդ հոգիդ օրբէն”²⁷²:

2012-ի նոյեմբերի 21-ին, Տ.Չուխաճյանի ծննդյան 175-ամյա հոբելյանի շրջանակներում Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի ունեցավ համերգ, որի ծրագրում տեղ էին գտել Չուխաճյանի ստեղծագործությունները: “Արշակ Երկրորդ” և “Կարինէ” օպերաներից հատվածների կատարմամբ հանդես եկան Ալ. Մայեղիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի սիմֆոնիկ նվագախումբը, երգչախումբը և մեներգիչները՝ Արծվիկ Դեմուրճյանը (Կարինէ), Պերճ Քարազյանը (Արմեն), Միքայել Հովակիմյանը (Հոր-հոր), Ալինա Փահլևանյանը (Օլիմպիա), Աննա Այվազյանը (Փառանձեմ), Անուղ Քոչարյանը (Արշակ Երկրորդ) և Միքայել Հովակիմյանը (Ներսես Կաթողիկոս)՝ թատրոնի երաժշտական ղեկավար և գլխավոր դիրիժոր, ՀՀ վաստակավոր արտիստ Կարեն Դուրգարյանի ղեկավարությամբ:

Համերգը բացառիկ էր՝ տեղի ունեցավ “Արշակ Բ” օպերայի Նախերգանքի հայաստանյան պրեմիերան: Կ.Դուրգարյանը պատրաստել էր ևս մեկ անակնկալ: Համերգի վերջում հնչեց Տ.Չուխաճյանի “Զեյթունցիների քայլերգը”՝ սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ: “Զեյթունցիների քայլերգը”, որը կյանքի կոչվեց 1862-ի Զեյթունի դյուցազնամարտի կապակցությամբ Չուխաճյանի և զեյթունցի հերոս բանաստեղծ Հարություն Չագրյանի համագործակցությամբ, արժանացել է հայ և օտարազգի կոմպոզիտորների ուշադրությանը: Մ.Եկմալյանը քայլերգի հիման վրա արական երգչախմբի համար ստեղծել է a cappella խրոխտ խմբերգը՝ “Կեցցե Զեյթուն” վերնագրով, իսկ 1974թ. Ալեքսանդր Հարությունյանը դաշնամուրի, լարային նվագախմբի և հարվածայինների համար գրված “Մեր հին երգերը” ռապսոդիայում, ի թիվս այլ երգերի (“Բլբուլն Ավարայրի”, “Արաքսի արտասուքը”), օգ-

²⁷¹ Լ. Պեշկիթաշեան, Թատերական դերեր, Անթիլիաս, 1969, էջ 90:

²⁷² Վ. Զարդարյան, Հիշատակարան, Տարեգիրք 1941 տարուոյ, Գահիրե, 1940, էջ 75:

տագործել է Չուխաճյանի քայլերգը՝ ստեղծելով սիմֆոնիզացված վարիացիաների նմուշ: Գ.Կազաչենկոն երգի մեղեդին օգտագործել է մեներգչի, երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար գրված առաջին “Հայկական սյուիտում”, իսկ Միխայիլ Իպոլիտով-Իվանովը երգի մեղեդին 1894թ. օգտագործել է օր. 10 “Կովկասյան էսքիզներ” N 1 սիմֆոնիկ սյուիտի առաջին շարքում՝ որպես “Մարդարի երթի” գլխավոր թեմա: Համաշխարհային հռչակ վայելող “Կովկասյան էսքիզները”, որը կատարում են աշխարհի հեղինակավոր կոլեկտիվներ (Լոնդոնի “Ֆիլհարմոնիա” նվագախումբը՝ Նիկոլայ Մալկոյի ղեկավարությամբ, Ուկրաինայի ազգային սիմֆոնիկ նվագախումբը՝ Արթուր Ֆագենի ղեկավարությամբ), այս անգամ հնչեց Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի նվագախմբի կատարմամբ՝ Կ.Դուրգարյանի ղեկավարությամբ:

“Արիֆի խորամանկությունը”՝ հայկական առաջին կոմիկական օպերան, գրված ըստ Գոգոլի “Ռևիզորի”, բեմադրվել է 1872-ի դեկտեմբերի 9-ին Կ.Պոլսում և նշանավորել թուրքական երաժշտական թատրոնի սկզբնավորումը: Սա առաջին պրոֆեսիոնալ օպերան էր ամբողջ Մերձավոր Արևելքում: Հայ երաժշտական իրականության մեջ առաջին դեպքն էր, երբ բեմ էր բարձրանում հայ կոմպոզիտորի օպերան՝ հայ արտիստների կատարմամբ: “Արիֆին” ունեցավ շոնդալից հաջողություն՝ մեծ հռչակ բերելով հեղինակին: Առաջնախաղի ժամանակ գլխավոր հերոսուհի Մերիեմի դերերգը կատարեց օսմանյան բեմի անդրանիկ պրիմադոննա Շազիկ Բոյոյանը, իսկ Արիֆի երգամասով հանդես եկավ լիբրետոյի հեղինակ Հովհաննես Աճեմյանը:

Հայ բեմի մեծագույն կատակերգակ, կատակերգության և վոդևիլի վարպետ, կատակերգերի հեղինակ և կատարող Գարեգին Ռշտունու լիբրետոյի հիման վրա գրված **“Քյոսե Քեհյա”** օպերայի պրեմիերան տեղի է ունեցել 1875-ի հոկտեմբերի 7-ին: Օպերայի ներկայացումները չեն ունեցել “Արիֆի” հաջողությունը²⁷³:

Կերասան, երգիչ, դրամատուրգ, թարգմանիչ և ուսուցիչ Թագվոր Նալյանի լիբրետոյի հիման վրա գրված **“Լեբլեբիջի Հոր-հոր աղալի”** պրեմիերան տեղի ունեցավ 1875-ի նոյեմբերի 5-ին՝ արձանագրելով շոնդալից հաջողություն: Գլխավոր դերերգերի կատարմամբ հանդես են գալիս Շազիկը (Ֆաթիմե), Հովհաննես Աճեմյանը (Խուրշիդ), Խաչիկ Փափազյանը (Սասար-Հասան), Գարեգին Ռշտունին (Ճինկյոզ), Թագվոր Նալյանը (Հոր-հոր աղա) և այլք: “Լեբլեբիջին” դառնում է Չուխաճյանի ամենասիրված, տարածված և ժողովրդականացած օպերան: Չուխաճյանն անմահանալու էր հենց այս օպերայով: “Լեբլեբիջին” այն եզակի օպերաներից է, որն ունի բացառիկ ընդգրկուն աշխարհագրություն և ներկայացվել է աշխարհի բազմաթիվ լեզուներով, այդ թվում՝ թուրքերեն, հունարեն, գերմաներեն, հայերեն, ռուսերեն, բուլղարերեն, ֆրանսերեն: Օպերան ծափահարվել է Լիբանանում, Սիրիայում, Անդրկովկասում (Բաքվում և Թիֆլիսում), Ֆրանսիայում, Հունաստանում, Կիպրոսում, Բուլղարիայում, Ռումինիայում, Եգիպտոսում,

²⁷³ “Արշակ Բ”-ի ստեղծման մեկդարյա հոբելյանի կապակցությամբ 1968-ին Բեյրութում բեմադրվել է “Քյոսե Քեհյայի” հայացված տարբերակը՝ “Չվարթը”, որի բեմադրությունն իրականացրել են Վահրամ Փափազյան թատերախումբն ու Հ.Ե.Ը. երգչախումբը: 2003-ին “Չվարթը” բեմ է բարձրանում Փասադենայի քաղաքային հանդիսարահում՝ Գլենդելի “Lark” երաժշտական ընկերակցության խմբավար Վ. Պարտույանի և ՀԲԸՄ “Արտավազդ” թատերախմբի ղեկավար Գ.Մաթամյանի համատեղ ջանքերով:

ԱՄՆ-ում, Կանադայում, նաև՝ Թուրքիայում և Հայաստանում:

Կոմիկական օպերաների տրիադայից հետո Չոլիսաձյանը ստեղծում է հայ-բենասիրական օպերան՝ **“Ինդիանան”**²⁷⁴: 1870-ականների Թուրքիայում կոմպոզիտորը հայրենասիրական խոշոր կտավի օpus-ում պատմեց ոչ թե ի՛ր հայրենիքի ու ժողովրդի, այլ՝ հեռավոր Հնդկաստանի ու հնդիկների մասին՝ նրանց իդեերը նույնացնելով իր և իր հայրենակիցների համար թանկ ու նվիրական հայրենիքի մասին երազանքների հետ: “Ինդիանան” երբեք բեմ չբարձրացավ, ո՛չ հեղինակային մտահղացմամբ և ո՛չ էլ խմբագրված ձևով: Մինչդեռ սա Չոլիսաձյանի լավագույն ստեղծագործություններից է, նրա հասուն շրջանի կատարյալ գործերից:

Հայոց առաջին-հեքիաթ օպերան՝ **“Զեմիրեն”**, գրված հուշարար, թատերագիր և թարգմանիչ Տիգրան Գալեմձյանի լիբրետոյի հիման վրա 1891-ին Պոլսում ներկայացվել է ութ անգամ: Ոգևորված օպերայի հաջողությունից՝ “Զեմիրեն” Փարիզում բեմադրելու մտադրությամբ 1891-ի ապրիլին Չոլիսաձյանը մեկնում է Ֆրանսիա: Փարիզ հասնելուն պես Չոլիսաձյանն սկսում է բանակցությունները թատրոնների տնօրենների հետ: Շուտով պարզվում է, որ ձեռքի տակ եղած համեստ միջոցներով անհնար է օպերայի բեմադրությունը. նրանք պահանջում են մեծ գումարներ, և կոմպոզիտորի ոգևորությունը փշրվում է: Բարեբախտաբար ֆրանսահայ մեծահարուստ Գաբրիել Էզնայանը, կոմպոզիտորի կատարմամբ ծանոթանալով օպերայի երաժշտությանը և գիտակցելով իր հայրենակցի օպերան Փարիզում ներկայացնելու կարևորությունը՝ հանձն է առնում հոգալ բեմադրության հետ կապված ծախսերը: Բայց... հանկարծամահ է լինում Էզնայանը՝ իր հետ գերեզման իջեցնելով “Զեմիրենի” փարիզյան բեմադրության վերջին հույսը: Փարիզյան ամիսները սակայն անպտուղ չէին՝ Չոլիսաձյանը ծանոթանում է “Splendid Tavern”-ի սիմֆոնիկ նվագախմբի դիրիժոր Ալտերի հետ. վերջինս իր համերգներից մեկի ծրագրում ընդգրկում է “Արշակի” նախերգանքը և “Fantaisies Orientale”-ը, որոնք արժանանում են ունկնդիրների ջերմ ընդունելությանը, իսկ հեղինակին բերում “Թուրքական Օֆենբախ” գնահատականը: Հուսահատված ու հիասթափված Չոլիսաձյանը բռնում է տունդարձի ճամփան: Շուտով, 1894-ին, “Զեմիրեն” բեմադրվում է Կ.Պոլսում: 1966-ին Երևանում Յուրի Դավթյանը Գեորգի Տիգրանովի, Յուրի Դավթյանի և Վլադիլեն Բայյանի նախաձեռնությամբ իրականացնում է “Զեմիրենի” ձայնագրությունը²⁷⁵: “Զեմիրենի” գրեթե 3/4-ը ընդգրկող ձայնագրությունը ճանաչվում է տարվա լավագույն ձայնագրություն ու արժանանում ԽՍՀՄ Համամիութենական ռադիոյի մրցանակին: Հետագայում ձայնագրության հիման վրա ստեղծվում է ռադիոմոնտաժ, որը տասնամյակներ շարունակ հեռարձակվում էր Մոսկվայի ու Երևանի ձայնասփյուռներով: Ոգևորված օպերայի հաջողությունից՝ որոշվում է բեմադրել օպերային թատրոնում... Ու այդպես էլ սպասում է “Զեմիրեն” իր բեմելին՝ Երևանում²⁷⁶:

²⁷⁴ “Ինդիանայի” լիբրետոն ըստ թուրքական նոր գրականության ներկայացուցիչ Աբդուլհակ Համիդի “Հնդկուհին” ստեղծագործության կազմել էր Հովսեփ Եազըձյանը:

²⁷⁵ Օպերայի արխիվային ձեռագրերի հիման վրա Վահրամ Դարբասյանը լիբրետոն իտալերենից ու ֆրանսերենից թարգմանում է հայերեն, որից հետո Վահան Հարությունյանը դա վեր է ածում չափածո տեքստի: Բորիս Սակիլարին ստեղծում է նոր գործիքավորում: Ներգրավվում են Հայաստանի առաջատար երգիչները՝ Գոհար Գասպարյանը, Նար Հովհաննիսյանը, Միհրան Երկաթը, Արշավիր Կարապետյանը, Տիգրան Լևոնյանը, Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի երգչախումբը (խմբավար՝ Ռուբեն Այվազյան):

²⁷⁶ 2008-ին տեղի ունեցավ “Զեմիրենի” ամերիկյան պրեմիերան՝ Վաչե Պարսումյանի և Գրիգոր Սաթմյանի ջանքերով:

Տ.Չուխաճյանը հայ երաժշտական թատրոնի առաջին կազմակերպիչն էր:

Հայկական առաջին օպերաների ստեղծումն ուղեկցվեց երաժշտական թատրոնի հիմնարկմամբ: Ազգային օպերային թատրոնի անհրաժեշտությունը Տ.Չուխաճյանը գիտակցեց դեռևս 1870-ականներին: Տ.Չուխաճյանի և Տ.Գալեմճյանի ղեկավարությամբ ստեղծված “Օսմանյան օպերային թատերախումբը” հայ իրականության մեջ բացառապես հայ արտիստներից կազմված անդրանիկ երաժշտական թատերախումբն էր (թատերախումբն առաջինն էր ողջ Մերձավոր Արևելքում), որի ձեռքում հայտնվեց երաժշտական ներկայացումներ բեմադրելու մենաշնորհը: Մերձավոր Արևելքում առաջին անգամ հայի հեղինակությամբ և հայի ղեկավարությամբ, բացառապես հայ արտիստների մասնակցությամբ բեմադրվում են օպերաներ: Ըստ Չուխաճյանի՝ խմբի խաղացանկը պիտի բաղկացած լիներ մի կողմից՝ արևմտավրոպական հեղինակների (մասնավորապես՝ Օֆենբախ, Դոնիցետտի) օպերետներից, մյուս կողմից՝ հայ կոմպոզիտորների գրած օպերաներից, սվլալ դեպքում՝ իր երեք կումիկական օպերաներից: Խումբը պիտի բեմադրություններով հանդես գար տեղում, մեկներ հյուրախաղերի՝ տարածելով հայկական օպերային արվեստը: Չուխաճյանի թատերախմբի ավանդույթները հետագայում շարունակում է կոմպոզիտորի առաջարկությամբ թատերախմբի ղեկավարությունն ստանձնած դերասան, ռեժիսոր, թատերական գործիչ Մերովբե Պենկյանը. խմբի երաժշտական մասի ղեկավարը Չուխաճյանն էր: Բացառիկ էր Պենկյանի թատերախմբի դերը հայ երաժշտական թատրոնի զարգացման գործում՝ նա հայ երաժշտությունը հնչեցրեց Թուրքիայի սահմաններից դուրս՝ Հունաստանում և Եգիպտոսում: Հետագայում այս գործունեությունը շարունակեց թատերական գործիչ, դերասան և ռեժիսոր Արշակ Պենկյանը՝ 1908-ին Կ.Պոլսում հիմնադրելով Օսմանյան երաժշտական թատրոնը: Տ.Չուխաճյան - Ս.Պենկյան - Ա.Պենկյան թատերախմբերի ստեղծագործական ավանդույթներն իրենց տրամաբանական շարունակությունը գտան հայրենիքում: ՀԽՍՀ ժողկոմխորհի 1932-ի մայիսի 13-ի որոշման համաձայն 1933-ի հունվարի 20-ին Երևանում Ալ. Մպենդիարյանի “Ալմաստ” օպերայի բեմադրությամբ իր դռները բացեց օպերայի և բալետի պետական թատրոնը:

Ցավոք, մենք չենք մարել մեր պարտքը Մասետոյի հիշատակի առջև:

1. Անհրաժեշտ է իրականացնել Տ.Չուխաճյանի Երկերի լիակատար ժողովածուի ակադեմիական հրատարակությունը: Կատարողներին անմատչելի են կոմպոզիտորի երկերի նոտաները: Հապաղելն անկարելի է, քանի որ Չուխաճյանի մատիտագիր ձեռագրերին սպառնում է ոչնչացման վտանգը. տասնամյակների ընթացքում խունացած՝ դրանք աստիճանաբար դառնում են դժվար ընթեռնելի:

2. Անհրաժեշտ է Երևանի Ալ.Մպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում բեմադրել “Չեմիրեն”, “Արիֆի խորամանկությունը”, “Ինդիանան” և “Քյոսե Քեչյան”:

3. Անհրաժեշտ է Երևանում հիմնադրել Տիգրան Չուխաճյանի թանգարանը:

Анна Асатрян – Историческое значение творчества Тиграна Чухаджяна (посвящается 175-летию юбилею со дня рождения). – Статья посвящена основоположнику армянской классической профессиональной композиторской школы, классику армянской музыки, основателю армянского музыкального театра, ге-

ниальному композитору, одаренному пианисту, талантливому дирижеру, заслуженному педагогу, активному музыкально-общественному деятелю Тиграну Чухаджяну (1837-1898), чье творчество знаменует целую историческую эпоху, в значительной мере обусловив дальнейшее развитие армянского музыкального искусства и оставив глубокий след в истории армянской классической музыки. Анализируются отдельные направления многожанрового наследия композитора: оперное творчество – первая армянская историко-романтическая опера “Аршак II”, триада комических опер – “Ариф”, “Кесе кехва”, “Леблебиджи Ор-Ор ага”, патриотическая “Индиана” и первая армянская опера-сказка “Земирэ”; камерная музыка – фортепьянные произведения и романсы, симфоническое наследие.

Anna Asartyan – *The historical significance of Dikran Tchouhadjian's creative work (to the 175th anniversary of birth)*. – The article is dedicated to Dikran Tchouhadjian (1837-1898), the founder of the Armenian classic professional school of composition, a classic of Armenian music, the originator of Armenian musical theatre, a genius composer, gifted pianist, talented conductor, merited pedagogue, active musical and public figure, whose creative work, marking an entire historical epoch, left a deep imprint in the history of Armenian classical music and predetermined to a considerable extent the further advance of Armenian music art. Analyzed are specific areas of the composer's multi-genre legacy: operatic art – the first Armenian historical-romantic opera “Arshak II”, the triad of comic operas – “Arif”, “Keusse Kehya”, “Leblebiji Hor-Hor Agha”, the patriotic “Indiana”, and the first Armenian opera-tale “Zemire”; chamber music – piano works and love songs, symphonic legacy.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԳՄԲԵԹ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

ԱԼԻՆԱ ՈՒԼԻԽԱՆՅԱՆ

Հայաստանի 6-7-րդ դդ. ճարտարապետության մեջ ու նրա զարգացման հետագա շրջափուլերում գմբեթավոր եկեղեցիների տարբեր հորինվածքները դառնում են առաջատար: Հայ ճարտարապետների ստեղծագործական մտքի հարըստության և բարձր վարպետության մասին են վկայում եկեղեցիների այն բազմազան տիպերն ու նրանց տարբերակները, որոնք ստեղծվեցին այս ժամանակաշրջանում: Ձևաստեղծումների նույնպիսի բարդ, սակայն առավել արգասաբեր ստեղծագործական որոնումների արդյունք են խաչագմբեթ եկեղեցիները: Այդ ուղղությամբ առաջին արդյունքը ընդունված է համարել Էջմիածնի տաճարը: Կառուցված լինելով 303 թ., այն վերակառուցման է ենթարկվել 5-րդ դարի վերջին և 7-րդ դարի սկզբին զարգացում են ապրում են Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնաձիգ խաչագմբեթ եկեղեցիներն իրենց հիմնական տիպերով ու բազմաթիվ տարբերակներով:

Այսպիսով, Էջմիածնի տաճարը արմատավորում է Հայաստանի կենտրոնաձիգ խաչագմբեթ եկեղեցիների մի տիպ, որում խաչթևերը կազմում են քառակուսի աղոթասրահի արտաքին պատերի նկատմամբ իրենց բազմանիստ ծավալներով առաջակարկառված չորս աբսիդները (արևելյանին կից են երկու ավանդատներ):

Էջմիածնի տաճարի հորինվածքային գաղափարը հետագա զարգացում է ստանում՝ հանգելով կենտրոնաձիգ-խաչագմբեթ եկեղեցիների սկզբունքորեն մի նոր հորինվածքային լուծման, որում չորս աբսիդներից կազմված խաչթևերը պարփակվում են ուղղանկյուն պարագծում: Առաջին փորձն այդ ուղղությամբ հանդիսանում է Ավանի տաճարը՝ կառուցված 591-602 թթ.: Մի փոքր ավելի ուշ, 618 թ. կառուցված Հռիփսիմեի տաճարում այդ լուծումն իր նախօրինակի համեմատությամբ մշակված ու հասցված է դասական կատարելության:

Ի տարբերություն Ավանի տաճարի, որի չորս անկյուններում ամփոփված ավանդատները հասակագծում կլոր են, Հռիփսիմեի տաճարում դրանք քառակուսի են, իսկ հարթ ճակատները մշակված են երկուական ուղղաձիգ որմնախորշերով: Սրանք բացահայտելով հանդերձ հատակագծի ներքին կառուցվածքը ու ծառայելով այլ նպատակների, միևնույն ժամանակ զուտ գեղարվեստական առաքելություն ունեն լույս ու ստվերով հարստացնում են ճակատների հարթությունները:

Կենտրոնաձիգ-խաչագմբեթ տաճարների տիպը Հայաստանում ներկայացված է 6-7-րդ դդ. թվագրվող մի քանի այլ հուշարձաններով: Դրանց թվին են պատկանում Թարգմանչաց վանքի (Էջմիածնի շրջանի Այգեշատ գյուղում), Արամուսի (Աբովյանի շրջան), Գառնահովտի (Թալինի շրջան), Միսավանի (Միսիանի շրջակենտրոն), Արծվաբերդի և Ջորաղիթի ս. Էջմիածին (պատմական Վասպուրա-

կանում), Արթիկի (մեծ), Հառիճի ս. Գրիգոր և Ոսկեպարի ս. Աստվածածին (բոլորը 7-րդ դարի եկեղեցիները: Պատկանելով նույն տիպին, այդ հուշարձաններում դրսևորված են որոշ առանձնահատկություններ:

Կենտրոնաձիգ-խաչագմբեթ եկեղեցու տիպը պատմական նույն ժամանակաշրջանում կիրառվել է նաև հարևան Վրաստանում՝ հանձին Աթենիի և Ջվարիի տաճարների: Դրանցից առաջինի հեղինակը Թողոսակ անունով հայ ճարտարապետն է եղել: Կան տվյալներ, որ նա մասնակցել է նաև Ջվարիի տաճարի կառուցմանը: Հորինվածքային սկզբունքների ընդհանրության շրջանակում դրանք ունեն նաև որոշակի ինքնուրույնություն, որով վրացականները տարբերվում են հայկականներից:

Ստեղծագործական անդուլ որոնումները 7-րդ դարի կեսերին հանգում են նորանոր հորինվածքային լուծումների, որոնք համապատասխանելով միննույն ֆունկցիոնալ նպատակին, հանդես են բերում զարմանալի հարուստ բազմազանությամբ:

Դարաշրջանի հայկական ճարտարապետության մեծագույն նվաճման, կենտրոնաձիգ խաչագմբեթ հորինվածքի սկզբունքորեն տարբեր, նորովի լուծման փայլուն օրինակ հանդիսացավ Ջվարթնոց տաճարը (642–652): Ի տարբերություն վերը քննարկված տիպերի, Ջվարթնոցի տաճարում կիսաշրջան դասավորված սյուներով կազմավորված (բացի արևելյանից, որտեղ հոծ պատ է) խաչթևերը պարփակված են ոչ թե ուղղանկյուն, այլ շրջանաձև (ավելի ճիշտ՝ բազմանիստ) պարագծի մեջ: Նույն դարի երկրորդ կեսին է հորինվել Իրինդի բազմախորան եկեղեցին, որոնց երկաստիճան բազմանիստ ծավալում գմբեթը բարձրանում է կենտրոնական մասում, իսկ տակի աղոթասրահը շրջապատված է կիսաշրջան արքայիներով (որոնցից իր չափերով ավելի մեծ արևելյան արքայի դառայում էր որպես ավագ խորան):

Չուգահեռաբար, սկսած դեռևս 5–7-րդ դդ. մշակվում է պարզ քառակուսի կամ խաչաձև հատակագծով գմբեթավոր փոքրաչափ եկեղեցական շենքերի մի առանձին խումբ, որում հորինվածքային ընդհանրության հետ միասին ակնհայտ են որոշակի տարբերություններ (Ղուսալույի ս. Գևորգ, Բջնիի ս. Մարգիս, Աշտարակի Կարմրավոր, Լմբատի ս. Ստեփանոս եկեղեցիները):

Հայաստանի 4–7-րդ դդ. ճարտարապետությունը, որ ընկած է միջնադարյան ճարտարապետության հաջորդ փուլերի հիմքում, անհնար է լիարժեք բնութագրել, առանց անդրադառնալու շինարվեստի հարցերին, քանի որ ամենուրեք, նաև Հայաստանում, ճարտարապետությունը զարգացումը պայմանավորված է երկրի բնական պայմանների (կլիմա, տեղանքի բազմազանություն, հաճախակի երկրաշարժեր) և կառուցման մեթոդների հետ սերտ կապակցությամբ ու փոխադարձ պայմանավորվածությամբ: Կառուցվածքի նոր մեթոդների արմատավորման բարդ պրոցեսը պատմականորեն համընկավ ֆեոդալական հասարակության սկզբնավորման և քրիստոնեական ճարտարապետության զարգացման հետ, ընթանալով աստիճանական յուրացման ու կատարելագործման ճանապարհով: Բնական քարերով (տուֆ, ֆելզիտային տուֆ, կրաքար, ավազաքար, բազալտ, անդեզիտներ, գրանիտ, մարմար) չափազանց հարուստ Հայաստանում, ճարտարապետության զարգացման նաև միջնադարյան փուլերում այն շարունակեց լինել հիմնական շինանյութ, հատկապես մոնումենտալ և աշխարհիկ շենքերի կառուցման համար:

Վաղ միջնադարում կատարվում է անցում անտիկ շրջանում լայնորեն գործադրվող չոր (անշաղախ) շարվածքից դեպի կապակցող նյութերով (կրաշաղախ, կրաբետոն) շարվածքը: Մա Հայաստանում, ինչպես մի ժամանակ Հռոմում, կարևոր հեղաշրջում հանդիսացավ շինարարական գործում: Այն նշանավորվեց քարե շարվածքի տեխնիկական նոր սկզբունքների արմատավորմամբ: Կամարային, թաղային և գմբեթային կոնստրուկցիաների կիրառությունը պայմանավորեց ճարտարապետական նոր ձևեր, ներքին ու արտաքին ճարտարապետության նոր լուծումներ: Քարե պատի շարվածքը Հայաստանում բնութագրվում է ինժեներական իմաստավորվածությամբ, նրա աշխատանքի ճիշտ պատկերացմամբ: Քարերը շարվածքում սոսկ երեսապատման միջոց չեն, այլ կրաբետոն միջուկի հետ կազմում են պատի մոնոլիտ զանգվածի բաղկացուցիչ, կոնստրուկտիվ մասը, մինևույն ժամանակ ունեն նաև դեկորատիվ դեր: «Միդիս» անունն ստացած այդ եռաշերտ շարվածքում կապակցությունն ուժեղացնելու նպատակով օգտագործել են լայնակի և երկայնակ կոչվող քարեր, իսկ առանձին դեպքերում պատի ամբողջ հաստության չափով տարանցիկ քարեր են դրվել, որպեսզի երկու երեսների միջև հուսալի կապ ստեղծվի: Կախված քարի վրա ազդող լարումների բնույթից և ուղղությունից՝ շինարարները կոնստրուկցիայի ամրության համար բացի ուղղաձիգ կարերից կիրառել են նաև թեք, աստամավոր, ձևավոր կարեր:

Կրաշաղախի և կրաբետոնի կիրառությունը, որպես կապակցող միջոց, լայն հնարավորություններ ընձեռեց տարբեր տարածությունները կամարով, թաղով, գմբեթարդով և գմբեթով ծածկելու համար: Եթե 4-5-րդ դդ. կամարները շենշտված պայտաձևություն ունեին, ապա հետագա դարերում այն դառնում է չափավոր:

Քննվող ժամանակաշրջանի հուշարձաններում կամարների, թաղերի, զրմբեթարդի ու գմբեթի շարվածքը մեծ մասամբ աչքի է ընկնում կառուցման բարձրորակությամբ ու ճշգրտությամբ: Այդ հանգամանքը վկայում է իրականացնող վարպետների հասուն հմտությունը, հիմնական շինանյութի՝ քարի լեզվին լիովին տիրապետելը: Այդ առանձնապես ակներև է գմբեթաշինության ասպարեզում:

Շենքերի դիմադրողականությունը (սեյսմոկայունությունը) երկրաշարժային ավերիչ ուժերի դեմ մշտապես գտնվել է կառուցողների ուշադրության կենտրոնում: Նրանք դրան հասնում էին ինչպես եկեղեցական շենքերի հատակագծային և ծավալատարածական հորինվածքի, այնպես էլ հակաերկրաշարժային մի շարք միջոցառումների շնորհիվ: Ա. Մարգարյանը և Յու. Թամանյանը, վերլուծելով Հայաստանի պատմական կառույցների սեյսմոկայունության հարցերը, նշում են այն կարևոր գործոնները, որոնք հաշվի են առել հայ վարպետները: Դրանցից են՝ շենքի՝ սեյսմիկ ուժերի ազդեցության ուղղության նկատմամբ բարենպաստ դիրքում տեղադրությունը, հիմնատակի գրունտների ընտրությունը, հիմքի տեղադրման խորությունը: Մեյսմիկ ուժերի ներգործությունը թուլացնելու համար հին վարպետները շենքերի հիմքերի տակ տեղադրել են ավազե կամ կավե բարձիկներ: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզել ենք, որ սեյսմիկ տեսանկյունից բավարար պայմաններում են գտնվում ամուր գրունտների վրա կառուցված կոշտ շինությունները:

Հայկական պատմական շինությունների կոնստրուկտիվ առանձնահատկությունների տեսական և փորձական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վաղ միջնադարյան հայկական եկեղեցիներից հակաերկրաշարժային ա-

ռավել բարձր հատկանիշներով աչքի են ընկնում կլոր հատակագծով կենտրոնագմբեթ եկեղեցիները: Դա պայմանավորված է կլոր շինությունների խիստ համաչափությամբ, ծանրության և կոշտության կենտրոնների համակներու հետևանքով պտտող մոմենտների բացակայությամբ և այդպիսի շինություններում պատի առանձին հատվածների փոխազդեցությամբ, քանի որ դրանք սովորական պատեւից ավելի ամուր են:

Հին վարպետները սեյսմոկայուն շինություններ կառուցելու նպատակով հաճախ են դիմել կլոր հատակագծերին: Շատ են կանգուն մնացած կլոր հատակագծով շինությունները: Բայց կան նաև այնպիսի կլոր շինություններ, որոնք ավերվել են երկրաշարժից՝ կոնստրուկտիվ անկատար լուծումների հետևանքով, ինչպես օրինակ Չվարթնոցի տաճարը (VIIդ), Վրաստանի Իշխանի եկեղեցին (VIIդ), Գազկաշենը (Xդ)²⁷⁷: Էսքիզային հատակագծի հիման վրա, պարզեցված սխեմայով կատարված Չվարթնոցի որմնասյունների հաշվարկը ցույց է տալիս նրանց խոցելիությունը սեյսմիկ ազդեցությունների դեպքում:

Կլոր հատակագծով շինություններից հետո բարձր սեսմոկայունությամբ աչքի են ընկնում բազմանկյուն հատակագծով եկեղեցիները, ընդ որում որքան մեծ է բազմանկյան կողմերի քանակը, այնքան բարձր է շինության սեյսմոկայունությունը: Դրա վկայությունն է այդ տիպի շինությունների մեծ մասի կանգուն վիճակը: Հայաստանի և Վրաստանի գմբեթավոր հին շինությունների մեծ մասը ունեն խաչաձև հատակագիծ, որի առաջացման հիմքում կարևոր դեր են խաղացել նաև հակասեյսմիկության պատկերացումները, այսինքն կենտրոնաձիգ-խաչագմբեթ եկեղեցիներն այդ առումով ունեն անկասկած մեծ առավելություններ:

Հռիփսիմեստիպ կենտրոնաձիգ-խաչագմբեթ տաճարներում գմբեթարդով ծածկված չորս աբսիդները՝ տեղավորված գմբեթատակ քառակուսու չորս կողմերում, կատարում են հենախորշերի դեր՝ իրենց վրա ընդունելով ու հավասարաչափ դեպի հիմքերը փոխադրելով գմբեթի բեռն ու կամարներից առաջացած արտահրման ճիգերը:

Հակաերկրաշարժային միջոցառումների թվին են պատկանում նաև շարվածքի մեջ փայտյա գերանների տեղավորումը (Էշմիաձնի և Տեկոքի տաճարներում), կառուցվածքի թեթևացման նպատակով կամարների, թաղերի և գմբեթների վրա լիցքի կատարումը՝ թեթև կրաբետոնով (պատրաստված պեմզայի կտորների կամ հրաբխային խարամի շաղախից) շարվածքի մեջ լիցքի տեղերում դատարկություններ առաջացնելով կամ բերանիվար կավե ամաններ (կարասներ, կժեր) տեղավորելով²⁷⁸:

Նույն նպատակին են ծառայում նաև պատերի առավել զանգվածային մասերում եռանկյունի որմնախորշերի կիրառումը (հռիփսիմեստիպ տաճարներում, Պտղնիում, Արուճում, Իրինդում, Արթիկի և Թալինի կաթողիկեներում): Որմնախորշերը միննույն ժամանակ գեղարվեստական նպատակների են ծառայում:

Քննվող ժամանակաշրջանում կարևորություն է ներկայացնում նաև եկեղեցիների ծածկի հարցը: Կտուրները հիմնականում ծածկվում էին կղմինդրներով, որոնք դրվում էին կրաշաղախի վրա ու լրացուցիչ կերպով ամրացվում գա-

²⁷⁷ *А.Л. Чураян, Ш.А. Джабуа*, Некоторые особенности центрически зданий, Тбилиси, 1954г, 59 стр.

²⁷⁸ *Հ.Խ. Խալիֆայան*, Շինարարական գործի կազմակերպումը միջնադարյան Հայաստանում, ՊԲՀ, թիվ 3, 1967թ., է. 210

մով (Զվարթնոց): Ջրերի ներթափանցումից պահպանելու նպատակով հունական տիպի հարթ կղմինդրների՝ սալենների միացման տեղերը ծածկվում էին ձևավոր կիսաշրջան կտրվածքի կղմինդրներով՝ կալիպտերներով: Կտուրի գագաթից միմյանց զուգահեռ դեպի ներքև իջնող ձևավոր կղմինդրների վերջին կղմինդրը հատուկ տիպի էր, հունական անտեֆիքսները հիշեցնող: Կղմինդրների չափերի փոքրությունը հնարավորություն է ընձեռնել ծածկել կոր մակերևույթներ: Այդ պատճառով Հայաստանի վաղմիջնադարյան եկեղեցիների գմբեթները նաև արտաքուստ սֆերիկ ձև ունեին (այդպիսիք պահպանվել են միայն Աշտարակի Կարմրավորում, Արագածի եկեղեցում): Սակայն հաճախ կղմինդր է ծածկի դեպքում հնարավոր չէր խուսափել խոնավության ներթափանցումից: Խոնավության ներթափանցումը կրաշաղախի մեջ և դրան հաջորդող սառցակալումը պատճառ էին հանդիսանում սկզբում տանիքի, իսկ հետո շինության փլուզման համար: Որպես կանոն փլուզումը սկսվում էր շինության հարավային կողմից: Հարավային կողմում արևի ճառագայթների տակ հալման պրոցեսը գիշերային ժամերին հերթագայվում էր սառցակալումով՝ պատճառ հանդիսանալով շինանյութի սիստեմատիկ քամիարման և քայքայման: Իսկ շինության հյուսիսային մասը մշտապես գտնվելով ստվերում, ավելի քիչ է ենթարկվել ջերմային տատանումների: X դարում Հայաստանում կղմինդրը փոխարինվեց ավելի ամուր նյութով, մասնավորապես, տուֆե սալիկներով:

Այսպիսով, վաղ միջնադարում ճարտարապետության զարգացմանը զուգընթաց մշակվեց քարի շինարարական նոր տեխնիկա, անցում կատարվեց չոր շարվածքից շաղախային շարվածքի՝ իր արտահայտությունն ստանալով եռաշերտ, կրաբետոնե միջուկով պատերում, հենարաններում, հակաեկրաշարժային կառուցածներում, ծածկերի կոնստրուկտիվ համակարգերում: Հակասեյամիկ միջոցառումներից են՝ բավականին կոշտ կոնստրուկտիվ համակարգի ընտրությունը, շինության առանձին մասերի պրոպորցիոնալ փոխհարաբերությունը, ընդհանուր քաշի ճիշտ բաշխվածությունը շենքի առանձին մասերում, շենքի վերևի մասի թեթևացում, տանիքային ծածկի զգալի թեթևացում: Գմբեթի թմբուկում, սեյսմոկայունությունը մեծացնելու նպատակով, արտաքինից և ներսից տեղադրվել է փակ քարե գոտի: Հաշվի առնելով Հայաստանի տարածքի սեյսմիկ բնույթը՝ շինարարները հազվադեպ են գմբեթը բարձր թմբուկի վրա տեղադրել:

Այդ առումով վաղ միջնադարյան շինարարական տեխնիկան հիմք ծառայեց ողջ միջնադարյան հայկական շինարվեստի համար, որը ճարտարապետության զարգացման հաջորդ փուլերում՝ 9–11-րդ, հատկապես 12–13-րդ դարերում ավելի բարձր կատարելության հասավ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թորամանյան, *Հայկական ճարտարապետություն*: Հ. 1, Երևան 1942թ.
2. Խավիախյան Հ.Խ., *Շինարարական գործի կազմակերպումը միջնադարյան Հայաստանում*: ՊԲՀ, թիվ 3, 1967թ., էջ 210
3. Սարգսյան Հ.Գ., *Հայաստանի 4-7-րդ դդ ինժեներական մի քանի հարցեր*: ԲՏՊ Հայաստանում, ԳԱԺ, 7, Երևան, 1979
4. Чураян А.Л., Джабава Ш.А., *Некоторые особенности центрически зданий*. Тбилиси, 1954г, 59 стр.

5. Մուշեղյան Գ.Հ., Հայկական քրիստոնեական և իր քանի հարցեր: ՊԲՀ, Թիվ 2, 1975թ, էջ 122

Алина Улиханян – О конструктивных особенностях древноармянских крестокупольных сооружений. – Анализ развития конструктивных форм древноармянских крестокупольных сооружений показал, что сейсмостойкость этих сооружений, простоявших много веков, не может быть объяснена одним лишь строительным мастерством, умением правильно применять строительные материалы. Это объясняется также и тем, что зодчие древней Армении создали некоторые принципы обеспечения сейсмостойкости древноармянских архитектурных сооружений. Они заключаются в переходе к разнообразным крестообразным композициям с купольным завершением и нахождении соответствующих этой идее форм, частей и пропорций сооружений, осуществлении антисейсмических поясов, укладываемых под балками перекрытий в каменных зданиях. В древности, строители для создания сейсмостойких сооружений, широко прибегали к круглым формам. В плане сейсмостойкости зданий, после зданий круглого очертания, которые наиболее сейсмостойкие, идут здания многоугольного очертания.

Alina Ulixanyan – About the Structural Peculiarities of the Old Armenian Crosswise-domed Buildings. – The analysis of the development of the structural forms of the old Armenian crosswise-domed buildings has shown that the seismic stability of these buildings that have existed for centuries, can't be accounted only for the building skills and the ability to apply the proper building materials. This is also due to the fact that the architects of old Armenia created several principles to provide the seismic stability of the old armenian architectural buildings. They have turned into different crosswise-domed buildings and formes, parts and proportions of the buildings, the realization of the antiseismic belts under the joists in the stone-buildings. In ancient times, the builders of the seismic buildings used round forms. Taking into consideration the seismic stability of the buildings, after the round contour, that are more stable, polygonal designs of the buildings are applying now.

Հ Ո Ք Ե Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՍՈՒԲՅԵԿՏԻ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՆՐԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱԶՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՏԵՐՄԻՆԱՆՏԵՐ

ԱՆՈՒՇ ՈՍԿԱՆՅԱՆ

Անձնային կարևորագույն բնութագրիչներից մեկը, որն առանձնացնում է օժտված երեխաներին, համարվում է նրանց ոչ ստանդարտ և յուրօրինակ մտքերի առաջացումը: Այդ ընդունակությունը հաճախ թույլ է տալիս լուծումներ գտնել ամենադժվար իրադրություններում և գործողություններում, ինչպես և օգտագործման նոր, արդյունավետ կերպով օգտագործել ամենատարբեր առարկաներն ու երևույթները: Հենց այդ պատճառով էլ, մեր կարծիքով, նրանց հաջողվում է ամենախրթին իրավիճակներում գտնել նոր և արդյունավետ լուծումներ: Օժտված երեխաների նշված յուրահատկությունները մեծիմասամբ հիմնավորվում են իրենց ստեղծագործական ընդունակություններով, որոնք թույլ են տալիս արտադրել նոր և ինքնատիպ մտքեր, ինչպես և նորարարությամբ՝ կապված այլ հեղինակների կողմից առաջարկվող ստեղծագործական ռեսուրսների հանդեպ զգայունությամբ և ընկալունակությամբ:

Չնայած այն բանին, որ ժամանակակից հոգեբանության մեջ բավականին մեծ ուշադրության են արժանանում ստեղծագործականությունը և ստեղծարարությունը, ներկայումս բացակայում է այն համընդհանուր կոնցեպցիան, որը բացատրում է ստեղծագործական գործողությունների ընթացքը, ինչպես և այն բազմաթիվ գործողությունների ամբողջությունը, որն ազդում է նրա վրա: Բացի այդ սուբյեկտի մտավոր և ստեղծագործական գործունեության հետազոտություններում մինչև վերջերս սովորաբար հիմնական ուշադրությունը դարձվում էր նոր մտքերի և որոշումների ստեղծման օրինաչափություններին, ինչպես և արդյունքի բովանդակային առանձնահատկությունների վերլուծությանը:

Նորարարության փուլային զարգացման սոցիալական խմբերում նրա առաջացման և խմբի մյուս անդամների կողմից ընկալման, իրագործման ու զարգացման հոգեբանական առանձնահատկությունները, գնահատումը, ինչպես և ներդրման ու գործնականորեն կիրառման հարցերը հետազոտման են ենթարկվել զգալիորեն ցածր մակարդակում: Մեր կարծիքով մտավոր ու ստեղծագործական գործունեության գործող համակարգային պատկերի ձևավորման համար անհրաժեշտ է ոչ միայն մտածողության և ստեղծագործության գործընթացային և արդյունքային ասպեկտների ուսումնասիրությունը, այլև ողջ ստեղծագործական գործունեության հետագա բազմակողմանի հետազոտությունը: Այդ դեպքում կարող է հաշվի առնվել տվյալ գործունեության միջուկի ինչպես գործընթացային և կառուցվածքային յուրահատկությունը, այնպես էլ նախապես կայացրած ստեղծագործական որոշումների հետ առկա հետադարձ կապը՝ նորարարություններ՝ տվյալ գործունեության օրինաչափությունների վրա: Նորարարական գործընթացների առաջացման, գործառույթավորման և տրանսֆորմացման հոգեբանա-

կան բացատրությունների ուսումնասիրությունները ներկայումս ակտիվացման փուլում են:

Ներկայացվող հոդվածում քննարկվում է սուբյեկտի նորարարության և կրեատիվության ուսումնասիրման պրոբլեմատիկան, որպես սուբյեկտի գործունեության արդյունավետությունն ապահովող գործոն ինչպես նոր մտքերի առաջացման, այնպես էլ նրանց ներդրման և իրականացման պայմաններում:

Ժամանակակից հոգեբանության շրջանակներում, մեծ ուշադրություն է դարձվում ստեղծարարության և ստեղծագործականության օրինաչափությունների ուսումնասիրմանը: Գիտական գրականության մեջ ներկայացված են բավականին տեսական և փորձնական հետազոտություններ նշված խնդրի շրջանակներում: Նորարարությունն էլ, իր հերթին, որպես հոգեբանական կատեգորիա ինտենսիվորեն սկսել է զարգանալ միայն վերջին տասնամյակում: Այդ իսկ պատճառով ստորև առավել մանրամասն կներկայացնենք սուբյեկտի նորարարության ուսումնասիրմանն ուղղված հետազոտությունները:

Ընդհանուր առմամբ նորարարությունը կարող է դիտարկվել որպես մարդու ընկալման, տարբերակման, ստեղծագործման և նոր ինքնատիպ մտքերի ներդրման ընդունակություն: Որոշ հեղինակների կարծիքով այն ենթադրում է համակարգից դուրս գոյություն ունեցող մտքերի որսը և դրանց ներմուծումը ինչպես և արդյունավետ կիրառման ընդունակությունը համակարգի ներսում²⁷⁹: Առանձնացվում է անձնային գործոնների մի շարք, որը մեծ ազդեցություն է գործում մարդու նորարարության չափանիշների վրա, որոնց շարքում են. խթանման պահանջումը, նորարարության ձգտում, հակասությունների, նորության, ինքնատիպ գործոնների հանդեպ զգայունություն, ռիսկի հակվածություն, նորարարության վերամշակման պատրաստակամություն, քննադատությունների հանդեպ անտարբերություն, փորձի առկայություն և այլն:

Գոյություն ունեն նորարարության սուբյեկտների տարբեր դասակարգումներ՝ պայմանավորված անձնային այս կամ այն առանձնահատկությունների արտահայտվածության մակարդակով՝ որոշող այլոց ստեղծագործական դրսևորումների ընկալման և ընդունման յուրահատկություններով: Այսպիսով՝ Է. Ռոջերսը առանձնացրեց նորարարական գործունեության սուբյեկտների տիպաբանություն՝ կախված նոր գաղափարների, որոշումների և տեխնոլոգիաների ներդրման և իրագործման մեջ նրանց ընդգրկվածության աստիճանից²⁸⁰: Այսպիսով նա առանձնացրեց.

- ✓ Նորարարներ՝ հակված գնալու ռիսկի հանուն նոր գաղափարների,
- ✓ Վաղ պահանջատերեր՝ նոր մտքերին անմիջապես արձագանքող, առանց ավելորդ ձգձգումների և ամբողջությամբ ընդունողներ,
- ✓ Ուշ մասսայական պահանջատերեր՝ ներկայացվող հիմնականում սկեպտիկների կողմից,
- ✓ Դանդաղկոտներ և «ուշացածներ», որոնք հիմնականում համարվում են կոնսերվատորներ:

²⁷⁹ **R. Grewal, R. Mehta, F.R. Kardes.** The role of the social-identity function of attitudes in consumer innovativeness and opinion leadership. *Journal of Economic Psychology*, Volume 21, Issue 3, June 2000, pp. 233-252

²⁸⁰ **M. Rogers.** Evolution: Diffusion of Innovations. *International Encyclopedia of the Social & Behavioral Sciences*, 2004, pp. 4982-4986.

Եվս մեկ դասակարգման շրջանակներում նորարարության գործընթացի մասնակիցները բաժանվում են հետևյալ դասակարգումների²⁸¹.

✓ 'Նորարարներ' նոր մտքերն ու առաջարկներն առավել ակտիվորեն ընդունող,

✓ Իմիատորներ, որոնք ենթարկվում են ավանդույթներիին, մեծամասնության կարծիքին և տիրող նորաձևությանը,

✓ Կրկնօրինակողներ, որոնք հակված են արդեն կատարած ընտրությունը կրկնել մի քանի անգամ:

Նոր գաղափարների հանդեպ վերաբերմունքից կախված՝ նորարարական գործընթացի մասնակիցներին տարբերակելու հնարավորություն ընձեռնող առավել հայտնի տեսություններից է «ադապտացիոն նորարարական» տեսությունը²⁸²: Նա բացատրում է տարբեր անհատականությունների վերաբերմունքի տարբերությունը տրված ստեղծագործական խնդիրների լուծման գործընթացում: Այդ տեսությունը ձևավորվեց ԱՄՆ-ում 80-ական թվականներին, երբ այնտեղ լայնորեն տարածում ունեին փոքր բիզնեսները: Այդ տեսության շրջանակներում հիմնական շեշտը դրվում է ոչ թե անձի ստեղծագործական և նորարարական բնութագրիչների, այլ նրա մտածողության ոճի վրա: Հիմնականում հետազոտվում է նորարարական գործունեության պայմաններում որոշման ընդունման և մտածական գործընթացների ինքնատիպության դրակը: Այդ տեսության համաձայն նորարարության գործընթացի յուրաքանչյուր անդամ զբաղեցնում է իր համապատասխան սանդղակը՝ ադապտոր-իննովատոր: Առանձնացվում են անձնային նորարարության 2 տեսակներ՝ կոզնիվ (իմացական) և սենսոր (զգայական)²⁸³:

Իմացական նորարարությունը նորի հանդեպ վերաբերմունքն է՝ արտահայտված նրա ձևավորման օրինաչափությունների ուսումնասիրման և ընդհանրապես այդ նորի հետ փոխազդեցության գործունեությունից ստացվող արդյունքից ու փորձից բավարարված լինելու տենդենցով: Բացի այդ սուբյեկտը կարող է կրկնակի բավականություն ստանալ աշխատանքի արդյունքից՝ ստացված տեղեկատվությունից, նրա վերակառուցումից և ավելացումից: Կոզնիտիվ նորարարությունը հիմնավորվում է առարկաների, երևույթների, գործընթացների, փաստերի և նրանց միջառարկայական կապերի հանդեպ նոր գիտելիքների ստացման պահանջմունքով: Նշված տենդենցի ռեալիզացումը խթանում է սուբյեկտի մտածական գործունեությունը և իմացական ոլորտի զարգացումը: Ջգալիորեն այն վերաբերվում է նաև օժտված երեխաներին, որոնց մոտ մեծիմասամբ բավականին վառ է արտահայտված նոր գիտելիքներ ձեռքբերելու պահանջմունքը:

Ներկա ժամանակներում ինտենսիվորեն քննարկումներ են ընթանում այն հարցի շուրջ, թե ինչպես են միմյանց հետ փոխապայմանավորված «նորարարությունը» և «ստեղծագործականությունը»: Դրա հետ կապված գիտական գրականության մեջ առանձնացնում են մի քանի տեսակետներ: Նրանցից մեկում ստեղ-

²⁸¹ *Y. Harrison, J.A. Horne*, One Night of Sleep Loss Impairs Innovative Thinking and Flexible Decision Making. *Organizational Behavior and Human Decision Processes*, Volume 78, Issue 2, May 1999, pp. 128-145.

²⁸² *M.J. Kirton*, Adaptors and innovators—Why new initiatives get blocked. *Long Range Planning*, Volume 17, Issue 2, April 1984, pp. 137-143.

²⁸³ *T. Hirunyawipada, A.K. Paswan*, Consumer innovativeness and perceived risk: implications for high technology product adoption. *Journal of Consumer Marketing*, Volume: 23 Issue: 4; 2006, pp. 182-198.

ծագործականությունը դիտվում է որպես նորարարության բաղադրիչ մասը: Այսպես, Մ. Ուետսը գտնում է, որ նորարարը բավականին բարձր ինչպես ստեղծագործականության, այնպես էլ նորարարության բարձր մակարդակով օժտված մարդ է, որն ընդունակ է ոչ միայն ստեղծագործել նոր, ինքնատիպ մտքեր, այլև իրագործել դրանք գործնական ոլորտում²⁸⁴: Չնայած սերտ կապերին՝ նրանց միջև գոյություն ունեն նաև տարբերություններ:

Կրեատիվությունն առաջին հերթին կապված է նոր ու հավանական օգտակար մտքերի ստեղծագործման հետ: Այդ մտքերով կարելի է կիսվել այլոց հետ, սակայն նորարարություն համարվում են միայն այն ժամանակ, երբ արդեն կիրառվում են գործնականում: Այդ պատճառով ստեղծարարությունը կարելի է համարել նորարարության «առաջին քայլը»: Ջ. Հիպը տալիս է կրեատիվության ինքնատիպ մեկնաբանություն՝ այն դիտարկելով որպես մտքերի և կոնցեպցիաների մի ամբողջական համակարգ, որոնք ծառայում են որպես նորարարության գործնական փուլերի հիմք²⁸⁵: Տիտսը կրեատիվությունը դիտարկում է որպես հավանական նոր մտքերի առաջացումը դեռևս միայն հեղինակի մտքի մեջ²⁸⁶: Այդ դեպքում նորարարությունը մարդու ընդունակությունն է կոգնիտիվ, իսկ անհրաժեշտության դեպքում նաև վարքային մակարդակում բավարարել այդ ստեղծագործական մտքերի առաջացումը, ընկալումը և իրականացումը: Նորարարության ներմուծման և իրագործման փորձը ցույց է տալիս, որ այդ ճանապարհին բավականին լուրջ դժվարություններ են հանդիպում: Այդ դժվարությունը կարող է պայմանավորված լինել նորարարության գործընթացի մասնակիցների մտածողության ճկունությամբ: Այդ երևույթի հետ կապված կարող է առանձնացվել մտածողության մեկ այլ տեսակ՝ «նորարարական մտածողություն», որը հեղինակների մի մասը նույնականացնում է ճկունության և ստեղծագործականության հետ, որը դրսևորվում է անընդհատ փոփոխվող իրականության պահանջներին հարմարվելու և պլաններն ու ծրագրերը վերակառուցելու ունակությամբ:

Ստեղծագործական-նորարարական գործընթացում հիմնականում ընդգրկվում ենք ինչպես նոր մտքերի առաջացումը, այնպես էլ նրանց կատարելագործումն ու հետագա իրականացումը: Մրա հետ կապված՝ բավականին կարևոր է համարվում համատեղ ստեղծագործական գործունեությունը և մտքերի փոխանակությունը:

Համատեղ ստեղծագործական և նորարարական գործունեությունը, տարբերն ու էտապները, ինչպես նաև մտքերի փոխանակման գործընթացի հոգեբանական օրինաչափությունները ակտիվորեն քննարկվել են ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայրենական հոգեբանության մեջ: Այսպես, Յ.Ա. Պոնամորյովը մասնանշում էր մեկ մարդու ստեղծագործական կարողությունների ազդեցության առանձնահատկությունները մյուսի ստեղծագործական հնարավորությունների վրա. «Խմբային որոշման ժամանակ հնարավոր պաշարները, որոնք դրսևորվում են խմբի մեկ անդամի կողմից, կարող են նույն խմբի ցանկացած մյուս անդամի համար «հուշում» հանդիսանալ և կիրառվել»²⁸⁷:

²⁸⁴ *M.A. West*, Creativity and Innovation in Organizations, Management of. International Encyclopedia of the Social & Behavioral Sciences, 2004, Pages 2895-2900.

²⁸⁵ *J. Heap*, 1989. The Management of Innovation and Design., Cassell, London.

²⁸⁶ *P. Titus*, 2000. Marketing and the creative problem-solving process. Journal of Marketing Education 22 3, pp. 225-235.

²⁸⁷ *Я.А. Пономарёв*, Психология творчества. М.: МПСИ, 1999.

Հուշման մեթոդը լայնորեն կիրառվում է ստեղծարարության ուսումնասիրման գործընթացում²⁸⁸: Առանձնացվեցին հուշման ամենատարբեր տեսակներ (ուղիղ և անուղիղ), ինչպես և վերլուծվում էր հիմնական խնդրի լուծման հիման վրա ընթացիկ հարցերի լուծման սկզբունքների տարածման մեխանիզմները: Նկարագրվում էին պայմաններ, որոնք ազդեցություն էին գործում հուշման ընթացքի վրա: Բացի այդ Ս.Լ. Ռուբինշտեյնը իրականացրեց անուղիղ խնդրից դեպի հիմնական հարցի լուծումը տանող օրինաչափությունների վերլուծությունը²⁸⁹: Դրված խնդրի լուծման գործընթացի վրա ազդող հուշման հետազոտությունների ժամանակ վերլուծության ենթարկվեցին նաև հուզական և մոտիվացիոն գործոնները, որոնք մեծ դեր ունեն սուբյեկտի մտածական գործունեության վրա փորձագետի հետ մտքերի և տեղեկատվության փոխանակման գործընթացում: Այսպիսով, ընդգծվեց տևական հետաքրքրության և ուշադրության կենտրոնացման փաստը խնդրի լուծման գործընթացում, արդյունավետ լուծում գտնելու համար: Ինչպես և ուշադրություն հասկացվեց առաջատար խնդրի նորույթի և անսպասելիության էֆեկտի վրա: Վերջինս վկայում է ստեղծագործական մտածական գործընթացի վրա ազդող հուզական գործոնների հանգամանորեն վերլուծության անհրաժեշտության մասին: Նշված հետազոտությունների արդյունքները թույլ են տալիս ընդլայնել գիտական պատկերացումները համատեղ նորարարական և ստեղծագործական գործունեության յուրահատկության և դետերմինանտների մասին: Խմբային ստեղծագործական գործունեության յուրահատկությունների ուսումնասիրման մեջ զգալի ներդրումներ ունեն մտածողության իմաստային տեսության կողմնակիցները:

Օ.Կ. Տիխոմիրովը մատնանշում էր այն, որ ցանկացած ինտելեկտուալ գործունեությունն իր հերթին համարվում է համատեղ. «Նախքան մտածական գործունեությունը անհատականի և համատեղի բաժանելը անհրաժեշտ է հիշել նրանց պայմանականության մասին. և խնդրի անհատական լուծման ժամանակ հաշվի են առնվում նաև այլոց մտածողության արգասիքները. այն միշտ տարբեր մակարդակներում կողմնորոշված է դեպի այլ անհատը»²⁹⁰:

Խմբային ստեղծարարության և մտքերի փոխանակման առավել հայտնի հայրենական կոնցեպցիաներից մեկը համարվում է մտային գրոհի²⁹¹ և սինեկտիկայի²⁹² կոնցեպցիան: վերջինիս հեղինակները մատնանշում էին ստեղծագործական գործունեության այդ տեսակի առավելությունները: Մակայն ցուցանիշների մեծամասնության վերլուծությունները ցույց տվեցին, որ մտային գրոհը՝ համեմատած սուբյեկտի անհատական ստեղծագործական գործունեության հետ, առավել քիչ արդյունավետ է²⁹³:

Կատարված հետազոտությունները վկայեցին այն մասին, որ նոմինալ փորձարարական խմբի աշխատանքի արդյունավետությունը (նոմինալ համարվում է այն խումբը, որի անդամները հանձնարարությունները կատարում են

²⁸⁸ *А.Н. Леонтьев, Я.А. Пономарёв, Ю.Б. Гиппенрейтер*, Опыт экспериментального исследования мышления. Хрестоматия по общей

²⁸⁹ *С.Л. Рубинштейн*, О мышлении и путях его исследования. М.-Л., 1958

²⁹⁰ *О.К. Тихомиров*, Психология мышления. М.: МГУ, 1984.

²⁹¹ *A.F. Osborn*, Applied imagination. New York: Shribner, 1957.

²⁹² *W.J. Gordon*, Synectics: the Development of Creative Capacity. Harper, New York, 1961.

²⁹³ *M. Diehl, W. Stroebe*, Productivity loss in idea-generating groups: tracking down the blocking effect. Journal of Personality and Social Psychology, 1991, 61, pp. 392-403.

միմյանցից անկախ՝ չունենալով իրար հետ շփվելու և ինֆորմացիայով փոխանակվելու հնարավորություն): Զգալիորեն բարձրանում է ուղեղային գրոհի խըմբային աշխատանքների արդյունավետությունը, որտեղ իրականացվում են աշխատանքի այն բոլոր պահանջները, որոնք ձևակերպել է Ա. Օսթրոնը: Մտային գրոհի աշխատանքների ժամանակ կարող է նկատվել ստեղծագործական գործունեության արդյունավետության անկում: Ինչը չի կարելի ասել դիադներով աշխատելու դեպքում²⁹⁴: Այդ դեպքում հետաքրքրության են արժանացվում գիտական վերլուծությունները, որտեղ հիմնական ուշադրությունը դարձվում է մտքերի փոխանակման գործընթացում դիադների փոխազդեցության օրինաչափությունների ուսումնասիրությանը:

Մեր կողմից կատարված հետազոտությունների հիմնական նպատակն է մտքերի փոխանակման պայմաններում համատեղ ստեղծագործական և նորարարական գործունեության յուրահատկությունների և մեխանիզմների ուսումնասիրումը:

I փուլ – Առաջին փուլում մենք վերլուծեցինք սուբյեկտի ստեղծագործական ամենատարբեր չափանիշների վրա մտքերի փոխանակման գործընթացի ներգործության յուրահատկությունները, որի ընթացքում վարիացվեցին փորձարկվողների առաջարկած խթանիչ մտքերի բովանդակությունը, ինչպես և մտքերի փոխանակման գործընթացի կազմակերպման կոնկրետ տեսքը: Խթանիչ մտքերը ստորաբաժանվեցին 4 իմաստային կատեգորիաների.

- Օրիգինալության ցածր մակարդակով
- Օրիգինալության բարձր մակարդակով
- Ագրեսիվ բովանդակությամբ
- Զվարճալի բովանդակությամբ:

Փորձարկվողներից յուրաքանչյուրին ներկայացվում էր վերոհիշյալ խմբերից մեկին պատկանող որևէ նյութ: Արդյունքները ցույց տվեցին, որ նրանց վրա առավել դրական ազդեցություն թողնում են ստեղծագործական գործունեության օրիգինալ և, ի գարմանս մեզ, զվարճալի և լկտի բովանդակության նյութերը: Առանձնացվեցին նաև համատեղ ստեղծագործական գործունեության փոխազդեցության սպեցիֆիկ մեխանիզմներ. Կոգնիտիվ հարստացման մեխանիզմ, «Ստեղծագործական հուզական ֆոնի» փոխանցման, տարածման մեխանիզմ, Մեփական ստեղծագործական արդյունքների և գործընկերոջ նման հնարավորությունների բնութագրիչների համեմատության մեխանիզմ:

Խմբային ստեղծագործական գործունեության մասնակիցների միջև մտքերի յուրացման, ընկալման, գնահատման և հնարավորինս մոդիֆիկացման գործընթացների առավել խորը ուսումնասիրության համար մեր կողմից նախաձեռնվեց լրացուցիչ էքսպերիմենտալ հետազոտություն:

II փուլ – Հավելյալ հետազոտության հիմնական նպատակը սուբյեկտի նորարարության և կրեատիվության պարամետրերի միջև գոյություն ունեցող կապերի, ինչպես նաև նրանց կողմից «ուրիշների» ստեղծագործական մտքերի յուրացմանն ու դրանց կատարելագործմանն ուղղված կոնկրետ մեթոդների օգտագործման վերլուծությունն էր: Սուբյեկտի անձնային նորարարությունը դրականորեն կորելյացվում է այն բանի հետ, թե որքան հաճախ և ինտենսիվորեն է նա

²⁹⁴ *A.R. Dennis, M.L. Williams*, Electronic brainstorming: Theory, research and future directions. Group creativity/ P. B. Paulus [Ed.], New York, NY: Oxford University Press, 2003.

կատարելագործում և արդիականացում և, հետևաբար, ընդունում և յուրացում «օտար» ստեղծագործական մտքերը:

Կրեատիվության ցուցիչների դիմամիկայի ուսումնասիրությանն ուղղված հետազոտական հանձնարարությունների մեջ ընդգրկված էին այնպիսիները, որոնք մտնում էին Գիլֆորդի ստեղծագործական մտածողության «յուրահատուկ օգտագործման» վերբալ թեստի մեջ²⁹⁵: Որպես խթանիչ նյութ հանդիսանում էր հետազոտության առաջին փուլում ընտրված նախապես տպագրված տասնհինգ օրիգինալության բարձր մակարդակ ունեցող դատողություններից: Խթանիչ շարքերի ընտրության գործընթացում որպես օրիգինալության չափանիշ ընտրվեց ընդհանուր ցանկից առավել հազվադեպ հանդիպող դատողության ստատիստիկական²⁹⁶:

Հետազոտությունը բաղկացած էր երկու փուլից: Առաջին փուլում հետազոտվողներին առաջարկվեց մտածել իրենց համար հայտնի առարկայի՝ սովորական տպագիր թերթի որքան հնարավոր է շատ օրիգինալ օգտագործման տարբերակներ: Հանձնարարության երկրորդ մասն իրականացնելուց առաջ նրանք ստացան երկրորդ առարկայի՝ փայտե քանոնի վերաբերյալ 15 արդեն նախապես հետազոտության այլ մասնակիցների կողմից առաջարկված տպագրված խթանիչ մտքերի օրիգինալ հատկանիշների ցանկ: Այնուհետև նրանց հանձնարարվեց սահմանափակ ժամանակահատվածում ինքնուրույն մտածել այդ առարկայի յուրահատուկ կիրառման մաքսիմալ հնարավոր տարբերակներ: Ընդ որում հետազոտվողները կարող էին խթանիչ նյութից ստացված տեղեկատվությունը օգտագործել ըստ իրենց հայեցողության: Մի կողմից վերլուծվեցին կրեատիվության երեք հիմնական չափանիշներ՝ արտադրողականություն, ճկունություն և ինքնատիպություն:

Այդ պարամետրերը առանձին-առանձին դուրս էին հանվում էքսպերիմենտի յուրաքանչյուր փուլից: Նորարարության մակարդակի չափման համար կիրառվեց Մ. Կյուրտոնի թեստը: Բացի այդ մեր կողմից դիտարկման ենթարկվեց «օտար» մտքերի քանակը, որոնք գրանցվեցին փորձարկվողների կողմից ինչպես ուղիղ, այնպես էլ փոփոխված տարբերակով: Մեզ հետաքրքրեց նաև, թե ինչ կոնկրետ մեխանիզմներով են փորձարկվողներն օգտագործում «օտար» մտքերը սեփական ստեղծագործական գործունեության շրջանակներում: Հետազոտությանը մասնակցում էին 82 փորձարկվողներ՝ 50 կին և 32 տղամարդ:

Խմբային ստեղծագործական գործունեության պայմաններում սուբյեկտի կրեատիվության և նորարարության միջև կապերն ուսումնասիրելու համար իրականացվեց կորելյացիոն վերլուծություն: Հավելյալ կերպով վերլուծությանը կցեցինք խթանիչ մտքերի ընդհանուր քանակը, որտեղ ընդգրկված են հետազոտվողների պատասխանները ինչպես նախնական, այնպես էլ մոդիֆիկացված տարբերակով: Արդյունքները նշված են աղյուսակ 1-ում:

Նրանք վկայում են անձի կրեատիվության և նորարարության կապերի, ինչպես նաև «օտար» մտքերի կիրառման հակվածության և նրա կրեատիվության միջև զգալի կորելյացիոն կապերի բացակայության մասին: Նորարարության ցու-

²⁹⁵ *И.С. Аверина, Е.И. Шеблянова*, Вербальный тест творческого мышления “необычное использование“. М.: Соброрь, 1996.

²⁹⁶ *J.P. Guilford*, Traits of Creativity. Creativity and its Cultivation/ H.G. Anderson [ed.], Harper, 1959, pp. 142-161.

ցանիշների և խթանիչ մտքերի մոդիֆիկացման քանակի միջև կորելյացիան դիտարկվեց դրական և արդյունավետ ($p < 0,05$):

Դա կարող է դիտարկվել որպես այն բանի ապացույց, որ «օտար» ստեղծագործական արդյունքների կիրառումը սեփական ստեղծագործականության մեջ կարող է ծառայել սուբյեկտի նորարարության անուղղակի ցուցիչ:

Աղյուսակ 1

Կրեատիվության, նորարարության և «օտար» մտքերի կիրառման պարամետրերի միջև կորելյացիաներ

	1	2	3	4	5	6	7	8	9
Արտադրողականություն I փուլ	1.000	.465**	.086	.577**	.496**	.137	-.008	.195	.229
Ճկունություն I փուլ		1.000	.335*	.346**	.609**	.102	.030	.044	.056
Բնքնատիպություն I փուլ			1.000	.210	.103	.130	-.038	.074	.064
Արտադրողականություն II փուլ				1.000	.695**	-.062	-.135	.155	.189
Ճկունություն II փուլ					1.000	.143	-.018	.080	.086
Բնքնատիպություն II փուլ						1.000	.044	-.070	.085
Ուղիղ կապվածություն							1.000	.284	-.171
Մոդիֆիկացիա								1.000	.273*
Նորարարություն									1.000

** $p < 0.01$, * $p < 0.05$

Մեր կարծիքով մոդիֆիկացիայի գործընթացը սուբյեկտի կողմից «օտար» մտքերի կատարելագործումն իրականացվում է շատ դեպքերում ի շնորհիվ վերոհիշյալ կոգնիտիվ հարստացմանը, որը նպաստում է խնդրային ոլորտի մասին սուբյեկտի պատկերացումներին, որի շրջանակներում ընթանում է նրա ստեղծագործական գործունեությունը, ինչպես և նրա պատկերացումները ստեղծագործական գործունեության գործընկերների վերաբերմունքի մասին: Առանձնացրինք կոգնիտիվ հարստացման հետևյալ տեսակները.

- Սուբյեկտի կողմից առարկայական ոլորտի մասին նոր տեղեկատվության և գիտելիքների ստացում

- Խթանիչ մտքերի վերլուծության հիման վրա փորձարկվողների բացահայտում՝ տրված խնդրի վերլուծությանն ուղղված գործողությունների և ուղիների բացահայտման միջոցով

- Փորձարկվողների և իր ստեղծագործական գործընկերոջ մտքերի և անձի վերաբերմունքի գնահատականի չափանիշների փոփոխություն:

Կոգնիտիվ հարստացման նշված մեխանիզմները վառ կերպով կարող են դրսևորվել օժտված երեխաների ստեղծագործական մտածական գործունեության շրջանակներում, որոնք տարբերվում են տեղեկատվությունն արագ ընկալելու, վերլուծելու և նրա հիման վրա համապատասխան յուրօրինակ մտքերի, առաջարկությունների և գաղափարների վերարտադրման ունակությամբ:

Օժտված երեխայի ստեղծագործականությունը և նորարարությունը զգալիորեն դրսևորվում է նրա ստեղծագործական գործունեության մեջ, որը հաճախ ընթանում է այլ մարդկանց հետ (ծնողներ, ուսուցիչներ, հասակակիցներ) մտքերի փոխանակման փոխազդեցության պայմաններում: Այդ պատճառով մտքերի փոխանակման գործընթացի յուրահատկությունների հետազոտությունը կարող է մանկական կրեատիվության և նորարարության զարգացման էության և դետերմինանտների մասին գիտական պատկերացումների ընդլայնման արդյունավետ մեթոդ լինել:

Օժտված երեխաների մոտ նշված ընդունակությունների դրսևորման յուրահատկությունները հիմնականում պայմանավորված են նրանց անձի կառուցվածքային և գործառության յուրահատկությունների հետ: Հետևաբար այդ յուրահատկությունների բազմակողմանի վերլուծությունը անհնար է պատկերացնել առանց նրանց անձի, ինչպես և նրա զարգացման և գործառության վրա ազդող հիմնական սոցիալ-մշակութային գործոնների խորը ուսումնասիրության: Օժտված երեխաների կրեատիվության և նորարարության զարգացումը կարող է տեղի ունենալ ինչպես ուղիղ (հատուկ կազմակերպված դասընթացներ), այնպես էլ անուղղակի (շփում սոցիումի հետ, խաղեր, ամենատարբեր թեմաներով զրույցներ) ազդեցության հետևանքով: Մեր կարծիքով նրանց անձնային զարգացման առավել արդյունավետ տարբերակը հանդիսանում է վերոհիշյալ տարբերակների համակցված ներգործությունը երեխայի անձի վրա: Ներկայացված ուսումնասիրման մեջ ստացված հետազոտական տվյալները կարող են օգտագործվել նման փոխազդեցության գործնական մեթոդների մշակման ժամանակ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Grewal R., Mehta R., Kardes F.R., *The role of the social-identity function of attitudes in consumer innovativeness and opinion leadership*. Journal of Economic Psychology, Volume 21, Issue 3, June 2000, pp. 233-252
2. Rogers M., *Evolution: Diffusion of Innovations*. International Encyclopedia of the Social & Behavioral Sciences, 2004, pp. 4982-4986.
3. Harrison Y., Horne J.A., *One Night of Sleep Loss Impairs Innovative Thinking and Flexible Decision Making*. Organizational Behavior and Human Decision Processes, Volume 78, Issue 2, May 1999, pp. 128-145.
4. Kirton M.J., *Adaptors and innovators—Why new initiatives get blocked*. Long Range Planning, Volume 17, Issue 2, April 1984, pp. 137-143.
5. Hirunyawipada T., Paswan A.K., *Consumer innovativeness and perceived risk: implications for high technology product adoption*. Journal of Consumer Marketing, Volume: 23 Issue: 4; 2006, pp. 182-198.
6. West M.A., *Creativity and Innovation in Organizations*. Management of International Encyclopedia of the Social & Behavioral Sciences, 2004, Pages 2895-2900.
7. Heap J., 1989. *The Management of Innovation and Design*. Cassell, London.
8. Titus P., 2000. *Marketing and the creative problem-solving process*. Journal of Marketing Education 22 3, pp. 225-235.
9. Пономарёв Я.А., *Психология творчества*. М.: МПСИ, 1999.

10. Леонтьев А.Н., Пономарёв Я.А., Гиппенрейтер Ю.Б., *Опыт экспериментального исследования мышления*. Хрестоматия по общей
11. Рубинштейн С.Л., *О мышлении и путях его исследования*. М.-Л., 1958
12. Тихомиров О.К., *Психология мышления*. М.: МГУ, 1984.
13. Osborn A.F., *Applied imagination*. New York: Shribner, 1957.
14. Gordon W.J., *Synectics: the Development of Creative Capacity*. Harper, New York, 1961.
15. Diehl M., Stroebe W., *Productivity loss in idea-generating groups: tracking down the blocking effect*. Journal of Personality and Social Psychology, 1991, 61, pp. 392-403.
16. Dennis A.R., Williams M.L., *Electronic brainstorming: Theory, research and future directions*. Group creativity/ P. B. Paulus [Ed.], New York, NY: Oxford University Press, 2003.
17. Аверина И.С., Щебланова Е.И., *Вербальный тест творческого мышления "необычное использование"*. М.: Соброрь, 1996.
18. Guilford J.P., *Traits of Creativity*. Creativity and its Cultivation, H.G. Anderson [ed.], Harper, 1959, pp. 142-161.

Ануш Восканян – Инновационность и креативность субъекта как детерминанты успешности его продуктивной деятельности. – Креативность и инновационность одарённого ребёнка в значительной степени проявляется в его творческой деятельности, которая зачастую протекает в условиях взаимодействия и обмена идеями с другими людьми (родителями, учителями, сверстниками). Поэтому исследование особенностей процессов обмена идеями может явиться эффективным методом расширения научных представлений о сущности и детерминантах развития детской креативности и инновационности.

Специфика проявления указанных способностей у одарённых детей обусловлена в значительной степени структурными и функциональными особенностями их личности. Поэтому всесторонний анализ этой специфики невозможен без глубокого исследования их личности, а также основных социокультурных факторов, оказывающих влияние на её развитие и функционирование. Эффект в развитии креативности и инновационности одарённого ребёнка может быть достигнут в результате как прямого (направленного непосредственно на развитие указанных способностей), так и опосредованного (направленного на формирование наиболее благоприятных для их развития социальных, экономических и пр. условий) воздействия.

Однако наиболее продуктивным, на наш взгляд, является комбинированное комплексное развивающее влияние на его личность, объединяющее оба из вышеуказанных форм воздействия. В представленном исследовании были получены экспериментальные данные, которые могут быть использованы при разработке практических методов такого воздействия.

Anush Voskanyan – Subject's innovation and creativity as a determinants of succes of his productive activities. – The creativity and innovativeness of a gifted child largely manifests in his creative work, which often occurs in interaction and exchange of

ideas with other people (parents, teachers, peers). Therefore, investigation of the features of processes sharing ideas could be an effective method of expanding scientific knowledge about the nature and determinants of child creativity and innovation. The specificity of these manifestations of abilities in gifted children are caused largely by structural and functional characteristics of their personality. Therefore, a comprehensive analysis of specificity is not possible without a thorough investigation of their personality, as well as major social-cultural factors that influence its development and function.

Effect in the development of creativity and innovation of a gifted child can be achieved as a result of both direct and indirect.

However, the most productive thing, in our opinion, is the combined complex developmental influence on his personality, that combines both of above forms of impact.

In the present research were the experimental facts, which can be used in development of practical methods such exposure.

**ՕՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՈՃԵՐԸ ՈՐՊԵՍ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆ**

ԼԻԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՅՄԱՆ

Երեխայի զարգացումը պայմանավորված է, առաջին հերթին, զարգացման սոցիալական իրավիճակով, ինչը իրականացվում է ընտանիքում ծնողների կողմից համապատասխան ոճերի կիրառմամբ (6):

Երեխայի վերաբերմունքը աշխարհի, իր իսկ հանդեպ, նրա ինքնազգացողությունը որոշվում է ծնողական դաստիարակության բնույթով: Մակայն այս իրավիճակը շատ հարցեր է առաջ քաշում, որոնց պետք է պատասխան գտնել: Ո՞րն է դաստիարակության տարբեր ոճերի դերը: Ի՞նչ նշանակություն ունեն երեխայի սեռը, տարիքը, հոր և մոր դիրքերը: Ի՞նչ ազդեցություն ունի ծնողների փորձը դաստիարակչական գործընթացի վրա:

Այս հարցերին պատասխանելու համար անցկացվեց մի հատուկ հետազոտություն, որում վերլուծված է կապը ծնողական դաստիարակության ռազմավարության ու ընտանիքում երեխայի ինքնազգացողության բնույթի միջև (1): Օնոլական դաստիարակության ռազմավարությունը և կիրառած դաստիարակչական ոճերն ունեն կոմպլեքսային բնույթ: Դրանց մեջ դիտարկվում են .

- նպատակները, որոնք ուղղորդում են դաստիարակչական գործընթացը,
- երեխայի հետ փոխազդեցության ոճերը,
- երեխայի վարքի գիտակցումը, ախտորոշումը, իմաստավորումը, գնահատումը,
- ծնողի հուզականային վիճակները:

Դիտարկենք առավել բնորոշ դաստիարակչական ոճերը ծնողների կողմից սոլայի ու աղջկա նկատմամբ ընտանիքներում:

Տղայի նկատմամբ: Հոր կողմից դաստիարակությունն իրականացվում է իրավահավասարության հաստատման ժողովրդավարական ոճով, որն ուղղված է երեխայի մեջ սոցիալական ադապտացիայի ունակությունների զարգացմանը:

Մոր կողմից կիրառվում են երկու հակասական ոճեր մի կողմից, ընտանեկան տարիքային կարգավիճակների պահպանում, մյուս կողմից, մանկական ակտիվության ու որդու ինքնարտահայտման պահպանում: Տղայի դիմադրումը այս ոճերին ընտանիքում առաջացնում է կոնֆլիկտներ:

Կամ մայրը կողմնորոշվում է որդու ակտիվության ու ինքնարտահայտման պահպանմանը, հասարակության կողմից ընդունված կանոնների հետևելուն և կիրառում է պատիժներ: Պատժելով երեխային՝ մայրը վտանգում է այլ երեխաների հետ նրա շփվելու հնարավորությունը, ինչպես նաև խզում է իր հարաբերությունները որդու հետ: Դրանով մայրը պրոյեկտում է որդու հուզական ապրումները:

Աղջկա նկատմամբ հայրն ու մայրը կիրառում են երկու իրար հակասող դաստիարակչական ոճեր: Հայրը նախընտրում է իրավահավասարություն ու

կողմնորոշված է ադապտիվ վարքի ունակություններ դաստիարակելուն: Ի տարբերություն որդու դաստիարակության, դստեր հետ հայրը ավտորիտար ոճի հարաբերություններ է դրսևորում՝ կապված դաստիարակության «գաղափարական» խնդիրների հետ: Մայրը ձգտում է դաստիարակել այնպիսի գծեր, ինչպիսիք են մաքրասիրությունը, կարգապահությունը, բարեսրտությունը, գթասրտությունը: Համադրելով երկու իրավիճակները՝ որդու և դստեր դաստիարակությունները ընտանիքում, հայտնաբերում ենք սկզբունքային տարբերություններ, որ բնորոշում են ծնողների փոխգործունեությունը երեխայի հետ: Որդու դաստիարակության ժամանակ հայրը ճնշում է գործադրում մոր վրա՝ նրա «կանացի» որակների դաստիարակության հարցում, իսկ դստեր դեպքում՝ մոր հակվածության վրա երեխայի ակտիվության պահպանման հարցում՝ ուղղված սոցիալական ձեռքբերումներին:

Աղջկա կողմնորոշումը գնում է դեպի «կանացի» գծերի դաստիարակումը, ինչպես նաև սոցիալական նվաճումները: Եվ աղջիկը հայտնվում է մոր կանացի հսկողական վարքի ազդեցության ներքո:

Եվ քանի որ հոգեբանական առումով բոլոր իրավիճակները և դրանցում կիրառված ոճերը սկզբունքորեն տարբեր են, դիտարկել ենք երեխաների պատկերացումները իրենց ծնողների վերաբերյալ: Այս նպատակով անցկացրեցինք երեխաների վարքի վերլուծություն և հաստատեցինք երեխաների փոխհարաբերությունները ծնողների հետ:

Ստացված տվյալները կարելի է բացատրել հետևյալ կերպ: Առանց հոր ապրող տղաների մոտ բացակայում է նույնականացման կամ նմանակման օբյեկտը, որի արդյունքում նրանց մոտ նկատելի են դառնում սեռական նույնականացման խնդիրները: Սա բերում է անվստահության ու անհարմարության: Սակայն այս խնդիրները կարող են լինել այն բանի հետևանքը, որ մայրը փորձի փոխարինել հորն ու իր վրա վերցնի հայրական գործառնությունները: Արդյունքում երեխան «կիսով չափ» զրկվում է իր մորից ու չի ստանում բավարար քնքշանք, սեր, բարություն: Մայրական վերաբերմունքի հենց այս գծերն են հանդիսանում վաղ տարիքում առողջ երեխայի աճի ու զարգացման պայման:

Մ. Տալանովան ու համահեղինակները (2) ցույց տվեցին, որ ծնողների կողմից կիրառվող դաստիարակչական ոճերը ծնողական հարաբերությունների սոցիալապես ցանկալի պատկերին համապատասխանում են կանանց կեսից քիչը: Երեխաների նկատմամբ մայրական վերաբերմունքի մեջ գերակշռում են այնպիսի տենդենցներ, ինչպիսիք են հիպերսոցիալիզացիան, տղաների ինֆանտիլիզացիան և այլն: Նրանք ընդգծում են, որ ծնողների ու երեխաների փոխգործունեության հենց վաղ փորձն է սահմանափակում կամ վերացնում հետագա սոցիալական, հոգեբանական ու ֆիզիկական աճի խնդիրները:

Երեխաների հետ փոխհարաբերություններում ոճերի ընտրությունը կարելի է վորվում են պուբերտատի փուլից (12-19 տ.) շատ ավելի վաղ: Պարապուբերտատի տարիքում (1-7 տ.), որը ներառում է մանկիկությունը, վաղ տարիքը, նախադպրոցական մանկությունը տեղի է ունենում սեռական ինքնագիտակցության ձևավորում, սեռական նույնականացումը ձեռք է բերում ավարտունություն ու անդարձելիություն: Նախապուբերտատի տարիքում (7-12 տ.), որն իր մեջ ներառում է կրտսեր դպրոցական տարիքը, հասարակությունում ընդունված կինտղամարդ հարաբերությունների և արժեքների հիման վրա ձևավորվում են սե-

ռային վարքի և դերի ստերեոտիպերը: Պուրերտատի տարիքում (12-19 տ.), որն իր մեջ ներառում է դեռահասությունը, պատանեկությունը, սրվում են ինչպես անհատական-տիպաբանական հատկությունները, այնպես էլ սեռական տիպին բնորոշ առանձնահատկությունները: Դեռահասության տարիքում հոգեսեռական զարգացումը ավարտվում է վերջին փուլով՝ հոգեսեռական կողմնորոշումների ձևավորմամբ: Հենց այստեղ էլ առանձնացվում են դաստիարակության ավտորիտար, ժողովրդավարական և լիբերալ ոճերը (3):

Աճող սերնդի հոգեսեռական ոլորտի համապատասխան ձևավորումը և երեխաների հետ փոխհարաբերություններում նշված դաստիարակչական ոճերի ընտրությունը ընտանիքում, էական դեր է խաղում դեռահասների՝ իրենց սեփական ընտանիքը ստեղծելու ու այդտեղ հոր-ամուսնու և մոր-տիկնոջ դերեր կատարելու հոգեբանամանկավարժական պատրաստվածության ձևավորման համար: Այդ դերերի կատարումը հանդիսանում է առաջնային:

Յուրաքանչյուր սեռի համար ընտանիքում գոյություն ունի ոճերի մի ամբողջական համակարգ, որը որոշում է, թե ինչպես պետք է մարդ իրեն դրսևորի այս կամ այն սոցիալական դիրքում: Այս ասպեկտում առանձնացվում են ավանդական ու ժամանակակից մոտեցումները:

Տղամարդու, ամուսնու, հոր ավանդական դերը նույնացվում է պաշտպանի, ընտանիքի գլխի, կերակրողի հետ, իսկ տղամարդիկ օժտվում այնպիսի որակներով, ինչպիսիք են ակտիվությունը, կամքը, առնականությունը և այլն:

Կնոջ, տիկնոջ, մոր ավանդական դերը որակվում է որպես օջախի պահպանի: Խիստ կանացի առանձնահատկություններ են համարվում խնամքը, քնքշությունը, նրբությունը, համբերատարությունը: Որպեսզի խուսափել հնարավոր հակասություններից հասարակության հետ, սեռադերային վարքի առումով, շատ կարևոր է երեխայի դաստիարակչական համապատասխան ոճերի ընտրությունը:

Օնոդական նախապատվությունը երեխայի սեռի հանդեպ սկսում է ձևավորվել դեռ երեխային սպասելու ժամանակահատվածում: Եթե նրանց սպասումներն արդարացվում են, ապա դրսևորվում է համապատասխան վերաբերմունք երեխայի հանդեպ, որն էլ համապատասխանում է սեռին բնորոշ պիտույքներին ու սիմվոլների ամբողջությանը: Իսկ երբ ծնողների սպասումները չեն արդարացվում, այդ դեպքերում, ինչպես նշում է Ե. Վարլամովան (4), ծնողները իրենց երեխաների մեջ ձավորում են այնպիսի առանձնահատկություններ, որոնք հատուկ չեն նրանց սեռին:

Ինչ վերաբերում է դաստիարակության ոճերին, առավել ուշագրավ են Հ. Մյուսենի տեսակետները: Նրա կարծիքով դաստիարակությունը բնութագրվում է երկու գույգ բևեռականություններով՝ զսպում-թողսվություն ու սեր-թշնամանք ոճերով (5):

Զսպում դրսևորող ծնողները հսկողության որոշակի համակարգի կողմնակիցներ են, նրանք խիստ հսկողության տակ են պահում իրենց զավակներին, պահանջում են ենթարկվել որոշակի ընդունված նորմերի, բայց միննույն ժամանակ հազվադեպ են պատժամիջոցներ կիրառում երեխաների հանդեպ: Նրանք վերահսկում են երեխաների ուսումնական, ժամանցային գործունեությունը, հետևում շփման ոլորտին: Մենք այս ոճը դիտել էք որպես ավտորիտար դաստիարակչական ոճ:

Թողտվության մարտավարություն որդեգրած ծնողները անուշադրության են մատնում իրենց երեխաներին, սահմանափակումներ չեն դնում նրանց առջև: Նրանց երեխաները ավելի շատ մատնված են բարձիթողության, նրանց թույլ են տալիս անել այն, ինչ նրանք կցանկանան: Սա ազատականության դրսևորում է:

Սիրող ծնողները բարձր են գնահատում իրենց երեխաներին, նրանց շփման ոլորտը բավականին լայն է և նրանց միջև առկա է զգացմունքներ արտահայտելու ազատություն:

Եվ, հակառակը, թշնամական դիրքորոշում որդեգրած ծնողները անընդհատ թերություններ են տեսնում իրենց զավակների մեջ և քիչ են շփվում նրանց հետ:

Այստեղից էլ առանձնացվում են դաստիարակության երեք մոդելներ.

- **Առաջին մոդելը** դրսևորում են հեղինակություն վայելող ծնողները: Նրանք սեր ու քնքշություն են դրսևորում երեխաների նկատմամբ, հարգում են նրանց ինքնուրույնությունը, բայց և դիմադրում են նրանց քմահաճույքներին՝ բացատրություն տալով յուրաքանչյուր արգելքի ու մերժման համար: Նման դաստիարակության արդյունքում մեծանում են ինքնուրույն, ստեղծագործ և բարձր ինքնագնահատական ունեցող մարդիկ:

- Երկրորդ մոդելը հիմնվում է ավտորիտար սկզբունքների վրա: Ծնողները խիստ պատժամիջոցներ են կիրառում երեխաների հանդեպ, նրանց հարաբերություններում բացակայում է փոխըմբռնումը, ջերմությունը, սերը: Այդպիսի ծնողների երեխաները ինքնավստահ են, բարոյապես տհաս ու անինքնուրույն:

- Երրորդ մոդելն իրենից ներկայացնում է թողտվության, բարձիթողության և անուշադրության դրսևորում: Երեխաները մատնվում են անուշադրության, որի արդյունքում նրանց մոտ ձևավորվում է հակասոցիալական վարքը:

Ընտանեկան դաստիարակության արդյունավետությունն ապահովող ոճերի այլ տեսակետներ էլ կան: Դրանցից առավել հայտնիները Լ. Կիբարդիսի և Ե. Ալեքսեևայի կարծիքներն են: Ըստ նրանց դաստիարակության ոճերը կարող են լինել.

- **Մոխրոտիկի ոճ.** դա նշանակում է, որ ծնողները չեն ցուցաբերում սիրո, քնքշության, ջերմության ոչ մի զգացում երեխայի նկատմամբ: Նրանք հակառակը, խիստ են պահանջում են, որ երեխան անվերապահորեն ենթարկվի իրենց: Դրա հետևանքով երեխաները դժվար են ադապտացվում միջավայրին, ինքնավստահ ու նախաձեռնող չեն:

- **Գերխնամք** - ծնողները չափից ավելի ուշադիր են երեխաների հանդեպ, կատարում են նրանց ցանկացած քմահաճույք, նրանց փոխարեն որոշումներ են կայացնում: Սրա արդյունքում երեխաները մնում են տհաս, եսասեր ու ինքնամփոփ:

- **Տեսային կոտք** - այս դեպքում երեխան կարող է ցանկանալ, անել ու պահանջել ամեն ինչ, միննույն է նրա յուրաքանչյուր կարիք բավարարվում է: Այս դեպքում երեխան մեծանում է եսակենտրոն, քմահաճ և անպատասխանատու՝ կարծելով, որ աշխարհը պտտվում է իր շուրջը:

- **Անտարբերություն** - այս պարագայում երեխան զրկվում է ջերմությունից, քնքշությունից, մատնվում է անուշադրության, ասել է թե դաստիարակությունը որպես այդպիսին բացակայում է: Սրա արդյունքում երեխաները դառնում են դաժան ու անտարբեր:

• **Նվիրատվությանը դաստիարակություն** - երեխան նորից անուշադրության է մատնված, հաճախ նրան թողնում են ուրիշների խնամատարությանը, իսկ նրանց սիրուն արժանանալու համար փորձում են նրանց «կաշառել» նվերների միջոցով: Նման երեխաները դժբախտ են ու հետագայում նրանց մեծամասնությունը իրենց ծնողներին հանձնում են ծերանոց կամ այլ սոցիալական աջակցման հաստատություն:

• **Վստահության ոճ** - ծնողները վստահում են իրենց երեխաներին ինքնավարություն տրամադրելով նրանց, որի պատճառով նրանք մեծանում են ինքնուրույն և ազատ (8):

Դաստիարակության ոճերի ընտրությունը կապ ունի նաև այլ հանգամանքների հետ: Դրանցից է երեխաների տարիքի տեսանկյունը: Ինչպես նշում է Վ. Սլոբոդչիկովը (9) տարիքի հոգեբանամանկավարժական հասկացության հատուկ սահմանումը ունի ինքնուրույն նշանակություն, քանզի այդ դեպքում զարգացման բավականին ճշմարտացի պարբերականացման հնարավորություն է ստեղծվում, ինչպես կոնկրետ հոգեբանական կառույցների (ուսուցման ու դաստիարակության համատեքստում), այնպես էլ օնտոգենզում ընդհանուր հոգեբանական զարգացման:

Սոցիալ-տնտեսական կեցության փոփոխության պայմաններում, ստերեոտիպային վարքի մոդելներից անբավարարվածության ֆոնի վրա ծնողների մոտ առաջանում է հավելյալ գիտելիքների պահանջումը ու փոքր երեխաներ ունեցող ընտանիքների սոցիալ-հոգեբանական աղապատացիայի նոր արդյունավետ մոդելների ստեղծման անհրաժեշտություն:

Ինչպես նշում է Ե. Վոզնեսենսկայան (10) ժամանակակից երիտասարդները, որպես կանոն, չունեն երեխաների հետ շփման սեփական փորձ, հատուկ կրթություն և որ ամենակարևորն է դաստիարակության ոճ: Նրանք քիչ թե շատ տեղյակ են երեխայի սննդի ու նրա մարմնի մասին հոգ տանելու մասին, սակայն նվազագույն պատկերացում չունեն դաստիարակության ոճերի և հոգեբանական ասպեկտների մասին: Հեղինակը դրա պատճառը տեսնում է նրանում, որ երիտասարդ ծնողները չեն ունեցել ներդաշնակ, հուզականորեն ջերմ, դրական երանգավորված փոխհարաբերությունների փորձ իրենց մոր հետ կյանքի առաջին տարիներին: Ու սեփական երեխայի ծնունդը երիտասարդ ծնողիներին կանգնեցնում է մի շարք խնդիրների առջև, որոնք կտրուկ փոխում են նրանց կարգավիճակն ու կենսակերպը, «լարում» ընտանիքը, ինչից տառապում են երիտասարդ ծնողներն ու հատկապես, երեխաները:

Բացի այդ, հեղինակը ընդգծում է համապատասխան տեղեկատվական համակարգի կազմակերպման կարևորությունն ու անհրաժեշտությունը ծնողների համար, որը կլրացնի բացը մանկական հոգեբանության, ժամանակակից դաստիարակչական տեխնոլոգիաների ու երեխայի զարգացման մեթոդիկաների գիտելիքներում:

Բացի երեխայի անձի ձևավորման հոգեսեռական ասպեկտից, առանձնացվում է նաև այնպիսի մի ասպեկտ, ինչպիսին է ինքնաճանաչողության ու դեռահասների ինքնադաստիարակության մշակույթի ձևավորումը, այսինքն՝ սոցիալական ճանաչողության խնդիր դաստիարակության համապատասխան ոճով: Դաստիարակության նման ոճը երեխաների մոտ առաջացնում է որոշակի փոփոխություններ շրջապատող միջավայրի ընկալման ու ըմբռնման մեջ: Դեռահաս-

ների սոցիալական ճանաչողության հետազոտության խնդիրը կապվում է շրջապատող մարդկանց կերպարի ընկալման հետ ըստ տարիքային փոփոխությունների: Մի կողմից, դեռահասի մոտ լայնանում է նրա էմպիրիկ բազան (այսինքն՝ ավելանում է մարդկանց քանակը, ում հետ նա ծանոթանում է), մյուս կողմից, ձևավորվում են հասկացություններով մտածելու ու շփվելու ունակությունները: Այս ոճի շնորհիվ տարիքի հետ անցում է կատարվում շրջապատողների առանձին գործողությունների ու արարքների նկարագրումից ու գնահատումից նրանց հատուկ որակների ու հատկությունների ուղղակի նշելուն մարդու անձի ընկալման զարգացած ընդհանրացված ձևերին: Հասակակիցների հետ շփման ընթացքում է երեխան ճանաչում ինքն իրեն ու ուրիշներին. «Հասակակիցը հանդիսանում է համեմատման օբյեկտ, օրինակ, որին դեռահասը փորձում է հավասարվել: Մեծահասակը նմուշ է, որին բավականին դժվար է հասնել, նրա գծերը դրսևորվում են կյանքի այնպիսի իրավիճակներում, որոնք բացակայում են դեռահասի կյանքում, իսկ նրա հասակակիցը չափանիշ է, որը թույլ է տալիս դեռահասին ռեալ գնահատել սեփական հնարավորությունները, տեսնել դրանք մարմնավորված մեկ այլ մարդու մեջ, որին նա կարող է հավասարվել» (11): Հասակակցի հանդեպ ունեցած վերաբերմունքի առանձնահատկությունները բերում են գիտակցված ու չգիտակցված փորձերի կառուցել ու վերափոխել սեփական անձը, դրսևորել վարք «ըստ օրինակի», որը նրա համար ծառայում է ընկերը:

Այս համատեքստում շատ արդիական է հնչում Լ.Ս. Վիգոտսկու արտահայտած միտքը. «Դաստիարակության ոճերի խնդիրը ոչ միայն կենտրոնական է մանկական հոգեբանության համար, այլ նաև գործնականի բոլոր խնդիրների բանալին է» (6):

Ինչպես արդարացիորեն նշում է Յու. Գասպարյանը (7) ներկա պահի ակտիվ հետաքրքրությունը աճող սերնդի դաստիարակության «հիմնական ուղղություններին», այդ թվում և ընտանիքում կիրառվող ոճերի մշակումն է, որը հիմք կընդունի հոգևոր, բարոյական, պատմական ու ազգային ավանդույթներն ու հաշվի կառնի, անպայման, այն արժեքները, որոնց այսօր ձգտում է մեր հասարակությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Собкин В.С., *Влияние родительской стратегии на эмоциональное состояние ребенка*. М., “Вопросы психического здоровья детей и подростков”, Журнал, 2003г., N 2, стр. 25-32.
2. Таланова М.Е., Белова Н.А., Володин Б.Ю., *Особенности родительского отношения матерей к детям школьного возраста*. (Материалы 2-го международного конгресса “Молодое поколение XXI века”) Минск, 2003г., стр. 97-98.
3. Кон И.С., *Введение в сексологию*. М., изд. “Медицина”, 1988г., стр.320.
4. Варламова Е.Е., *Влияние представлений родителей о полоролевом воспитании на развитие детей*. (Материалы международного конгресса “Молодое поколение XXI века”) Минск, 2003г., стр. 181-183.
5. Мюссен П., *Развитие личности ребенка*. М., изд. “Прогресс”, 1987г., стр.244.

6. Выготский Л.С., *Детская психология* (собр. соч. в 6-ти томах). М., 1984г., том 4, стр.432.
7. Гаспарян Ю.А., *Институт семьи: проблемы, обновления, развития*. С. Петербург, 1997г., стр.162.
8. Кибардина Л.П., Алексеева Е.П., *Родительское собрание*. 2002г.
9. Слободчиков В.И., *Категория возраста в психологии и педагогике развития*. “Вопросы психологии”, М., 1991г., N 2, стр. 37-49.
10. Вознесенская Е.Л., *Социально-психологическая адаптация семей*. (Материалы 2-го международного конгресса “Молодое поколение XXI века”) Минск, 2003г., стр. 183-184.
11. Янчий А.И., *Особенности социальной перцепции в подростковом возрасте*. (Материалы 2-го международного конгресса “Молодое поколение XXI века”) Минск, 2003г., стр. 112-113.

Лиана Арутюнян – *Стили взаимодействия между родителями и детьми как условие эффективности семейного воспитания*. – Воспитывая детей, родители используют разные стили. В статье рассмотрены стили взаимодействия между родителями и детьми, а также их воздействие на процесс воспитания в различных ситуациях.

Liana Harutyunyan – *Styles of interaction between parents and children as a condition for the effectiveness of family education*. – Parents make use of different styles when bringing up their children. This article examines the styles of interaction between parents and children as well as their impact on the process of upbringing in different situations.

ПРОБЛЕМЫ МОЛОДОЙ СЕМЬИ: СОСТОЯНИЕ И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ.

АННА ЭЛЯЗЯН

Семья - одна из первых исторических форм социальной общности людей и социальных отношений, элемент структуры общества, его "ячейка". Сложность научного определения семьи как социального образования обусловлена ее много-тысячелетней историей, недостаточной научной исследованностью человеческих сообществ и этапов их развития в разных уголках нашей планеты, многочисленными научными походами в ее изучении. Семья как древнейшая человеческая система имеет исторически определенную и изменяющуюся форму отношений между супругами, между родителями и детьми, родственниками. Одними известными мыслителями и учеными семья рассматривалась с биологизаторских позиций (Платон, Аристотель, Кант, Фихте и др.), другими - с эволюционистских (Й. Бахофен, Дж. Мак-Леннан, Л. Морган, Ф. Энгельс, М. Ковалевский, С. Шпилевский, Л. Штернберг и др.). Среди самых известных подходов к изучению семьи: культурологический - К. Циммерман, М. Мид; структурально-функциональный - Э. Дюркгейм, У. Огборн, Т. Парсонс; Интеракционистский - Ф. Ле-Пле, Э. Берджесс, Ч. Кули, Ф. Знанецкий, Ж. Пиаже, З. Фрейд, Дж.Г. Мид и др; конфликтологический - К. Маркс, Ф. Энгельс, Хартманн, Софилиос-Ротшильд и др; институциональный и групповой - А.Г. Харчев, М.С. Мацковский, и др. Каждый из подходов имеет свои изъяны и ограничения.

Родительство и родство - специфическая форма отношений, присущая семье, и имеющая как биологическую, так и социальную основу. Связь, возникающая в результате рождения нового человека, имеет биологическую природу и является естественной. Но если биолого-генетические связи между людьми существуют независимо от того, знают о них люди или не знают, то социально-родственные связи существуют только потому, что проходят через сознание людей. Биологическое и социальное родительство, как отцовство, так и материнство, дублируется только в обществах с моногамным браком. В ранних обществах при групповом браке наблюдалось разделение биологического и социального материнства. Дети, родившиеся от разных женщин, но принадлежавшие одному роду, вскармливались и воспитывались всеми женщинами совместно, которые выступали в этом случае в качестве общественных матерей. Мать была естественной кормилицей. Социальные отношения по содержанию детей матерью были биологически обусловлены. И понятие о матери возникло как понятие о кормилице. У. Риверс, исследовавший дуально-родовую организацию, пришел к выводу, что родство, которое исследуется этнографами, является социальным отношением, и его нельзя путать с биологическим родством.

Понятие об отце также возникло как понятие о кормилице детей. Понятие "отец" совпадало с понятием "муж матери", но не как с ее сексуальным партнером, а с тем, кто поддерживал ее экономически. Поскольку и супружество и роди-

тельство регулируются социально, получают государственную и общественную поддержку, Семья выступает как социальный институт. Как институтированное общественное образование семья обладает всем комплексом социальных функций и ролей, для которых общество создает, охраняет и поддерживает этот институт. Как малая социально-психологическая группа семья предполагает непосредственность общения между своими членами, эмоциональность, немногочисленность, общность быта, взаимную моральную ответственность и взаимопомощь.

У специалистов, рассматривающих вопросы семьи и брака с разных позиций (юристов, демографов, экономистов, педагогов и т.д.), нет общего определения семьи.

Семья - это социальный институт (по характеру общественного воздействия на брачно-семейные отношения) и в то же время обладающая исторически обусловленной организацией малая социальная группа, члены которой связаны брачными или родственными отношениями, общностью быта, взаимной ответственностью, что детерминировано социальной потребностью в воспроизводстве человеческого рода, как физического, так и духовного обновления общества. Семья может быть основана на браке, близком (кровном) родстве и на факте усыновления (удочерения). Последнее основание является исключением из общего правила возникновения семьи на основе брака или близкого родства. Семья может включать в себя брачную пару, а может и не включать. Во второй половине XX столетия широкое распространение получили неполные семьи, возникшие в результате разводов и внебрачных рождений, и наличие супружеской пары перестало быть обязательным компонентом семьи. Отличие семьи от брака заключается не только в количестве субъектов отношений, но и в качестве этих отношений. Как социальная организация семья отличается от брака тем, что эти отношения имеют многосторонний и разновекторный характер. Они направлены на удовлетворение разнообразных потребностей членов семьи, на выполнение многих социальных и индивидуальных функций. Семейей можно назвать и мужа с женой, если их отношения шире, чем брачные.

Как социально-правовой институт семья охраняется законом. Правовое регулирование брачно-семейных отношений важно как для граждан, так и для государства. Граждане получают защиту от государства в случае нарушения своих прав (например, на практике очень часто встречаются исковые заявления об истребовании через суд матерью алиментов на детей от расторгнутого брака с отца, уклоняющегося от выполнения своей обязанности материально обеспечивать детей). Государство же при помощи юридических норм устанавливает права и обязанности лиц, выполняющих ответственные общественные функции (прежде всего рождение и воспитание детей), тем самым, осуществляя контроль в области брака и семьи.

В современных обществах выполнение важнейших функций традиционной семьи - деторождение и воспитание подрастающего поколения - могут переходить к другим формам семьи.

Как показывает практика все молодые семьи переживают кризис, этому способствуют ряд причин. Проявлениями этого кризиса служат такие показатели, как падение рождаемости, нестабильность семьи, рост количества разводов, появление

большого числа бездетных семей, сознательный отказ от рождения единственного ребенка. Также массовый отказ от детей, сдача их в родильные или детские дома, дома ребенка, приемники-распределители, бегство детей из дома, жестокое обращение с детьми вплоть до лишения жизни своих детей.

Показателем кризиса семьи выступает также резкое сокращение уровня «брачности» и одновременно активный рост внебрачной рождаемости. По количеству разводов Россия занимает первое место в мире.

Как показывает практика реформирование общества резко обострило проблему семей, нуждающихся в социальной защите. Среди ее объектов - семьи одиноких матерей, военнослужащие срочной службы с детьми; семьи, в которых один из родителей уклоняется от уплаты алиментов; семьи с детьми-инвалидами; взявшие детей под опеку; многодетные с малолетними детьми до трех лет; студенческие семьи с детьми.

Причины кризисного положения семей можно условно разделить на экономические и социальные. Экономические - потеря работы, невыплата заработной платы или пособий, низкий уровень оплаты труда - являются наиболее характерными. Среди социальных причин часто встречаются такие, как алкоголизм, тушеадство, противоправное поведение одного или обоих супругов. Как правило, этому сопутствует низкий культурный уровень, бездуховность, безответственность перед детьми. Ребенок, растущий в такой семье, часто неуравновешен, психологически подавлен, формирует стереотипы общественного поведения неадекватные общей социальной и культурной среде. Очень часто дети именно из таких семей - трудные дети, трудные подростки, среди которых встречаются юные правонарушители.

Развитие современной семьи во многом связано с возрастанием роли и значения личностного потенциала в семейных отношениях. Это обусловлено действием таких факторов, как переход к рыночным отношениям, правовому государству, информационным технологиям. Что в свою очередь требует наибольшего раскрытия творческого потенциала личности, возможностей ее социальной адаптации. Складывается новое отношение к каждому члену семьи как персоне, что порождает по существу новую важнейшую функцию семьи - персоналитарную (от лат. persona - особа, личность). Это означает формирование такого типа семьи, где высшей ценностью станут индивидуальность личности, ее права и свободы, где будут созданы условия для творческого развития и самовыражения каждого члена семьи, включая родителей и детей, на основе уважения достоинства личности, любви и согласия.

Для обеспечения качественного роста работника и подрастающего поколения должны быть созданы соответствующие жизненные условия и материальные средства, включающие в себя уровень образования и культуры, жилищные условия, качество питания, здравоохранения, сферы услуг, возможности отдыха, снятия нервного напряжения. Одним словом, возрастает потребность в качестве жизни.

Таким образом, репродуктивная функция семьи будет направлена на сознательное ограничение рождаемости и обеспечение высокого качества подготовки ребенка к жизни и труду в условиях информационного общества. Акцент будет де-

латься на раскрытии индивидуальных способностей личности. Семейные конфликты в информационном обществе будут происходить в основном из-за неумения и нежелания считаться с индивидуальными личностными особенностями членов семьи. Неуважение к личному достоинству каждого отдельного члена семьи – серьезная причина для конфронтации и отчуждения.

Однако как показала практика основной причиной низкого уровня рождаемости в Армении по-прежнему остается социальная. По последним данным, половина армянских женщин после второго ребенка прибегает к искусственному прерыванию беременности. Родовой сертификат, так сильно разрекламированный государством, дает женщине право только на бесплатное родовспоможение, а все остальные затраты ложатся на плечи молодой семьи, нередко безработной. В результате, даже по официальным данным, на одну армянскую женщину репродуктивного возраста в 2011 году пришлось 1,5–1,6 рождений, что не обеспечивает даже простого воспроизводства. Отдельной проблемой являются селективные аборт. В минувшем году в Армении родилось почти на 3 тысячи мальчиков больше, чем девочек. Подобный дисбаланс – естественный результат селективных абортов, с помощью которых будущие родители избавляются от нежелательных девочек. По числу селективных абортов Армения входит в тройку стран-лидеров²⁹⁷.

Состояние современной семьи характеризуется рядом противоречивых тенденций. Среди них уменьшение прочности брачно-семейных отношений (что подтверждается статистикой разводов и ростом напряженности отношений между родителями и детьми), снижение рождаемости, рост количества неполных семей, внебрачной рождаемости, ослабление роли семьи в деле социализации молодого поколения (рост среди подростков самоубийств, преступности, наркомании, алкоголизма и т.д.). Это с одной стороны. А с другой стороны, есть изменения другого порядка. Растет экономическая и социальная независимость женщин и их духовное раскрепощение как следствие вовлечения в общественную и профессиональную деятельность вне дома. Трудовая активность женщин с одной стороны, повышает благосостояние семьи, а с другой стороны, обуславливает их большие требования к брачно-семейным отношениям и большую решительность при разводе, тем самым, делая семью менее устойчивой.

В XXI веке множество молодых людей, потенциальных молодоженов, и в первую очередь девушек, имеющих большую независимость и активность в социальной жизни, чем женщины, выполняющие функции поддержания брака и репродукции, отпугивает от создания семьи своей жесткостью тотальность и единообразие брачно-семейного стереотипа, обычно утверждаемого в педагогике, а также, иногда, навязчивое культивирование в семье при воспитании мальчиков и девочек патриархальных тендерных ролей.

Современные семьи создаются в условиях множества социально-экономических преград, что часто сдвигает период их регистрации к зрелым летам, порождая и рост разновозрастных браков, в которых один из супругов, преимущественно муж, заметно старше молодого спутника, что компенсируется им финансово, накоплением суммы материальных благ и успешным преодолением социальных ба-

²⁹⁷ <http://www.noev-kovcheg.ru/mag/2012-06/3154.html#ixzz2AOK7uzst>

рьеров на пути создания семьи. Соответственно и молодежь приобретает склонность к разным жизненным субъектным позициям: молодые люди, воспитанные в семьях, образованных одновозрастными родителями, значительно чаще занимают традиционные функциональные места потребителя и исполнителя и реже склоняются к функциям оценивания, координации и централизации, чем разновозрастными, обычно молодыми матерями и солидными отцами.

Хотелось бы заметить тот факт, что, наконец – то, данной проблемой занялись органы государственной власти. Назвав демографию «самой острой проблемой» страны, Президент Армении С.А. Саргсян (в том числе и российский президент В. Путин) предложил программу стимулирования рождаемости. Семейный потенциал имеет приоритетное значение для оптимизации вхождения молодежи в общественное производство. Однако в условиях социально-экономического кризиса современного общества функции социальной адаптации, лежащие на семье, дестабилизированы и неадекватны новациям.

Так, в конце декабря прошлого года в Ереване состоялся «круглый стол» под названием «Проблемы семьи, материнства и детства», организованный Ассоциацией молодых женщин Армении. «Если мы хотим иметь сильное государство, то в первую очередь должны задуматься о создании крепкой семьи, а также об обеспечении беззаботного детства жителей Армении», – заявила председатель Ассоциации Лилит Асатрян в ходе мероприятия. По ее словам, проблемы семьи, материнства и детства в Армении очень актуальны и «сегодняшний круглый стол – это лишнее подтверждение того, что этот вопрос беспокоит и государство, и общественность».

Необходимо все-таки дать определение, что такое молодая семья.

Молодая семья - возраст одного из супругов не превышает 30 лет, или имеющий ребенка одинокий родитель, возраст которого не превышает 30 лет.

Развитие молодой семьи - процесс становления субъектно-объектных отношений молодой семьи в государстве и обществе, в результате которого она получает необходимые условия и выполняет социальные функции и репродуктивные установки.

Оптимальная структура системы индикаторов развития молодой семьи может состоять из нескольких компонентов:

1. возрастные границы;
2. социологическая характеристика молодой семьи;
3. динамика уровня разводов в молодых семьях по сравнению с семьями других категорий;
4. социально-экономическое положение: уровень и структура доходов; жилищные условия; доступность медицинского обслуживания; уровень занятости (заняты оба супруга, один из супругов безработный, оба супруга безработные);
5. динамика рождаемости в молодых семьях; количество детей; ориентация на количество детей; формы и средства стимулирования рождаемости;
6. ровень общего и профессионального образования молодых супругов; образование как установка на успех и карьерное продвижение;
7. система пассивной и активной социальной защиты молодой семьи: льготы, социальные пособия, социальные программы поддержки молодой семьи, мероприятия по охране здоровья молодых матерей;

8. доступ молодой семьи к полноценному отдыху: семейные санатории и базы отдыха; семейные клубы; наличие радио- и телепрограмм для молодой семьи; спортивные соревнования для супругов с детьми.

Институализация молодой семьи - процесс жизнедеятельности молодой семьи от момента ее создания до стабильного функционирования: рождение и воспитание детей, достижение экономической самостоятельности, создание устойчивого психологического климата, выполнение основных социальных функций.

Общественные идеалы и нормативы влияют на процессы структурирования социальных институтов, действуя в аспектах задания функциональных проявлений формируемых типов, норм и организации личностных, трудовых, matrimoniaльных и воспитательных взаимоотношений молодых людей. В тоже время современная эпоха насыщена крайним разнообразием социокультурных идеалов и соответствующих им детерминаций вариантов стилей жизни человека в обществе, соответственно, воздействие негативных факторов вызывает многие противоречивые и конфликтные психологические реакции людей.

Социальная интеграция молодежи в социально-экономических условиях индустриального и информационного развития человеческой цивилизации XXI века оказывает заметное влияние на демографическую тенденцию и планирование брачно-семейных отношений. Создается значительная невостребованность молодых людей, престижные вакансии заняты и нет потребности в численном пополнении населения, поэтому рождаемость падает как запрограммированная функция общественного устройства индустриального общества. Происходит не просто понижение воспроизводства населения до заданной природной оптимальности способности к удовлетворению потребностей человечества, но достаточно резкое и заметное падение рождаемости, когда людей становится меньше, чем в предыдущие, даже недавние, исторические эпохи, что выражается в превышении смертности над рождаемостью и отрицательных показателях демографического баланса. Данная зависимость ярко проявляется в неравномерности демографической ситуации в разных странах и регионах мира.

Необходимость разработки данной концепции детерминируется рядом объективных и субъективных факторов.

Во-первых, молодые семьи составляют значительную часть семей. Следовательно, формирование государственной политики в отношении молодой семьи призвано охватить значительную часть населения страны, развитие которой обусловлено состоянием именно молодых семей. Стремительное старение населения и неблагоприятные демографические тенденции заставят общество уже в ближайшем будущем предъявить к сегодняшним молодым семьям повышенные требования: молодежь станет основным трудовым ресурсом страны, ее трудовая деятельность, в большей степени, чем ее родителей, станет источником средств для социального обеспечения детей, инвалидов и пожилых поколений.

Во-вторых, выделение молодых семей в отдельную категорию позволит детально изучать проблемы жизнедеятельности молодого поколения, будет способствовать более эффективному и адресному решению проблем жизнедеятельности молодой семьи, что призвано улучшить демографическую ситуацию в республике Армении. Именно молодежь и молодые семьи являются ведущей силой в реализа-

ции практически всех Приоритетных национальных проектов Армении, следовательно правительство Армении должно как можно лучше и больше всеми любимыми стимулирующими способами поддерживать молодые семьи, что не делается в нужном объеме.

В-третьих, практика показывает, что семьи создаются в молодые годы (ориентировочно средний возраст вступления в брак - 22,2 лет для женщин и 24,4 лет для мужчин, 70% заключаемых браков - первые). Этот возраст характеризуется становлением мировоззренческих позиций и ценностных ориентации молодежи, в том числе - ориентации на устойчивую и благополучную семью, на ответственное родительство и ценности семейной жизни. В-четвертых, статистика свидетельствует, что молодая семья менее устойчива (1/3 всех разводов приходится на семьи, существующие менее года, и еще 1/3 - с брачным стажем от года до пяти лет; вероятность развода лиц до 20-летнего возраста в два раза выше и наиболее чревата для семьи, детей, самого института семьи). В-пятых, деторождение, а, следовательно, будущее нации в основном связано с молодой семьей (3/4 общего числа детей - у родителей моложе 30 лет). Меры, предусматриваемые государственной политикой в отношении семей в целом, в преобладающем числе ситуаций и в значительном объеме относятся, прежде всего, к молодым семьям. Эти меры ориентированы на решение проблем демографической ситуации в стране. В-шестых, молодые семьи находятся в более сложном материальном положении, нуждаются в государственной и родительской поддержке, они, как правило, не имеют жилья и не обзавелись домашним хозяйством, обладают повышенными запросами духовного развития.

В отличие от молодежи наиболее развитых стран, возраст вступления которой во взрослую жизнь объективно повышается, молодежь вынуждена вступать в социально-экономические отношения значительно раньше. В этой ситуации необходимо обеспечить молодой семье такие условия ее жизнедеятельности, при которых она, опираясь на собственный потенциал, получая стратегическую поддержку со стороны государства и общества, станет способной самостоятельно реализовывать все свои социальные функции и репродуктивные установки. Новые условия потребуют от каждого молодого человека и его семьи мобильности, поиска новых нестандартных индивидуальных вариантов построения своей жизни. Сочетание первичной государственной поддержки молодых семей с развитием их самостоятельности в решении проблем жизнедеятельности должно стать основой общества будущего. Эта поддержка предусматривает, прежде всего, формирование и реализацию государственной политики в отношении молодой семьи.

Социальная готовность к созданию семьи — это, прежде всего готовность морально-нравственная. Она состоит в том²⁹⁸ (по Т. Гергишанову), что каждый юноша, каждая девушка должны сформировать в своём сознании нравственный идеал семьи, понимание её ценности и необходимости.

Современная семья постепенно утрачивает роль общности, функционирующей на основе четко заданных норм и образцов поведения.

²⁹⁸ **Тодор Гергишанов**, Семейные будни, или Нежность на каждый день. Издательство: «Республика», Москва 1996 г. (www.twirpx.com/file/391525/)

Происходит отказ от жесткой регламентации брачно-семейных отношений, меняются представления о типично мужских и женских ролях, об ориентациях и ожиданиях, связанных с браком, в целом о роли семьянина.

Семьянин – одна из традиционных социальных ролей личности, которая реализуется в семье и предполагает нормативно одобренные формы поведения в рамках семьи, ожидаемые от индивида.

Социальный идеал семьянина – это существующий в общественном сознании образ человека, который характеризуется высокой степенью ответственности за семью и ее членов, развитыми способностями и умениями, необходимыми в семейной жизни, гибкостью в семейном общении. Будучи культурно-детерминированным, социальный идеал семьянина базируется на основополагающих семейных ценностях данной культуры и отражает представления личности о самореализации в семье, в соответствии с личностной системой потребностей и ценностных ориентаций.

Результаты эмпирических исследований добрачного поведения молодежи, проведенных Новикова Е.Н. Т. А. Гурко, Н. П. Ивченко, Г. А. Навайтис, А. Н. Обозовой, Т. И. Пуховой, В. А. Сысенко, Н. Ф. Федотовой, Т. И. Юфревой, позволяют констатировать, что наиболее активно процесс самоопределения и самоосознания себя как будущего семьянина происходит в подростковом и раннем юношеском возрасте. И. В. Дубровина, В. А. Ковалев, В. А. Сысенко указали, что именно в этот период формируются такие психологические новообразования, которые являются важнейшими для будущего семьянина: сознательная регуляция своих поступков, умение учитывать чувства, интересы и желания других людей, направленность на другого человека.

Глубоко была изучена проблема готовности к браку и семейной жизни (И. В. Гребенников, С. В. Ковалев, Б. С. Круглов, Е. И. Зритнева)²⁹⁹. Подчеркивается, что «готовность к семейной жизни» как личностное образование, является сложным, динамичным, многогранным по содержанию и формам проявления и представляет собой «ядро» личности семьянина.

Готовность к семейной жизни, как ядро личности человека-семьянина, выступает главным критерием создания успешной модели семьи. Следовательно будущие супруги должны обладать:

а) совокупность свойств личности, необходимых и достаточных для успешного выполнения роли супруга и родителя, вытекающих из сущности и функций семьи;

б) структура готовности к семейной жизни – иерархия, субординация психологических, психофизиологических, социальных и других свойств, существенно значимых для семейной деятельности.

Анализ многочисленных исследований по данной проблематике приводит к выводу, что одной из важнейших задач при формировании у подростков готовности к созданию семьи является развитие у них коммуникативных качеств. Коммуникативные свойства личности, её способность к эмоциональному сопереживанию и душевной открытости во многом зависят от дружеских отношений с лицами

²⁹⁹ science.ncstu.ru/.../zritneva_ev.htm/zritneva.pdf

противоположного пола. Многие подростки, например, хотят по быстрее сбежать из-под родительского крыла и по быстрее стать самостоятельными, многие не осознают, что, вступая брак, наступает ответственность перед друг другом.

Определяющее значение в обеспечении жизнедеятельности семьи имеет государственная, экономическая и социальная политика, от которой зависят занятость населения в сферах общественного труда, благосостояние и доходы семьи. Объектом государственной семейной политики является семья, в том числе и — молодая семья. Однако ее статус как объекта этой политики не означает пассивной роли молодой семьи в решении разнообразных проблем. Молодая семья должна постепенно становиться одним из активных социальных субъектов процесса реализации мер государственной семейной политики.

Целью государственной политики в отношении молодой семьи является становление и развитие благополучной молодой семьи и улучшение качества ее жизни; обеспечение выполнения молодой семьей социально-демографических функций, в т.ч. стимулирование рождаемости детей и их воспитания.

Задачами государственной молодежной семейной политики являются:

- законодательное предоставление молодой семье самостоятельного социального статуса объекта государственной семейной политики и практическая реализация потенциала этого статуса во всех сферах ее жизнедеятельности;

- обеспечение государством соблюдения прав молодой семьи в решении социальных проблем;

- совершенствование системы государственных социальных гарантий для обеспечения достижения уровня благосостояния молодых семей;

- обеспечение сохранения семейной среды как среды личностного саморазвития и самореализации супругов, воспроизводства, воспитания и развития детей - полноценных граждан российского общества;

учет интересов молодой семьи в процессе духовно-нравственного, экономического и социокультурного развития общества при разработке и реализации разнообразных федеральных и региональных программ, в деятельности органов власти и управления различных уровней;

- оказание содействия молодой семье в подготовке и реализации ее воспитательной функции по социализации супругов и детей, в развитии культуры семьи, в том числе родовой культуры;

- поддержка развития молодой семьи как субъекта собственности и предпринимательства, направленных на формирование новых источников доходов, обеспечивающих достижение экономического благополучия молодой семьи;

- обеспечение возможности молодой семье самостоятельно достичь уровня доходов, достаточного для ее стабильного функционирования и полноценного выполнения социальных функций и репродуктивных установок;

Важная роль в социальной защите семьи отводится самой семье: укрепление родительских уз; формирование устойчивости против пропаганды секса, наркотиков, насилия, агрессивного поведения; поддержание в норме психологического здоровья семьи; взаимодействие со школой и производством, социальными службами; обучение детей ведению домашнего хозяйства и т.д.

Социальная защищённость семьи формируется путём дифференциации проектов и программ развития различных категорий семей, создания разнопро-

фильных центров социальной помощи семье и детям, развитием сети специальностей и специализаций работников социальной сферы, повышения психолого-педагогической, медико-социальной и юридической грамотности семей в системе родительского всеобуча, сети консультационных пунктов и т.д.

Особое место в ней занимает социальная защита детства, включающая в себя предупреждения педагогического травматизма и эмоциональной отверженности, профилактику внутрисемейного (родительского) насилия, профориентацию детей и подростков, демократизацию отношений взрослых и детей, регламентацию труда подростков и т.д.

В настоящее время в практике сложились четыре основных формы социальной защиты семей, имеющих детей:

1. Выдача материнского капитала, который постоянно и резко возрастает;
2. Денежные выплаты семье на детей в связи с рождением, содержанием и воспитанием детей (пособия и пенсии);
3. Трудовые, налоговые, жилищные, кредитные, медицинские и другие льготы семьям с детьми, родителям и детям;
4. Юридическое, медицинское, психолого-педагогическое и экономическое консультирование, родительский всеобуч, научно-практические конференции и конгрессы.
5. Бесплатные выдачи семье и детям детского питания, лекарств, одежды и обуви, питания для беременных женщин и др.

Молодые семьи всё больше и больше нуждаются в помощи государства. Старение населения так же увеличивает число получателей пенсии. Тяжелыми демографическими и социальными последствиями грозят увеличение числа неполных семей, расширение масштабов социального сиротства, преступности, алкоголизма, наркомании, проституции, бродяжничества. В связи с этим основными задачами социальной защиты станут:

- а) Реализация установленных законом социальных прав и минимальных социальных гарантий гражданам, прежде всего, в области пенсии, социального обслуживания, материальной поддержки семей с детьми;
- б) Адаптация системы социальной защиты к изменяющимся социально-экономическим условиям, включая развитие сети учреждений социального обслуживания, расширение перечня предоставляемых населению социальных услуг, поддержку негосударственных форм социальной помощи, подготовку кадров социальных работников;
- в) Совершенствование организации социальной защиты на основе формирования законченных социальных технологий, дифференцированного подхода к различным категориям населения и типам семей, адресной социальной помощи, непосредственно связанной с конкретными потребностями получателя;
- г) Широкое использование активных форм социальной поддержки населения.

Таким образом, в заключении хотелось бы отметить, что в работе с семьями разного типа наиболее полно раскрываются профессиональные качества социального работника как социального педагога и психолога, экономиста, юриста и просто человека. Он должен не только помогать семье преодолевать трудности, прив-

лекая средства благотворителей или наблюдать за справедливым распределением государственной и гуманитарной помощи, но и учить членов семьи самопомощи и взаимопомощи, которые помогут им обеспечить себе достойную жизнь.

Աննա Էլյազյան – Երիտասարդ ընտանիքի խնդիրները: Կառուցվածքը և զարգացման հեռանկարները: – Հոդվածը նկարագրում է մի երիտասարդ ընտանիք՝ սոցիալական, իրավական, կրթական կողմերով և զարգացման հեռանկարներով: Այնտեղ մանրամասն տրվում են գործառույթներն այդ երիտասարդ ընտանիքի, ընտանիքը դիտարկվում է որպես սոցիալական ինստիտուտ, ինչպես նաև խրախուսվում է երիտասարդ ընտանիքի աջակցության և զարգացման ծրագրերը:

Anna Elyazyan – *The Challenges of a Young Family: The condition and Perspectives of Development.* – The article describes the social, legal, educational, aspects of a young family, and the prospects of its development. The paper describes in detail the functions of the family, defines a young family, marriage as a social institution, as well as the development of the programs encourage young family support.

ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԱՐՎԵՍՆ ՈՒ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՆ

ՎԱԶԱԳԱՆ ԱՎԱԳՑԱՆ

16-17-րդ դարերի հայ գրականության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում արևելյան ազգերի մեջ խիստ տարածում գտած աշուղական քնարերգությունը, որը 17-18-րդ դարերում հայ գրականությանը տվեց երկու նշանավոր անուններ՝ Նաղաշ Հովնաթան և Սայաթ-Նովա:

Հայերեն աշուղը բառը արաբերեն *աշրք* բառի տառադարձումն է, որ նշանակում է սիրահար: Հետագայում է միայն աշուղ բառը հեռացել իր նախնական՝ «սիրահար» նշանակությունից և ստացել երգիչ, գուսան իմաստը:

Աշուղները ընդհանրապես անգրագետ կամ կիսագրագետ մարդիկ էին, թափառաշրջիկ երգիչ-բանաստեղծներ՝ նման ֆրանսիական տրուբադորներին, հունական ռապսոդներին, որոնք երգում էին փողոցներում, հրապարակներում, ժողովրդական հավաքույթներում³⁰⁰՝ նվագելով սովորաբար սազ, թառ, քամանչա: Աշուղներն իրենց իմաստուն, խոհական խոսք ու երգով մի տեսակ դաստիարակներ էին և վայելում էին ժողովրդի համակրանքն ու սերը: Հիշենք, թե «Վերք Հայաստանի» վեպի առաջաբանում Խաչատուր Աբովյանը որքան ջերմ է արտահայտվում աշուղների և նրանց արվեստի մասին. «...Շատ անգամ որ դոնադ էի գնում յա քաղաքովն անց կենում, ուշ ու միտքս հավաքում էի, թե տեսնիմ՝ խալխը խոսալիս, քեֆ անելիս ի՞նչ բանից ա ավելի հազ անում: Շատ անգամ տեսնում էի, որ մեղանում, փողոցում մեկ քոռ աշրղի է՛նպես են հայիլ-մայիլ մնացել ու կանգնել, անկաջ դնում, փող բաշխում նրան, որ բերնըների ջուրը գնում էր: Մեջլիս ու հարսանիք հո, առանց սագանդարի ե՛րբ հացը կուլ կերթար: Ասածները թուրքերեն էր, շատը մեկ բառ էլա չէ՛ր հասկանում, ամա լսողի, տեսնողի հոգին գնում էր դրախտը, ետ գալիս»³⁰¹:

17-րդ դարի երկրորդ կեսերից է միայն, որ մեզ են հասել աշուղական երգեր, որոնք ստեղծվել են գլխավորապես հայկական գաղթավայրերում՝ Նոր Ջուղա, Թիֆլիս, Կ. Պոլիս և այլուր: 17-18-րդ դդ. Նոր Ջուղայի աշուղները հիմնում են իրանահայ աշուղական դպրոցը, իսկ 18-րդ դարում Թիֆլիսում կազմվում է վիրահայ աշուղական դպրոցը, որի հիմնադիրն է Սայաթ-Նովան: Ավելի ուշ նաև Երևանում է աշուղական դպրոց ստեղծվում, որի մեծերից է Շիրինը: Իսկ հայ ազգային աշուղական նոր դպրոցի հիմնադիրը Ջիվանին է³⁰²:

Աշուղական երգն ունի բազմազան տեսակներ, օրինակ՝ մուխամմազ, դաստան, դիվանի, գագել և այլն, որոնք միմյանցից տարբերվում են իրենց բովանդակությամբ: Օրինակ՝ Քյոթոլի կոչվող երգերին հաստուկ է հերոսականության գաղափարը, Քյարամի կոչվող տեսակին՝ դժբախտ և տխուր սիրո մոտիվները: Աշուղական երգերն ունեն նաև իրենց չափը:

³⁰⁰ Տե՛ս *Պ. Մեսկ*, Սայաթ-Նովա, Եր., էջ 105-106:

³⁰¹ *Խ. Աբովյան*, Երկեր, Եր., 1984, էջ 9:

³⁰² Տե՛ս *Ս. Հայրապետեան*, Հայոց հին եւ միջնադարեան գրականութեան պատմութիւն, Անթիլաս, էջ 644-645:

Հաճախ, նույնիսկ գրական շրջաններում շփոթում կամ նույնացնում են ժողովրդական և աշուղական երգերը: Մինչդեռ դրանք բոլորովին տարբեր բաներ են³⁰³: Ժողովրդական երգերը «ծնունդ են առնում կարծես թե «ժամանակից ու տարածությունից» դուրս. այսինքն հայտնի չի լինում թե տվյալ երգը է՞րբ և որտե՞ղ է հորինված... Երգերը, ծնունդ առնելով մի գյուղում, մի ավանում, մի գեղջուկի կամ գեղջկուհու բերանից, մի եղանակով թև են առնում ու թռչում մերձակա շրջանները, ապա ավելի հեռավոր վայրեր. նրանք կերպարանափոխվում են շատ անգամ, հարմարվում տեղական բնության, բարքերին, նույնիսկ աշխարհագրական ու տնտեսական պայմաններին ու նախնական բնագրից զգալիորեն տարբերվում. հեղինակը մնում է անհայտ, իսկ երգը դառնում է ընդհանուրի սեփականությունը»³⁰⁴:

Ժողովրդական երգերը մեծ մասամբ չունեն սյուժեի ամբողջություն: Նրա գրեթե յուրաքանչյուր քառյակ մի առանձին բովանդակություն ունի, ուրեմն և հեշտությամբ քառյակները կարող են խառնվել կամ ձուլվել մի ուրիշի՝ տաղաչափական տեսակետից նույնաչափ երգի: Ժողովրդական երգերի մեջ չկան կամ վերին աստիճանի հազվագյուտ են հանրային, հասարակական խնդիրները. «չկա բարոյախոսություն, խրատ, քարոզ, այլաբանություն. պարզ է նրանց բովանդակությունը, ինչպես որ ձևը»³⁰⁵: Ժողովրդական երգի հեղինակը ավելի հաճախ նաև ազատ է երգի տաղաչափության և հանգավորման մեջ: Մինչդեռ այդպես չեն աշուղական երգերը: Այստեղ ամենից առաջ հայտնի են երգերի հեղինակները: Երգերը ծնունդ են առնում ու գրանցվում **դավթարի** մեջ, և եթե անգամ նրանք անգիր տարածվում ու երգվում են, ինչպես ժողովրդական երգերը, իրենց չափերով ու սյուժեի ամբողջությամբ չեն խառնվում ու չեն կարող խառնվել մեկ ուրիշ աշուղի երգի հետ, մանավանդ՝ ժողովրդական երգի: Աշուղն իր երգը սկզբից ևեթ գրում է ոչ իր համար, այլ հասարակության, ընդհանուրի: Աշուղական երգերը նաև իրենց բովանդակությամբ բազմազան են՝ խրատական, քարոզչական, բարոյախոսական, սիրո և այլն: Աշուղը մի տեսակ հրապարակախոս էր, որը քննադատում ու մտրակում էր հասարակական կյանքի խոցելի երևույթները: Եվ հետո՝ աշուղական երգերը չունեն գեղջկական բնույթ, ինչպես հայ ժողովրդական երգերը: Աշուղները գլխավորապես ապրել են քաղաքներում և նույնիսկ պալատներում: Այդ պատճառով էլ նրանք հիմնականում վերարտադրել են արհեստավորների, վաճառականների ու ազնվականների ճաշակն ու տրամադրությունները, չնայած որ երգել են նաև գյուղական հրապարակներում³⁰⁶:

Այնուհետև՝ եթե ժողովրդական երգը գրվում է եղանակից առաջ, ապա միայն այդ երգի համար հորինվում կամ հարմարեցվում է որևէ եղանակ, ապա աշուղը իր երգի համար ունի մշակված եղանակ՝ համապատասխան չափի ու տեսակի: Այլ կերպ ասած՝ աշուղական երգերը հարմարեցվում էին արդեն պատրաստի որևէ եղանակի: Այդ պատճառով էլ աշուղական եղանակները՝ նեղ մաս-

³⁰³ Այդ մասին մանրամասնորեն տե՛ս **Գ. Լևոնյան**, Հայ ժողովրդական և ուշուղական երգերը, «Տեղեկագիր գիտության և արվեստի ինստիտուտի», Եր., 1929, № 4, էջ 160-179:

³⁰⁴ Նույն տեղում, էջ 165:

³⁰⁵ Տե՛ս **Գ. Լևոնյան**, Հայ ժողովրդական և ուշուղական երգերը, «Տեղեկագիր գիտության և արվեստի ինստիտուտի», Եր., 1929, № 4, էջ 166:

³⁰⁶ Տե՛ս **Ս. Հայրապետեան**, Հայոց հին և միջնադարեան գրականութեան պատմութիւն, Անթիլաս, էջ 644-645:

շտաբով, մի տեսակ միջազգային են, այսինքն նույն եղանակով կարող էր երգել և՛ հայը, և՛ պարսիկը, և՛ թուրքը, և՛ վրացին: Օրինակ՝ Սայաթ-Նովայի այնքան հայտնի «Դուն էն գրլիսեն իմաստուն իս» երգի եղանակը, պարզվում է, ուրիշ բան չէ, եթե ոչ Պաղտասար Դպիրի (XII դ.) հորինվածքը՝ աննշան փոփոխությունների ենթարկված, իսկ «Քանի վուր ջան իմ» երգը, իր իսկ՝ Սայաթ-Նովայի խոստովանությամբ, գրված է Նադաշ-Նովնաթանի (XII-XIII դդ.) մի խաղի հանգով³⁰⁷:

Հայ աշուղական արվեստը բացահայտորեն առնչվում է արևելյան, մասնավորապես պարսկաարաբական գրականության և հատկապես այդ ազգերի աշուղական երգերի բանաստեղծական ձևերի, պատկերների, ոճի ու տաղաչափության հետ³⁰⁸:

Լինելով թափառական երգիչներ և շրջելով Մերձավոր Արևելքի երկրներում՝ աշուղները երգել ու տարածել են ինչպես հայկական, այնպես էլ թուրքական ու պարսկական սիրային երգեր, պատմություններ ու հեքիաթներ, որոնցից են, օրինակ, «Քյորոլի», «Միամանթո և Խջեգարե», «Ասլի և Քարամ», «Լեյլի և Մեջնուն», «Ռոստամ և Ջալ», «Ֆահրադ ու Շիրին» և այլն:

Հայ աշուղները հայերենից բացի երգեր հորինել են նաև թուրքերեն, պարսկերեն կամ վրացերեն, հիմնականում թուրքերենով: Քչերը միայն երգել են մի քանի լեզուներով միաժամանակ, օրինակ՝ հենց մեր Սայաթ-Նովան: Այս հատկանիշը դիտվել է մեծ վարպետություն և որպես գեղարվեստական հնարանք՝ Արևելքում ստացել «մոլամմա՛» անվանումը³⁰⁹:

Սայաթ-Նովան հայ միջնադարյան քնարերգության մեջ այն բացառիկ դեմքն է, որը, միահյուսելով աշուղական բանարվեստի ու ժողովրդական ստեղծագործության առանձնահատկությունները, համեմատաբար պարզ աշուղական երգը հասցրեց բանաստեղծական արվեստի բարձունքները: Նա իր խաղերի համար գուսանականից յուրացրեց տաղաչափական հնարքները, իսկ ժողովրդականից առավ բանահյուսական գանձերը, լեզուն ու պատկերավորման եղանակները:

Սայաթնովագիտությունը մինչև մեր օրերը անցել է երկար ճանապարհ: Սայաթ-Նովան հուզում և զբաղեցնում է բանասերների արդեն մի քանի սերունդների: Ուղիղ հարյուր վաթսուն տարի առաջ էր, որ Մոսկվայում հայագետ-բժիշկ Գևորգ Ալվերդյանը, ձեռքի տակ ունենալով երգչի ինքնագիրը՝ Դավթարը, Մկրտիչ Էմինի աջակցությամբ հրատարակեց Սայաթ-Նովայի տաղերի անդրանիկ ժողովածուն՝ սկիզբ դնելով սայաթնովագիտությանը հայ գրականության մեջ: Այդ օրվանից հետո շատերն են գրել Սայաթ-Նովայի մասին, շատերն են վերլուծել նրա երգերը, արվեստը, հետազոտել նրա կենսագրությունը: Եվ դա արել են այնպիսի դեմքեր, որոնցից շատերի միայն անունների հիշատակումը մեզանում խորին պատկառանք է առաջացնում. Հովհաննես Թումանյան, Գևորգ Բաշինջաղյան, Նիկոլ Աղբալյան, Մանուկ Աբեղյան, Վալերի Բրյուսով, Ավետիք Իսահակյանը, Մորուս Հասրաթյան, Մկրտիչ Մկրյան, Պարույր Սևակ, Հենրիկ Բախչինյան, Վաչե Նալբանդյան և էլի շատ ուրիշներ: Աշուղ-բանաստեղծի ստեղ-

³⁰⁷ Տե՛ս **Գ. Լևոնյան**, «Հայ ժողովրդական և ուշուղական երգերը», Տեղեկագիր գիտության և արվեստի ինստիտուտի, Եր., 1929, № 4, էջ 176:

³⁰⁸ Տե՛ս **Ս. Հայրապետեան**, Հայոց հին եւ միջնադարեան գրականութեան պատմութիւն, Անթիլաս, էջ 644-645:

³⁰⁹ Տե՛ս **Բ. Չուգասյան**, Հայ-իբանական գրական առնչություններ, Եր., 1963, էջ 134:

ծագործությանն անդրադարձել են նաև վրաց գրականության պատմաբաններ, նաև աղբյուրագիրներ: Այժմ էլ գրում են շատերը, քանի որ հանճարի հետ ունեցած առնչությունները շարունակվում են:

Կարծում ենք անհետաքրքիր չի լինի նշել, որ, ճիշտ է, թեև հայ հասարակությունը Սայաթ-Նովայի բուն ստեղծագործությանը առաջին անգամ գրավոր ծանոթացավ Գ. Ախվերդյանի՝ վերը հիշված մոսկովյան հրատարակությամբ, սակայն «մեծանուն Սայաթնովի» անվանը ընթերցողը արդեն հանդիպել էր Մխիթարյանների «Բազմավեպում» (1847թ.) և Գաբրիել Պատկանյանի՝ Թիֆլիսում հրատարակվող «Արարատ» պարբերականում (1851թ.): Առավել հետաքրքրական է, որ Թիֆլիսում ռուսերեն լեզվով հրատարակվող «Կավկազ» լրագրի 1851թ. տարեկազմի համարներում (№1 և №2) արդեն տպագրվել էր ժամանակի հայտնի ռուս բանաստեղծ և հասարակական գործիչ Յակով Պոլոնսկու բավական հանգամանալից հոդվածը Սայաթ-Նովայի ու նրա ստեղծագործության մասին՝ կից հեղինակի՝ Սայաթ-Նովայի մոտիվներով բանաստեղծությամբ³¹⁰: Երևույթն ինքնին նշանակալից է նաև նրանով, որ Պոլոնսկու հոդվածը մամուլում հրապարակված գիտական առաջին լուրջ խոսքն էր ժողովրդական մեծ երգչի ու նրա ինքնատիպ ստեղծագործության մասին: Ախվերդյանը Պոլոնսկու մտերիմ բարեկամներից էր, որի օգնությամբ ու համապատասխան մեկնաբանությունների շնորհիվ էլ վերջինս ծանոթացել էր Սայաթ-Նովայի կյանքին ու ստեղծագործությանը:

Կողմնակիորեն ասենք, որ եթե մեզանում սայաթնովագիտությունը սկիզբ առավ 1852թ., ապա վրացիների մոտ այն բառիս գիտական իմաստով սկիզբ է առնում միայն 1918 թվականից, երբ Ի. Գրիշաշվիլին Հ. Թումանյանի, Գ. Բաշինջաղյանի և Ն. Մառի օժանդակությամբ ընդարձակ առաջաբանով, ծանոթագրություններով ու բառարանով լույս է ընծայում մեծ երգչի վրացերեն խաղերի ժողովածուն, իր իսկ վկայությամբ՝ նպատակ ունենալով վրացիներին ծանոթացնել Հին Թիֆլիսի՝ մոռացության մատնված գուսանին³¹¹:

Շատ ավելի ուշ է սկսվել Սայաթ-Նովայի աղբյուրներն իսաղերի հրատարակությունը՝ չնայած նրան, որ աղբյուրներն իսաղերը իրենց քանակով գերակշռում են հայերեն և վրացերեն իսաղերին: Ի դեպ՝ աղբյուրներն բառը տվյալ դեպքում գործածվում է պայմանականորեն: Սայաթ-Նովան ստեղծագործել է թուրքերենի (իր լեզվով ասած՝ թաթարերենի) այն բարբառով, որ տարածված էր Ղազախ-Բորչալուի շրջանում և ընդունված է կոչել այրումլուի բարբառ: Ձևաբանական-քերականական համակարգով այն բավական տարբեր է ժամանակակից աղբյուրներենից³¹²:

Միայն 1945 թ.՝ Սայաթ-Նովայի մահվան 150-ամյակի օրերին, աղբյուրանական մամուլում լույս տեսան երգչի իսաղերը, այն էլ թվով ընդամենը ինը: Եվ 1963 թ.՝ երգչի ծննդյան 250-ամյակի առթիվ նոր Բաքվում լույս տեսավ Սայաթ-Նովայի ստեղծագործությունների առաջին աղբյուրներն ժողովածուն³¹³: Մինչդեռ մեծ երգչի աղբյուրներն ժառանգությունը վաղուց ի վեր հետաքրքրել ու զբաղեցրել է հայ բանասերներից շատերին:

³¹⁰ Տե՛ս Սայաթ-Նովայի առաջին չափածո թարգմանության մասին, «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 1967, № 2, էջ 200:

³¹¹ Տե՛ս **Հ. Բայրամյան**, Սայաթ-Նովայի վրացերեն իսաղերի գնահատության շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 1986, № 2, էջ 117-118:

³¹² Տե՛ս **Սայաթ-Նովա**, Խաղերի ժողովածու, Եր., 1987, էջ 5-ի տողատակի ծանոթագրությունը:

³¹³ Տե՛ս **Սայաթ-Նովա**, Խաղերի ժողովածու, Եր., 1987, էջ 7:

Մայաթ-Նովայի կյանքի վերաբերյալ գրվել են վիպերգություններ, պոեմներ, թատերգություններ, ֆիլմեր են նկարահանվել: Նրա տաղերը արդեն XX դարի սկզբներին, բացի ռուսերենից, թարգմանվել են ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն և այլ լեզուներով՝ նրան աստիճանաբար հանելով միջազգային ասպարեզ: Վ. Բրյուսովի գնահատմամբ՝ Մայաթ-Նովան «մեկն է այն «առաջնակարգ» բանաստեղծներից, որոնք իրենց հանճարի ուժով արդեն դադարում են առանձին ժողովրդի սեփականությունը լինելուց և դառնում են համայն մարդկության սիրելին»³¹⁴: 1963 թվականին Խաղաղության համաշխարհային խորհրդի որոշմամբ նշվեց Մայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը, իսկ այս՝ ընթացիկ տարին, ՅՈՒՆԵՍԿՕ-ն հռչակել է Մայաթ-Նովայի 300-ամյակի տարի:

Մի տեսակ ասեք վիպական դեմք է դարձել Մայաթ-Նովան: Թերևս չկա մի ուրիշ երգիչ, որն այնքան ժողովրդականություն ունենա մեզանում, որքան նա: Իսկ ո՞րն է գաղտնիքը, ո՞րն է առեղծվածը: Այդ ինչպե՞ս է ստացվում, որ Մայաթ-Նովայի շատ տաղեր, իրենց կառուցվածքում ունենալով բազմաթիվ անհասկանալի օտար ու բարբառային բառեր և դարձվածներ, մեզ համար չեն կորցնում իրենց արժեքը ու շարունակում են մնալ սիրելի: Այդ ինչի՞ց է, որ այսօր էլ՝ գրեթե երկու հարյուր հիսուն տարի անց, նա խաղում է մեր զգացմունքների հետ, գերում մեզ ու տանում իր հետ: Նա խոսում ու երգում է, իսկ մենք լռում ենք: Ու հաճախ չեն էլ կռահում, նա է երգո՞ւմ ու սիրո՞ւմ, թե ինքա՞: Դեռ Հովի. Թումանյանն է գրել. «Ով նրան մին լսեց, մյուս անգամ ավելի սիրով կլսի, ով նրան մին սիրեց, էլ չի դադարի սիրելուց»³¹⁵: Ինչո՞ւ, ո՞րն է Մայաթ-Նովայի գերող հմայքի գաղտնիքը: Մպառիչ պատասխանը մեկն է՝ որովհետև Մայաթ-Նովան է: Հասկանում ենք, որ այսօրինակ պատասխանը շատ համեստ է, գուցե և միամիտ: Սակայն իսկապես էլ դժվար է մանավանդ կարճ՝ մեկ զեկուցման մեջ, պատասխան տալ այդ հարցին:

Թերևս մեծ մեղք գործած չենք լինի, եթե պատասխանի համար մեջբերենք Պարույր Սևակի խոսքը: Բծախնդիր ունկնդիրը թող մեզ չմեղադրի գրական հնարանքի կիրառման համար, պարզապես ավելի լավ դժվար կլինեք ասել. «Մայաթ-Նովան ա՛յն բանաստեղծն է,- գրում է Պ. Սևակը,- որի հետ **ամփոփվում ենք**, որովհետև նա դրսևորում է մեր իսկ ներսի պատկերները, ոչ միայն անջինջն ու արյունողը, այլև արդեն խունացածն ու սպիացածը՝ ստիպելով հեռզգալ մեր սպիների վերքանման նվոցը, վերլսել մե՛ր իսկ անցած ցավերի ետադարձ արձագանքը մե՛ր իսկ ավերակների մեջ, որ վերաշինվում են նրա՝ օգնությամբ... Բավական է կարդալ Մայաթ-Նովային, և նա ինքն է իր **Խաղը** վերածում... սրտի և ոսկորի, մսի և արյան, հոգու և երակի, հույզի և ջղի՝ բնավ չստիպելով, այլ վայրկենապես հասնելով այն կախարդությանը, երբ բառը դառնում է խտացած ապրում, խոսքը՝ անթեղված կյանք...»³¹⁶:

Սրանից հետո իրավունք ունենք հնչեցնելու միայն Հովի. Թումանյանի հանճարեղ խոսքը՝ չդիմանալով նրա հրապուրիչ գայթակղությանը: Թումանյանի բնութագրմամբ Մայաթ-Նովան «մի հոյակապ սիրահար է, բռնված ու բռնկված սիրո հրդեհով, նրա լույսի տակ էլ նկատում է աշխարհքն ու իրերը. զգում է, որ երվում, վերջանում է ինքը, բայց մնում է արի ու բարի, անչար ու անաչառ, վեհ ու

³¹⁴ Վ. **Նայբանդյան**, Մայաթ-Նովա, Եր., 1987, էջ 3:

³¹⁵ Հ. **Թումանյան**, ԵԼԺ, հատ. 7, Եր., 1995, էջ 62:

³¹⁶ Պ. **Սևակ**, Մայաթ-Նովա, Եր., էջ 142-143:

վսեմ, որպէս աշխարհքի ու մարդու մեծ բարեկամը, հաստատուն սիրով և՛ դէպի էն «զայունը», որ իրեն կրակ տվեց ու միշտ մնաց անտարբեր, և՛ դէպի նրանց, որոնք չորս կողմից տաքացան ու հրճվեցին էն կրակով, որի մեջ էրվում էր ինքը, և՛ դէպի նրանց, որոնք հազար ու մի տեսակ իրեն վշտացրին կյանքում: Զայրացավ, բայց երբէք չսարացավ, ցավեց, բայց երբէք չանիծեց»³¹⁷:

Вачаган Авагян – *Ашугское искусство и Саят-Нова*. – В статье выявляются особенности ашугского искусства при помощи сопоставления общих черт и различий, которые существуют между народными песнями и ашугским искусством. Затем оценивается роль и место, которое Саят-Нова занимает в армянском ашугском искусстве, кратко представляется история саятноваведения и делается попытка раскрыть секрет всеобщей народности искусства Саят-Нова.

Vachagan Avagyan – *Troubadour's music-art and Sayat-Nova*. – In the article it is discussed the peculiarities of troubadour's music-art, especially comparing the commonness and differences of folk songs. Then it is evaluated the place and the role of Sayat-Nova in the troubadour's music-art, concisely it is introducing the history of Sayat-Nova's science, and finally attempting to reveal the secret of people's true love of Sayat-Nova's Art.

³¹⁷ Հ. Թումանյան, ԵԼԺ, հատ. 7, Եր., 1995, էջ 59:

ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԹԱԴԵՎՈՍ ԱՎԴԱԼԲԵՓՅԱՆԻ ԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՐՏՈՒՆՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

ԱՐՄԻՆԵ ԱԴԱՄՅԱՆ

Հովհաննես Թումանյանի ստեղծագործության գնահատման մի հետաքրքր-
քիր փորձ է ժամանակի հայտնի գրական-հասարակական գործիչ, բանասեր Թա-
դևոս Ավդալբեգյանի՝ բանաստեղծի «երկերի մասնակի վերլուծությանը» նվիր-
ված փոքրածավալ ուսումնասիրությունը՝ «Հայ գյուղը Հովհ. Թումանյանի երկե-
րում» վերտա-ռությամբ:

Ելնելով այն մեկնակետից, թե անհրաժեշտ է գաղափարական հստակ
պատկերացում ունենալ Թումանյանի ստեղծագործական հոլովույթի մասին և
«որոշել նրա տեղը հայ աշխարհայացքի պատմության մեջ», Ավդալբեգյանը կա-
րևորում է հայ գյուղի նկարագրության նոր՝ թումանյանական որակը: Ահա թե
ինչու նա իր քննության տիրույթում գերազանցապես նշագրում է Թումանյանի՝
գյուղի թեմատիկայով գրված երկերը՝ իրեն հուզող հարցադրումները մեկնարկե-
լով հենց վերնագրից՝ «Հայ գյուղը Հովհ. Թումանյանի երկերում»: «...Որ Թուման-
յանը հիմնական խնդրում գյուղապաշտ է ու համոզված գյուղերգակ, այս կասկա-
ծի առարկա չէ մեր քննադատական գրականության մեջ»³¹⁸, - հավաստիացնում է
Ավդալբեգյանը՝ վկայաբերելով նրա գեղջուկ հերոսներից մի քանիսին՝ «ան-
բախտ, վաղամեռ Մարոյին, չոբան Կարոյին, խելագար Մաքոյին, վատաբախտ Ա-
նուշին, իգիթ Սարոյին, ընկերասպան Մոսիին, խեղճ Գիքորին, սրանց ծնողնե-
րին, գյուղական ամբոխին...»: Անգամ հայ ազնվագարմ հերոսներին՝ Սասունցի
Դավթին, Ձենով Օհանին ու մյուսներին երգելիս Թումանյանը հարագատ է մնում
իր գաղափարական անշեղ սկզբունքներին՝ նրանց պատկերելով *հայ գեղջուկի*
կերպարանքով ու աշխարհայացքով, համոզված է Ավդալբեգյանը. «Մամիկոնյան
ու Բագրատունի գոռոզ իշխանների փոխարեն մեր առաջից անցնում են նրանց
անունը կրող հայ «*ռանչպարներ*»³¹⁹: Տեսաբանի հետևությունը մեկն է. բանաս-
տեղծի իդեալը «խաղաղ ու հաշտ հողագործի օր ու կյանքն» է, հանդ ու դաշտը,
հունձ ու փունջը, վար ու ցանքը³²⁰: Թումանյանին համարելով «գյուղասեր գրող-
ների դպրոցին պատկանող» բանաստեղծ՝ քննադատը փորձում է տարորոշել
նրա ստեղծագործության տեղն ու դերը հայ գյուղագրական գրականության զար-
գացման աստիճանակարգում՝ զուգահեռաբար դիտարկելով նախորդների
ստեղծագործության գաղափարական կովանները: Արդյո՞ք նա լիովին իդեալա-
կանացնում է հայ գյուղը Խաչ. Աբովյանի օրինակով, թե՛ մերժում է գյուղական
բարքերի ու մտածելակերպի խավար ու դաժան կողմերը Ղ. Աղայանի նմանո-
ղությամբ կամ նշմարում գյուղում ծայր առած տնտեսական ճգնաժամը, ինչպես
Մուրացյանը: Մի բան ակնհայտ է. Թումանյանը հովվերգական բարօրությամբ չի
պատկերացնում հայ գյուղաշխարհը. բավական է զուգադրել նրա «Գութանի եր-

³¹⁸ Թադ. Ավդալբեգյան, Հայ գյուղը Հովհ. Թումանյանի յերկերում, Յերեվան, 1925, էջ 12:

³¹⁹ Նույն տեղում:

³²⁰ Տե՛ս նույն տեղը:

գր» Ռ. Պատկանյանի՝ «Վանեցի գեղջուկի տաղը» բանաստեղծության հետ՝ համոզվելու համար, որ նրա երկերում *գյուղական իրականության նոր ըմբռնում է տիրում*, եզրակացնում է Ավդալբեգյանը: Տեսաբանի վերլուծող միտքն ու համակիր ըմբռնումն ամրագրում են հերթական գեղարվեստական գուգահեռը՝ Հովհ. Հովհաննիսյանի՝ «Իմ հայրենիքը տեսն էլ ես, ասա» բանաստեղծությունը և նրա նմանությամբ գրված թումանյանական հռչակավոր «Parodia»-ն: Հովհաննիսյանի բանաստեղծությունը գրվել է 1880թ., երբ բանաստեղծը ռումանոսիկ հայրենասիրությամբ տարված պատանի էր: Ահա թե ինչու նրա նկարագրած հայրենիքը մի դրախտավայր է՝ չնաշխարհիկ ու նկարագեղ բնությամբ և նյութական բարիքների առատությամբ: «Չկա ոչ մի սև բիծ, ոչ մի գարշ հոտ. ամեն ինչ ու ամենուրեք խինդ է ու բույր, լույս է ու սեր»³²¹, -Հովհաննիսյանի բանաստեղծական տողերն է լուսաբանում Ավդալբեգյանը:

Իսկ Թումանյանը... «Եվ մեր իրատես պոետը հայտարարում է յուր բանաստեղծական դեկլարացիան – նշանավոր «Parodia» - ն...»³²²:

Քննադատը խոր զգացողությամբ ըմբռնում և արձանագրում է թումանյանական «տարբերակի» ռեալիստական բներանգը: Հայտնի է, որ Թումանյանն իր «Parodia»-ն գրել է 1910թ., երբ ոչ միայն հայոց մեծ բանաստեղծ էր, այլև հասարակական խոշոր գործիչ՝ խորապես մտահոգված հարազատ ժողովրդի դառն ճակատագրով: Ուստի և գրեթե անփոփոխ մեջբերելով Հովհ. Հովհաննիսյանի ոգեշունչ տողերը (Իմ հայրենիքը տեսն էլ ես, ասա// Ուր ճոխ ծաղկում է մշտական գարուն)՝ դրանց հակադրում է հայ ժողովրդի ծանր վիճակի պատկերները, այն, որ «թալանում են մերոնք ու այլերը», «կռվում, կեղեքում քոխվեն ու տերտեր»:

Ակներև է, որ Ավդալբեգյանի համար ընդունելի և իրապաշտորեն համոզիչ է Թումանյանի վրձնած պատկերը. «...Մեր առջև կանգնած են *երկու* հայրենիք, *երկու* Հայաստան: Կասկած չկա, որ Թումանյանի նկարած հայրենիքն ավելի իրական է, քան այն Հայաստանը, որ ցույց են տալիս ուրիշները՝ շաքարապատ ու ոսկեգոծ»³²³: Սա էլ հիմք է տալիս նրան՝ եզրակացնելու, թե Թումանյանը հետևել է Ադայանի գրական ավանդներին:

Ելնելով իրեն հուզող խնդրի պահանջներից՝ Ավդալբեգյանն իր ուշադրությունը բևեռում է «գյուղի արատների նկարագրությանը նվիրված» թումանյանական երեք պոեմներին («Մարոն», «Լոռեցի Սաքոն», «Անուշ»):

Հայ գրականության մեջ արժևորվում է «Լոռեցի Սաքոն»՝ հատկապես թեմայի ընտրությամբ, համոզված է քննադատը, քանզի հեղինակը նյութի թեև թռուցիկ, բայց հաջող մշակմամբ փորձել է ցուցադրել ոչ միայն ֆիզիկական քաջության և սնահավատությունից բխող անարիության հակադրությունը, այլև սարսափի աստիճանական զարգացումը մինչև խելագարություն: Ավդալբեգյանը տարբերակում է սովորական վախկոտության և սնոտի նախապաշարումներից ծնվող հոգեկան թուլության՝ իբրև ճակատագրական ախտի սահմանները. Թումանյանի ստեղծագործությունն ընձեռում է մեզ այդ օրինակները:

Կյանքին ու գրականությանը հայտնի սովորական ու ծիծաղելի վախկոտներից չէ Լոռեցի Սաքոն, ինչպիսին Քաջ Նազարն է, որ միայն կնոջ ուղեկցությամբ է համարձակվում գիշերները բակ դուրս գալ. Սաքոն մի լեռնական քաջա-

³²¹ **Թաղ. Ավդալբեգյան**, Հայ գյուղը Հովհ. Թումանյանի յերկերում, էջ 27:

³²² Նույն տեղում, էջ 28:

³²³ Նույն տեղում, էջ 29:

սիրտ տղամարդ է, մի դժբախտ, որի բանականությունը ճակատագրական վայրկյանում մթագնում և լցվում է երևակայության վառ ու կենդանի սարսափներով:

Ավդալբեգյանը ժամանակի այն գրագետներից էր, ովքեր արժանահավատ ու անվիճարկելի իրողություն էին համարում Սաքոյի խելագարության փաստը: Այս տեսակետի համառ պաշտպաններ կարող էին լինել միմիայն գյուղի իրականությանը քաջատեղյակ անձինք, մտավորականները, ինչպես, օրինակ, Ղ. Աղայանը, որի «Արություն և Մանվել»-ը ասվածի աներկբա վկայությունն է:

Նշենք, որ մինչև Թումանյանը հայ գրողներից ոմանք արդեն անդրադարձել էին ժողովրդի հոգեբանության մեջ դարերով արմատացած նանրահավատության ու մարդկային գիտակցության վրա նրա տիրական ու կորստաբեր ազդեցության ցավոտ խնդրին: Բավականանանք մի քանի ցայտուն օրինակներով: Դեռևս Միքայել Նալբանդյանն իր առաջին խոշոր արձակ երկում՝ «Մինին՝ խոսք, մյուսին՝ հարսն» վիպակում, խոր ավստասնքով շոշափում է հիշյալ թեման՝ խոսելով Նախիջևանի անգետ բնակչության, հատկապես անուս կանանց կույր սնտոխպաշտական նախապաշարումների մասին: Նալբանդյանը հիշատակում է նորնախիջևանցիների սնապաշտական համակարգի գլխավոր «հերոսներին»՝ «մեզիմեն աղեկներին»: Դրանք հավերժահարսներ, աննյութեղեն ոգիներ էին, որոնք, երբեմն ստանալով աննյութեղեն կերպարանք, մարդկանց վնաս էին պատճառում կամ առողջություն շնորհում: Նոր Նախիջևանի շրջակայքում անգամ մի քանի «ոգիաբնակ» վայրեր կային, որոնցից մեկը տիրահռչակ Խանլը - Դերեն էր:

Նյութն իսկապես մտահոգել է առաջամիտ Նալբանդյանին. նա, չբավականանալով վիպակում ներկայացրած նկարագրական օրինակներով, տողատակի ընդարձակ ծանոթագրություններում նույնպես խոսում է այդ մասին³²⁴:

Բաֆֆին ևս իր առաջին ծավալուն ստեղծագործության՝ «Մալբու» առանձին էջեր նվիրել է վերոնշյալ խնդրին: Մասնավորապես գրվածքի հեղինակային ծանոթագրություններում ընթերցում ենք.«Բայց ավելի վատթար է այն սովորությունը, որ ծնողները, կամենալով հետ պահել իրանց երեխաները չարություն անելուց, ...զարհուրեցնում են նրանց սարսափելի առասպելներով: Այդպիսով նրանց երեխաները մեծանում են ոչ միայն թուլասիրտ, վախուկ և երկչոտ, այլև մանկությունից ուսած հիմար սնահավատությամբ»³²⁵: Նյութի հանդեպ Բաֆֆու խոր հետաքրքրության պերճախոս վկայությունն է նաև վեպի նախնական տարբերակի անվանումը՝ «Խլվիկ»:

Ռ. Պատկանյանն իր՝ Նոր Նախիջևանի բարբառով գրած պատմվածքներից մեկում («Պողաճի Կարուստ») ակնարկում է «մեզիմեն աղեկների» և նմանատիպ չար ոգիների հանդեպ մարդկանց արմատացած երկյուղի մասին: Երևույթի արձագանքները նկատելի են նաև Պ. Պռոշյանի «Հացի խնդիր» վեպում, մասնավորապես՝ «Շորշոփ ա դիպել, էն էլ Բեհեղգեբուղի շորշոփ» գլխում:

Իր «Արություն և Մանվել» վեպում Ղ. Աղայանը շատ ավելի հանգամանորեն է արծարծում այս թեման: Հիշենք վեպում պատանի բարեկամների միջև ծավալված զրույցի դրվագները, որոնք արտահայտում են լուսավորության ջերմ ջա-

³²⁴ Տե՛ս *Մ. Նալբանդյան*, Երկեր, Եր., 1985, էջ 94:

³²⁵ *Բաֆֆի*, ԵԺ 12 հատորով, հ. 2, Եր., 1983, էջ 75:

տագով հեղինակի վերաբերմունքը հայկական գյուղերում խիստ տարածված այս երևույթի հանդեպ. «Մեր գեղի տղերքը շատ քաջ, շատ աներկյուղ են. ո՛չ թրից ետ կկենան, ո՛չ սրից...: Բայց էդ սրտոտ տղերքը գիշերները գերեզմանատան կամ մի քանդված եկեղեցու մոտով անց կենալիս, որ մի ցից քար են տեսնում կամ մի շվաք, էդ հասարակ բաները նրանց աչքումն էնպես բաներ են դառնում, որ չափազանց երկյուղից սիրտները ճաքում է, լեղիները պատռվում, մի քանի օր չի քաշում, մեռնում են: Հետո ասում են՝ սատանեն տվել է, այսինքն՝ խփել է»³²⁶: Կամ՝ «...Նա էդպես դեպքերում տեսնում է էն, ինչ որ չկա. նա ձայն էլ է լսում, թեպետ ոչ մի ձայն հանող չկա: Նրա երևակայությունը խանգարվում է, և ինչ որ պիտի զգայարանքներից ստանար, երևակայությունն է թելադրում զգայարանքների...»³²⁷:

Ահա և Թումանյանի պոեմի համապատասխան տողերի հետ անմիջական աղերսներ ունեցող ամենահատկանշական հատվածը. «Մոսկալի դները երբ որ ոչ մի կերպով չեն կարողանում վախեցնել, փոխում են իրենց դեմքերը, և հրեշափական կերպարանքները դիմակի պես մի կողմ են ընկնում, և տակիցը դուրս է գալիս ամենաչքնաղ աղջկա պատկերը: Լեզու պետք է, որ հիմի նկարագրե էդ աննման գեղեցկությունը: Գեղեցկուհին շատ գեղեցիկ է, բայց շատ էլ պարկեշտ չէ: Նա թույլ է տալիս իրան ասելու ամեն խոսք, իհարկե հաճոյական, ականջի դյուրեկան, սիրաշարժ...»³²⁸:

Թումանյանի տողերն ասես աղայանական նկարագրության հարագատ շարունակությունը լինեն.

-Կասեն՝ Սաքո՛, մեզ մոտ արի,
Արի՛ մեզ մոտ հարսանիք.
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք գալի,
Միրուն՝ ջահել հարսն-աղջիկ:
Սաքո՛, Սաքո՛, մեզ մոտ արի,
Էս աղջիկը, տե՛ս, ինչ լավն ա...
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք գալի,
Տարա-նի-նա՛ ... տարա-նա-նա՛ ...³²⁹

Տխուր և մտահոգիչ է Աղայանի հետևությունը. «Էդպես բաներով լիքն են մեր գեղերը... Խելոք մարդկերանց համար կարելի է դրանք ոչինչ բաներ են, բայց... էդ ոչինչ բաները մի-մի ախտ, մի-մի ցավ են»³³⁰:

Նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշարի հիշատակմամբ թերևս եզրափակենք բերվող օրինակների շարքը, որոնք բավարար հիմք են՝ Լոռեցի Սաքոյի խելագարության փաստը կենսականորեն հիմնավորված և համոզիչ համարելու համար:

Թ. Ավդաբեգյանը ևս, վկայակոչելով Ղ. Աղայանի նշված ստեղծագործությունը, հավաստի և իրական է համարում Սաքոյի խելագարության հոգեբանական ակունքները՝ ընդգծելով սնտոի նախապաշարումների անդիմադրելի ազդեցությունն ու անդառնալի հետևանքները գյուղաշխարհում. «Շատ ընթերցողներ

³²⁶ Ղ. Աղայան, Երկեր, Եր., 1979, էջ 152:

³²⁷ Նույն տեղում, էջ 154-155:

³²⁸ Նույն տեղում, էջ 156:

³²⁹ Հովհ. Թումանյան, ԵԼԺ 10 հատորով, հ. 3, Պոեմներ, Եր., 1989, էջ 20:

³³⁰ Ղ. Աղայան, Երկեր, էջ 158:

թերևս չհավատան, որ Լոռեցի Մաքոնները կարող են խելագարվել՝ սարերում մենակ մնալով, սակայն գյուղի իրականությանը խոր տեղյակ Աղայանը հաստատում է Թումանյանի պատմածը: Հիշեցեք նրա ասածները գյուղի տղերանց մասին...»³³¹:

Մնահավատությունը սոսկական աննշան նախապաշարումից վերաճում էր չափազանց վտանգավոր մի երևույթի, որը գյուղերում հաճախ հանգեցնում էր մահվան կամ խելագարության:

Քննադատին հաջողվել է նաև «Մարո»-ի խորքային շերտերը թափանցել: Գյուղական ընտանիքներում տիրում է կոյր հնազանդությունը. հատկապես թշվառ և անելանելի է հայ գեղջկուհու դրությունը, որն անշոթա գերի է տղամարդու ձեռքին: «Նա ավելի ստոր է, քան նույնիսկ որևէ այլ ապրանք: Վերջինս վաճառում են, երբ սպառողական արժեք ունի այն, մինչդեռ աղջիկը վաճառվում է նույնիսկ այն ժամանակ, երբ նրա օրգանիզմի մեջ չեն զարգացել սպառողական արժեք ունեցող բնախոսական կողմերը»³³², - գրում է Ավդալբեգյանը:

Պատահական չէ, որ թե՛ այս, թե՛ «Անուշ» պոեմների մասին խոսելիս տեսաբանը դարձյալ զուգահեռներ է անցկացնում «Արություն և Մանվել» վեպի համապատասխան հատվածների հետ: «Անուշ»-ը համարելով «Մարո»-ի «մի ուրիշ, գեղեցիկ ու զարգացրած փոփոխակը»՝ քննադատը հանդիպադրում է Անուշի ու Մարոյի և Օսանայի ու Ռոստոմի դժբախտ սիրո պատմությունները: Բայց եթե Անուշը խելագարվում է, ապա «ավելի կրավորական Օսանան հաշտվում է իր ճակատագրի հետ և մարդու գնում Հավլաբար»³³³:

Իրավացիորեն գնահատելով Մոսու ոխակալության, Անուշի հոր խստասրտության, սիրահարի անպարտ սպանության և սիրուհու հոգեկտուր ողբի էջերը, որոնք «բարբարոս միջավայրի արյունախանձ զայրույթի» զոհերն են դառնում, քննադատը նշում է, թե այդ «միջավայրում մնալը ծանր է նաև Թումանյանի մուսայի համար, և «Լոռեցի Մաքոն», «Մարոն» ու «Անուշը» նրա *օգնության ու հավաքի ճիչերն են գյուղական աշխարհից*, պարողիայի «հայրենիքից»...»³³⁴:

Իր ժամանակի համար խիստ ուշագրավ և ինքնատիպ է Ավդալբեգյան տեսաբանի գնահատական-եզրակացությունը Թումանյանի՝ գյուղը պատկերող ստեղծագործությունների մասին: Նա հորդորում է չհամակվել Փարվանա դատեր վիատ տրամադրությամբ, քանզի անշեջ հուրը գոյություն ունի աշխարհում, և այն մի օր պիտի ջերմացնի հանուր մարդկության կյանքն ու երջանկություն պարզևի նրան: Բայց ելնելով իր քաղաքական-տնտեսական հայացքների ու դավանանքի, ժամանակի իշխող հասարակարգի գաղափարախոսության պահանջներից՝ Ավդալբեգյանը «գյուղի հազարամյա ողբերգության և հողի վշտի նվազների չքացման», սոցիալական անարդարությունների և կեղեքման վերացման «ուրույն» ուղի է առաջարկում: Այն ժամանակ, երբ բարբարոս շահատակությունների դեմ ազատաբաղձ կռվի սասանիչ հորձանքներն իրենց հաղթարշավը կծավալեն բոլոր երկրներում և ազգությունների մեջ, երբ բռնակալության ու խավարի ճիրաններում տառապող ժողովրդական զանգվածներն ի վերջո հասու կլինեն քաղաքակրթության, գիտության, գեղարվեստի և «ամենասուրբ աշխատանքի»

³³¹ Թ. Ավդալբեգյան, Հայ գյուղը Հովի. Թումանյանի յերկերում, էջ 35:

³³² Նույն տեղում, էջ 38:

³³³ Նույն տեղում, էջ 40:

³³⁴ Թ. Ավդալբեգյան, Հայ գյուղը Հովի. Թումանյանի յերկերում, էջ 42:

բարեսփյուռ լույսին, այն ժամանակ, հավատացած է Ավդալբեգյանը, «լուսաշող և երկնահաս ալիքներով կրոցավառվի Փարվանա դստեր երագած անշեջ հուրը նան՝

Հայոց լեռներում,
Կանաչ լեռներում...»³³⁵:

Ինչպես տեսնում ենք, քննադատը հնարավորինս ձգտել է ուրվագծել Թումանյանի՝ նահապետական գյուղին նվիրված գործերի հիմնական գաղափարական միտումները և բովանդակային առանձնահատկությունները: Քննադատը նաև փորձ է կատարել՝ գուգադրելու և որոշելու Թումանյանի տեղը ժամանակակից գյուղագիր հեղինակների ստեղծագործական համապատկերում: Իհարկե, Թ. Ավդալբեգյանի՝ Հովհ. Թումանյանի վերոնշյալ երկերի այսօրինակ մեկնաբանությունը զերծ չէր ընդգծված նեղ և սահմանափակ կադապարումներից, որոնք, ինչ խոսք, մեծապես պայմանավորված էին այն որոշիչ հանգամանքով, որ նա «գրականության հարցերին բացառապես սոցիալ-տնտեսական հարաբերությունների տեսանկյունից էր մոտենում»³³⁶: Եվ, այնուամենայնիվ, Ավդալբեգյանի այս քննությունը հատկանշվում է նաև առողջ ու ուշագրավ դիտարկումներով. միաժամանակ Ավդալբեգյանն առաջիններից մեկն էր, որ ցույց տվեց ոչ միայն Թումանյանի, այլև արևելահայ գրականության մի քանի խոշորագույն ներկայացուցիչների ստեղծագործության խորապես ժողովրդական բնույթը:

Հովհ. Թումանյանի ստեղծագործությունը սոցիալական չափորոշիչներով արժևորելու ակնառու միտումով է բնորոշվում Ալեքսանդր Մարտունու (Ալ. Մյասնիկյան) ուսումնասիրությունը: «Հովհ. Թումանյանի ստեղծագործության սոցիալական արժեքը» վերատառությամբ գրքույկը լույս տեսավ 1923թ.: Լորոքյա քննադատության դիտանկյունից այն մեկնաբանելու դեպքում նկատում ենք, որ հեղինակը միանշանակ հետևություններ չի անում. իր «սոցիոլոգիական ակնարկում» նա «երկբեն» բնորոշումներ է տալիս քնարերգու Թումանյանին և վիպերգու Թումանյանին: Մյասնիկյանական մոտեցման այս յուրակերպությունն ունի իր հիմնորոշ ելակետը. հարկատու լինելով ժամանակի տիրող վարչակարգի կադապարող պահանջներին՝ նա հետևողականորեն պաշտպանում էր գրականության՝ գաղափարախոսությամբ պարտադրված սկզբունքները: Իր ուսումնասիրություններում էապես արժևորելով գեղարվեստի պատմահասարակական դերը, գրական երկերի հասարակական բովանդակությունը՝ Թումանյանի ստեղծագործության քննության դեպքում ևս Մարտունին առաջնորդվում է հիշյալ մեթոդաբանական հիմունքով. նրա համար հանրարժեք ազդակ է դառնում գրականության մեջ և արվեստում հասարակական գործոնի նախամեծարման, հետագոտության սոցիոլոգիական մեթոդի կիրառման և զարգացման մղումը: Կենսական երևույթները, մարդկային կյանքը սոցիալապես վերլուծելու և հիմնավորելու հեղինակային նպատակամիտումը ուղենշում և բացահայտում է տեսական հարցադրումների՝ *գաղափարապես ընդունելի* պատասխանները:

Ալ. Մարտունին արժեքային տարբեր տիրույթներում է քննում և գնահատում Թումանյանի երկերը: Ակներև է, որ քննադատը խանդավառությամբ չի խոսում բանաստեղծի ազգային-հայրենասիրական երգերի մասին. դրանք, նրա կարծիքով, համակված են լավկանությամբ ու հռոտեսությամբ, իսկ հայրենիքին

³³⁵ Երկն տեղում, էջ 45:

³³⁶ Տե՛ս Հայ նոր գրականության պատմություն, հ. 5, Դարասկզբի հայ քննադատները, Եր., 1979, էջ 184:

նվիրված բանաստեղծությունները թույլ են ու ոգեգուրկ, այնպե՛ս տարբեր Ռ. Պատկանյանի խրոխտ ու համարձակ բանաստեղծություններից: Դույզն իսկ չվարանելով՝ քննադատը բանաստեղծի հայրենասիրական քնարին վերագրում է ազգայնական տրամադրություններ, իսկ 1916թ. հրատարակված «Հայրենիքիս հետ» ժողովածուն համարում է «ամբողջապես նացիոնալիզմով տարված գրքույկ»՝ չանտեսելով «ամենախոռուն» մանրամասներն անգամ, օրինակ՝ դաշնակցական խմբապետության «գովերգումը»: Չի ուշանում «համահունչ» ընդհանրացումը. «Թումանյանը նացիոնալիստ է»³³⁷: «Գրականության պատմության իսկությունը» չաղարտելու «անհրաժեշտությունից» ելնելով՝ քննադատը կարևորում է Թումանյանի որոշ երկերի «ազգայնական» բնույթի ընդգծումը՝ այդ իրողությունը բացատրելով ժամանակի հասարակական կյանքի վճռորոշ տեղաշարժերով, որոնք պիտի արտացոլվեին գրողի երկերում: Նահապետական կացութաձևն իր տեղը զիջում էր նորամուտ սոցիալ-տնտեսական հարաբերություններին. Թումանյանն ապրեց ու ստեղծագործեց հնի և նորի խաչաձևման այդ բարդ ու ուրույն ժամանակահատվածում և, բնականաբար, սերելով ու զարգանալով առաջին ակունքից՝ հաղորդակցվեց ու արտահայտեց նաև հաջորդի դիմորոշ առանձնահատկությունները:

Անդրադառնանք քննադատի մյուս նկատառումներին: Իրողություն է, որ Թումանյանը խորապես համակրում ու սիրում է հողի հոգնատանջ աշխատավորին՝ գյուղացուն, անսքող հեզանքով ու դառնությամբ է քողագերծում նրան անգթորեն հարստահարող վաշխառուների շահատակությունները, բայց նա խուսափում է համապատասխան եզրակացությունից՝ իրեն կաշկանդող «քաղքենական» կապերի պատճառով, համոզված է Մարտունին: Այս մտայնությամբ նա «մանր-բուրժուական անգոր և անատամ» բարոյափիլիսոփայության ակներև արտահայտություններ է համարում «Ոռետն ու Մուսան», «Դեպի Անհունը» պոեմները, հեքիաթների ու առակների մի մասը («Գառնիկ ախպեր», «Ոսկի քաղաքը»): Չկարողանալով ճիշտ ըմբռնել Թումանյանի խոհափիլիսոփայության յուրահատկությունները՝ Մարտունին «ամբողջացյալ պեսսիմիզմով» համակված «բավականին ձգձգված պոեմ» է համարում «Դեպի Անհունը», որտեղ «բանաստեղծը տալիս է մեզ իր մեշտանականության կվինտեսենցիան»³³⁸:

Քննադատը, ցավոք, մոլորության մեջ է ընկնում. իր նախապաշար դիտարկումներով կենսագրկելով գեղարվեստական նյութը՝ նա շեղվում է երկի ճիշտ ընկալման կուռ տրամաբանությունից: Թումանյանի գրչին վերագրելով հոռետեսության թանձր երանգներ՝ տեսաբանը յուրովի է լուսաբանում «Դեպի Անհուն»-ի գաղափարական ատաղձը. «...Իսկությունը և երջանկությունը, ըստ բանաստեղծի, գտնվում են ոչ թե այստեղ՝ երկրի վրա, այլ «այնտեղ», այլ վայրում՝ «անհայտ» ու «անձանոթ» աշխարհում: Թողած «անցավոր աշխարհը», թքած մարդկային կյանքի վրա՝ Թումանյանը....աշխատում է վերջիվերջո պոկ գալ իրականից»³³⁹:

Ճի՞շտ էր արդյոք Մարտունին...

Ժամանակին, ինչպես հայտնի է, պոեմը ցնցող տպավորություն գործեց մտավորականների շրջանում, այդ թվում՝ և Թումանյանի գրչակից ընկերներից

³³⁷ Ալ. Մարտունի, Հովհաննես Թումանյանի ստեղծագործության սոցիալական արժեքը, Թիֆլիս, 1923, էջ 4:

³³⁸ Ալ. Մարտունի, Հովհաննես Թումանյանի ստեղծագործության սոցիալական արժեքը, էջ 17-18:

³³⁹ Նույն տեղում, էջ 18:

շատերի վրա: Հիշենք պոեմի անմիջական ունկնդրության ազդեցությունից «անհանգիստ գիշեր ապրած» և «հուզված երևակայությամբ անհեթեթ երազներ տեսած» Ավ. Իսահակյանին, նրա բացատրությանը հաջորդած Թումանյանի կեսլուրջ, կես-կատակ պատասխանը. «Առավոտյան երազներս պատմեցի Օհանեսին: Նա էլ թե՛ սա լավ նշան է, որ պոեմն ազդեցություն է թողնում...»³⁴⁰:

Ինչպես երևում է Նվարդ Թումանյանի հուշերից, պոեմի ունկնդիրներից ևս մեկի՝ Լ. Շանթի վրա ստեղծագործությունը հոգեբանական ծանր ներգործություն է ունեցել, և այդ իրողությունը զգալիորեն անդրադարձել է պոեմի հետագա ճակատագրի վրա. «Ափսոսում էր, որ երկրորդ մասը չի տպել. պատճառը Շանթն է եղել: Պոեմը մի օր կարդացել է նրան, որի վրա պոեմի երկրորդ մասը ծանր ու ճնշող տպավորություն է թողել»³⁴¹:

Զրույցներից մեկի ժամանակ բանաստեղծը դասերը պատմել է առ պոեմն Աղայանի յուրահատուկ արձագանքի մասին. «Աղայանն առաջին անգամ 1898 թվին կարդաց. շատ էր հավանել. կարդալուց հետո լռեց. երկար վրես նայեց ու գնաց գրասենյու: Գնաց, ման եկավ, ման եկավ, մին էլ կարդաց ու ասաց. «Գրել ես, բայց ինքդ էլ չգիտես՝ ինչ ես գրել»: Նրա սիրած գրվածքն էր»³⁴²:

Նվ. Թումանյանի վկայությամբ՝ «Դեպի Անհունը» Թումանյանի երկերի գլուխգործոցն են համարել համաժամանակակից գրական-հասարակական գործիչներից շատերը՝ պատմաբան Հակոբ Մանանդյանը, իրավաբան և հասարակական-քաղաքական գործիչ Սիրեկան Տիգրանյանը, մեծավաստակ հայագետ և պատմաբան Գալուստ Տեր-Մկրտչյանը՝ Միաբանը, և ուրիշներ: Այս և նրանց համակարծիք մյուս մտավորականները գրական-գեղարվեստական նուրբ ճաշակի տեր առաջադեմ անձինք էին, ովքեր արժանին մատուցեցին ձևի և բովանդակության այս նոր ու անսովոր համադրությամբ հանդես եկած Թումանյան նորարարին և հիացմունքով ողջունեցին բնույթով ու ոճով յուրահատուկ այս ստեղծագործությունը: Այնպես խորունկ ու բարդ էր պոեմը և ստեղծագործական այնպիսի բուռն ու ազդու տարերքի բովում էր այն ծնվել, որ Թումանյանն ինքն էլ ժամանակի ընթացքում արժևորեց ու համզգաց «Դեպի Անհունը»-ի անհուն հմայքն ու կատարելությունը: Դեռ 1898-ին Իսահակյանի հետ հանդիպման ժամանակ նա նշել էր, թե պոեմը չի համապատասխանում իր պոեզիայի ոճին. «Խորթ զավակ է այս պոեմն ինձ համար. նյութն էլ, գրելաձևն էլ: Բայց թող լինի, իմանան, որ ֆուլկլորից դուրս էլ կարող եմ բան գրել»³⁴³: Իսկ տարիներ անց, երբ ազգային աղետների և անձնական վշտի, հատկապես սիրասուն որդու՝ Արտիկի ողբերգական մահվան ծանրությունից բանաստեղծի սիրտը ծածկվեց մի մեծ ու անփարատ տրամուրջամբ, նա խոր ու համընդգրկուն հայացքով գնահատեց իր նորաշունչ ստեղծագործությունը: «Երեկոյան հայրիկը «Դեպի Անհունը» կարդաց, - հիշատակում է Նվ. Թումանյանը 1918թ. դեկտեմբերյան գրառումներից մեկում: - Կարդաց ու զգաց, որ դա իսկապես շատ ուժեղ, խորը հոգեբանական գործ է, սահուն է ու սիրուն: Սիրում էր իր «Դեպի Անհունը» և զարմանում, որ քսանչորս տարեկան հասակում էր տեսակ բան է գրել»³⁴⁴:

³⁴⁰ *Ավ. Իսահակյան*, ԵԺ վեց հատորով, հ. 5, Եր., 1977, էջ 53:

³⁴¹ *Նվ. Թումանյան*, Հուշեր և գրույցներ, Եր., 1987, էջ 168:

³⁴² Նույն տեղում:

³⁴³ *Ավ. Իսահակյան*, հ. 5, էջ 53:

³⁴⁴ *Նվ. Թումանյան*, Հուշեր և գրույցներ, էջ 168:

Իր կենսական ու փիլիսոփայական բովանդակությամբ պոեմը ոչ միայն առանձնանում էր հեղինակի ստեղծագործությունների համաշրջայնում, այլև ուրույնանում էր ժամանակի գրականության բազմադրվագ մատյանում. դա մի աննախադեպ հայտնություն էր, որ, բնականաբար, պիտի արժանանար ընթերցող հանրության տարակերպ վերաբերմունքին: Բոլորը չէ, որ ընկալեցին պոեմի տողերում ամփոփված փիլիսոփայական մտքի նուրբ վերթնումները, հաղորդակից դարձան կյանքի և մահվան անքննելի առեղծվածի, մարդու և բնության, ժամանակի և հավերժության փոխհարաբերության շուրջ բանաստեղծի խոհերին... Ժամանակակիցներից քչերը կարող էին ըմբռնել մարդկային կեցության և տիեզերքի մասին թումանյանական ընդհանրացումների ուժն ու էությունը, ուստի ինչ-որ չափով սպասված և «պատճառաբանված» պիտի համարել մտավորականության շրջանում ծայր առած տարակարծություններն ու պոեմի գնահատման թույլ ու անհաջող փորձերը:

Մարտունին ևս չկարողացավ ներթափանցել «Դեպի Անհուն»-ի բյուրեղ ակունքները և որսավ զգացող, երագող ու տառապող սրտի այն մենավորիկ, անլուր մորմոքը, որ որքան այերային, նույնքան երկրային է: Պոեմի արտաքուստ խաղաղ, խոհաձավալ տողերում ներքուստ լեռնացող այդ ալիքը նրա ստորջրյա հոսանքում հաճող մի ցավագին ապրում է, որ գոյանում է մահվան պատճառով: Խորհրդածելով կյանքի և մահվան անլուծելի հանգույցի, վերերկրային հեռաստանների մասին՝ Թումանյանն ամեննին չէր կտրվում իրականությունից և առավել ևս՝ «չէր թքում մարդկային կյանքի վրա», մարդ էակի վրա, քանզի նրա քննախույզ հայացքն ուղղված էր դեպի մարդը, դեպ նրա հետաքրքրություններն ու զգացողությունները, ցանկություններն ու երագները. նա ունկնդիր էր գիտակցականի ու անգիտակցականի, հասանելիի ու անմատչելիի այն գաղտնահունչ համավագին, որի դյուբական հնչյունները հատում են բանական ճանաչողության սահմանները... «Հետաքրքրվելով տիեզերական մեծ հարցերով, բնությունով՝ մարդ կմոտենա տիեզերքին, ու կյանքի մանր խնդիրները կփոքրանան. մարդ էլ չի հուսահատվի»³⁴⁵,-սիրում էր կրկնել մեծ բանաստեղծն իր սիրելիների շրջապատում: Այնպես որ, արծարծելով կյանքի և մահվան հարցը, դիտելով նրանց հարափոփոխ ընթացքը, Թումանյանը հռոտետս չէր դառնում, այլ, ընդհակառակը, փորձում էր *Բարձրից* նայել առօրյա հոգսերին ու մտահոգություններին, բացահայտել այն վեհ ու մնայուն արժեքների խորհուրդը, որ լցնում և բարձրացնում է մարդկային հոգին, իմաստավորում մարդկային գոյությունը: Աննյութականին, ոգեղենին ուղղված նրա բոլոր պրպտումներն իրականում խոր, հողեղեն արմատներ ունեին: Չէ՞ որ երկրային հույսը, երկրային երագներն ու զգացողություններն են հյուսում անխմանալի լույս եզերքների ամպեղեն հույսն ու կարոտը: Պոեմը բնավ էլ չի մղվում վերացական մտքերի ոլորտը: Հետևաբար, սխալվում էր Ալ. Մարտունին՝ Թումանյանին մեղադրելով «երևակայական անուրջական մտորումների մեջ միակ փրկությունը» ակնկալելու և մարդ էակին «անհեթեթություն» համարելու համար³⁴⁶...:

Մարդ արարածն իր արտաքին և ներքին կերտվածքով, իր ձգտումներով ու տենչերով, նվաճումներով և անկումներով միշտ էլ Թումանյանի նվիրական խո-

³⁴⁵ Նույն տեղում, էջ 139:

³⁴⁶ Տե՛ս Ալ. Մարտունի, նշվ. աշխատությունը, էջ 17-18:

հերի կենտրոնական և անխաթար առանցքն է եղել, և այս դեպքում, անշուշտ, միամիտ ու անհամոզիչ է բանաստեղծին «այս անցավոր ու հանցավոր աշխարհը» մերժելու միտում վերագրելու մյասնիկյանական փորձը: Կարծում ենք՝ նմանատիպ հայեցակետի ձևավորմանն ուղղակիորեն նպաստել է քննադատի գաղափարախոսական դավանանքն ու կողմնորոշումը: Չմոռանանք մատերիալիզմը գրական-գեղարվեստական քննադատության միակ ճշմարիտ գիտական մեթոդ համարելու նրա կայուն դիրքորոշումն ու դրա պաշտպանությանն ուղղված մի շարք տեսական հոդվածներն ու ուսումնասիրությունները:

Ինչպես հայտնի է, մատերիալիստական փիլիսոփայության ելակետը աշխարհի մատերիականության գաղափարն է, աշխարհը՝ մատերիան, իբրև օբյեկտիվ, ճանաչելի իրականություն դիտելու դրույթը:

Մեր համոզմամբ՝ տեսանելի, օբյեկտիվորեն ընկալելի բնությունն առաջնային համարող և դրանից մտածողությունն ու ոգին ածանցող տեսաբանը, բնականաբար, անհիմն մոտեցում պիտի դրսևորեր Թումանյանի աշխարհայեցողության հանդեպ՝ այն անվանելով «վարանող, տարուբերող, ճապաղ բարոյախոսություն» և «քաղքենական անձն ու դժգույն», «անորոշ փիլիսոփայություն»:

Միևնույն «երկայթյա տրամաբանությունն» է գործում նաև բանաստեղծի «Քառյակներ»-ը գնահատելիս. դրանք Թումանյանի հոռետեսական ու «փիլիսոփայական» ներշնչումների կատարելագործությունն են ներկայացնում», եզրակացնում է Մարտունին³⁴⁷: Թումանյանի և ոչ միայն Թումանյանի, այլև մի շարք հայ բանաստեղծների՝ Հովհաննիսյանի, Ծատուրյանի, Բսահակյանի խոհաքնարական մտորումները, ըստ Մարտունու, ոչ այլ ինչ են, եթե ոչ «մեծադորոգ, համապարփակ, ընդհանուր ֆրագաներ», քանզի, ինչպես հավելում է հեղինակը, «քաղքենին, այն էլ սեմենարիզմի շկոլան անցկացած քաղքենին շատ է սիրում մեծ-մեծ բրդել,ծակ փիլիսոփայությամբ զբաղվել»³⁴⁸:

Ըստ էության այսպիսին էին «լիրիկ Թումանյանին» տրված այն գնահատականները, որոնք մերօրյա քննադատության տեսանկյունից բնութագրվում են որպես ժամանակի անաչառ քննությանը չդիմացած գրապատմական իրողություն:

Կարծում ենք՝ այդ բնորոշումները հետաքրքիր և դիտելի են՝ իբրև գրական-գեղարվեստական քննադատության զարգացման տվյալ փուլի հատկորոշ արտահայտություն և, իրենց խոցելի կողմերով հանդերձ, փաստագրային արժեք են ներկայացնում դարասկզբի գրաքննադատական մտքի պատմության համար:

Այժմ տեսնենք, թե Մարտունին ինչպես է գնահատում Թումանյանի էպիկական արվեստը. ինչպիսին է «էպիկ Թումանյանի» մյասնիկյանական դիմանկարը: Այս դեպքում նկատելիորեն փոխվում են քննադատող գրչի գունդերանգները. Մարտունին անվերապահ հիացմունքով ընդգծում է Թումանյանի «հումբրայան» ձիրքը: Ըստ տեսաբանի՝ բանաստեղծը նշանավորվեց իր պոեմներով ու լեգենդներով՝ իբրև «ուժեղ ու կատարյալ դյուցազներգակ»: Նահապետական ժամանակներին ակնառու պատմիչի նման «Ջուերոս-Թումանյանը» գեղարվեստորեն կենդանագրեց հնօրյա հերոսների ու դևերի, քաջերի ու կտրիճների, նահապետների ու նանիների կյանքը, ներկայացրեց նոր ժամանակներին անհարիր ավանդույթները, «աղաթը». սա է, քննադատի հավաստմամբ, Թումանյանի «հո-

³⁴⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 19;

³⁴⁸ Նույն տեղում, էջ 15:

մերոսականության» գաղտնիքը: Մարտունու ուշադրությունից մասնավորապես չի վրիպում «Անուշ» պոեմի հարուստ բովանդակությունը: Նա միաժամանակ ընդգծում է պոեմի բնորոշ երանգներից մեկը: «Նախապաշարումների, սնտոիապաշտության և հավատալիքների մի կատարյալ կալեյդոսկոպ է տալիս նա»³⁴⁹, գրում է Մարտունին: Վկայակոչելով «Մարտ»-ի և «Անիծած հարս»-ի դժբախտ հերոսուհիներին՝ քննադատը ցավով արձանագրում է «հայ լեռներում և նահապետական ընտանիքում» ապրող հայուհու ծանր դրությունը. «...Կինը այնտեղ լեզու ու բանականություն չունի և չի էլ կարող ունենալ»³⁵⁰:

«Առասպելների և դյուցազների երգիչ», «լեռան սիրահար», «անդնդախոր Լոռու հայրենասեր», «գեղունակ երգիչ». այսպես պատկերավոր է Մարտունին բնութագրում վիպերգու Թումանյանին:

Ուշարժան և կարևոր է Մարտունու տեսակետը «Լոռեցի Սաքո»-ի վերաբերյալ: Վերևում մենք հիշատակեցինք ժամանակին պոեմի, մասնավորապես գլխավոր հերոսի խելագարության դրվագի շուրջ բորբոքված բուռն կրքերի մասին: Գնահատելի է, որ այս դեպքում քննադատը դրսևորում է խոր դիտողականություն՝ հիմնավորապես հաստատելով կերպարների հոգեբանությունը և միջավայրի ազդեցությունը գեղարվեստորեն պատճառաբանող պատկերի բնականությունը և ճշմարտացիությունը. «Մաքոն զոհ է դառնում հավատալիքների, հրաշքների. հիվանդ երևակայությունը լեռնականին, հսկային վախ է ներշնչում. բնության զավակը բնության ույժերի, իրա բնության դեմ ահ է զգում: Վախը նրան դուրս է բերում փարախից, տանում է դեպի ահռելի խորխորատը և զցում է ձորեձոր: Խավարի ու տգիտության զոհը խելագարվում է»³⁵¹:

Անդրադառնալով ժողովրդական էպոսի երրորդ ճյուղի թումանյանական մշակմանը՝ Մարտունին որոշակիորեն արտահայտված սոցիալական միտումներ է տեսնում այնտեղ՝ երևույթը բացատրելով ժամանակի իրականության խընդիրներով և դրանց վերաբերյալ հեղինակի մտահոգություններով: Սասունցի Դավիթը, ազնվագարմ դյուցազուն լինելով հանդերձ, մարմնավորել է ժողովրդի մարդուն բնորոշ բոլոր հոգեկան հատկությունները. նա ռամկի պես միամիտ է, վեհանձն, պարզ ու բարեբարո, մշտապես տարված հողագործ ժողովրդի հոգսերով ու ցավերով:

Երկի գաղափարական այս ուղորդումամբ Թումանյանը «ոտք է դնում սոցիալական գրականության պարտեզը». սա է քննադատ Մարտունու համոզումը:

Դարձյալ առաջնորդվելով սոցիոլոգիական քննադատության հայեցակետով՝ Մարտունին սոցիալական երանգներ է վերագրում Թումանյանի առակներին և հեքիաթներին: Նա պատերազմին և իշխողներին հակուղղված «մեծ ու տաղանդավոր ծաղր» է համարում «Քաջ Նազար»-ը՝ Թումանյանի հեքիաթներից «խոշորագույնը և հասարակության դաստիարակության տեսակետից ամենաուսանելին»: Իսկ ահա «Գութանի երգը», «Տերն ու ծառան», «Գիքորը» ստեղծագործությունները քննելիս Ալ. Մարտունին ծայրահեղ հետևության է հանգում՝ դրանք համարելով «դասակարգային կամ աշխատավորական ոգով գրվածքներ»³⁵²: Ավելին՝ քննադատի մտայնությամբ՝

³⁴⁹ Ալ. Մարտունի, նշվ. աշխատությունը, էջ 23:

³⁵⁰ Նույն տեղում, էջ 25:

³⁵¹ Նույն տեղում, էջ 26:

³⁵² Տե՛ս Ալ. Մարտունի, նշվ. աշխատությունը, էջ 32:

«Գիրքը» հայկական սոցիալական, աշխատավորական ու նույնիսկ բանավորական (ի բաց առյալ Չարենցի հեղափոխական կերտվածները) բոլոր գրվածքներից ամենաուժեղը, ամենաբովանդակալիցը և ամենաշնորհալին է»³⁵³:

Թումանյանի ստեղծագործության վերաբերյալ Ալ. Մարտունու ամփոփիչ ընդհանրացումը հետևյալն է. Թումանյանի՝ իբրև խոշորագույն գրողի մեծագույն արժանիքն այն է, որ նա հարազատորեն գեղանկարեց կուսական նահապետական կյանքը. «Հայ նահապետականությունը և դյուցազներգությունը Թումանյանին դարձրին խոշորագույն գրող»³⁵⁴:

Այսպիսով՝ Մարտունի քննադատի ուսումնասիրությունը հատկանշվում է տարարժեք հետևություններով, որոնցից շատերը արդի գրաքննադատության տեսանկյունից բնորոշվում են որպես ժամանակավրեպ բնութագրումներ. գնահատելին, սակայն, այն է, որ հեղինակն ընկալեց ու արժևորեց Թումանյանի ստեղծագործության կենսական տարերքն ու ժողովրդական ոգին:

Армине Адамян – Туманян в оценке Тадевоса Авдалбегяна и Александра Мартуни. – В статье представлены литературные взгляды представителей восточноармянской критики начала 20-ого века – Тадевоса Авдалбегяна и Александра Мартуни относительно творчества Ованеса Туманяна.

В пределах своего исследования Т. Авдалбегян рассматривает туманяновские произведения, написанные на темы сельской жизни. Считая Туманяна одним из поэтов школы писателей, любивших село, сельскую жизнь, критик пытается определить место и роль Туманяна в панораме развития армянской литературы, которая частично посвящена описанию сельской жизни. Авдалбегян параллельно рассматривает идейные основы творчества предшественников поэта. Критик стремится по возможности начертать основные идейные тенденции вышеупомянутых произведений Туманяна.

Интерпретации Авдалбегяна несомненно были присущи заметные ограничения, которые, главным образом, были обусловлены тем определяющим обстоятельством, что литературные вопросы были трактованы исключительно в аспекте социально – экономических отношений. И все же, исследование Авдалбегяна характеризуется также здоровыми и примечательными наблюдениями.

Для небольшого исследования Ал. Мартуни (Александр Мясникян) характерна тенденция оценки творчества Туманяна по социальным критериям. В своем “социологическом очерке” Мартуни дает Туманяну различные характеристики. Такая особенность подхода критика была обусловлена сковывающими требованиями господствующего режима того времени. Он последовательно отстаивал навязываемые идеологией литературные принципы. Если критик недооценивает лирику Туманяна, приписывая национально – патриотическим песням поэта плаксивость и пессимизм, то в то же время он с восхищением подчеркивает талант эпика – Туманяна, его “гомери-ческий дар”.

Многие наблюдения Ал. Мартуни с точки зрения современной критики характеризуются как литературно – историческое явление, не выдерживающее объективной оценки времени.

³⁵³ Նույն տեղում, էջ 34:

³⁵⁴ Նույն տեղում, էջ 37:

Armine Adamyan – *Toumanian Estimated by Tadevos Avdalbegyan and Alexander Martouny.* – At the beginning of the 20th century Eastern Armenian representatives of criticism Tadevos Avdalbegyan’s and Alexander Martouny’s literary opinions about Hovhannes Toumanian’s works are represented in the article.

Within his investigation T. Avdalbegyan touches upon Toumanian’s works written about the theme of village. The critic regarding Toumanian as a poet belonging to the “writers’ school of village-lover” tries to distinguish the place and the role of his works in the hierarchy of the development of village-literary literature parallelly observing the ideological stems of predecessors’ works. The critic possibly aimed to outline the basic ideological tendency in Toumanian’s works representing the village. Certainly T. Avdalbegyan’s interpretation about above marked Toumanian’s works was not free from emphasized narrow and limited definitions which, of course, are greatly settled with the definite reason that he was approaching the literary questions from the viewpoint of exceptionally social-economic relationship. And, nevertheless, Avdalbegyan’s investigation was characterized with reasonable and remarkable observations as well.

Toumanian’s works estimated with social standards are characterized in Al. Martouny’s (Alexander Myasnikyan) small-sized investigation. In his “sociological essay” Martouny differently characterizes Toumanian-lyric poet and Toumanian-epicist. This kind of peculiarities are settled with suppressed demands of the present forms of governing. He successively supported the ideologically obliged principles of literature. The critic underestimates lyric Toumanian attributing “tearfulness and pessimism” to his national-patriotic songs. But at the same time he emphasizes epic Toumanian’s epicing talent, “Homeric gift” with admiration. A lot of observations of Al. Martouny are characterized from the point of today’s criticism as a literary-historical fact being beneath un-biased criticism of the time.

ՇԱՎԱՐՇ ՆԱՐԴՈՒՆՈՒ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԺԱՆՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԶԱՐՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Շավարշ Նարդունու, ինչպես գրականագետ Հարություն Քյուրքճյանը կրնույթագրեր, «տարաշխարհիկ» հեքիաթները հայ գրականության մեջ իրապես նմանը չունեն։ Այդ հեքիաթների հիմնական նյութը հայկական հեթանոսական անցյալն է, դրանք կարելի է «հեթանոս հեքիաթներ» անվանել, կարելի է անվանել նաև «հոգեվերլուծական հեքիաթներ», քանի որ հաճախ դրանք գրված են հոգեվերլուծական մոտիվներով։ Նարդունու հեքիաթները ինքնօրինակ են ոչ միայն ներժանրային ու բովանդակային, այլև՝ ժանրային հատկանիշներով։

Հեղինակային հեքիաթներից բացի Նարդունին մշակել, փոխադրել, թարգմանել է նաև օտար ժողովուրդների հեքիաթներ։ Այդ հեքիաթներից շատերը պատմում են երկնային և երկրային էակների սիրո, մահկանացուների մահվան և հարության մասին։ Նարդունու հեղինակային հեքիաթներից ու ավանդազրույցներից շատերն իրենց թեմաներով, մոտիվներով և նույնիսկ պոետիկայով հիշեցնում են հատկապես արևելյան ավանդազրույցները։ Տվյալ պարագայում էական չէ՝ գրողն օտար հեքիաթների և հայկական ավանդազրույցների նմանությամբ է ստեղծել սեփականը, թե օտար ժողովուրդների բանահյուսությունից փոխադրելու, թարգմանելու կամ մշակելու համար ընտրել է իր հեքիաթների թեմատիկ կամ տիպաբանական զուգահեռները։ Էական չէ քանի որ Նարդունու հեքիաթները գերծ են սխեմատիզմից։

Հեքիաթի և ավանդազրույցի ժանրային սահմանները Նարդունու մոտ այնքան էլ հստակ չեն գատորոշված։

«Ինչպես ցանկացած բանահյուսական ժանր, այնպես էլ հեքիաթը, բնական է, որ գտնվում է այլ ժանրերի հետ բազմաթիվ խաչաձևումների ու ներթափանցումների մեջ։ Որոշ դեպքերում, եթե այդ ներթափանցումն այլ ժանրի ստեղծագործության ուղղակի մեջբերում է տվյալ տեսակի շրջանակներում, այն առանձնացնելն ու հստակեցնելը այնքան էլ բարդ չէ։ Մակայն կան դեպքեր, երբ այդ խաչաձևումները կատարվում են ոչ ուղղակի ճանապարհով։ Մասնավորապես բանահյուսության մեջ կան սյուժեներ, որ կարելի է հանդիպել տարբեր ժանրերի խմբերում ընդգրկված՝ և՛ առակների, և՛ զրույցների, և՛ զվարճապատումների, և՛ հեքիաթների»³⁵⁵։

Հաճախ դժվար է հստակ ժանրային տարբերակում մտցնել Նարդունու հեքիաթների և ավանդազրույցների մեջ, ընդ որում այդ հեքիաթները ոչ միայն բանահյուսական, այլև զուտ գրական ժանրերի հետ են ներհյուսված։ Երբեմն հեքիաթի և պատմվածքի, արձակ բանաստեղծության և հեքիաթի սահմաններն այնքան են պայմանական, որ ժանրի որոշակիացման համար դետալների մանրագին հետազոտություն է պահանջվում։ Դա է թերևս պատճառը, որ գրողը

³⁵⁵ *Նվարդ Վարդանյան*, «Ժանրային խաչաձևումներ», Ոսկե դիվան (հեքիաթագիտական հանդես), Պրակ 2, 2010, էջ 118։

ստեղծագործության վերնագրի տակ, իբրև կանոն, հարկ է համարում փակագծում որոշակիացնել ժանրը՝ հեքիաթ է, թե ավանդագրույց, իսկ երբեմն էլ, կանոնի բացառություն իբրև, երբ ժանրային չափանիշների կիրառումն անհնար է, պարզապես խուսափում է այդպես վարվել: Ինչևէ, Նարդունու մոտ հեքիաթը երբեմն առակ է, երբեմն ավանդագրույց, երբեմն արձակ բանաստեղծություն, երբեմն էլ՝ պատմվածք: Հեղինակի առաջին իսկ՝ «Ալլօս հեքեաթներու» ժողովածուի մեջ ավանդական ժանրային ընկալումներին համապատասխան որևէ հեքիաթ չես գտնի: Իրապես դժվար է, ինչպես նկատում է Գեղամ Սևանը, Նարդունու հեքիաթներն «ընկալել ժանրի ընձեռած արտոնություններով»³⁵⁶: Նարդունու առաջին գրքի ստեղծագործություններն, ամեն դեպքում, դժվար է հեքիաթ անվանել, սակայն գրքի վերնագիրն արդեն ժանրի հեղինակային ընկալման յուրակերպության մասին է խոսում:

Կա՞ն արդյոք ժանրին բնորոշ այնպիսի հատկանիշներ, որոնք Նարդունու այս ստեղծագործությունները մոտեցնում են հեքիաթին: Անշուշտ դա միջավայրն է, Նարդունու վաղ ստեղծագործությունների հեքիաթային մթնոլորտը, հեքիաթային այլաբանությունը: Անշուշտ հեքիաթ համարվելու համար ստեղծագործությունը պետք է ունենա սյուժե: Սակայն Նարդունու հեքիաթներում դեպքերն ու գործողությունները հազիվ են ուրվապատկերվում: Նրա հեքիաթների ֆաբուլան, ըստ էության, կարելի է վերապատմել մի քանի նախադասությամբ: Դիպուկ է նկատել «Ալլօս հեքեաթներու» գրքի գրախոսը, թե Նարդունու համար «հեքեաթը, փոքրիկ մարմինով, արձակ քերթուած մըն է, ուր դեպքն ու գործողությունը հազիվ թե կ'ուրուագծուին, որոնք յաճախ կը կորսուին շրջապատին փարթամութեան մեջ. նման ծաղիկի մը՝ որ կորած է կանանչներուն մեջ և պետք է փնտռել՝ գտնելու համար»³⁵⁷:

Նարդունու շատ հեքիաթներում գործողությունն իրապես քիչ տեղ է զբաղեցնում, նրանցում գերիշխում են բնապատկերն ու բնության նկարագրությունը, որ գրավում է առանց այդ էլ փոքրածավալ ստեղծագործությունների ծավալի զգալի մասը, իսկ բուն գործողությունը հաճախ հեքիաթի վերջին պարբերության մեջ է ամփոփված: Ինչ վերաբերում է «Ալլօս հեքեաթներու» գրքի հեքիաթներին, ապա այստեղ մենք ավելի շատ գործ ունենք համեմատությունների, բնության երևույթների փոխաբերությունների զարգացման, քան սյուժետիկ զարգացումների հետ: Այսպես «Ծոցիկը-բաց» հեքիաթը (մեր դիտարկման հաստատումն է, որ այս ստեղծագործության ժանրը Նարդունին բնորոշում է որպես *երգ-հեքիաթ*) Լուսնի մասին է: «Ես տեսած եմ մեր բոլոր լուսնկաները, ամպերուն տակը ծփուն ու ալեշրջիկ, որոնք այդ ոգիներուն դեմքերն են, - քրմական լուսինը, շրջանակաձեւ ապրշումի բոց պաստառ մը, որու վրայէն սրբազան սկիհը վերցուած է. փրփրուն ու շողո՞ւն լուսինը, թանկագին քարը՝ երկինքի աղեղին. քրքում լուսինը, դեղնատուն եւ միսթիք. հով գիշերուան լուսինը, արծաթ սկահակալ՝ օշինդրի դառնօղիով թրջուած. ու դժբախտ լուսինը, կաքաւին ոսկեգեղ գլուխին պէ աղեղ շինած մահի՞կը, սիրականիս յօնքին նման»³⁵⁸:

Ինչպես մեջբերված հատվածից է երևում, մենք իրոք գործ ունենք բանաստեղծական ձոնի հետ, որի ներսում զարգանում է ոչ թե սյուժեն, այլ բուն պատկեր-

³⁵⁶ **Գեղամ Սևան**, «Մփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր», էջ 77:

³⁵⁷ Նույն տեղում՝ էջ 78:

³⁵⁸ **Շ. Նարդունի**, «Ալլօս հեքեաթներու», Աթենք, 1927, էջ 6:

րը, որ բանաստեղծական ռիթմին զուգընթաց հարաճում է փոխաբերության: Լուսինը նորանոր համեմատությունների մեջ է մտնում. մերթ երկնքի աղեղի թանգակին քարն է այն, մերթ ոսկե պարեգոտ հագած և ոսկե մական բռնած գեղադեմ պարմանի, քանզի «լուսնկան արու ոգին է, կ'ըսէ, որ բազում ախտերով կը վարակէ անհաւատները», մինչդեռ՝ «արելը՝ շիկնոտ աղջիկ մը, որ ասեղներով կը ծակծկէ իրեն ցանկացողներուն երեսը»: Հովիտ իջնող բլուրի վրա՝ կալի եզերքին «աննման հարս մըն է կուշտին վրայ ինկեր՝ քնացեր: Ուսին են թափուած մագերը, լուսնի լուսով արծրթուն: Անոր երեսը օծուած է անճառելի երանութեամբ մը, որ քաղցրօրէն կ'երփնէ դէմքը բոլոր գեղուհիներուն, որոնք իրենց սիրտո՞վը կը յանձնուին այրերուն»: Լուսինն աղջկա բաց ծոցի վրա է ընկել և «կ'ուզէ խմել շոդակաթ ծոցին ալիքը»: Բայց հանկարծ մթան մեջ փայլում է մանգաղը և գյուղացի ամուսինն անգթորեն պատժում է իր դավաճան հարսին: Այդ օրվանից լուսինը մահիկ է կոչվում: Ինչպէս տեսնում ենք, այս փոխաբերությունը լուսնի և մանգաղի նմանության բանաստեղծական յուրօրինակ հանգուցալուծում է:

Բանաստեղծության սյուժեն, լինի արձակ, թե չափածո, տրամադրության և պատկերի զարգացում է: Այս տեսանկյունից Նարդունու այս ստեղծագործությունը, նաև իր ներքին բանաստեղծական ռիթմով, ոչ այնքան հեքիաթ, որքան արձակ բանաստեղծություն է հիշեցնում և դրա համար էլ հեղինակն այն անվանել է երգ-հեքիաթ:

Մեկ ուրիշ՝ «Հարսին աղբիւրը» հեքիաթում, որ ամբողջովին բնության երգ է, հազիվ երևում են հեքիաթի հերոսները ջրանուշն ու նրա մերկությամբ հմայված քուրմը: Հինգ էջանոց հեքիաթի տկար, հազիվ ուրվագծվող սյուժեն ամփոփված է ընդամենը մեկ պարբերության մեջ:

Այս երգ-հեքիաթներն, ինչպէս Նարդունին ինքը կ'ընտրոշէր դրանց ժանրը, «Ալպօմ հեքեաթներու» ժողովածուի քիչ թէ շատ *սյուժեով* հատկանշվող գրվածքներն են. մնացած ստեղծագործություններն արձակ բանաստեղծություններ են, ուր չկա սյուժեի ոչ մի երևակում:

Նարդունու հեքիաթներն օժտված են նաև մեղեդայնության հասնող բանաստեղծականությամբ և բանաստեղծականությունն անշուշտ բնապատկերից է բխում. չնոռանանք, որ ռիթմն ու մեղեդայնությունը մարդուն բնությունն է հուշել հենց: Պատահական չէ, որ Նարդունու արձակ բանաստեղծությունները բնության մասին են: «Նարդունի,-գրում է Գ. Մխիթարյանը,-կ'երգէ առասպելական ժամանակներու, հեթանոսական օրերու կեանքը, իր գիւղին մէջ ամփոփելով զայն, երազին տանելով ու բանաստեղծութեան: Անոր համար հեքեաթը, պատմութեան նիւթը առիթ մըն է միայն, բանաստեղծութեան համար»³⁵⁹:

Այսպիսով՝ «Բանաստեղծութիւն և բնութիւն - երկու տարրեր, որոնք կ'աղտորցնեն հեքեաթը, կը զարդարեն անոր **նիհար մարմինը** (ընդգծումը մերն է - Ջ. Ա.), զայն ծածկելու, իրենց ալիքներուն մէջ թաղելու աստիճան»³⁶⁰:

Ներքին բովանդակային և արտաքին կառուցվածքային այս հատկանիշներն էլ պայմանավորում են Նարդունու հեքիաթների ժանրային յուրակերպությունը: Գ. Մխիթարյանը նկատում է, որ Նարդունու «հեքեաթները կը դառնան գրական կամ գրականացված հեքեաթներ, Օշականին նման, և ատոր համար ալ

³⁵⁹ **Գուրգէն Մխիթարեան**, Շ. Նարդունի եւ իր հեքեաթներու «Ալպօմ»ը, «Զվարթնոց», Փարիզ, 1929, էջ 78:

³⁶⁰ Նույն տեղում՝ էջ 79:

չեն նմանիր բուն ժողովրդական հեքեաթներուն, պարզ ու միամիտ, որ իսկ գոնէ Զարդարեանի հեքեաթներուն, ջիշելու համար այլևս այն օտար հեքեաթները, զորս ինք իսկ թարգմանեց քանի մը անգամ»³⁶¹:

Նարդունին իր երկրորդ «Մեղեդիներ. մեղեդիներ...» ժողովածուն, որ գերազանցապես հեքիաթներից և ավանդազրույցներից է կազմված, խորագրել է «հեքեաթ եւ բանաստեղծութիւն»: «Մեղեդիներ ր, մեղեդիներ ր» ժողովածուի մեջ արդեն կան բազմաթիվ պոմետիկ հեքիաթներ: Այստեղ արդեն հստակեցման կարիք ունեն արձակ բանաստեղծության և պատկերի, արձակ բանաստեղծության և խոհագրության, հեքիաթի և պատմվածքի սահմանները, քանի որ Նարդունու որոշ հեքիաթներ էլ պատմվածքներ են հիշեցնում: Առհասարակ համաշխարհային գրականության մեջ բազմաթիվ գրական պատմվածքատիպ հեքիաթներ են ստեղծվել: Պատմվածքներ կարելի է համարել Հանս Բրիստիան Անդերսենի բազմաթիվ հեքիաթներ, կամ (ավելի ժամանակակից օրինակ) Պեր Լագերկվիստի «չար հեքիաթները», սակայն Նարդունու հեքիաթները համաշխարհային գրականության մեջ իրենց նմանօրինակը կարծես թե չունեն: Բանն այն է, որ դրանք պատմվածք են հիշեցնում ոչ այն պատճառով, որ իրապատում հեքիաթներ են: Դրանք հաճախ մոգական ռեալիզմի ոճով գրված պատմվածքների են նման, թեև ամեն դեպքում հեքիաթներ են: Հիրավի Նարդունու արձակում մենք նկատում ենք մոգական կամ միֆական ռեալիզմի ինչ-ինչ տարրեր: Հիշենք, որ լատինա-ամերիկյան գրականությամբ իր անվանումը հաստատած այս ուղղությունը բնորոշվում է ռեալիզմի մեջ կոլեկտիվ անգիտակցականի, միֆական մտածողության թափանցմամբ:

Այսօրինակ ստեղծագործություն է Նարդունու «Լերան բարկութիւնը» հեքիաթ-պատմվածքը գյուղացի մի աղջկա մասին, ում առևանգելու մտադրությամբ անձանոթ տղաներ են հետապնդում: Աղջիկը նրանց հետապնդումից ազատվելու նպատակով քարափից ցատկում է անդունդ ու հրաշքով մնում ողջ: Հրաշապատում է արդյոք, թե անհավանական չէ, այնուամենայնիվ, որ մարդը, լեռան գլխից ընկնելով վայր, ողջ մնա: Իրականի և անիրականի այս սահամանն է սհա քաներորդ դարի վերջին քառորդի գրական ուղղություններից մեկի՝ մոգական ռեալիզմի իրականության պատկերման կարևորագույն սկզբունքներից մեկը: Հրաշքն աղջկա ընկալման մեջ է. «Լեռը, սակայն, շարժեց իր անտեսանելի թեւերը, գրկեց աղջիկը և յամրաբար իջեցուց վար, ձորին եզերքը: Աղջիկը զարմացա՜ւ, սպշեցաւ՝ երբ, թիթեռնիկի պէս թրթռալով և օրորուելով, հանգչեցաւ գետնին վրայ: Ծաղիկները զլուխ հակեցին իր ոտքերուն տակ: Յօդերը վեր ցատկեցին և մուճակներուն վրայ աչքեր բացին: Իրա՜ւ էր, դեռ կենդանի էր: Նայեցաւ ջուրին, որ կը հոսէր իւղի պէս. սինձի ճիւղ մը, քիչ մը անդին, կը պատռէր զայն՝ ինչպէս շղարշ մը:

Քալեց եզերքն ի վար:

Երբ ձորն ի վար բաց դաշտը հասաւ, գեղուհին փնտռեց իր գիւղին ճամբան: Հունա՜, գի՜ւղը. իր գի՜ւղն էր ան: Միրտը բաբախեց: Հրճուանքով լեցուած՝ ծափ զարկաւ ու ոստոստեց: Ահա վերը, լերան կողերուն վրայ, իր հօտը, ճերմակ ծուխի մը նման, վար կը սահէր արդէն:

Ուրեմն հրա՜շք էր»³⁶²:

³⁶¹ Նույն տեղում՝ էջ 78:

Աստիճանաբար դեպքերը հրաշքի հերքման ուղով են զարգանում: Ոչ ոք չի տեսել աղջկա ընկնելն ու փրկվելը, անգամ հետապնդողները. սա կարևոր մանրամասն է. գյուղում ոչ ոք չի հավատում, թե լեռից ընկնելով հնարավոր է ողջ մնալ, ամեն ինչ արդեն ընկալվում է աղջկան չհավատացողների տեսանկյունից, նրանց հետ ընթերցողն էլ չի հավատում աղջկան, մնում է ամեն ինչ վերագրել նրա երազկոտ բնավորությանն ու երևակայությանը, հատկապես, որ լեռան գլխին՝ ցատկելուց առաջ, նա փակում է աչքերը, իսկ հետապնդողները նահանջում են: Իսկ եթե աղջիկը չի ցատկել. չէ՞ որ երազկոտ բնավորություն ունեւր և ամբողջ օրն ինքն իր հետ, միայնակ բնության գրկում էր անցկացնում: Գյուղացիներին հավատացնելու համար սնապարձ գեղուհին բոլորին կանչում է իր հետևից, որ լեռան գլխից մի անգամ էլ ցատկի: Գյուղացիները վերից տեսնում են, թե ինչպէս է աղջիկը ցատկում ու քարերի վրա ջախջախվում: Այսպէս հրաշքը, թե աղջիկը ցատկել էր լեռան գլխից և ողջ մնացել, հերքվում է. մենք կանգնած ենք մահվան իրողության դեմ, հնարավոր է, որ աղջիկը, բնության գրկում քնած, երբազ էր տեսել, որ լեռան գլխից ցատկել ու ողջ է մնացել: Ահա այսպէս ընթերցողը «Լերան բարկութիւնն» ընկալում է ոչ թե իբրև հեքիաթ, այլ պատմվածք մի աղջկա մասին, ով երազը շփոթում է իրականության հետ: Եթե «Լերան բարկութիւնը» հեքիաթ լինէր, մտածում է հրաշապատում հեքիաթների տրամաբանությանը ծանոթ ընթերցողը, ապա աղջիկը պիտի հարություն առնէր, քանի որ հեքիաթն ինքը երազի նման է, և «արվեստի հոգեբանները իրավացիորեն հաճախ են հեքիաթները համեմատում երազների հետ: Հեքիաթում էլ, ինչպէս երազում, իրականությունը խիստ անսովոր է. իրերն ու երևույթները, դեպքերն ու դեմքերը հառնում են անսովոր կոմբինացիաներով: Հեքիաթում էլ ինչպէս երազում, մարդը կարող է հարություն առնել, խոսել, կենդանու վերջույթներով մարդ դառնալ ու տարօրինակ չթվալ»³⁶³:

Նարդունու ստեղծագործության այսօրինակ հանգուցալուծումը թելադրված է ավարտի հնարավոր միակ տարբերակի տրամաբանությամբ. եթե աղջիկը դարձյալ ողջ մնար, ստեղծագործությունը կգնար դեպի անհեթեթության ոլորտ: Մյուս կողմից Նարդունու այս ստեղծագործությունը նման է պատմվածքի նաև պատումի՝ նկարագրական մանրամասնություններով, հատկապես բնապատկերներով հագեցած ոճով, իսկ նկարագրականությունը, մանրամասները, որոշակիությունը սովորաբար պատմվածքին են բնորոշ, փոքր ծավալի մեջ մանրամասները խորթ են հեքիաթին և միայն ժամանակակից *ֆենթազի* կոչվող ժանրի լայնակտավ հեքիաթներում են, որ մանրամասնությունները գործառույթ են կատարում: Հեքիաթին հատուկ է նաև գործողության կատարման տեղի անորոշությունը, հեքիաթների գործողությունները կատարվում են մտացածին, երևակայական աշխարհներում, որոնք հորինված անուններով են հանդես գալիս, հեքիաթը նաև միջակայան անորոշ ժամանակ է ենթադրում: Գրականագետ Զավեն Ավետիսյանը նկատում է. «Հեքիաթային երևակայության կայուն օրինաչափություններից մեկն էլ այն է, որ նրանցում ծավալվող դեպքերը, գործող հերոսները չունեն ոչ պատմական ոչ էլ տարածական ու ժամանակային կոնկրետություն»³⁶⁴: Մինչդեռ Նարդունու հեքիաթները հաճախ իրականության բազմաթիվ հղումներ ունեն,

³⁶² *Շաարշ Նարդունի*, «Մեղեդիներ. մեղեդիներ...» Փարիզ, 1933, էջ 91:

³⁶³ *Զավեն Ավետիսյան*, «Գրական ստեղծագործության հոգեբանություն», Եր., 2011 թ., էջ 24:

³⁶⁴ Նույն տեղում՝ էջ 24:

դրանց գործողության կատարման տեղն ստույգ է՝ գրողի հարազատ գյուղն է դա՝ Արմաշը, և Նարդունին հեքիաթներում բաց չի թողնում իր գյուղի մասին պատմելու առիթը, նկարագրում է նրա տեղանքը, սարերի, ձորերի անվանումները տալիս. մի խոսքով նրա հեքիաթները հստակ տեղագրություն ունեն: Մյուս կողմից՝ Նարդունու հեքիաթները նաև ավանդագրույցներ են հիշեցնում: Մյուս կողմից՝ Նարդունին հեքիաթը պատմում է որպես արժանահավատ իրադարձություն, որ իրականության բազմաթիվ հղումներ և ապացույցներ ունի:

Նարդունու պարագայում հեքիաթը, կարծես թե հերքվում է երջանիկ ավարտի բացակայությամբ, քանի որ «հեքիաթայինը բոլոր մյուսներից տարբերվում է նրանով, որ իրագործման թե՛ ուղիները, թե՛ միջոցներն ու միջավայրը նրանում ռեալ, բանական ուղիների միջոցների ու միջավայրի նկատմամբ ծայրահեղ հակադրության մեջ են. այստեղ ամեն ինչ բացարձակ է, հրաշապատում, իրագործմամբ՝ անսպասելի, ավարտվածությամբ իդեալական: Հեքիաթային երեվակայության սկզբունքային ելակետն անսովոր իրապայմաններում չարի պարտության և բարու հաղթանակի պարտադիր ելակետն է»³⁶⁵: Մինչդեռ Շավարշ Նարդունու հեքիաթների առանձնահատկություններից մեկն էլ, այսպես կոչված, «իդեալական ավարտի» բացակայությունն է: Ավելին՝ երջանիկ ավարտին փոխարինելու է գալիս աղջկա ողբերգական բախումն իրականության հետ մահվան ելքով: Սակայն ուշադրություն դարձնենք, որ հեղինակը չի թողնում, որ պատմությունը վերածվի պատմվածքի, հեղինակի կողմից այն ընկալվում է որպես հեքիաթ: «Լերան բարկութիւնը» վերջին նախադասությամբ եզրափակվում է իբրև հեքիաթ-առակ: «Լեռը, բարկացած, վրէժն էր լուծեր աղջիկէն, որ զինք փորձելու էր ելեր»³⁶⁶: Լեռանը բարկություն է վերագրվում, իմա՝ հեղինակն իր ստեղծագործությունն ընկալում է ոչ թե պատմվածք, այլ հեքիաթ-առակ, որ քողարկված խրատական բովանդակություն ունի, լեռն աղջկան պատժում է սնապարծության համար:

Այսպիսով Շավարշ Նարդունու հեքիաթի ժանրային սահմանները հասնում են մի կողմից բանահյուսական՝ մասնավորապես արևելյան հեքիաթների և հայկական ավանդագրույցի, մյուս կողմից գրական՝ արձակ բանաստեղծության ու պատմվածքի ժանրերին՝ ձևավորելով ժանրային առանձնահատկություններով և ինքնատիպ բովանդակությամբ հատկանշվող տեսակ:

³⁶⁵ Նույն տեղում՝ էջ 22:

³⁶⁶ *Շավարշ Նարդունի*, «Մեղեդիներ. մեղեդիներ...» Փարիզ, 1933, էջ 92:

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՐԲԱՌԻ ԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ
ՀԱՅԵՐԵՆ ՏԱՂԵՐՈՒՄ

ԼՈՒՍԻՆԵ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Սայաթ-Նովան մեծ ժառանգություն ունի ուշ միջնադարի հայ գրականության ու հոգևոր մշակույթի ասպարեզում: Նա հայ գուսանական-ժողովրդական քնարեր գության բարձրակետն է, ու ռուս նշանավոր գրող Վ. Բրյուսովը իրավացիորեն գրել է.

«Աշուղների պոեզիան անհասանելի բարձունքներին հասցնող երգիչը եղել է Սայաթ-Նովան. իր հանձարի ուժով ժողովրդական երգի արվեստը նա դարձրեց պոետի բարձր կոչումը»³⁶⁷: Մեծ երգիչը նորովի է իմաստավորել XVI դարում ծայր առած աշուղական արվեստի ձևն ու բովանդակությունը:

Սայաթ-Նովայի ստեղծագործությունները, ընդգրկելով լեզվական տարբեր համակարգեր, ներկայացնում են որակական-գեղարվեստական տարբեր մակարդակներ:

Նա կատարյալ աշուղ-բանաստեղծ է հայերեն խաղերի մեջ. այստեղ նրա գրիչն ավելի ազատ է ու վստահ, գույները՝ շլացուցիչ, զգացմունքը՝ անմիջական ու թրթռուն: Երգչի ձեռագրերի առաջին երախտավոր վերլուծող Գ. Ախվերդյանի հավաստումով՝ հայերեն բոլոր խաղերը գրված են «վրաց բավական վարժ նոտրգրով», դժվար ընթեռնելի են, և բառերում երբեմն բացակայում են բաղաձայն ու ձայնավոր հնչյունները³⁶⁸:

Սայաթ-Նովայի վրացատառ գրելու պատճառը, ըստ Ռ. Իշխանյանի, թերևս, «Թփղիսի բարբառի արտասանական անարատությունը»³⁶⁹ պահպանելն էր՝ բարբառի հնչյունական համակարգը չաղճատելու մտահոգությունը:

Գ. Ախվերդյանը, խաղերը հայերեն տառադարձելիս, ձեռագիրը ոչ թե արտագրել է, այլ «ստիպված է եղել բնագիր կազմել», ուստի և տառադարձումը ճշգրտել, լրացրել է կռահումներով՝ տալով բազմաթիվ բացատրություններ: Ն. Աղբալյանի վկայությամբ՝ Գ. Ախվերդյանը «բնիկ թիֆլիսեցի էր և հմուտ էր մայրենի բարբառին», զիտեր գրաբար և աշխատանքի ընթացքում երբեմն «խաչաձևել է գրաբարի ուղղագրության ու բարբառի հնչումը»³⁷⁰:

Կարելի է ասել, որ հիմնականում գործ ունենք խաղերի լեզվի բազմիցս ստուգված ու ճշգրտված հնչյունական հենքի հետ, որը և կփորձենք ընդհանուր տեսքի բերելով՝ ներկայացնել ամենավստահելի լեզվական իրողությունները:

Իրեն «խալիխի նոքար»՝ ժողովրդի ծառա հայտարարած աշուղ-բանաստեղծը, որոշեց ընտրել ժողովրդի լեզուն, նրա խոսակցական հարուստ բարբառներից

³⁶⁷ В. Брюсов, Поэзия Армении... (под ред. В. Брюсова), Ереван, 1966, стр. 63-64:

³⁶⁸ Սայաթ-Նովա, ...Երևան, 19, էջ ԺԳ, ԺԴ:

³⁶⁹ Ռ. Իշխանյան, Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, Երևան, 1975, էջ 75:

³⁷⁰ Ն. Աղբալյան, Երկեր, հ. 2, Սայաթ-Նովայի հետ, Բեյրութ, 1966, էջ 21:

մեկը, որը ճյուղավորվել էր Անիի և Հյուսիսային Հայաստանի միջնադարյան խոսակցական լեզվից. **Ում** ճյուղը զարմանալիորեն հյուսվել է հին **Կու** ճյուղին՝ պահպանելով բաղաձայնների հին հնչումը³⁷¹:

Թիֆլիսի բարբառի ընտրությունը պատահական չէր, քանի որ Վրաստանում բնակվող հայ բնակչությունը խոսում էր իր մայրենի՝ թիֆլիսահայ դարավոր ու ուրույն բարբառով, որով ստեղծված էր հարուստ բանահյուսություն՝ երգեր, խաղեր, առակներ, ասացվածքներ ու հեքիաթներ: Մայաթ-Նովան լավ էր տիրապետում իր միջավայրի ժողովրդախոսակցական լեզվին, գիտեր նաև պանդուխտ հորից սովորած Հալեպի բարբառը, մասամբ նաև՝ գրաբար:

Ստեղծագործելով թիֆլիսահայ բարբառով՝ երգիչն այն դարձրեց բարձրարժեք քնարերգության լեզու: Հավատարիմ մնալով իր կոչմանը՝ աշուղ-բանաստեղծը գրել է հանրությանը հասկանալի լեզվով՝ ձգտելով նաև տուրք չտալ ցածր ճաշակին, հետևել գեղագիտական բարձր չափանիշների:

Մայաթնովագետներից շատերը նշում են, որ հայերեն գրելուն նրան խթանեց նաև «մի գորավոր հանգամանք. այդ նրա մեծ սերը համապատասխան խորությամբ արտահայտելու բուռն մղումն էր: Ազատ տիրապետելով աղբյուրներից և վրացերենին, անգամ գրագետ լինելով այդ լեզուներում, այնուամենայնիվ նա չկարողացավ ֆահրադյան ու մեջնունյան սերն արտահայտել ոչ մայրենի լեզվով»³⁷²:

Անժխտելի է, որ վրացերեն խաղերն իրենց բնագրային վիճակով կարող են որակապես գերազանցել որոշ հայերեն խաղերի, բայց ընդհանուր առմամբ, հայերեն երգերն իրենց գեղարվեստական արժեքով անհամեմատ բարձր են, անկրկնելի իրենց անմիջականությամբ ու պարզությամբ, անօրինակ՝ իրենց նրբությամբ ու գունագեղությամբ:

Համեմատելով Մայաթ-Նովայի վրացերեն ու հայերեն երգերը՝ Իոսեֆ Գրիշաշվիլին գրել է. «Հայերեն բանաստեղծություններում Մայաթ-Նովան երևան է գալիս իր ողջ էությանբ: Նրա հայերեն երգերում հաճելի կերպով ցայտում է ներքին և արտաքին հանգը, մեղմ նազանքը, ամոթխած կիրքը, և անսպասելի խորաթափանցությամբ երևան է գալիս ժողովրդական պարզ իմաստությունը»³⁷³:

Մայաթ-Նովայի հայերեն խաղերի լեզուն միատարր չէ. այն կազմված է գերազանցապես հայերեն, ապա արաբերեն, պարսկերեն, թուրքերեն, վրացերեն բառերից:

Բացի հայերենի համընդհանուր բառերից, որոնց մի մասը, Թիֆլիսիի բարբառում ենթարկվելով նրա հնչյունաբանական ու ձևաբանական օրենքներին, բնորոշ ձևափոխության է ենթարկել /ոտ-վուտ, լեզու-լիզու, երկիր-յիրգիր, մենք-մինք և այլն/: Հանդիպում ենք նաև այնպիսի ձևերի, որոնք միայն այդ բարբառին են բնորոշ՝ **բրոյի-բյուր**, շատ, անչափ³⁷⁴ /42/, **գամ-անգամ**, մի անգամ /38/, **դիփ, դիփունք**- բոլորը /68/, **ինչրու**- մինչև որ /37/, **հեստի**- այնպիսի /4/, **իծում-հետո** /33/, **մեբաշ**-հանկարծ, միանգամից /21/, **դուրթ**- ճշմարիտ, ճշմարտություն /14/:

³⁷¹ **Ա. Ղարիբյան**, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 262-263:

³⁷² **Մայաթ-Նովա**, Խաղերի ժողովածու/ խմագրությամբ և ծանոթագրությամբ Մ. Հասրաթյանի, Երեվան, 1963, էջ XIX:

³⁷³ **Բ. Գրիշաշվիլի, Գ. Լեոնիձե**, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Երևան, 1983, էջ 38:

³⁷⁴ **Մայաթ-Նովա**, Խաղերի ժողովածու, էջ 59: Այսուհետև երկից մեջբերումները կտրվեն տեղում՝ փակագծեր մեջ նշելով միայն խաղերի համարները:

Մայաթ-Նովայի հայերեն տաղերում բավական շատ են մեր ժամանակակից գրական լեզվին հատուկ բառերը: Նրա ապրած ժամանակաշրջանում դեռևս աշխարհաբար գրական լեզուն ձևավորված չէր, սակայն աշխարհաբար խոսակցական լեզվի զարգացումը ընթանում էր այն ուղիով, որ իր մեջ ներառելով գրաբարից ու բարբառներից եկած բառերը, աստիճանաբար պիտի դառնար բազում բարբառներով խոսող հայության համար ընդհանուր և մատչելի լեզու: Հանդիպում ենք արդի լեզվին հարազատ ձևերի «գլխիս ծառա օխտը **նորահարս** ունիմ» /59/, «**հիմքըս վերստին** նուրեցին» /62/, «**թանգ** հախով **զընած** չըրաղ իմ» /8/, «**անուշահամ գինով լիքը**» /8/: Ուտանավորի հանգավորումը, չափը պահպանելու համար նա հաճախ խուսափում է բարբառային ձևերից և տալիս է բառի տվյալ լեզվական ժամանակաշրջանին բնորոշ գրական ձևը, ինչպես քեզանից, լավանալ, ցամաքիլ, փոխանակ քիզնից, լավնալ, ցամքիլ:

Լեզվական առումով բավական հետաքրքիր է Մայաթ-Նովայի 61-րդ խաղը, որի տողերի կեսը գրաբարով է գրված, կեսը թուրքերեն: Սակայն նշենք, որ դա մեր դասական գրաբարը չէ, այլ գրաբարախառն թիֆլիսահայ բարբառն է: Ներկայացնենք մի քանի նմուշներ՝ անապատեն **բարբառեցար**, թագ ու պարծան իս **կուսանանց**, ավետիս **համայն առաքյալ**, աղաչում է **երեսն անկյալ**, սանդարավիտն **գորոք սարսյալ**:

Հայկականից բացի, նա մեծ չափով կիրառում է նաև պարսկականը, արաբականը, թուրքականն ու վրացականը:

Ն. Աղբալյանը, ներկայացնելով բանաստեղծի լեզվի բառային կազմը, գտնում է, որ երգչի՝ առատորեն գործածած արևելյան փոխառյալ բառերը «խճողում են բարբառը», և անտարակուսելի է նաև հալեպցի հոր լեզվի ազդեցությունը նրա խաղերի լեզվի վրա³⁷⁵:

Նշենք, որ լինելով վրաց արքունիքի բանաստեղծը՝ մեծ երգիչն ինչ-որ չափով տուրք է տվել այն պալատական-ներբողական ոճին, որն ընդունված էր պարսկական պալատական բարբերի ազդեցության տակ գտնվող վրաց արքունիքում. նա իր խաղերում օգտագործում է այն մտիվները, ձևերն ու պատկերները, որոնք դարեր շարունակ զարգացել ու տարածվել էին Արևելքում:

Սակայն դա միայն արևելյան արտաքին հանդերձանքն է, մինչդեռ բովանդակային խորքով, պատկերային համակարգով, իմաստի արտահայտման եղանակներով և բուն գաղափարներով նա միանգամայն տարբեր է արևելքի բանաստեղծներից և հարազատ է ազգային մշակույթի ոգուն: Մայաթ-Նովայի երգերում, ինչպես ասել է Ավ. Իսահակյանը. «Տեսնում ենք Արևելքը՝ հայկական բեկումով...հայկական անհատականության միջով անցած»³⁷⁶:

Մայաթ-Նովայի գործածած բառերի 37%-ից ավելին օտար բառեր են: Դրանց գերակշռող մասը արաբերեն, պարսկերեն և թուրքերեն բառեր են: Արաբերեն բառերի թիվը հասնում է 298-ի³⁷⁷: Այդ բառերն իրենց գործառնություններով շատ բազմազան են. բացի կոնկրետ առարկաներից կամ տարբեր երևույթներ արտահայտող արաբերեն բառերից՝ կան նաև մշակույթին, արհեստներին, առևտրին և բժշկությանը և վարչական-պաշտոնական բնագավառներին վերաբերող արաբերեն բառեր՝ **ատլաս**, **դումաշ** /տուրք կերպաս/, **դալամ** /գրիչ, բարակ վըր-

³⁷⁵ Ն. Աղբալյան, նշվ. աշխ., էջ 21:

³⁷⁶ Ավ. Իսահակյան, ԵԺ, հ. 5, Երևան, 1977, էջ 224:

³⁷⁷ Ա. Քոչոյան, ՊԲՀ/1/, Մայաթ-Նովայի հայերեն խաղերի բառային կազմը, 1963թ., էջ 260:

ձին/, **դավթար, դուքան, զափռանգ** /քրքում, շաֆրան՝ վառ դեղին առեջքով ծաղիկ/, **հեքիմ, միլամ** /սպեղանի/, **մեջիս** /հավաքույթ, խնջույք/, **վեզիր, վեքի** /հավատարմատար, տեղակալ/ և այլն:

Արաբերեն բառերի և հայերենի դերբայական վերջավորությամբ կազմվում են հարադիր բայեր և դերբայական դարձվածքներ՝ **թամամ**-լրիվ, **թամամի**, **խեր**-օգուտ, շահ, **խերվի**՝ օգուվել, օգուտ քաղել, **խիալ**-կասկած, **խիալ անիլ**-կասկածել, **մալում**- հայտնի, ճանաչված, **մալում անիլ**՝ ճանաչվել և այլն:

Տաղերում գործածված օտար բառերի մյուս խումբը պարսկերեն բառերն են: Պարսկերեն գոյական անուններն ու ածականները գրեթե նույնությամբ /որոշ հնչյունափոխությամբ/ մտել են բարբառի մեջ: Պարսկերեն բառերով և հայերենի օժանդակ և վերացական բայերի միջոցով կազմվում են բազմաթիվ հարադիր բայեր, օրինակ՝ **բեղամաղ անիլ**-վիրավորել, **դաստուր տալ**-թույլատրել, **բհամ գալ**-ծագել, սերել, **ռաստ** /հանդիպել/- ռաստ գալ, ինչպես նաև մի շարք այլ բառաձևեր՝ անջաղ, աշկարա, բաբաթ, չունքի, և այլն:

Սայաթ-Նովայի տաղերում թուրքերեն բառերով կազմվում են հիմնականում բայի դերբայական ձևեր և հարադրություններ, ինչպես՝ **բեզարիլ, բարիշիլ** /հաշտվիլ/, **բեղամաղ անիլ** /վիրավորել/, **դիմիշ անել** /չինսայել, չափստսալ/, **դուլուլ անիլ** /ծառայել/ և այլն:

Սայաթ-Նովայի լեզվում գործածված բոլոր փոխառությունները Թիֆլիսի բարբառում ենթարկվում են հայերենի քերականական օրենքներին, հոլովվում են ու խոնարհվում, ինչպես հայերեն բառեր, ստանում են հոդեր, **իր, նիր, էք** և այլ հոգնակիակերտ մասնիկներ:

Սայաթ-Նովան իր պատկերները կամ միտքը ավելի ուժեղացնելու կամ արտահայտիչ դարձնելու համար հաճախ կողք-կողքի միևնույն նշանակությունն ունեցող տարալեզու գույգ բառեր է գործածում՝ որպես հոմանիշներ հայերեն, կամ հայերեն և օտար, կամ միայն օտար բառերով՝ «Ամեն մե մըտիկ տալով **խիլ-քրս, քամալքս**» /խելքը հոմանիշ է քամալ՝ գիտակցություն արաբերեն բառին/, հայերեն՝ «**Անարատ, մաքուր** իս, ախպե՛ր» /13/, կամ՝ **ցանկապատ** նշանակությամբ վրացերեն **դոբա** և պարսկերեն **չափար**՝ «Վունց **դոբա** ունիս, վունց **չափար**» /24/, վրացերեն՝ «Զարուգարբաբե **դրոշ** ա՛ ման իս գալի **ալամի** պես» /39/: Գրքավածքի ռճին զարդարանք տալու, իսկ առանձին դեպքերում էլ իմաստային որոշ նրբություններ արտահայտելու համար ռճական այս հնարանքին են դիմել դեռևս 5-րդ դարի հեղինակները և այս երևույթն անվանել **պեսայխություն**³⁷⁸:

Վրացերեն փոխառյալ բառերը Թիֆլիսի բարբառում և Սայաթ-Նովայի տաղերում այդքան էլ շատ չեն՝ թվով շուրջ 22, և դրանք կարելի է բաժանել երկու խմբի՝ ա/ բառեր, որոնք նույնությամբ, առանց փոփոխության, օգտագործվում են Թիֆլիսի բարբառում՝ **պուճպուճա**-կանաչ, **ջիլջիլա**-թիթեղ, **մաթաբա**-պղնձյա խոր ափսե, **միթամ**-իբր և այլն:

բ/ բառեր, որոնք հայկական երանգով են օգտագործվում լեզվի մեջ, ինչպես՝ **թավաղ** /իշխան/, **դիլ** /կոճակ/, **փոթուլ** /տերև/, **դիլ** /կոճակ/ և այլն, որոնք վրացերենում հնչում են այսպես՝ թավաղի, դիլի, փոթուլի, դիլի և այլն³⁷⁹:

Աշտուղական երգարվեստում բավականին տարածված էին համանուններով բառախաղերը: Սայաթ-Նովայի խաղերում բազմիցս հանդիպում ենք բառա-

³⁷⁸ Տե՛ս **Ա. Աբրահամյան**, Երևան, 1976, էջ 394:

³⁷⁹ **Ա. Քոչոյան**, ՊԲՀ /1/, Սայաթ-Նովայի հայերեն խաղերի բառային կազմը, էջ 261:

խաղային հանգերով թեջնիաների, որտեղ ավելի լավ է երևում Սայաթ-Նովայի լեզվախմբությունը, քանի որ հանգավորումը կատարվում է տարբեր լեզուներին պատկանող բառերով՝

Յիս կանչում իմ **լալանին**,
Բադեշխանեն **լալ անին**,
Վայ թե հասրաթեդ մեռնիմ,
Բիլբուլ լեզուս **լալ անին**,
Դոստիրըդ հեռու կանգնին,
Յադիրն գան **լալ անին** /21/:

Bien qu'elles soient dans un positionnement anatomique symétrique, les mains ne sont pas interchangeables. Chacune possède ses caractéristiques dans les usages quotidiens (gaucher, droitier) et possède son propre statut : la main droite présente la droiture et la gauche les mauvaises choses (sinistra). Un bon ouvrier aura de la dextérité pendant qu' "gaucher sera un petit ouvrier". Il est intéressant de se questionner sur cette prédominance de la main droite sur la main gauche. En fait les mains symbolisent la polarité de l'univers et offrent une lecture binaire : le bien et le mal, la vie et la mort, le masculin et le féminin, le sacré et le profane. Cette opposition entre la main gauche et la main droite est commune à diverses religions telles que le christianisme, l'hindouisme ou l'islam. Chaque main est aussi dédiée à des usages sociaux, en référence aux notions de pureté et impureté, de bienséance, de loyauté, de justice, de chance, de réciprocité et générosité. Dans de nombreuses cultures la main droite est celle de la pureté, celle qui est consacrée à la prise d'aliments alors que la main gauche est dédiée à l'impureté, à la souillure, aux excréments. Au Moyen Age, dans les traditions ésotériques, le côté gauche était considéré comme femelle, nocturne et satanique et le côté droit comme mâle, diurne et divin. Mais la main gauche était aussi mise en rapport avec la justice alors que la main droite était l'expression de la miséricorde.

La main est une partie anatomique qui est très souvent visible, mais elle peut être aussi dissimulée au regard. Elle est souvent nue pour pouvoir être plus performante sauf lorsque le travail demandé à la main l'exige ; elle porte des gants de travail, des gants médicaux, des gants de jardinage, des gants de boxe ou de ski ou encore un gant de toilette. Lorsqu'on lutte contre le froid, on utilise des gants de laine, mais la main peut être cachée pour des raisons de pudeur, de coquetterie ou de méfiance lorsque l'on sort de chez soi et que l'on veut éviter le contact avec le monde extérieur. La main gantée devient un signe de distinction comme les gants à crispin, en vogue au XVII^e siècle et qui se caractérisaient par une manchette à revers de cuir ornemental souvent à franges ou brodé. Mais attention à la fause douceur de la texture du gant lorsque nous avons une "main de fer dans un gant de velours".

"Etre entre les bonnes mains", "se remettre dans les mains de quelqu'un", c'est avoir confiance en l'autre, lui reconnaître une parcelle de la bonté divine.

Dans le cas magie noire, l'objet inverse l'accord et la bienveillance dans la mesure où l'intercesseur, sur commande et à l'insu d'une personne déterminée, va intercepter son âme et détourner son comportement. Cet agissement est considéré comme "diabolique" puisqu'un être humain se substitue au rôle et au feu divin.

En étudiant les proverbes de quelques langues, nous voulons montrer comment les proverbes touchant à la main constituent des moyens de connaissance, de reconnaissance et de communication entre les corps physiques et le corps sociaux des différents espaces culturels.

- On ne mesure pas l'huile sans avoir les mains grasses (Espagnol).
- Une seule main lavée ne peut pas être propre, on doit laver les deux ensemble (Wolof).
- Qui peut moucher autrui, doit avoir les doigts propres (Danois).
- La femme qui s'entend avec son mari fait tourner la lne entre ses doigts (Arabe).
- La paix avec un gourdin dans la main, c'est la guerre (Portugais).
- Les doigts d'une même main ne s'entrecroisent pas (Français).
- La vie d'un homme est semblable à un oeuf dans la main d'un enfant (Roumain).
- Ne brûle pas tes doigts pour moucher la chandelle d'autrui. (Anglais)
- Une mésange dans la main vaut mieux qu'une grue dans le ciel (Russe).
- La main est instrument des instruments (Grec).
- Ma main est mon dieu (Latin).
- Une main rude est le signe d'un brave esprit (Anglais).
- La terre gouvernée par pa lèvre et la mer par la main (Danois).
- Froides mains, chaudes amours (Français).
- Dix langues qui affirment ne valent pas deux yeux qui voient, deux yeux qui voient ne valent pas une main qui palpe (Siamois).

BIBLIOGRAPHIE

1. Gilles Boëtsch, Federica Tamarozzi, Morceaux exquis. "Le corps dans les cultures populaires", Paris 2011.
2. Gilles Boëtsch, Federica Tamarozzi, Morceaux exquis." Il y a un corps entre nous", Paris 2011.
3. Jacques Jouet, "Les mots du corps", Paris 1990.
4. Jean Claude Bologne, "Les allusions littéraires", Paris 1989
5. Alain Rey, Sophie Chantreau, Dictionnaire d'expressions et locutions, Le Robert, Paris 2006

Միդա Մարդանյան – “Ձեռք” բառով կազմված ֆրանսերեն ասացվածքները միջոցառության համատեքստում: – Մույն հոդվածում մենք փորձել ենք ցույց տալ, թե ֆրանսերենում ինչ մեծ տեղ են զբաղեցնում “ձեռք” բառով կազմված ասացվածքները: Ձեռքի կարևորությունը կայանում է նրանում, որ նրա միջոցով մարդ կարողանում է շոշափել, որը շատ կարևոր է: Բացի այդ մարդկային ձեռքը աշխատանքի, ընկերության, համերաշխության, անձի անհատականության ձևավորման, առանց բառերի խոսքի խորհրդանիշն է համարվում: Նշված կարևոր հատկանիշներն էլ հենց հիմք են հանդիսացել բազմաթիվ ասացվածքների ստեղծման համար, որի արդյունքում էլ մարդկային խոսքը համեմվել է “ձեռք” բառով կազմված և միևնույն ժամանակ շատ մեծ կիրառելիություն ունեցող

ասացվածքներով: Հետազոտությունները ցույց են տվել, որ բազմաթիվ լեզուներում “ձեռք” բառով օգտագործվող ասացվածքները հիմք են հանդիսանում միջ-մշակութային հաղորդակցման զարգացման և ընդլայնման համար:

Aida Mardanyan – *French Proverbs with the Word “Hand” in the Intercultural Context.* – We have tried to show in this article that proverbs including the word “hand” or “hands” have an important place in French language and culture. It is with the hands that man experiences the world. The human hand symbolizes friendship, work, harmony, and is the symbol of communication without words. This symbolism is important for the creation of many proverbs utilizing the word “hand.” Research has shown that in many languages proverbs including the word “hand” are the basis of the development of intercultural communication.

Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՇԱՐԺԻ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱԿՄԵԼ ՊՈՏՈՍՅԱՆ, ՇՈՂԻԿ ՔՈՒՅԱՆ

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ժամանակակից պայմաններում առանձնակի կարևորություն և նշանակություն ունեն ժողովրդագրական հիմնախնդիրները, որոնք սրվել են բոլոր մարզերում ու տարածաշրջաններում՝ պայմանավորված դրանց սոցիալ-տնտեսական և բնաաշխարհագրական պայմանների առանձնահատուկ պայմաններով:

ՀՀ-ում տեղի ունեցած քաղաքական, տնտեսական և սոցիալ-մշակութային փոփոխությունները վերջին երկու տասնամյակում զգալի տեղաշարժեր են առաջացրել բնակչության թվաքանակի ու կառուցվածքի, տեղաբաշխման ու տարաբնակեցման, ժողովրդագրական իրավիճակի և այլ ոլորտներում: Այդ երևույթներն առավել ցայտուն և տիպիկ են դրսևորվում ՀՀ մարզերում ու տարածաշրջաններում և մասնավորապես՝ գյուղական բնակավայրերում, քանի որ վերջիններս առավել զգայուն են տնտեսական և սոցիալական ոլորտներում տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ:

Վերջին հիսուն տարում ՀՀ գյուղական բնակչության բնական շարժի գործընթացներում տեղի ունեցած փոփոխությունների մասին հանգամանալից պատկերացում են տալիս թիվ 1 աղյուսակում բերված տվյալները: Այդ ընթացքում ՀՀ գյուղական բնակչության ծնելիության բացարձակ ցուցանիշը նվազել է 2,6, իսկ հարաբերական ցուցանիշը՝ ավելի քան 3.3 անգամ: Դրան հակառակ, տեղի է ունեցել գյուղական բնակչության մահացության բացարձակ և հարաբերական ցուցանիշների ավելացում (տես աղ. 1): Եթե մահացության բացարձակ ցուցանիշի ավելացումն ինչ որ չափով պայմանավորված է գյուղական բնակչության բացարձակ թվի ավելացումով (1960-2010 թթ. ընթացքում գյուղական բնակչության բացարձակ թիվն ավելացել է 1,3, իսկ մահացության բացարձակ թիվը՝ 1,5 անգամ), ապա գյուղական բնակչության մահացության հարաբերական ցուցանիշի ավելացումը պայմանավորված է սոցիալական պայմաններով, գյուղական բնակչության ժողովրդագրական իրավիճակի բաղադրիչներում տեղի ունեցած փոփոխություններով և ժողովրդագրական գործընթացներով: 2010 թ. դրությամբ ՀՀ գյուղական բնակչության մահացության գործակիցը 1970 թ. համեմատությամբ ավելացել է 3.2 պրոմիլային կետով կամ մոտ 63%-ով: Ծնելիության և մահացության ցուցանիշների վերը նշված փոփոխությունների պատճառով 2010 թ. ՀՀ գյուղական բնակչության բնական հավելաճի գործակիցը կազմել է ընդամենը 5.5 ‰, որը 1960 թ. համեմատությամբ պակաս է 7.2 անգամ:

Թիվ 1 աղյուսակում բերված տվյալների վերլուծությունից պարզվում է, որ ՀՀ գյուղական բնակչության ժողովրդագրական իրավիճակը բնութագրող կարևորագույն բաղադրիչներում՝ վերարտադրության գործընթացներում, առավել ին-

տենսիվ փոփոխություններ են տեղի ունեցել 1990-ական թվականներից հետո: 1990-2010 թ. ընթացքում ՀՀ գյուղական բնակչության ծնելիության գործակիցը նվազել է ավելի քան 1,9 անգամ, իսկ բացարձակ թիվը՝ 1,4: Այդ ընթացքում բնական հավելաճի գործակիցը պակասել է 3,7, իսկ բացարձակ թիվը՝ 3,5 անգամ: Առավել անհանգստացնող է մահացության ցուցանիշում տեղի ունեցած փոփոխությունը: Չնայած որ 1990-2010 թթ. ընթացքում գյուղական բնակչության բացարձակ թիվն ավելացել է ընդամենը 1,06 անգամ, սակայն տեղի է ունեցել մահացության գործակցի և բացարձակ թվի էական ավելացում: Առաջինն ավելացել է 1,9 պրոմիլային կետով, իսկ երկրորդը՝ շուրջ 1,4 անգամ:

Գիտագործնական առումով առավել մեծ կարևորություն և նշանակություն ունի ՀՀ գյուղական բնակչության վերարտադրության վերջին տարիների իրավիճակի վերլուծությունը, գնահատումը և հիմնախնդիրների բացահայտումը:

2006-2010 թթ. ընթացքում ՀՀ-ում գյուղական բնակչության միջին տարեկան բնական հավելաճը կազմել է 5380 մարդ, իսկ բնական հավելաճի միջին տարեկան գործակիցը՝ 4,6‰: Վերջինս հինգ տարվա ընթացքում ավելացել է 1,7%-ով: Ինչպես երևում է թիվ 1 աղյուսակում բերված տվյալներից, դա հիմնականում տեղի է ունեցել այդ ընթացքում ծնելիության գործակցի 2.1 պրոմիլային կետով ավելացման շնորհիվ, քանի որ բնական հավելաճի վրա ազդող մյուս գործոնը՝ մահացության գործակիցն այդ ժամանակահատվածում ոչ միայն չի նվազել, այլ ավելացել է 0,4-ով, իսկ 2000 թ-ի համեմատությամբ ՀՀ գյուղական բնակչության մահացության միջին տարեկան գործակիցը ավելացել է 1,3%-ով կամ շուրջ 17,8%-ով:

Մարգային և տարածաշրջանային կտրվածքով 2005-2010 թթ. ընթացքում ՀՀ գյուղական բնակչության վերարտադրության ցուցանիշների վերլուծությունից պարզվում է, որ.

- բացի Սյունիքի մարզից, մնացած բոլոր մարզերում տեղի է ունեցել գյուղական բնակչության ծնելիության և բնական հավելաճի գործակիցների ավելացում,

- ծնելիության և բնական հավելաճի գործակիցների առավել բարձր աճ են ունեցել Արագածոտնի, Արարատի և Արմավիրի մարզերը, որոնք գտնվում են մայրաքաղաքային գոտում, ունեն ոռոգելի հողատարածություններ ավելի մեծ մակերեսներ, քան մյուս մարզերը, առանձնանում են գյուղական բնակավայրերի համեմատաբար բարձր մարդաշատությամբ և ենթակառուցվածքային ու սոցիալական ծառայությունների առավել մեծ ապահովվածությամբ,

- ծնելիության և բնական հավելաճի գործակիցների առավել փոքր աճ կամ նվազում են արձանագրվել Սյունիքի, Տավուշի, Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզերում, որոնք ունեն ծայրամասային և սահմանամերձ դիրք, հանրապետության կենտրոնական-հարթավայրային մարզերի համեմատությամբ ունեն գյուղատնտեսության զարգացման համար նվազ հնարավորություններ, գյուղական բնակավայրերի ապահովվածությունը ենթակառուցվածքային և սոցիալական ծառայություններով ավելի թույլ է քան նախորդներում և վերջապես նախորդներին զգալիորեն զիջում են գյուղական բնակավայրերի միջին մարդաքանակով (բացառությամբ Գեղարքունիքի մարզի),

- բացառությամբ Վայոց Ձորի մարզի, որտեղ 2005-ի համեմատությամբ 2010 թ. գյուղական բնակչության մահացության գործակիցը նվազել է, մնացած

բոլոր մարզերում տեղի է ունեցել մահացության գործակցի ավելացում, որն առավել մեծ չափով տեղի է ունեցել Սյունիքի, Արագածոտնի, Արարատի և Լոռվա մարզերում (տես. աղ. 2) և կազմում է 0,9-1,2 պրոմիլային կետ,

▪ 2005 թ. համեմատությամբ 2010 թ. գյուղական բնակչության մահացության գործակցին ամենափոքր փոփոխություններ է կրել Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում (0,1-ից 0,2%-ով):

Երևան քաղաքում և մարզկենտրոններում 2005-2010 թթ. բնակչության վերարտադրության բաղադրիչների շարժընթացը ոչ միշտ է համահունչ մարզերում կամ տարածաշրջաններում գյուղական բնակչության վերարտադրության բաղադրիչների շարժընթացին: Եթե Արագածոտնի, Արմավիրի, Շիրակի և Վայոց Ձորի մարզերի գյուղական բնակչության հավելվածում տեղի է ունեցել ավելացում, ապա Աշտարակ, Արմավիր, Գյումրի և Եղեգնաձոր մարզկենտրոններում բնական հավելվածը եղել է բացասական (տես աղ. 3):

Աղյուսակ 1.

ՀՀ գյուղական բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշները (1960-2010 թթ.)³⁸⁹

Տարիներ	Ծնվածներ	Մահացածներ	Բնական հավելված	Գործակիցը, 1000 բնակչի հաշվով, ‰			
				ծնելիություն	մահացություն	բնական հավելված	ՀՀ գյուղական բնակչ.թիվը/հզ
1960	42509	6591	35918	46,6	7,2	39,4	892,2
1970	23980	5445	18535	23,7	5,4	18,3	1019,9
1980	26327	6609	19718	25,1	6,3	18,8	1058,1
1990	29738	7292	22446	27,0	6,7	20,3	1098,1
1995	19829	8079	11750	18,1	7,4	10,7	1093,9
2000	12886	8343	4543	11,4	7,3	4,1	1131,1
2005	13737	9251	4486	11,9	8,0	3,9	1153,5
2006	13846	9513	4333	12,0	8,2	3,8	1156,6
2007	14586	9617	4969	12,6	8,3	4,3	1157,0
2008	15009	9961	5048	12,9	8,6	4,3	1159,6
2009	16153	10127	6026	13,9	8,7	5,2	1164,6
2010	13562	10083	6479	14,1	8,6	5,5	1156,6

Աղյուսակ 2.

ՀՀ գյուղական բնակչության բնական շարժի ցուցանիշներն ըստ մարզերի և տարածաշրջանների (2005-2010 թթ.)³⁹⁰

Մարզեր և տարածաշրջաններ	2005			2010			փոփոխությունը 2005-2010 թթ.		
	Ծ	Մ	Բն	Ծ	Մ	Բն	Ծ	Մ	Բն
Արագածոտնի մարզ	12,5	7,7	4,8	3,0	0,9	2,1	15,5	8,6	6,9
Աշտարակի	11,6	7,4	4,2	3,4	1,9	1,5	15,0	9,3	5,7

³⁸⁹ Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2011 թ. էջ 29

³⁹⁰ Աղյուսակը կազմած է www.armstat.am կայքի տվյալների բազա, ժողովրդագրական տվյալների բազայի ցուցանիշների հիման վրա:

Ապարանի	12,5	8,6	3,9	3,4	-1,3	4,7	15,9	7,3	8,6
Թալինի	12,2	8,1	4,1	2,3	0,5	1,8	14,5	8,6	5,9
Արագածի	15,5	6,2	9,3	2,1	0,8	1,3	17,6	7,0	10,6
Արարատի մարզ	11,5	7,9	3,6	3,0	0,9	2,1	14,5	8,8	5,7
Արտաշատի	11,2,	8,2,	3,0	3,2	0,8	2,5	14,5	9,0	5,5
Արարատի	13,0	7,3	5,7	2,0	0,6	1,4	15,0	7,9	7,1
Մասիսի	10,5	8,0	2,5	3,6	1,4	2,2	14,1	9,4	4,7
Արմավիրի մարզ	12,1	7,3	4,8	2,9	0,7	2,4	15,2	8,0	7,2
Արմավիրի	12,3	7,6	4,7	3,0	1,0	2,0	15,3	8,6	6,7
Բաղրամյանի	13,1	5,4	7,7	4,1	1,3	2,8	17,2	6,7	10,5
Էջմիածնի	11,7	7,4	4,3	3,0	0,4	2,6	14,7	7,8	6,9
Գեղարքունիքի մ	13,5	7,3	6,2	1,3	0,2	1,1	14,8	7,5	7,3
Գավառի	13,2	7,5	5,7	0,4	0,4	0,0	13,6	7,9	5,7
Կրասնոսելսկի	11,0,	13,4	-2,4	0,5	0,4	0,1	11,5	13,8	-2,3
Մարտունու	13,8	6,0	7,8	2,8	0,4	2,2	16,4	6,4	10,0
Սևանի	13,1	7,1	6,0	1,1	-0,2	1,3	14,2	6,9	7,3
Վարդենիսի	13,5	8,4	5,1	-0,8	0,2	-1,0	12,7	8,6	4,1
Լոռու մարզ	10,2	9,1	1,1	2,1	0,9	1,2	12,3	10,0	2,3
Գուգարքի	11,7	8,2	3,5	0,1	2,1	-2,0	11,8	10,3	1,5
Թումանյանի	7,5	8,4	-0,9	2,9	2,5	0,4	10,4	10,9	-0,5
Սպիտակի	9,9	8,8	1,1	3,7	0,1	3,6	13,6	8,9	4,7
Ստեփանավանի	9,2	10,8	-1,6	2,6	0,2	2,4	11,8	11,0	0,8
Տաշիրի	12,9	9,6	3,3	0,7	-1,6	2,3	13,6	8,0	5,6
Կոտայքի մարզ	11,6	7,6	4,0	1,7	0,1	1,6	13,3	7,7	5,6
Հրազդանի	12,0	7,9	4,1	3,0	-0,3	3,3	15,0	7,6	7,4
Կոտայքի	11,8	8,2	3,6	1,6	-0,6	2,2	13,4	7,6	5,8
Նաիրիի	10,9	6,6	4,3	1,2	1,4	-0,2	12,1	8,0	4,1
Շիրակի մարզ	12,1	7,6	4,5	2,7	0,7	2,0	14,8	8,3	6,5
Ախուրյանի	11,0	7,4	3,6	1,7	1,3	1,4	13,7	6,7	5,0
Ամասիայի	9,0	6,2	2,8	3,8	0,6	3,2	12,8	6,8	6,0
Աշոցքի	16,9	8,7	8,2	-0,7	0,0	-0,7	16,2	8,7	7,5
Անիի	14,2	6,6	7,6	2,7	1,4	1,3	16,9	8,0	8,9
Արթիկի	11,9	8,2	3,7	3,6	-0,1	3,7	15,5	8,1	7,4
Սյունիքի մարզ	12,4	9,0	3,4	-0,2	1,2	-1,4	12,2	10,2	2,0
Կապանի	11,9	9,8	2,1	-2,6	3,9	-6,5	9,3	13,7	-4,4
Գորիսի	13,9	8,4	5,5	-0,4	0,9	-1,3	13,5	9,3	4,2
Մեղրու	6,5	15,4	-8,9	2,7	-2,6	-5,3	9,2	12,8	-3,6
Սիսիանի	11,6	8,5	3,1	0,9	0,7	0,2	12,5	9,2	3,3
Վայոց ձորի մարզ	11,4	9,8	1,6	1,0	-0,7	1,7	12,4	9,1	3,3
Եղեգնաձորի	10,9	9,4	1,5	1,0	-0,5	1,5	11,9	8,9	3,0
Վայքի	11,8	10,0	1,8	0,9	-1,4	2,4	12,7	8,5	4,2
Տավուշի մարզ	11,5	9,8	1,7	1,5	0,7	0,8	13,0	10,5	2,5
Իջևանի	12,8	9,1	3,7	2,9	0,2	2,7	15,7	9,3	6,4
Նոյեմբերյանի	10,8	9,2	1,6	1,3	-0,8	2,1	12,1	8,4	3,7
Տավուշի	10,3	11,5	-1,2	-0,6	3,2	-3,8	9,7	14,7	-5,0

Երևան քաղաքի և մարզկենտրոնների բնակչության բնական շարժի ցուցանիշները (2005-2010 թթ.)³⁹¹

Երևան քաղաք և մարզկենտրոններ	2005			2010			փոփոխությունը 2005-2010 թթ		
	Ծ% ₀₀	Մ% ₀₀	Բւ% ₀₀	Ծ% ₀₀	Մ% ₀₀	Բւ% ₀₀	Ծ% ₀₀	Մ% ₀₀	Բւ% ₀₀
Երևան	11,1	8,3	2,8	14,0	8,2	5,8	2,9	-0,1	3,0
Գյումրի	11,4	10,2	1,2	12,5	11,4	1,1	1,1	1,2	-0,1
Վանաձոր	12,6	9,8	2,8	13,9	10,5	3,4	1,3	0,7	0,6
Աշտարակ	12,4	9,3	3,1	13,0	10,0	3,0	0,6	0,7	-0,1
Արտաշատ	10,5	7,5	3,0	15,1	7,5	7,6	5,4	0,0	4,6
Արմավիր	13,8	8,9	4,9	13,4	9,0	4,4	-0,4	0,1	-0,5
Գավառ	12,0	8,8	3,2	12,7	9,2	3,5	0,7	0,4	0,3
Հրազդան	10,7	6,9	3,8	13,4	7,2	6,2	2,7	0,3	2,4
Կապան	8,9	7,5	1,4	9,1	7,2	1,9	0,2	-0,3	0,5
Եղեգնաձոր	12,9	6,8	6,1	12,6	8,9	3,7	-0,3	2,1	-2,4
Իջևան	10,9	7,2	3,7	11,5	7,4	4,1	0,6	0,2	0,4
Միջինը ՀՀ-ում	11,7	8,2	3,5	13,8	8,6	5,2	2,1	0,2	1,7

Ըստ մարզերի և տարածաշրջանների հանրապետության գյուղական բնակչության բնական շարժի ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ և՛ մարզերի և՛ տարածաշրջանների գյուղական բնակչության բնական շարժի ցուցանիշների միջև կան նկատելի տարբերություններ: Ծնելիության գործակցի առավել բարձր ցուցանիշով առանձնանում են Արագածոտնի, Արմավիրի, Շիրակի, Գեղարքունիքի և Արարատի մարզերը, իսկ առավել ցածր ցուցանիշով՝ Սյունիքի, Լոռու և Վայոց ձորի մարզերը: Ծնելիության համեմատաբար բարձր ցուցանիշով առանձնանում են Արագածի, Բաղրամյանի, Անիի, Մարտունու և Աշոցքի տարածաշրջանները, որոնցում գյուղական բնակչության ծնելիության գործակիցը տատանվում է 16,2-17,6 %₀₀-ի սահմաններում: Ծնելիության գործակցի առավել ցածր ցուցանիշ ունեն Մեղրու, Տավուշի, Թումանյանի և Կրասնոսելսկի տարածաշրջանները: Դրանցում գյուղական բնակչության բնական հավելածը 2005-2010 թթ. եղել է բացասական: Հանրապետության մարզերից հինգում գյուղական բնակչության ծնելիության գործակիցը ցածր է ՀՀ միջին ցուցանիշից, իսկ մնացած հինգում՝ բարձր: Բացի Կոտայքի մարզից, մնացած չորս մարզերը, որոնք գյուղական բնակչության ծնելիության ցուցանիշով զիջում են ՀՀ միջին ցուցանիշին, առանձնանում են սոցիալ-տնտեսական զարգացման առավել սուր հիմնախնդիրներով, ունեն մեծ թվով սահմանամերձ գյուղական համայնքներ (բացառությամբ Լոռու մարզի) աչքի են ընկնում մակերևույթի առավել խիստ մասնատվածությամբ և բարձրաչափական նիշերի մեծ լայնությամբ, հեռու են ընկած մայրաքաղաքային գոտուց և գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությամբ զիջում են ՀՀ միջին ցուցանիշին (բացի Տավուշի մարզից): Նշված մարզերի մեջ մտնող 14 տարածաշրջաններից բացի գյուղական բնակչության ծնելիության ՀՀ միջին ցուցանիշից ցածր ցուցանիշ ունեն նաև Գավառի, Կրասնոսելսկի, Վարդենիսի, Ախուրյանի և Ամասիայի տարածաշրջանները: Դրանցից Վարդենիսի,

³⁹¹ Աղյուսակը կազմած է www.armstat.am կայքի տվյալների բազա, ժողովրդագրական տվյալների բազայի ցուցանիշների հիման վրա:

Կրասնոսելսկի և Ամասիայի տարածաշրջանները ևս ունեն սահմանամերձ դիրք, լեռնային և բարձրլեռնային են և առանձնանում են գյուղական բնակավայրերի միջին մարդաշատության համեմատաբար ոչ մեծ ցուցանիշով (տես աղ. 2) և սոցիալ-տնտեսական զարգացման առավել սուր հիմնախնդիրներով, հեռու են ընկած և մարզկենտրոններից և մայրաքաղաքային գոտուց:

ՀՀ մարզերից գյուղական բնակչության մահացության գործակցի ամենացածր ցուցանիշ ունեն Գեղարքունիքի, Կոտայքի և Արմավիրի մարզերը: Արագածոտնի, Արարատի և Շիրակի մարզերում գյուղական բնակչության մահացության միջին ցուցանիշը մոտ կամ հավասար է ՀՀ համապատասխան միջին ցուցանիշին, իսկ մնացած՝ Տավուշի, Սյունիքի, Լոռու և Վայոց ձորի մարզերում այն բարձր է ՀՀ միջին ցուցանիշից: ՀՀ տարածաշրջաններից գյուղական բնակչության մահացության գործակիցն առավել ցածր է Մարտունու, Բաղրամյանի, Մեվանի և Ամասիայի տարածաշրջաններում և չի անցնում 7 %-ից: Կապանի, Կրասնոսելսկի, Մեղրու և Տավուշի տարածաշրջաններում այդ ցուցանիշը 2-ից 2,3 անգամ գերազանցում է վերը նշված տարածաշրջաններին: Մահացության գործակցի բարձր ցուցանիշով առանձնանում են նաև Ստեփանավանի, Թումանյանի, Գուգարքի տարածաշրջանները, որտեղ այն տատանվում է 10-11 % սահմաններում: Հանրապետության 14 տարածաշրջաններում գյուղական բնակչության մահացության գործակիցը տատանվում է 7-8,6 %-ի, իսկ Աշտարակի, Արտաշատի, Մասիսի, Սպիտակի, Ախուրյանի, Աշոցքի, Գորիսի, Սիսիանի, Եղեգնաձորի, Վայքի և Իջևանի տարածաշրջաններում այն գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշին և տատանվում է 8,7-ից 9,5 % սահմաններում: Դժվար չէ նկատել, որ մահացության գործակիցն առավել բարձր է ՀՀ այն տարածաշրջաններում և գյուղական համայնքներում, որտեղ հանրապետության մասշտաբով ցածր է ծնելիության գործակիցը: Սա, անշուշտ, խոսում է այդ տարածաշրջանների գյուղական համայնքների բնակչության տարիքային կառուցվածքում մեծահասակների մասնաբաժնի ավելացման և երիտասարդ տարիքի բնակչության մասնաբաժնի նվազման մասին: Վերջինս բացատրվում է այդ տարածաշրջանների գյուղական համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման նվազ հնարավորություններով, գյուղատնտեսության ցածր ապրանքայնությամբ, աշխատատեղերի խիստ սահմանափակ հնարավորություններով և այդ ամենի պատճառով երիտասարդ տարիքի բնակչության միգրացիայով դեպի հանրապետության կենտրոնական տարածաշրջաններ, մայրաքաղաք Երևան կամ էլ արտերկիր:

Հասկանալի է, որ ծնելիության համեմատաբար ցածր և մահացության բարձր գործակից ունեցող տարածաշրջանների գյուղական բնակավայրերում բնական հավելաճի գործակիցը կարող է լինել ցածր կամ նույնիսկ բացասական: ՀՀ հինգ տարածաշրջաններում, որոնք միասին ունեն թվով 119 գյուղական բնակավայր և շուրջ 70 հազ. բնակչություն, բնական հավելաճի գործակիցը բացասական է՝ կազմելով -0,5ից - 5,0 % (տես աղ. 2): Գյուղական բնակչության հավելաճի ցածր գործակից ունեն նաև Ստեփանավանի, Գուգարքի, Եղեգնաձորի, Սիսիանի և Նոյեմբերյանի տարածաշրջանները: Դրանցում այն կազմում է 0,8-3,-7%: Հանրապետության միջինի ցուցանիշից գյուղական բնակչության բնական հավելաճի ցածր գործակից ունեն ևս յոթ տարածաշրջաններ (աղ. 2):

ՀՀ-ում գյուղական բնակչության բնական հավելաճն առավել բարձր է Արագածի, Բաղրամյանի և Մարտունու տարածաշրջաններում և գերազանցում է

հանրապետության միջին ցուցանիշն ավելի քան 1,8 անգամ: Մարզերից այդ առումով առանձնանում են Գեղարքունիքը, Արմավիրը և Արագածոտնը: Դրանցում գյուղական բնակչության բնական հավելաճը ՀՀ միջին ցուցանիշից բարձր է 1,3-1,8 պրոմիլային կետով: Դրանց կողքին Սյունիքի, Տավուշի և Լոռու մարզերում գյուղական բնակչության բնական հավելաճի գործակիցը 2,2-2,7 անգամ ցածր է ՀՀ միջինից: ՀՀ միջինից 2,2 պրոմիլային կետով գյուղական բնակչության ցածր բնական հավելաճի գործակից ունի Վայոց ձորի մարզը: Մնացած երեք մարզերում այդ ցուցանիշը հավասար է կամ 1 %-ով բարձր է ՀՀ միջինից:

Ամփոփելով կատարված վերլուծության արդյունքները կարող ենք եզրակացնել, որ

1. Վերջին տասնամյակների ընթացքում ՀՀ-ում և մասնավորապես գյուղական բնակչության բնական շարժի (վերարտադրության) գործընթացներում տեղի են ունեցել նկատելի փոփոխություններ, որոնք առավել ինտենսիվ բնույթ են ունեցել 1990-ական թվականներից հետո՝ պայմանավորված մեր երկրում տեղի ունեցած քաղաքական, վարչական, տնտեսական և սոցիալ-մշակութային վերափոխումներով,

2. գյուղական բնակչության ծնելիության բացարձակ և հարաբերական ցուցանիշի նվազման պայմաններում տեղի է ունեցել մահացության բացարձակ և հարաբերական ցուցանիշների ավելացում, որը հանգեցրել է գյուղական բնակչության բնական հավելաճի կտրուկ նվազմանը հատկապես 1990-2010 թթ. ընթացքում: Եթե 1960-1990 թթ. այն նվազել է 1,9, ապա 1990-2010 թթ.՝ 3,7 անգամ,

3. չնայած որ վերջին տարիների ընթացքում դիտվում է գյուղական բնակչության բնական հավելաճի ավելացում, սակայն այն հիմնականում տեղի է ունեցել ծնելիության ցուցանիշի ավելացման շնորհիվ, քանի որ մահացության գործակիցը ոչ միայն չի նվազել, այլ 2000 թ. համեմատությամբ ավելացել է 1,3 %-ով,

4. ՀՀ-ում կենտրոնական դիրք, հիմնականում հարթավայրային մակերևույթ, ռոտզելի հողատարածքների ավելի մեծ մակերես, ենթակառուցվածքային տարրերի ավելի բարձր ապահովվածություն և գյուղական բնակավայրերի համեմատաբար մեծ մարդաշատություն ունեցող մարզերում և տարածաշրջաններում 2005-2010 թթ. ընթացքում գյուղական բնակչության ծնելիության և բնական հավելաճի ավելի բարձր ցուցանիշներ են արձանագրվել, քան ծայրամասային և սահմանամերձ դիրք ունեցող մարզերում և տարածաշրջաններում,

5. ՀՀ մարզերի և տարածաշրջանների միջև ՀՀ գյուղական բնակչության բնական շարժի ցուցանիշների զգալիորեն մեծ տարբերություններ կան, որը պայմանավորված է դրանց տարածքի աշխարհագրական դիրքով, բնատնտեսական առանձնահատկություններով և սոցիալ-տնտեսական զարգացման ժամանակակից իրավիճակով: Գյուղական բնակչության մահացության գործակիցն առավել բարձր է ՀՀ այն տարածաշրջաններում և գյուղական համայնքներում, որտեղ հանրապետության մասշտաբով ցածր է ծնելիության գործակիցը, որը վկայում է այդ տարածաշրջանների գյուղական բնակավայրերի բնակչության տարիքային կառուցվածքում մեծահասակների մասնաբաժնի բարձրացման և երիտասարդ տարիքի բնակչության մասնաբաժնի նվազման մասին,

6. ՀՀ գյուղական բնակչության վերարտադրության շարժընթացի առկա միտումները և ժամանակակից վիճակը հղի են ժողովրդագրական լուրջ հիմնախնդիրներով (բնակչության սեռատարիքային կառուցվածքի խախտում և ծերա-

ցում, գյուղական բնակավայրերի մեծ մասում բնակչության թվաքանակի նվազում և այլն) և կարող են պատճառ դառնալ ՀՀ մարզերում, տարածաշրջաններում և գյուղական բնակավայրերում տնտեսական և սոցիալական վիճակի վատթարացման, ընդհուպ՝ առանձին գյուղերի վերացման:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով 2011*, Վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Եր. 2011 թ.
2. *Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2011*, ՀՀ ԱՎԾ, Եր. 2011
3. www.armstat.am կայքի տվյալների բազա, ժողովրդագրական տվյալների բազա (ՀՀ-ում գրանցված կենդանի ծնունդները, ՀՀ-ում գրանցված մահվան դեպքերը 2002-2010 թթ.)
4. *Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2005 թ. հունվարի 1-ի դրությամբ*, ՀՀ ԱՎԾ 2005 թ.
5. *Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2005 թ. հունվարի 1-ի դրությամբ*, ՀՀ ԱՎԾ 2010 թ.

Аксел Подосян, Шогик Колян – Региональные различия и проблемы естественного движения сельского населения РА. – Политические, экономические и социально-экономические перемены последних двух десятилетий привели к значительным изменениям в демографической ситуации, численности, структуре, размещении и расселении населения в РА. Перечисленные проблемы выражены нагляднее в марзах и регионах РА, в частности в сельских поселениях.

В статье рассматриваются особенности региональных изменений динамики воспроизводства сельского населения и возникшие проблемы, в частности за период с 2005 по 2010 годы.

Aksel Potosyan, Shoghik Qolyan – Regional differences and problems of rural populations dynamics of RA. – Political, economic and social-cultural changes in RA during the last 20 years have caused significant changes in population number, structure, distribution, as well as demographic situation. They are more obvious in the marzes and regions of RA, particularly, in rural settlements.

In the article the population dynamics of rural population of RA, the features of regional changes and problems in 2005-2010 are being analyzed.

**ОРГАНИЗАЦИЯ ИССЛЕДОВАТЕЛЬСКОЙ РАБОТЫ
СТУДЕНТОВ В РАМКАХ ЭЛЕКТИВНОГО
КУРСА «ПСИХОЛОГИЯ ТВОРЧЕСТВА»**

ВЕРОНИКА АРТЕМЬЕВА

Развитие современного общества в целом во многом зависит от уровня подготовки каждого специалиста, от способности каждого быстро адаптироваться в сложном и быстро меняющемся мире. Поэтому в современной системе образования ощущается потребность в адресных технологиях обучения, развивающих не только знания, самостоятельность мышления, но и творческий и инновационный потенциал человека.

С позиций организации вузовского учебного процесса данный вопрос сводится к созданию условий, которые наилучшим образом способствовали бы становлению элементов творчества в деятельности будущего специалиста. При всей очевидности, эта задача очень сложна. Сложность ее связана с рядом обстоятельств. В частности, несмотря на то, что интуитивные представления о творческой активности кажутся достаточно очевидными, однозначно сформулировать те черты личностного поведения, которые определяют творческую активность, не просто. Творчество предполагает новое видение, новое решение, новый подход, т.е. готовность к отказу от привычных схем и стереотипов поведения, восприятия и мышления. Творчество – это привнесение в мир чего-то нового.

Часто приходится сталкиваться с мнением, что творчество – удел немногих. Это неправильное представление. Каждый человек в своей обыденной и профессиональной жизни может проявить свои творческие способности. При этом отнюдь не предполагается, что речь идет о том, что каждый выпускник высшей школы обязательно должен стать профессиональным исследователем. Суть дела заключается в ином – элементы исследований характеризуют многие виды деятельности, отвечающей самым различным уровням профессионализма. Они, в частности, характеризуют подготовку рационализаторского предложения передовым рабочим и такую повседневную работу инженера, как оптимизация конструкций или подбор рационального технологического режима. Кроме того, каждому человеку важны умения справиться с различными проблемами и обрести душевное равновесие, необходимое каждому для самоуважения, успеха и продвижения к цели [1].

Создание условий для оптимального формирования необходимых творческих умений является одной из важнейших целей организации педагогического процесса, анализируемого с позиций наиболее полного раскрытия творческого потенциала личности.

Один из путей такого развития – создание системы преподавания дисциплин по выбору студентов (ДВС). Обучаясь на подобных курсах, каждый студент

имеет возможность более глубоко изучить понравившийся предмет, развить свой научный и творческий потенциал [3].

В рамках такой системы преподавания ДВС, на кафедре практической психологии разработана и внедрена в практику (с 2001 г.) авторская программа: «*Психология творчества*» (автор - канд. психол. наук Артемьева В.А.). Изучая данный предмет, студенты Санкт-Петербургского государственного архитектурно-строительного университета (СПбГАСУ) не только знакомятся с теорией психологии творчества, но и решают задачи, разрабатывают проекты, выполняют научные исследования, выполняют различные упражнения, развивающие творческую и инновационную деятельность, участвуют в тренингах, изучают элементы арттерапии [4].

Наиболее общие из творческих умений не связаны непосредственно со спецификой узкой специализации студента. Поэтому их формирование целесообразно начинать буквально с первых дней обучения студента в вузе. В идеале, в процесс формирования этих умений включаются преподаватели различных кафедр. Оно ведется исподволь, а сами творческие умения используются разными учебными дисциплинами, являются обобщенными. Методические задачи по обеспечению формирования обобщенных умений обладают определенной психологической и педагогической спецификой. По существу, эта специфика изучалась крайне мало. Именно по этой причине серьезное внимание в рамках курса «Психология творчества» уделяется вопросам формирования исследовательских умений студентов. Эта задача имеет и дополнительный аспект – она тесно связана с работой по ориентации студента в различных видах профессиональной деятельности в рамках специализации, выбранной им при поступлении в вуз. Эта профессиональная ориентация студента также затрагивается в нашем материале.[3]

В данной работе мы поставили перед собой цель ознакомить читателей со структурой курса; обобщить некоторый опыт, накопленный к настоящему времени, по вопросам формирования творческих умений у студентов.

Структура курса «Психология творчества»

Курс состоит из семи частей.

Первая часть «Введение в психологию творчества» посвящена общим вопросам психологии творчества: изучению основных вех истории психологии творчества; изучению развития современных исследований творчества; изучению творческого процесса и основных компонентов творческой деятельности.

Вторая часть «Психология творческих способностей» посвящена изучению понятий «задатки» и «способности»; изучению основных подходов к развитию комплекса творческих способностей.

Третья часть «Творческая личность» посвящена изучению некоторых аспектов творческой личности: изучению психических процессов и состояний; изучению соотношения уровня мотивации и творческой работоспособности.

Четвертая часть «Творческий потенциал и психическое здоровье» посвящена изучению основ психогигиены и методов психорегуляции состояний и творческой деятельности.

Пятая часть «Основные закономерности психологии инженерного творчества» отражает специфику творческой деятельности инженера, раскрывает сущность

инновационной деятельности в современных условиях. Она посвящена изучению и отработке основных методов активизации творческого мышления.

Шестая часть «Научное и художественное творчество» рассматривает специфику научного и художественного творчества в разных сферах деятельности (литературное, художественное, музыкальное и др.); посвящена возможностям практического использования психологических знаний в различных сферах деятельности.

Седьмая часть «Творчество в социальной сфере» рассматривает особенности группового творчества; некоторые аспекты управления творческим коллективом.

Определений понятия «творчество» и «творческий процесс» очень много. Это не следует считать какой-то особенностью данного понятия. Подобная ситуация характерна для многих психологических понятий. *Творческий процесс* – это процесс, который приводит к появлению новых, во многом неожиданных результатов. До известной степени о мощности творческого импульса можно судить по новизне и неожиданности получаемых в его результате итогов.[2]

Понятие «творчество», наиболее тесно связанное и в достаточно широком спектре различных понятий пересекающееся с понятием «исследование», настолько широко и многоаспектно, что число независимых определений, отражающих различные его стороны, очень велико [1]. В том числе, творчество может рассматриваться как разрешение противоречий между имеющимся знанием, позволяющим дать некие предсказания, и принципиально новым, заранее непредсказуемым результатом. В каком-то смысле можно говорить о том, что творческий процесс является процессом перехода от незнания к знанию. При этом, естественно, творчество должно опираться на ранее накопленные знания.

В связи с вышеизложенным, важной, на наш взгляд, является самостоятельная научная работа студентов (под руководством преподавателя), когда такая работа не связана с выставлением конкретных баллов, зачетов и т.п., а является результатом собственно интереса студента. В науке непрерывно совершается сложная коллективная методологически-критическая работа. Функции контроля, критики, отбора, самоанализа, прогнозирования присущи науке как таковой, а вовсе не являются навязанными ей извне. Включаясь в научные исследования, студенты могут наиболее полно раскрыть свой потенциал. Задача преподавателя – стимулировать мотивацию студентов, помогать осваивать необходимые для научного исследования аспекты (например, стимулируя процесс нахождения области для исследования, подбор адекватных процедур и методов исследования и т.п.). Шестой раздел программы курса, как видно из приведенной выше структуры, включает как теоретическую, так и практическую подготовку студентов к научному творчеству.

В качестве примера приведем описание и результаты одного такого исследования студентов 4 курса строительного факультета СПбГАСУ. Инициативная группа студентов (Романенко Ю., Поляков Ф., Козлова С., Несслер Е.) решила исследовать личностные особенности и, в том числе, некоторые аспекты профессионального самоопределения своих сокурсников. И это далеко не случайно. Профессиональное самоопределение, становление и развитие ПВК является одним из значимых факторов их будущей профессиональной успешности.

Цель исследования - анализ факторов профессионального самоопределения студентов технического ВУЗа.

Предмет исследования – социально-психологические особенности студентов.

Объект исследования – студенты 4 курса СПбГАСУ.

В исследованиях приняли участие 81 студент 4 курса СПбГАСУ, возраст которых колеблется от 18 до 25 лет, из них 45 юношей и 36 девушек.

Теоретико-методологическую базу исследования составили четыре группы источников: учебная литература (учебники и учебные пособия, справочная и энциклопедическая литература, комментарии к законодательству), научные статьи в периодических журналах по исследуемой проблематике, специализированные веб-сайты организаций.

На первом этапе данного исследования проводился мозговой штурм. Респонденты отвечали на вопрос: «какие качества необходимы для профессиональной успешности?». В результате контент-анализа поступивших ответов были получены качества, по мнению студентов, необходимые для профессиональной успешности. Данные качества ранжировались, в результате чего был подготовлен опросный лист для второго этапа работы.

На втором этапе опрашиваемым был предложен полученный опросный лист, состоящий из 18 качеств (см. ниже), которые было предложено ранжировать в соответствии с тем, насколько, по мнению респондентов, то или иное качество является более или менее важным:

1. сообразительность
2. коммуникабельность
3. специальные знания
4. наглость
5. трудолюбие
6. надежность
7. целеустремленность
8. адекватность
9. заинтересованность
10. гибкость
11. ответственность
12. пунктуальность
13. умный
14. обучаемость
15. стрессоустойчивость
16. активность
17. честность
18. внимательность

Полученные данные были занесены в таблицу и проанализированы при помощи методов математической статистики. В результате мы получили уровни значимости того или иного качества (по мнению студентов) для успешной адаптации в профессии. Таким образом, мы выделили три уровня значимости качеств:

• *I уровень:* коммуникабельность, трудолюбие, надежность, ответственность.

- *II уровень:* активность, специальные знания, целеустремленность, адекватность, сообразительность, заинтересованность, гибкость.
- *III уровень:* пунктуальность, честность, обучаемость, стрессоустойчивость, внимательность, наглость.

Как видим, самым важным, по мнению студентов, является «коммуникабельность», а не профессиональные знания. Что для нас оказалось неожиданным.

Так же непредвиденным для нас оказался и тот факт, что «наглость», по мнению респондентов, как качество тоже необходимо для профессиональной успешности.

Третий этап исследования заключался в изучении карьерной ориентации студентов, которые мы изучали при помощи методики Э. Шейна.

Полученные результаты были занесены в таблицу и проанализированы при помощи методов математической статистики (см. таблицу 1)

Таблица 1.

Категории (по Шейну)	Юноши (n = 25)		Девушки (n = 25)		Коеф. Стьюдента T	Уровень значимости
	Средн.	Сигма	Средн.	Сигма		
Проф.комп.	5,52	2,117	4,656	1,65	1,6	**
Менеджмент	7,04	1,9	6,94	2,17	0,173	**
Автономия	7,204	1,997	6,96	1,843	0,49	**
Стаб.места работы	7,82	2,18	7,83	1,74	0,018	**
Стаб.места жительства	4,97	2,5	3,66	1,74	2,15	*
Служение	6,45	1,84	7,08	1,88	1,19	**
Вызов	6,42	1,99	5,79	1,6	1,23	**
Интеграция стилей жизни	7,16	1,16	7,804	1,365	1,8	*
Предприни- мат.	7,19	2,15	5,92	2,27	2,031	*

* – статистически значимый результат

** – различия обнаружены на уровне статической тенденции.

Как видно из приведенной таблицы, как для юношей, так и для девушек одинаково важны такие карьерные ориентации как: стабильность места работы, менеджмент и автономия (независимость). Немного удивило, что студенты, для которых, как привыкли считать, не свойственно постоянство, акцентировали внимание на стабильности места работы. Возможно, это связано с экономическим положением в стране на сегодняшний день.

Для девушек приоритетными оказались ориентации служения и интеграции стилей жизни.

Для мужской половины ведущими оказались ориентации на стабильность места жительства, профессиональная компетентность, вызов, предпринимательство. Нас удивило то, что для юношей приоритетным стало стабильность места жительства. Мужчины считались более мобильными, чем женщины, возможно, меняются социальные роли, а следовательно и социальный портрет студента, эту тему, на наш взгляд, интересно рассмотреть в дальнейшем более глубоко.

Юноши - добытчики стремятся быть лидерами, для них важен момент соревнования, они хотят быть мастерами своего дела, ищут признания своих талантов. Не маловажно для них быть первыми, т.е. «бросать вызов», они также готовы к риску для достижения цели. И это подтвердили наши исследования.

Девушки предпочитают интеграцию стилей жизни, стабильность. Особое значение для них имеет смысл и служение в будущей профессии.

Результаты данного исследования, в числе прочих, были представлены на студенческой конференции СПбГАСУ, вызвали большой интерес и поддержку у студентов. Кроме того, мы наблюдаем значительную разницу в успешности различных видов деятельности (в т.ч. учебной, улучшение и отношения к учебе в целом, и повышение профессиональной мотивации) между группами студентов, в которых проходят занятия по «Психологии творчества» и теми группами, где такая работа не ведется. Наш опыт показал, что у студентов возрос интерес к гуманитарным дисциплинам, возникла потребность в использовании психологических знаний в профессиональной, личной и обывденной жизни, т.е. начинает формироваться определенная психологическая культура.

ЛИТЕРАТУРА

1. Артемьева В.А., *Психология творчества (глава в учебном пособии)*. Современная практическая психология: Учеб. пособие для студ. высш. учеб. заведений /под ред М.К.Тутушкиной. – М. «Академия» , 2005. – ч.4., гл. 5.- с. 314 – 331.
2. Артемьева В.А., *Психологические аспекты создания программы «психология творчества»* (статья). Северная психологическая конференция: Материалы науч.-практ. конф. – Вологда, 2003. – С. 31- 33.
3. Тутушкина М.К., Артемьева В.А., *Становление психологического образования в техническом вузе* (статья). Вестник гражданских инженеров. СПбГАСУ, - С-Пб.,– 2005.– Вып. 1(2). – с.102 – 106
4. Veronika A. Artemyeva, *The teaching of 'psychology of creativity'*. Australian Journal of Psychology. 2004. V.56. p157-158.

Վերոնիկա Արտյոմևա – Ուսանողների հետազոտական աշխատանքի կազմակերպումը “Ստեղծագործության հոգեբանությունը” կամրնտրական դասընթացի շրջանակներում: – Հոդվածում ներկայացված է ուսանողների գիտական ստեղծագործության պաշտպանության և ուղղորդման փորձը “Ստեղծագործության հոգեբանությունը” դասընթացի շրջանակներում, շարադրված է դասընթացի կառուցվածքը, բերված է ուսանողների հետազոտական աշխատանքի օրինակ: Սույն նյութը հենվում է ինքնատիպ մշակումների և հետազոտությունների արդյունքների վրա:

Veronika Artemeva – The organization of research work of students in the framework of the elective training course "Psychology of creativity". – The paper presents the experience and support of scientific creativity of students studying the course "psychology of creativity", shows the structure of the course, the example of students research work. This material is based on the results of original developments and research.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

Պ Ա Տ Մ Ա Գ Ի Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ВАЛЕРИ ТУНЯН

Формирование армяно-русских отношений в церковной сфере.

XVIII – пер. трети XIX вв. 3

Ն Ա Թ Ե Լ Լ Ա Գ Ը Դ Գ Ո Ր Յ Ա Ն

«Հայրենիքի փրկության կոմիտեի» ներքին և արտաքին

քաղաքականությունը 21

Մ Ա Ր Ի Ա Մ Հ Ո Վ Ս Ե Փ Յ Ա Ն

Նիկոմիդիա նահանգի «Բյուրանիա» շաբաթաթերթը (1910 - 1912 թթ.)..... 33

Ի Մ Ա Ս Տ Ա Ս Ի Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գ Ը Դ Գ Ո Ր Ա Ս Ս Ա Տ Ը Յ Ա Ն

Արդի համաշխարհային հումանիստական շարժումը. “Հումանիստական

մանիֆեստ - II”-ը և “Աշխարհիկ հումանիզմի դեկլարացիան” 44

Ո Ա Ջ Մ Ի Կ Տ Ի Գ Ը Ա Ն Յ Ա Ն

Պատմական փաստի ըմբռնումը ժամանակակից իմացաբանության մեջ 50

Գ Ը Դ Գ Ո Ր Ա Ս Ս Ա Տ Ը Յ Ա Ն

Ժամանակակից հումանիզմի տարատեսակները.

Էկզիստենցիալ հումանիզմ 60

Ք Ա Ղ Ա Ք Ա Գ Ի Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հ Ո Վ Ս Ե Փ Մ Ո Վ Ս Ե Ս Յ Ա Ն

Քաղաքական լեզվի մացումը որպես ազգային

անվտանգության ապահովման գործընթաց 68

Մ Շ Ա Կ ՈՒ Թ Ա Բ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա Ը Ա Ը Ա Տ Ա Ղ Ա Ս Յ Ա Ն

Երվանդ Քոչարի տարածության մեջ 80

Ա Ն Ն Ա Ա Ս Ս Ա Տ Ը Յ Ա Ն

Տիգրան Չուխաճյանի ստեղծագործության պատմական

նշանակությունը (նվիրվում է ծննդյան 175-ամյա հորեյանին) 90

Ա Լ Ի Ն Ա ՈՒ Լ Ի Ֆ Ա Ն Յ Ա Ն

Հայաստանի վաղմիջնադարյան կենտրոնագմբեթ էկեղեցիների

կոնստրուկտիվ առանձնահատկությունների շուրջ 102

Հ Ո Գ Ե Բ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա Ն ՈՒ Շ Ո Մ Կ Ա Ն Յ Ա Ն

Մուբյեկտի նորարարությունը և ստեղծագործականությունը

որպես նրա գործունեության հաջողության դետերմինանտներ 108

ԼԻԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծնողների և երեխաների փոխհարաբերությունների ոճերը որպես
ընտանեկան դաստիարակության արդյունավետության պայման..... 119

АННА ЭЛЯЗЯН

Проблемы молодой семьи: состояние и перспективы развития..... 126

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՉԱԳԱՆ ԱՎԱԳՅԱՆ

Աշուղական երգարվեստն ու Մայաթ-Նովան..... 137

ԱՐՄԻՆԵ ԱՂԱՄՅԱՆ

Թումանյանը Թադևոս Ավդալբեգյանի և Ալեքսանդր Մարտունու
գնահատմամբ..... 143

ԶԱՐՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Շավարշ Նարդունու հեքիաթների ժանրային
առանձնահատկությունները..... 156

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՄԻՆԵ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Թիֆլիսի բարբառի և փոխառությունների գործածությունը
Մայաթ-Նովայի հայերեն տաղերում..... 163

ՀԱՍՄԻԿ ՎԱՆՅԱՆ

Շարադասության ոճական արժեքը Ավետիք Իսահակյանի
արձակ լեզենդներում..... 169

ANZELA VANESYAN

La polyphonie linguistique..... 174

AIDA MARDANYAN

Les proverbes francais touchant a la main dans le contexte interculturel..... 185

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱԿՍԵԼ ՊՈՏՈՍՅԱՆ, ՇՈՂԻԿ ՔՈԼՅԱՆ

ՀՀ գյուղական բնակչության բնական շարժի տարածաշրջանային
տարբերությունները և հիմնախնդիրները..... 189

ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ

ВЕРОНИКА АРТЕМЬЕВА

Организация исследовательской работы студентов в рамках
элективного курса «Психология творчества»..... 197

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ԱԿՈՒՆՔ» ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Ակունք» հոդվածների ժողովածուում տպագրության ներկայացվող հոդվածների տեխնիկական պահանջները.

- Հոդվածները ներկայացնել հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով:
- Հոդվածի շարվածքը լինի Unicode-ով (հայերեն հոդվածների դեպքում՝ նաև Sylfaen տառատեսակով), տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5, թղթի ֆորմատը՝ A4:
- Հոդվածի սկզբում գրել վերնագիրը՝ մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ մեծատառերով:
- Հղումները դնել տողատակում՝ համարների աճման կարգով, նշել աղբյուրը՝ հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը) և էջը:
- Հոդվածի վերջում գրականության ցանկի առկայության դեպքում հղումների համարների հերթականությունը պետք է համընկնի տեքստում դրանց հանդիպման հերթականության հետ: Գրականության ցանկում նշել գրքի/հոդվածի հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը), հոդվածների դեպքում՝ հոդվածի առաջին և վերջին էջերի համարները: Օրինակ՝

1. Harary F., *Graph Theory*. Addison-Wesley, Reading, MA, 1969.
2. Давтян Н.Н., *О наименьшем и наибольшем возможных числах вершин с интервальным спектром на множестве правильных реберных раскрасок дерева*. Математические вопросы кибернетики и вычислительной техники, т. 32, Ереван, 2009, с. 107–111.

- Հոդվածի վերջում գրել համառոտ ամփոփումներ. հայերենով գրված հոդվածների համար՝ ռուսերեն և անգլերեն լեզուներով, ռուսերենով գրված հոդվածների համար՝ հայերեն և անգլերեն լեզուներով, անգլերենով գրված հոդվածների համար՝ հայերեն և ռուսերեն լեզուներով:
- Հոդվածին անհրաժեշտ է կցել նաև (առանձին էջով կամ առանձին ֆայլով) հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև հեղինակի (հեղինակների) հեռախոսի համարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցե (e-mail):
- Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային տարբերակով
 - Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ, բնագիտական ֆակուլտետի մասնաշենք՝ Նարինե Դավթյանին, կամ
 - ուղարկել akunq.yusib@gmail.com և banber_ib@ysu.am էլեկտրոնային հասցեներով:

Ա Կ Ո Ւ Ն Ք

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 3(6)

Չամարի պատասխանատու՝ Ա.Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Չամակարգչային ձևավորումը՝ Ն.Ն. ԴԱՎԹՅԱՆԻ

Ստորագրված է տպագրության 27.02.2013 թ.:

Չափսը՝ 70x100^{1/16} :

Տպաքանակ՝ 100: Պատվեր՝ 29:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1:

Երևանի պետական համալսարանի
օպերատիվ պոլիգրաֆիայի ստորաբաժանում
Երևան, Ալ. Մանուկյան 1: